Կարմիր Վիշապը

Զարհուրելի Ճշմարտությունն այն մասին, թե ինչու «եկեղեցին» չի կարողանում ուղղվել:



Դագ Պերիից
fotm@fellowshipofthemartyrs.com
www.FellowshipOfTheMartyrs.com
10/25/06 – վերանայվել է 1/1/07, 3/25/07/ և 10/20/10
Հրատարակություն 4.0

Օգտագործիր ազատորեն, որքան ավելի ազատ, այնքան ավելի լավ: Մարդկիկ պետք է լսեն սա: Սակայն փոփոխություններ մի մտցրու և մի հեռացրու համացանցացային հղումները (լինքերը) և վերագրումները:

Եթե դու ցանկանում ես այս ուղերձը կամ «Ներողության Նամակը Աշխարհին» հասու դարձնել ավելի շատ մարդկանց, կարող ես այցելել համացանցային կայքը, որտեղ կարող ես նվիրատվություն անել: Մենք քո օգնությամբ կարող ենք հասնել միլիոնավոր մարդկանց՝ էլեկտրոնային-փոստի և համացանցի միջոցով: Մենք խոստանում ենք լինել հոգատար տնտեսվարներ յուրաքանչյուր լուման ճիշտ գործածելու մեջ: Մենք պետք է ազատենք գերիներին: Խնդրում եմ, սգա, վշտացիր և արտասվիր: Հիմա: Խնդրում եմ:

Նվիրում

Այս գիրքը նվիրվում է Հիսուս Քրիստոսին: Իրականում, այն ամենն, ինչ ես գրել եմ, երգել, ասել կամ երբևէ արել եմ նվիրված է Հիսուս Քրիստոսին: Ճիշտ է՝ այդ ամենը կատարյալ չէ, սակայն դա Նրա մեղավորությունը չէ: Եթե այն քեզ դուր չգա, մեղադրիր ինձ, ոչ թե Նրան:

Սկսելուց առաջ աղոթիր

Հայր Աստվա՛ծ, ես խնդրում եմ Հիսուս Քրիստոսի անունով, որ Դու պահես և պահպանես նրանց, ովքեր կարդում են սա, որ Դու հեռացնես կամ կապես թշնամու յուրաքանչյուր խոչընդոտ կամ ստրատեգիա, որը կփորձի այս մարդկանց հետ պահել այս խոսքը լսելուց և ստանալուց: Ես խնդրում եմ, որ Դու կապես յուրաքանչյուր մարդու մեջ գտնվող Ժեզեբելի ոգին, սա կարդալու և սրա մասին մտորելու ընթացքում, որպեսզի այս մարդիկ կարողանան Քո ձայնը պարզ լսել, և Դու կարողանաս Ինքդ խոսել նրանց հոգու հետ և ազատագրում ու վերանորոգում բերել: Ես աղոթում եմ, որ Դու կապես Կարմիր Վիշապին և հետ պահես դրան այս ընթացքում նրանց շշնջալուց: Ես գիտեմ, որ Դու ուզում ես, որ մենք ազատ լինենք: Խնդրում եմ, Հա՛յր, խնդրում եմ, ների՛ր մեզ և ցույց տուր, թե ինչպես ուղղենք մեր սխալները: Թույլ մի՛ տուր թշնամուն Քո խոսքերը նրանց սրտից գողանալ: Հաստատի՛ր սա նրանց հոգում և ցույց տուր նրանց, թե ինչ անել հաջորդիվ: Շնորհակալություն, Աբբա՛: Մենք աղոթում ենք Հիսուս Քրիստոսի Անունով: Ամեն

Ինչպե՞ս է այս ամենը սկսվել

Կարմիր Վիշապն այն է, ինչը ես առաջին անգամ տեսա այստեղ՝ Կանզաս քաղաքում գտնվող որոշ խարիզմատիկ ծառայությունների վրա: Այն միանգամայն նման է չինական տոնախմբությունների մետաքսե վիշապին՝ մի մեծ, ահարկու գլուխ, որի տակից դուրս են ցցված մարդկանց ոտքերը (ոչ այն փոքր տեսակը, որը նրանք, ամրացնելով մի փայտի վրա, կրում են իրենց գլխավերևում, այլ իսկապես մեծ տոնական վիշապ, որը շրջապատում է քեզ, և միայն ոտքերդ են դուրս մնում:) Այստեղ՝ քաղաքում՝ մի մեծ ծառայության ընթացքում, այն իսկապես փորձում էր խանգարել ինձ: Ես խորանի մոտ ծնկի էի եկել և փորձում էի ապաշխարել ու կանգնել այդ մարդկանց գործած մեղքերի և նրանց՝ իրենց ուզած ձևով շարժված լինելու ճեղքվածքում: Նրանց իսկապես հարկավոր էր, որ ինչ-որ մեկն ապաշխարեր այն բանի համար, որ նրանք վնաս էին հասցրել այդքան մարդկանց: Ինչպես Ելք 32:32-ում՝ ես նույնիսկ առաջարկում էի ինձ վրա վերցնել նրանց գործած ողջ մեղքը: Սակայն նրանց շենքի ներսում ես դա չէի կարողանում անել: Ես չէի կարողանում ապաշխարել ոչ այն պատճառով, որ չէի ուզում կամ տրամադրված չէի, այլ ես պարզապես չէի կարողանում դա անել: Ես անգամ մի կաթիլ արցունք չէի կարողանում թափել: Ինչն ԻՍԿԱՊԵՍ տարօրինակ է, քանի որ ես արտասվում եմ նույնիսկ այն ժամանակ, երբ Աստված ինձ թույլ է տալիս մի բաժակ ջուր խմել: Իմ օրվա մեծ մասն անցնում է՝ լալով երևույթների, մարդկանց կամ համակարգերի իրավիճակի համար: Ես

խորանի մոտ միշտ արտասվում եմ, սակայն **նրանց** խորանի մոտ ես չկարողացա անգամ ՄԻ ԿԱԹԻԼ արցունք թափել:

Ես գիտեի, որ ինչ-որ մի բան ճնշում է իմ արցունքներն, իսկ դա իմ լավագույն զենքն է: Ես սկսեցի շուրջս նայել՝ փորձելով հասկանալ, թե ինչն է ինձ խանգարում, և տանիքին տեսա Կարմիր Վիշապին (ինձ համար արտասովոր երևույթ չէ մարդկանց կամ վայրերի վրա հոգևոր պատնեշներ տեսնելը): Ես որոշեցի պոկել դրան ու դեն նետել և, քանի որ բավականին բարկացած էի այն պատճառով, որ այն փորձել էր ինձ խանգարել, որոշեցի սկզբում դրան որոշ վնաս հասցնել: Ես դրա դեմ բարձրացա Հոգու Սրով և դրան մի քանի քերծվածք հասցրի: Այդ ժամանակ Տերն ինձ ասաց. «ԴԱԴԱՐԵՑՐՈՒ՛»: Ես ցանկանում էի քշել դրան, և Նա ասաց. «Ո՛չ: Ե՛ս եմ դրան այնտեղ դրել և քեզ թույլ չե՛մ տա դրան հեռացնել:»

Դե այդ արդեն ապշեցուցիչ էր: Աստված ինձ ասաց, որ բարձրանում ու հեռանամ, որ դա անեծք էր ողջ այդ վայրի վրա, և ՆԱ Ինքն էր դրան այնտեղ դրել, ու ես չպիտի փորձեի նրանց դրանից ազատել: Ես, դեռ մի որոշ ժամանակ ավտոկանգառում կանգնած, դրան էի նայում և ավելի ու ավելի բարկանում: Դա ծաղրում էր ինձ ու ասում, որ ես ոչ մի իշխանություն չունեմ, և ինքն է գլխավորն այդտեղ, իսկ ես ոչինչ եմ: Ես տեսնում էի, որ այնտեղ գտնվող մարդիկ անտեղյակ էին դրան և բազմատեսակ ճնշումների տակ էին գտնվում, սակայն Կարմիր Վիշապը խանգարում էր և թույլ չէր տալիս նրանց տեսնել այդ խնդիրները: Այս վայրը միջազգային ճանաչում ունի իր ավելորդությունների համար, և այնտեղ գրեթե յուրաքանչյուրն, ում ես հանդիպել եմ, իր վրա ունի ցանկասիրության ոգի, փողի հանդեպ սեր և հպարտության մեծ պատնեշ, սակայն նրանք <u>միանգամայն</u> վստահ են, որ իրենք ամենալավն են երկրագնդի վրա: Ես շատ էի բորբոքվել և մինչ կանգնած էի իմ ֆուրգոնի կողքին, որոշեցի դրան մի փոքր էլ չարչարել, սակայն Տերը նորից ինձ կանգնեցրեց: Նա շատ հստակ ասաց. «Սա է այն, ինչ դա անում է, սա հպարտության մասին է: Դա ամեն ինչ կենտրոնացնում է ՔՈ շուրջ: Այն կա՛մ փորձում է քեզ համոզել՝ ներս մտնել և միանալ իրեն, կա՛մ փորձում է համոզել քեզ, որ պայքարես իր դեմ, բայց երկու դեպքում էլ, այն քո հայացքը հեռացնում է Հիսուսից և կենտրոնացնում իր վրա: Ես քեզ ասացի, որ դրան հանգիստ թողնես: Հիմա նստի՛ր մեքենադ ու գնա՛ ու էլ հետ չդառնա՛ս:»

Ավելի ուշ՝ այդ երեկո, ես դեռևս դժվարանում էի մտքերս գերել, քանի որ այն դեռ շարունակում էր շշնջալ ականջիս և իմ մեջ հպարտություն բարձրացնել: Ես շարունակ մտածում էի, թե ինչը պետք է այլ կերպ անեի կամ ինչպես մի օր ես նրանց ցույց կտամ, որ դա այնտեղ է, և նրանք կտեսնեն, թե որքան են սխալվել: Ես նկատեցի, որ ծրագրում եմ այն բոլոր տարբերակները, որոնց միջոցով ես նրանց կազատեմ կամ դրան կփշրեմ ու բոլորին կասեմ, որ դա այնտեղ էր եղել: Տերը կրկին ստիպված էր ինձ կանգնեցնել և ցույց տալ, որ այն հաղթում էր, քանի որ ես այդ ամենը դարձնում էի <u>իմ</u> ու դրա հետ կապված գործերի ու պայքարի մասին: Ես շարունակ պիտի այն հանձնեի Աստծուն և հրաժարվեի դրանից, սակայն այն շարունակում էր վերադառնալ և ներս խցկվել: Վերջիվերջո Տերն ասաց, որ զանգահարեմ իմ ընկերներից մեկին, որը Հոգով շատ լավ է տեսնում և ազատագրման մեծ փորձ ունի: Չնայած ես փորձում էի ինձ ամբողջովին մաքրել՝ միևնույն է, այն տեղից չէր շարժվում: Այսպիսով՝ ես կանչեցի այդ ընկերոջս, և առանց հուշումի, նա տեսավ հպարտության ոգին և ինձ օգնեց պոկել դրան: Ես վստահ չեմ, որ ինքս կկարողանայի դա անել: Ոչ թե այն պատճառով, որ Հիսուսն իմ մեջ բավականաչափ մեծ չէ ցանկացած տեսակի դև քշելու համար, այլ այն պատճառով, որ ԱՅՍ դևն Աստուց եկած անեծք

է, և ՇԱՏ ԴԺՎԱՐ է այն քեզնից հեռացնել: Առանց ապաշխարելու / զղջալու՝ այն չի հեռանա, սակայն այն ՃՆՇՈՒՄ է ապաշխարումը / զղջումը: Ես պետք է ՏԻՐՈՋՆ աղաչեի իմ վրայից հանել այն և զղջայի, ապաշխարեի, որ փորձել էի, Նրա կամքին հակառակ, հարձակվել դրա վրա: Սակայն առանց Ապաշխարության / Զղջման իրական Ընծան ունեցող մեկի օգնության՝ ես անկարող էի իսկապես ապաշխարել և ազատվել դրանից: Ես դրան իմ վրա վերցրի այն ժամանակ, երբ նրանց Վիշապին թույլ տվեցի դրդել, հրահրել ինձ, որ պայքարեմ իր դեմ, այն դեպքում, երբ Տերն ինձ ասել էր, որ հեռանամ: Ես ինձ Աստծուց բարձր դասեցի և որոշեցի, որ ինձ կարելի էր անել մի բան, որը Նա ինձ ասել էր չանել: Ճիշտ այնպես, ինչպես՝ Եվան Դրախտում:

Մեկ անգամ հաղթելով որևէ դիվական ուժի կամ պատնեշի՝ դու իշխանություն ես ձեռք բերում այդ «տեսակի» վրա և ձեռք ես բերում ավելի կատարելագործված զգայունություն: Այդ է պատճառը, որ մարդիկ, որոնք, օրինակ՝ սեռական բռնության են ենթարկվել, չափազանց զգայուն են նրանց նկատմամբ, ովքեր նույնպես բռնության են ենթարկվել: Նրանք կարող են բնազդաբար ընկալել, երբ որևիցէ մեկը նման խնդիր ունի, քանի որ իրենք էլ են դրա միջով անցել: Մի քանի շաբաթ անց Տերը սկսեց ինձ շատ ուրիշ Կարմիր Վիշապներ ցույց տալ: Սկզբում ես կարծում էի, թե դրանք այն հայտնի ծառայության ճյուղավորումներն են, քանի որ այն վայրերը, որտեղ ես դրան նորից տեսա, բոլորն էլ շրջանաձև կապակցված էին միմյանց: Սակայն ես դրան տեսա նաև այնպիսի անհատների վրա, որոնք ընդամենը թեթև շփման մեջ էին գտնվում այդ ծառայության հետ:

Եվ կրկին ինձ ուղարկել էին մի այլ ծառայության կոնֆերանսի, որն այստեղ՝ քաղաքում էր, և ես կրկին հայտնվեցի նույն իրավիճակում. այն փորձում էր ինձ կա՛մ ներքաշել, կա՛մ հրահրել, որ իր դեմ պայքարեմ: Տերն ինձ պարզ ասել էր, որ ես պետք է դրան հանգիստ թողնեմ, սակայն նորից պահանջվեց, որ ինձ մաքրեր ազատագրման / ապաշխարության մեջ փորձված մեկը: Դրանից հետո ես Տիրոջը խնդրեցի, որ Նա բարելավի իմ հոգևոր «վահանը», որպեսզի ես կարողանամ այդ վայրերում գտնվել, և այն ինձ անընդհատ չկպչի: Նրանց հետ միասին անեծքի տակ գտնվելու համար բավական է ներկա լինել և ընթանալ նրանց որևիցե մի օրակարգի համաձայն: Դա ինձ կխանգարեր, քանի որ ես քաղաքի տարբեր մասերում եմ լինում և տարբեր ծառայություններ եմ այցելում ու չեմ կարող թույլ տալ, որ այն մշտապես ինձ խանգարի: Տերն իմ աղոթքը պատվեց ավելի ամուր վահանով, և այն մինչ այժմ գործում է:

Ես Կարմիր Վիշապը տեսել եմ քաղաքի բոլոր մասերում: Այդ մասին ավելին կպատմեմ ստորև: Առաջին հանդիպումից հետո ես շատ ժամանակ էի անց կացնում՝ աղոթելով և լսելով, թե Տերն ինչ է ասում դրա էության մասին, որտեղից է այն եկել, ինչպես է հայտնվել այստեղ, և ամենակարևորը՝ ինչպես դրան հեռացնել: Մինչ Տերն ինձ ավելին էր հայտնում այս մասին, ես սկսեցի սարսափել իմ հասկացածից: Սա միայն այդ մի ծառայությունը չէր և միայն մեկ մեկուսացված օջախ չէր: Հուսով եմ, որ երբ շարունակեմ, դու էլ կտեսնես և նույնչափ ցնցված, սարսափած, ամոթահար, ապաշխարող, զղջացող կլինես, և Տիրոջ քո Երկյուղը զգալիորեն կաճի:

Որոշ մարդիկ կարծում են, թե այս գիրքը Կարմիր Վիշապի և սատանայի դեմ պայքարի մասին է: Դա այդպես չէ: Սա Տիրոջ Երկյուղի մասին է, և այն մասին, թե ինչ կլինի, եթե դու քո ուզած ձևով շարժվես՝ թեկուզ մի փոքր: Դու ՉԵՍ ԿԱՐՈՂ սաստելով հեռացնել սրան որևէ մեկի վրայից: Դու ՉԵՍ ԿԱՐՈՂ Հիսուսի Արյան Իրավունքով հեռացնել ու դեն շպրտել դրան: Նրանք ՊԻՏԻ զղջան /

ապաշխարեն, սակայն այն ճնշում է զղջումը / ապաշխարումը: Ես սա գրում եմ ցույց տալու համար մեր ստեղծած խառնաշփոթը և այս իրավիճակի անհուսությունն՝ առանց Աստծո ողորմածության և այն հանգամանքի, որ ՆԱ լցնի Ապաշխարության Ընծան Իր մարդկանց վրա, լինի դա ուղղակիորեն կամ Իր բարձրացրած մարդկանց միջոցով, որոնք արդեն գիտեն, թե ինչպես արտասվել և ողբալ խորանի առաջ: Այս գիրքը սատանային փառաբանելու մասին չէ. նա պարձապես գործիք է Աստծո ձեռքում՝ ուժեղ, նախանձախնդիր, կենդանի Աստծո, որն այս պահին ամենևին էլ գոհ չէ մեզնից:

Եթե դու չես հավատում, որ մարդիկ իրականում կարող են տեսնել դևերի (կամ էլ, որ դևեր իրականում կան) կամ չես հավատում, որ ես իսկապես տեսել եմ այն, ինչ ասում եմ, ուրեմն պարզապես համարիր սա սոսկ պոետիկ մի այլաբանություն և տե՛ս, թե արդյո՞ք դու կկարողանաս ծաղրել Սուրբ Գիրքը: Ինչևիցե, ինձ համար այնքան էլ կարևոր չէ, թե դու իմ մասին ինչ ես մտածում, բայց անտեսիր այս կոչը ի վտանգ քեզ: Եթե ես ճիշտ եմ, ապա սա իսկապես շատ ու շատ ավելի վատ է, քան որևիցե մեկը գուցե գիտակցի, և մեր իրավիճակն անհույս է՝ առանց ապաշխարության / զղջման, և հազիվ թե կա մեկը, որ կարող է զղջալ /ապաշխարել:

Հա՛յր, ես առաջարկում եմ այն ամենն, ինչ Դու երբևէ տվել ես ինձ Քո Մարմնի վերակառուցման և վերազինման համար: Նրանք, ովքեր կարդում են սա, ովքեր իսկապես հավատում են և կարող են ստանալ ու պատրաստ են, խնդրում եմ, տու՛ր նրանց այն ամենն, ինչ ինձ ես տվել: Այն ամենն, ինչ ես ունեմ, ես սիրով առաջարկում եմ նրանց, որ դրանով հագեցնեն իրենց ծարավը հենց հիմա, նույնիսկ եթե ես այն այլևս հետ չստանամ: Ես վստահում եմ Քեզ, Հա՛յր: Տու՛ր նրանց Ոգիների Զանազանում, տու՛ր նրանց Իմաստություն, տու՛ր նրանց Իշխանություն դևերի վրա, որոնք դիմագրավել են նրանց, և տու՛ր նրանց Տիրոջ Երկյուղ: Եթե դու կամենում ես, և նրանք պատրաստ են, թույլ տուր նրանց պարզ տեսնել Կարմիր Վիշապին: Լցրու՛ նրանց վրա Ապաշխարության Ընծան ու թույլ տուր, որ այն լինի ճշմարիտ և գործի ուժգին: Նրանց ու՛ժ տուր, որպեսզի շրջվեն և շրջված մնան: Նրանց հավատին ու Քո պատրաստակամությանն ու անթերի կամքին համաչափ ավելացրու նրանց բոլոր Ընծաները, որպեսզի նրանք կարողանան վտանգավոր լինել թշնամու համար: Բացի՛ր կույր աչքերն ու թու՛յլ տուր, որ վիշապի թեփուկները ցած թափվեն նրանց աչքերից: Թույլ տուր, որ նրանք իսկապես պարզ տեսնեն վատ կողմը և իրենց որովայնում անմար կրակ ունենան բոլոր գերիներին ազատելու համար: Հիսուս Քրիստոս Տիրոջ անունով, Ամե՛ն:

Աստծո Զայրույթի ԵԹԵ / ԱՊԱ Աքսիոմները

ԵԹԵ դու Աստծո զավակ ես, **ԱՊԱ** քո նկատմամբ պահանջներն ավելի բարձր են, քան «աշխարհի» նկատմամաբ: (Հովհ. 112; Ղուկ. 12:48):

ԵԹԵ դու Աստծո զավակ ես, **ԱՊԱ** դու պետք է հնազանդվես միայն ու միայն Աստծուն և չհակվես քո սեփական ըմբռնմանը՝ հասկացողությանը: (Գործք 5:29; Առակ. 3:5)

ԵԹԵ դու Աստծո զավակ ես, բայց փոխարենը՝ հետևում ես ինչ-որ մի Մարդու (ներառյալ ինքդ քեզ), **ԱՊԱ** դու անհնազանդ ես Աստծուն: (Մաթ. 9:9-1; Պետրոս 2:21; Հովհ. 12:25-26)

ԵԹԵ դու անհնազանդության մեջ գտնվող Աստծո զավակ ես, **ԱՊԱ** Աստված կցանկանար քեզ հետ քաշել Իր մոտ - ինչ գնով էլ լինի: (Ղուկ 15)

ԵԹԵ դու շարունակաբար մերժում ես ուղղումը, **ԱՊԱ** Աստված քեզ ավելի ու ավելի վատ հանգամանքների կմատնի, մինչև դու կոտրվես: (Դանիել 4:28-37; Հռոմեացի 1:18-32)

ԵԹԵ դու իսկապես շատ ու շատ համառ ես և ապստամբ, **ԱՊԱ** Աստված կկարծրացնի քո սիրտն ու ուժեղ մոլորություն կուղարկի քեզ, մինչև դու բացարձակապես կործանվես - կամ էլ զղջաս՝ նայած թե որն առաջինը կպատահի քեզ: (Հովհ. 1:18-32; Հռոմ. 9:18; Հովհ. 12:40; 2 Թեսաղ. 2:11-12)

ԵԹԵ դուք մարդկանց խումբ եք, **ԱՊԱ** Աստված ձեզ բոլորիդ միասին կարող է տալ սատանային, որպեսզի սովորեցնի ձեզ չանարգել Աստծուն կամ էլ կարող է հալածանքներ ուղարկել ձեզ:
(1 Տիմոթեոս 1:20; 1 Տիմ. 6:1; Ելք; Դատավորներ; Թագավորություններ Բ, Գ ...)

ԵԹԵ դուք համառեք ձեր ապստամբության մեջ, **ԱՊԱ** ակնկալե՛ք ԽՈՇՈՐ բացասական հետևանքներ թե՛ հոգեպես, թե՛ ֆիզիկապես: (Եսայի 31:1; Երկրորդ Օրենք 28; Ողբ; Աստվածաշնչի մեծ մասը զգուշացումներ են անհնազանդության բացասական հետևանքների մասին:)

ԵԹԵ բարու և չարի միջև պատերազմ կա, և մենք կարծես պարտվում ենք, **ԱՊԱ** դա նշանակում է, որ մենք մեր ուզած ձևով ենք շարժվում, և Աստված կուրացրել է մեզ և մեզ ուժեղ մոլորություն ուղարկել, քանի որ մենք անհնազանդ ենք ու ապստամբ: (Երկրոդ Օրենք 28; Հայտնություն 3:14-22)

Աստծո Անեծքի ԵԹԵ / ԱՊԱ Աքսիոմները

ԵԹԵ դու անհնազանդության մեջ գտնվող Աստծո զավակ ես, **ԱՊԱ** Աստված քեզ անեծքներ կուղարկի, մինչև որ դու դարձի գաս: (2 Թեսաղ. 2:11-12; Գործք 9:1-9; Հովհ. 9:35-41, 12:40)

ԵԹԵ Աստված քեզ անեծքներ է ուղարկում, **ԱՊԱ**, հավանաբար, դրանցից մեկն «ուժեղ մոլորություն», կամ «կուրություն» է: (2 Թեսաղ. 2:11-12; Գործք 9:1-9; Հովհ. 9:35-41, 12-40)

ԵԹԵ Աստված քեզ ուժեղ մոլորություն կամ կուրություն է ուղարկում, **ԱՊԱ** դու հավանաբար չես էլ իմանա, որ կույր ես կամ խաբված: (Հայտնույթյուն 3:15-17)

ԵԹԵ դու Աստծո մարգարե ես և անհնազանդության մեջ ես, **ԱՊԱ** դու հավանաբար ՇԱՏ վստահ կլինես, որ Աստծուն ես լսում, թեև դա սուտ ոգի է, որն ամեն ինչ խաճում է: (Թագավ. Գ 22:1-40; Մաթ. 15:14՛, 24:14; 1Թեսաղ. 2:9-12; Հայտն. 3:15-17)

ԵԹԵ զղջումը / ապաշխարումը միակ բանն է, որը կարող է կոտրել անեծքը, **ԱՊԱ** դու իսկապե՛ս, իսկապե՛ս պիտի զղջաս / ապաշխարես հենց հիմա: (Հակոբոս 4:7-10; Մարկոս 1:4; 2 Կորնթ. 7:9-11; Հռոմ 2:4-5; Մաթ. 3:1-2; Ղուկաս 13:1-5; Գործք 2:36-41; Գործք 17:29-31; 2 Պետրոս 3:9; Հայտն. 2:5; 2:16, 2:22, 3:3, 3:19)

Բայց **ԵԹԵ** դու մոլորության տակ ես և կույր ես կամ քնած, **ԱՊԱ** դու չես կարող զղջալ կամ չգիտես, թե ինչի համար զղջալ: (Մաթ. 15:14; Հայտն. 3:17; Հովհ. 9:40; Մաթ. 13:13-14)

ԵԹԵ դու չզղջաս, **ԱՊԱ** դու կվառվես ու մոխիր կդառնաս, (Իսկ զղջումը / ապաշխարումը ընծա է, որը ՄԻԱՅՆ Աստծուց կարող է գալ - իսկ Նա քեզ անիծում է անհնազանդ լինելու համար և կարող է չլցնել քեզ վրա Ապաշխարության Ընծան:) (Հռոմ. 2:4; 2 Տիմոթ. 2:25-26; Գործք 17:30; Հակոբոս 4:7-10; Գործք 5:31)

ԵԹԵ դու չես կարող զղջալ կամ չես զղջում, իսկ զղջումը / ապաշխարումը միակ հույսն է, **ԱՊԱ** դու գտնվում ես անհույս պարադոքսալ օղակում:

ԵԹԵ քեզ համար որևէ հույս կարող է լինել, **ԱՊԱ** Աստված Ինքը, կամ էլ մեկը, ով արդեն ՈՒՆԻ Ապաշխարության Ընծան, պիտի գա և լցնի այն քեզ վրա, որպեսզի դու ազատվես: Եվ այդ ժամանակ դու պիտի շրջվես ու շրջված մնաս:

ԵԹԵ դու հետ գնաս՝ ինչպես շունն իր փսխածի մոտ, ապա քեզ համար շատ ՎԱՏ կլինի: (2 Պետրոս 2:20-22; 2 Տիմ. 2:25-26; 2 Կորնթ. 7:10)

Եկեղեցու
ներկա վիճակի ԵԹԵ / ԱՊԱ
Աքսիոմները

(այստեղ և ողջ գրքում «եկեղեցի» բառը բնորոշում է բոլոր տեսակի եկեղեցիներն ու քրիստոնեական ուղղությունները կամ կազմակերպությունները մասին)

ԵԹԵ Աստված մեր կողմից է, **ԱՊԱ** ոչինչ չի կարող դիմակայել մեզ: (Հռոմ. 8:31; Հեսու 1:9 ; 1 Հովհ. 4:13-18; Ա Մնացորդաց 32:7-8; Թագ. Դ 6:15-17)

ԵԹԵ Աստված ասում է, որ, երբ դու հնազանդվես, ոչինչ չի կարող դիմակայել քեզ, **ԱՊԱ** հիմա, ամենայն հավանականությամբ, մենք Նրան հնազանդ չենք:
ԵԹԵ բարու և չարի միջև պատերազմ կա, ու մենք կարծես պարտվում ենք, **ԱՊԱ,** ամենայն հավանականությամբ, մենք Երկրորդ Օրենք 28-րդ գլխի անեծքների, այլ ոչ թե օրհությունների տակ ենք: (Երկրորդ Օրենք 28)

ԵԹԵ Եկեղեցում ու նրա առաջնորդների ու Եղբայրության մեջ կա դավաճանություն, նախանձ ու ցանկասիրություն, գժտություններ, անջատախմբեր և եսասիրական ձգտումներ, **ԱՊԱ** այն, իր ներկա վիճակում, ՉԻ ԿԱՐՈՂ ժառանգել Երկնքի արքայությունը: (Գաղատացիներ 5)

ԵԹԵ Եկեղեցում փողասիրությունը ներկա է և մնայուն, **ԱՊԱ** ողջ չարիքի արմատը լավ խրամատված է մեր համակարգերում, և մենք մեծ վտանգի մեջ ենք: (1 Տիմոթ. 6:10)

ԵԹԵ մենք մեր սիրով պետք է ճանաչվենք որպես քրիստոնյա, սակայն ատում ենք իրար, **ԱՊԱ** գուցե՞ մենք իրականում քրիստոնյա չենք: (1 Հովհ. 2:9-11, 3:14-24, 4:19-21, Հովհ. 15:23)

ԵԹԵ մենք լավ տնտեսվարներ չենք այն ամենում, ինչ Աստված վստահել է մեզ և մենք մեր լուման թաղել ենք հողի մեջ, **ԱՊԱ** մենք դուրս կշպրտվենք արտաքին խավարի մեջ, որտեղ կլինի շատ լաց և ատամների կրճտոց: (Ղուկ. 12:35-48; Մաթ. 25:25-46)

ԵԹԵ մենք որոշակիորեն կարողանում ենք ցույց տալ, որ Եկեղեցին, հիմնականում, ամեն ինչ անում է ճիշտ ՀԱԿԱՌԱԿ այն ամենին, ինչպես Աստվածաշունչն է առաջարկում, որ մենք անենք - և ոչ ոք դեմ չէ, **ԱՊԱ** մենք պետք է գանք այն եզրակացությանը, որ գերբնական հիմարություն կա՝ գործադրված այս համակարգի վրա, քանի որ ոչ ոք չէր կարող նպատակադրվրված ծրագրել այս աստիճան կոտրված մի բան:

http://www.fellowshipofthemartyrs.com/

Ահավոր փաստերի օրինակներ - Ինչպե՞ս կարող ենք մենք արդարացնել նման բաները

- Կամբոջիայում կնունքի միջին գինը 4300$ է (բոլոր քրիստոնյաների ծախսերը բաժանած ելքային տվյալների):
- Հնդկաստանում կնունքի միջին գինը $ 9.800 է, ԱՄՆ-ում կնունքի միջին գինը $1,550.000:
- Գերմանիայում կնունքի միջին գինը $ 2,119.000:
- Քրիստոնեական եկամտի 1%-ից քիչն է ծախսվում ամենանահասանելի վայրերում ապրող մարդկանց ավետարանելու վրա:
- Ողջ քրիստոնեական հանրայնացման /ավետարանման 91%-ը, որպես նպատակակետ չի ընտրում ոչ-քրիստոնյաներին, այլ ընտրում է ուրիշ քրիստոնյաների:
- Մեծ Հնաձնարարության 648 միլիոն Քրիստոնյաների 70%-ը երբեք չեն լսել այն մասին, որ աշխարհում կա 1,6 միլիոն անհատ, որոնց երբեք չի քարոզվել Ավետարանը:
- Չնայած այն բանին, որ Քրիստոսը հրամայել էր Ավետարանել, մեր թվարկության 30-ական թվականներից մինչև այսօր մարդկանց 67%-ը երբեք չեն էլ լսել նրա անունը:
- Թվով մոտ 300՝ քրիստոնեական միջազգային խոշորագույն կազմակերպություններից մոտավորապես 250-ը կանոնավորապես մոլորեցնում են քրիստոնյա հասարակությանը՝ տպագրելով ոչ ճիշտ, կամ կեղծված առաջընթացի տվյալներ:
- Ներկայումս կան 41,000-ից ավել «քրիստոնեական» ուղղություններ, և ամեն երկու օրը մեկ մենք նորն ենք սկսում:

Փաստեր Աշխարհի Քրիստոնեական Ուղղություններից; Ուիլյամ Քերիի Գրադարանից; Դեյվիդ Բերեթ և Թոդ Ջոնսոն, 2001թ.; Քրիստոնեական տարեկան մարդահամարի վերլուծությունից:

Ի՞նչ է Կարմիր Վիշապը

Դա թշնամին է: Դա բաբելոնի պոռնիկն է, դա հակա-քրիստոսն է (նեռը), դա կեղծ մարգարեն է, դա հայտության վիշապն է: Դա ոչ միայն այս ամենի ՄԻԱԿ ձևափոխությունը/տեղաշարժը կամ արձագանքը կամ բացարձակ դրսևորումն է, այլ նաև այս բոլորը միասին: Դա բաբելոնյան կրոնական համակարգն է՝ իր բոլոր ձևերով ու ձևափոխումներով/տեղաշարժերով: Դա կարող է լինել Բուդդիզմը, Իսլամը, Աթեիզմը, Կաթոլիկությունը կամ քրիստոնեական ուղղությունների համակարգերն, ինչպես օրինակ՝ Եպիսկոպոսականները, Լյութերականները, Մեթոդիստները և մնացացած բոլորը՝ յուրաքանչյուրը, ով շարժվել է իր ուզած ձևով և ստեղծել իր սեփական կրոնը:

Դու չե՞ս կարծում, որ քո սեփական կրոնն ես ստեղծել: Դե եթե դու Աստվածաշնչից հատվածներ ես «կտրել ու տեղադրել»՝ դասավորելով կամ էլ դրանց ինչ-որ բան ես ավելացրել, որն իրականում այնտեղ չկա, ապա դու ստեղծել ես մի խառնածին (հիբրիդ), վարկաբեկման ես համաձայնել և համաձայնագիր ես կնքել քո ստեղծած օտար աստվածների հետ: Իրականում, ակնհայտ է լինում, երբ դու խոնարհվում ես փայտից, քարից կամ ոսկուց կերտած աստվածների առջև, սակայն նույնչափ կռապաշտություն է, երբ դու խոնարհվում ես լրացուցիչ Աստվածաշնչյան փաստաթղթերի կամ հորինված սովորույթների կամ փիլիսոփայությունների առջև: Գուցե դու պաշտում ես Աստվածաշնչի մի հատուկ տարբերակ կամ քո խմբի մարդկանցից պահանջում ես բաներ, որոնք Աստվածաշունչը չի պահանջում, գուցե դու մերժում ես գործ ունենալ որոշ մարդկանց հետ, որոնք իրենց մեջ Սուրբ Հոգին ունեն, սակայն ինչ-որ երկրորդական հարցերում քեզ հետ համաձայն չեն: Գուցե դու, Քրիստոսից բացի, մի որևիցե մարդու ես դրել քո գլխին: Սրանք և հազարավոր այլ ձևափոխումներ՝ բոլորն էլ ապացույց են, որ դու մի կուլտ ես ու պաշտում ես սխալ Հիսուսի (կամ պաշտում ես ինքդ քեզ):

Կարմիր Վիշապների ամենամեծ տարբերությունը կայանում է նրանում, թե արդյո՞ք Աստված քեզ համարում է ֆիզիկական կամ հոգևոր Իսրայելի մի մասը: Եթե ՈՉ, ապա Վիշապը, որ քո (կամ քո եկեղեցու) վրա է, այնտեղ հայտնվել է այն պատճառով, որ այն ներս է սողոսկել կամ էլ հրավիրված է եղել, սակայն երկու դեպքում էլ նրան պետք է կապել ու դեն շպրտել, և դու կարող ես դրանից ազատագրվել: Մի անգամ Տերն ինձ ասաց, որ բուդդայական մի մենավանքի վրայից մի վիշապի պոկեմ և դուրս շպրտեմ: Նրանք կարող են ազատագրվել Կարմիր Վիշապից (դա չի նշանակում, որ նրանք անմիջապես նորը ձեռք չեն բերի, եթե դա նրանց դուր է գալիս, սակայն Տերը ցանկանում էր ցույց տալ ինձ, որ դա հակաքրիստոսն է, բայց այն հայտնվել է այնտեղ՝ ոչ որպես հետևանք (անեծք) Աստծո զավակների վրա, այլ, պարզապես, «աշխարհն է», որ այդպիսին է:)

ԲԱՅՑ … եթե դու ֆիզիկական Իսրայելն ես (ազգը/ռասան) կամ հոգևոր Իսրայելը (Եկեղեցին) և դու տանիքիդ Կարմիր Վիշապ ունես, ապա այն այժմ ամբողջովին խրամատված է, և ԱՍՏՎԱԾ Է ԴՐԱՆ ԱՅՆՏԵՂ ԴՐԵԼ, և այն առանց զոհման չի կարող հեռացվել: Այն ԱՎԵԼԻ խորամանկ է և նողկալի, և այդ տեսակ Վիշապի տակից դուրս գալն ավելի դժվար է, քանի որ Աստված բարկացացած է ու օգնում է դրան:

Հասկացիր ինձ, եթե դու «քրիստոնյա» ես ու շարժվել ես քո ուզած ձևով, ապա Երկրորդ Օրենք 28-րդ գլխի անեծքներն իջել են քեզ վրա, բայց, ամենայն հավանականությամբ, դու վստահ ես, որ

քեզ մոտ ամեն ինչ լավ է: Սա «Հին Կտակարանյան» մի բան չէ, որն այլևս քրիստոնյաների վրա չի տարածվում: Տերն Իր նպատակների և Իր գերիշխանությունն ապացուցելու համար ԿԿԱՐԾՐԱՑՆԻ քո սիրտը, եթե դու գնաս քո ուզած ձևով, և ԿԿՈՒՐԱՑՆԻ քեզ, որպեսզի դու չտեսնես, թե իրականում ամեն ինչ որքան ավելի վատ է: Հայտնության 3-րդ գլխում Լաոդիկիայի եկեղեցին մտածում էր, թե ինքը հարուստ էր, սակայն նա շատ սոված էր, մերկ, խղճուկ ու կույր: Սա այն աղավաղված հեռանկարն է, որը գալիս է, երբ դու գերբնականորեն հիմարեցված ես անեծքից:

«Աշխարհը» կարող է լինել Կարմիր Վիշապի տակ և իսկապես ատել դրան ու ցանկանալ ազատագրվել և շատ ուժգին ցանկանալ մի այլ՝ իսկապես լավ մի բան: Նրանք թակարդի մեջ են մնում միայն այն պատճառով, որ չեն լսել ճշմարտությունը, և այն առայժմ հասանելի չէ նրանց: Սակայն Կարմիր Վիշապի տակ գտնվող «եկեղեցուն» դա իրականում դուր է գալիս և նրանք չեն ցանկանում փոխվել, քանի որ նրանց ականջները խուտուտ են գալիս և նրանց սրտերը կարծրացած են: Որքան ավելի երկար է սա շարունակվում, այնքան ավելի է վատթարանում, ու հաջորդ սերունդներն ավելի ու ավելի ապականված են: Երկու դեպքում էլ մարդիկ մեռնում են գիտելիքի պակասից. Աստծո ճշմարիտ օրենքի մասին գիտելիքի պակասից և այն պատճառով, որ չգիտեն, թե իրականում Տիրոջ Երկյուղն ինչ է, և ինչ է նշանակում ԻՍԿԱՊԵՍ զղջալ ինչ-որ բանի համար:

Ջանալով սա մեկ անգամ էլ ապացուցել՝ Տերն ինձ հուշեց, որ ամբողջովին ուսումնասիրեմ այն բոլոր դեպքերը, երբ Աստվածաշնչում ինչ-որ մեկն անզգայացման, քնի, նիրհի, կուրության կամ խլության ազդեցության տակ է եղել: Աստծո Խոսքի մեջ ես ՈՉ ՄԻ օրինակ չեմ կարող գտնել, երբ թշնամին է անում սա որևէ մեկի նկատմամբ: Գրեթե յուրաքանչյուր քարոզիչ, որին ես լսել եմ այս մասին քարոզելիս, հավատում է, որ «եկեղեցին» մասնավորապես Ամերիկայում գտնվողները, այս պահին այդ նույն Լաոդիկիայի եկեղեցին է՝ հարուստ, քնած, կույր: Եթե ես ճիշտ եմ, ապա, ըստ Սուրբ Գրքի իմ ուսումնասիրման, ԱՍՏՎԱԾ Ինքն է սա մեզ արել: Չկա ՈՉ Մի նշում, որ ես կարող եմ ինչ-որ տեղ գտնել այն մասին, որ քունը, անզգայությունը կամ կուրությունը կարող են Աստծո ժողովրդի վրա իջնել, ԱՍՏԾՈՒՑ բացի, մի ԱՅԼ աղբյուրից, ու մենք ինքներս ենք դա արել՝ Աստծուն չհնազանդվելու արդյունքում (Տես Կարմիր Վիշապի վերջին հատվածները՝ 88-րդ էջ):

Խնդրում եմ, հասկացիր ինձ: Ես շատ տարիներ եմ անց կացրել՝ ողջ երկրով մեկ ճանապարհորդելով ու տեսնելով մեծ ու փոքր վիշապներ խոշոր ծառայությունների, մեգա-եկեղեցիների, տնային խմբակների, անհատների վրա: Սա ավելի վտանգավոր է, քան որևէ մեկը կցանկանար ընդունել և շատ ավելի մահացու է: Դու ՄԻԱՆԳԱՄԱՅՆ ՎՍՏԱՀ ԿԼԻՆԵՍ, որ Աստծուն ճշգրտորեն ես լսում, նույնիսկ այն ժամանակ, երբ Աստված իր Գահից սուտ ոգի է ուղարկում, որի նպատակը քեզ կործանելն է: Նա իսկապես անում է դա: Մի պահ մի կողմ դիր մարդկանց հորինած քո աստվածաբանությունը և կարդա՛ Աստծո Խոսքը: Կարդա՛ Բ Մնացորդաց 18-րդ և Թագավորություններ Գ 22-րդ գլուխները. Դավիթ Թագավորին չէր թույլատրվում դիպչել Իսրայելի թագավորին (Սավուղին), սակայն Աստված լիովին պատրաստ էր Ինքը սպանել ևս մեկ օծյալ թագավորի (Աքաբին) ու իր ժողովրդին թողնել առանց հովվի:

Աստված քեզ մոլորություն ԿՈՒՂԱՐԿԻ, իսկ դու չես էլ հասկանա: Որքան ավելի մոտ ես Աստծուն, այնքան ավելի մեծ են Նրա սպասելիքներն այն մասին, որ դու հնազանդ կլինես, և ավելի ստոր է

այն Վիշապը, ում Աստված կհանձնի քեզ, եթե դու շարժվես քո ուզած ձևով: Գիտեմ, որ իրոք քիչ հավանական է, որ դու հասկանաս ինձ, եթե դու հիմա դրանցից մեկի տակ ես, բայց, խնդրու՛մ եմ քեզ, փորձի՛ր:

Ո՞վ իր վրա ունի Կարմիր Վիշապ

Յուրաքանչյուրն ով Քրիստոսի գլխավորության տակ չէ ինքնըստինքյան ընդունում է հակաքրիստոսի (նեռի) ոգին: Բոլոր մակարդակների բոլոր շերտերը ենթակա են Կարմիր Վիշապի «ծածկույթի» տակ լինելու: Դու, նույնիսկ, կարող ես միաժամանակ բազմաթիվ Կարմիր Վիշապների տակ լինել: Դա նշանակում է, որ ինչ-որ մեկը Քրիստոսի մարմնի մի մասն էր, բայց հետո գնաց իր ուզած ձևով (լինի դա անհատապես կամ խմբովի): Նա ստեղծել է իր սեփական «խորհրդավոր կրոնն» ու ինքն իրեն Կարմիր Վիշապի տակ դրել: Որքան ավելի երկար նա այնտեղ մնա, այնքան ավելի կկարծրացնի Աստված նրա սիրտն ու կկուրացնի նրան՝ իր իսկ հոգու իրական վիճակը չտեսնելու համար:

Դա այնքան հեշտ չէ, որքան «եկեղեցու» անդամ չլինելը կամ քո անդամագրության նամակը հետ վերցնելը: Սա շատ ավելի համատարած է և ծածուկ: Իր վրա հակաքրիստոսի կրոնական ոգի կարող է ունենալ մի անձ կամ իր ընտանիքը, իր միաբանությունը, իր քաղաքը, իր քրիստոնեական ուղղությունը, իր երկիրը: Նրանք կարող են Վիշապի տարբեր թիմերի բազմաթիվ շերտերի «անդամներ» լինել, որոնք, նույնիսկ, հակասող նպատակներ ու խնդիրներ կարող են ունենալ, սակայն բոլորն էլ իրենք իրենց հակադրել են Աստծուն: Գուցե կան գործի դրված ուրիշ շերտեր, որոնք ես չեմ տեսնում, սակայն դրանք ԲՈԼՈՐՆ էլ պետք է կոտրվեն: Դու չես կարող համապատասխանել «աշխարհին»՝ ՈՐԵՎԻՑԵ մակարդակում:

Ես համոզվել եմ, որ Կարմիր Վիշապը ամենաուժեղը, ամենակատաղին, ամենակտիվը և ամենաչարակամն է այն վայրերում, որտեղ, սովորաբար, առավել լավ են լսում Աստծուն: Այսինքն՝ «Հոգով-լցված» այն ծառայություններին, որոնք հավատում են Աստծո Ընծաներին, սրբություն են քարոզում, հավատում են, որ Աստված խոսում է, և փնտրում են Աստծո երեսը, պահանջվում է ամենամեծ, ամենաստոր, ամենախորամանկ Կարմիր Վիշապը նրանց ճանապարհից շեղելու համար: Սրան ավելացրած այն, որ նրանց նկատմամբ սպսելիքներն ավելի բարձր են, հետևաբար, անհնազանդության հետևանքներն ավելի վատն են: Սրանք են այն վայրերը, որտեղ այն ամենաուժեղն է և ամենաակտիվը, և շատ դյուրին է դրան տանիքին նկատելը: Միաբանությունը, որը քնած է և սերունդները շարունակ քնած է եղել, և որտեղ դավանանքի համոզմունքը ամբողջապես արմատացած է, և նրանք Աստծուն լսելու և նրա կողմից առաջնորդվելու վտանգի տակ չեն, հազիվ թե որևէ Կարմիր Վիշապի կարիք ունենա: Փոքրիկ մեկը իսկ և իսկ այն է, ինչ կպահանջվի <u>այդ</u> վայրի վրա նշանակվելու համար: Այս խմբերի երկու տեսակներն էլ հավասարաչափ խաբված և ճնշված են, սակայն թշնամուց շատ ավելի քիչ աշխատանք է պահանջվում այն դեպքում, երբ դու քնած ես, և դա քեզ դուր է գալիս: Ճիշտն ասած՝ Աստված շատ ավելի քիչ է բարկացած քնածների վրա, քանի որ նրանք չգիտեն այն, ինչ չգիտեն:

Լավ նորությունն այն է, որ շատ ավելի հեշտ է զղջալ / ապաշխարել մի վայրում, որը քնած է: Ես մեծ հույսեր ունեմ, որ Բափթիսթները, Եպիսկոպոսականները, Լյութերականները և մյուսները ի վիճակի կլինեն սա ընկալել, ընդունել և ապաշխարել: Նրանց Կարմիր Վիշապն այնքան էլ ուժեղ չէ, և նրանք կարող են պարզապես ծածուկ բարձրանալ դրա վրա ու ազատվել՝ նախքան այն կնկատի: Սակայն հենց որ վերածնման կրակը վառվի Բափթիսթական եկեղեցում, ավելի մեծ մի Վիշապ ավելի շատ աջակցությամբ կգա և կճզմի այն: Բանալին դրան հանկարծակի բերելու մեջ է: Կապի՛ր այն ինչ կա, նախքան այն օգնություն կկանչի:

Ես զգալիորեն ավելի քիչ լավատես եմ խարիզմատների վերաբերյալ: Նրանք լսում են Աստծուն և իսկապես հպարտ են դրանով ու վստահ են, որ լսում են 100% ճշգրտությամբ (ինչը պատահում է, երբ դու Աստծուց ուղարկված մոլորության տակ ես գտնվում): Նրանց Կարմիր Վիշապները ՇԱՏ հզոր են և կատաղի ու խեղդում են հավաքական զղջումը: Ես դրանցից մեկին մոտիկից և անձամբ եմ տեսել ու ցնցված էի, թե ինչ աստիճանի է դա կառավարում այդ ամենը. Նույնիսկ մարդիկ որոնք դրա մեջ չեն, և պարզապես գալիս են այդ վայրերում խոսելու, քարոզելու, երբեմն ամբողջովին, գերբնականորեն անկարող են իսկապես քարոզել հավաքական ապաշխարում:

Վերջիվերջո, <u>հավաքական</u> փոփոխությունը կհասնի Վիշապի Գլխավոր Պարողին: Եթե քարոզավայրի գլխավորը (քարոզիչը, առաքյալը, մարգարեն, եպիսկոպոսը, քահանան կամ այլ մեկը) կարողանա դեն շպրտել Կարմիր Վիշապին ու իսկապես անկեղծորեն զղջալ ու արտասվել, ողբալ իր ոչխարների առջև, ապա նա կկարողանա նրանց բոլորին ազատել: Սակայն սա ամենադժվար իրականացվող դեպքերից ամենա դժվար իրականացվողն է - այն, որ քարոզավայրի գլխավորն իսկապես ամեն ինչ ցած կդնի՝ առանց երբևիցե նորից հետ վերցնելու, կամ էլ մի ուրիշ՝ մի այլ ոճի Կարմիր Վիշապ չի գտնի: Ես սա տեսել եմ ու գիտեմ, որ այն կարող է պատահել (ապաշխարումը / զղջումը), բայց չեմ կարծում, որ դա համատարած կլինի: Կարդա Եզեկիել 34-ը:

Ես հավատում եմ, որ մարդիկ, ովքեր Ապաշխարության Ճշմարիտ Ընծան ունեն, կարող են գալ և շտկել ողջ այդ վայրը՝ անկախ այն հանգամանքից, արդյոք Վիշապի Գլխավոր Պարողը կցանկանա դա, թե ոչ: Ես դա նույնպես տեսել եմ: Ես գտնվում էի մի միաբանությունում և ինչ-որ ունեի (հոգում) լցրեցի, տվեցի նրանց և տեսա, որ նրանք ատրասվում ու ապաշխարում էին: Բայց եթե Վիշապի Գլխավոր Պարեցնողը դրան զուգահեռ չընթանա, կամ մարդիկ ետևում չթողնեն մարդու կողմից կերտված համակարգը, ապա դա անկայուն կլինի: Նրանք չեն գնա այնտեղ, ուր դու իրենց կառաջնորդես: Եթե հովիվները չգնան, ոչխարներն նույնպես չեն գնա: Ոչխարները կա՛մ պիտի հովիվ գտնեն, որը նրանց ապահով <u>կուղեկցի</u>, կա՛մ կխմբվեն իրենց հովվի շուրջ, մինչև որ նա կոտրվի ու դառնա կոտրված ու ապաշխարած անոթ՝ պիտանի Աստծո նպատակների համար:

Առանց հավաքական փոփոխության՝ մոլորության տակից դուրս գալը կլինի միայն անհատ անձանց գործը: Դա կարող է պատահել մեկի կամ երկուսի հետ, կամ գուցե մի մասսայական տեղաշարժ լինի, որը միայնակ կանգնած կթողնի Վիշապի Գլխավոր Պարեցնողին: Ինչ գնով էլ լինի, միայն թե դու՛րս արի դրա տակից, եթե կարող ես:

Ինչպե՞ս է այն հայտվել Աստծո մարդկանց վրա

Նրանք վարվեցին իրենց ուզած ձևով. կերան արգելված պտուղը, շրջվեցին այլ աստվածների կողմ, թերացան Տիրոջ հրամաններին զգուշորեն ու ջանասիրաբար հետևել և այդպիսով՝ բացեցին դուռը: Նրանք թերացան ուրախությամբ և հաճույքով ծառայել Տիրոջը բարեկեցության ժամանակներում: Որքան ավելի հեռու նրանք գնացին, այնքան ավելի կարծրացրեց Տերը նրանց սրտերն ու վիշապին թույլ տվեց անհանգստացնել մարդկանց: (Տես Երկրորդ Օրենք 28-րդ գլուխը): Այս անեծքները ֆիզիկական անեծքներ էին ֆիզիկական Իսրայելի վրա, սակայն ունեին նաև հոգևոր բաղադրիչ: Դրանք նաև հոգևոր անեծքներ են հոգևոր Իսրայելի վրա (որը Եկեղեցին է) և դրանք ֆիզիկական բաղադրիչ ունեն: Մենք հիմա կրում ենք ԲՈԼՈՐ ԱՅԴ անեծքներն այն «եկեղեցական» (թե՛ կրոնական, թե՛ աղանդավորական) համակարգում, որը մենք ենք կառուցել: Դա կարող է ՄԻԱՅՆ այն նշանակել, որ մենք Աստծուն չենք հնազանդվել և մեր ուզած ձևով ենք շարժվել: (Տես Կարմիր Վիշապի վերջին մասում գրված հատվածները՝ 78-րդ էջ:)

Մենք ինքներս ենք բերել սա մեզ վրա: Կարդա՛ Եզեկիել մարգարեի Ողբը: Այս անեծքները դրսևորվել են ֆիզիկական Իսրայելի վրա և հիմա դրանք դրսևորվում են հոգևոր Իսրայելի վրա բացառիկ փոխարժեքով: Բայց մենք դա չենք նկատում, քանի որ մենք հոգով չենք տեսնում: Սակայն ոչխարները կարող են դա զգալ և նրանք հեռանում են:

2 Տիմոթէոս 2:17-24

17 Բայց Աստծու հաստատուն հիմքը կանգուն է մնում եւ ունի այս կնիքը, թէ՝ «Տէրը ճանաչէց նրանց, որ իրն են». նաեւ՝ «Անիրաւութիւնից հեռու լինի ամենայն ոք, ով կրում է Տիրոջ անունը»: 18 Մի մեծ տան մէջ ոչ միայն ոսկեայ եւ արծաթեայ անօթներ են լինում, այլ նաեւ՝ փայտեայ եւ խեցէ: Կան այնպիսիք, որոնք պատուաւոր գործածութեան համար են, կան էլ, որ ոչ պատուաւոր գործածութեան համար են: 19 Եթէ մէկն ինքն իրեն մաքրի այդպիսի բաներից, կը լինի պատուաւոր անօթ՝ սրբագործուած եւ պիտանի իր Տիրոջը, պատրաստուած ամէն բարի գործի համար: 20Երիտասարդական ցանկութիւններից փախի՛ր եւ գնա՛ արդարութեան, հաւատի, սիրոյ, խաղաղութեան եւ սրբութեան յետեւից նրանց հետ, որոնք մաքուր սրտով աղօթում են Տիրոջ անունով: 21 Բայց յիմար եւ անմիտ վէճերից խուսափի՛ր. իմացի՛ր, որ դրանցից կռիւներ են ծնւում: 22 Այսպէս ուրեմն՝ Տիրոջ ծառան պէտք չէ որ կռիւ անի, այլ բոլորի հանդէպ լինի հեզահամբոյր, ուսուցանող, անոխակալ՝ 23 հանդարտութեամբ խրատելու համար ***հակառակողներին,*** *որ թերեւս* ***Աստուած նրանց ապաշխարութիւն տայ,*** *որպէսզի ճանաչեն ճշմարտութիւնը 24 եւ զգաստանալով՝* ***ազատուեն Սատանայի որոգայթներից,*** *որոնց մէջ բռնուած են նրա կամքը կատարելու պատճառով:*

Եթե դու չհեռանաս անարդարությունից, եթե դու չզտվես, եթե դու չփախչես պատանեական ցանկասիրությունից, չխուսափես հիմար և տգետ հարցերից, եթե դու վեճեր հարուցես, ԱՊԱ դու <u>ինքդ քո</u> դեմ ես գործում՝ մտնելով Կարմիր Վիշապի տակ, որը նախատեսված է քո իսկ կործանման համար: Դու դուրս ես գալիս Աստծո կատարյալ կամքի պաշտպանող պատյանի տակից՝ բացում քեզ այն ամենի առջև, ինչը կցանկանա գալ խանգարել կամ անհանգստացնել քեզ: Եվ դա, հավանաբար, ինչ-որ մի գաղտագողի և աննկատ բան կլինի (համենայն դեպս սկզբում): Այն կխաբի քեզ ու ճի՛շտ և ճի՛շտ Աստծո նման կինչի: Եվ քո ՄԻԱԿ հույսը զղջումն է, որպեզի դու կարողանաս ճանաչել ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ և միգուցե վերականգնվել սատանայի թակարդից, որը քեզ իր

կամքի գերին էր դարձրել: Եվ այս գլուխն ասում է, որ նրանք գուցե ի վիճակի չլինեն ինքնուրույն դա անել, գուցե հարկավոր լինի, որ մարդիկ, ովքեր Տիրոջ սրբագործված սպասավորներն են, համբերատարությամբ և հեզաբար սովորեցնեն այս մարդկանց, թե ինչպես ազատագրվել: Ես հավատացած եմ, որ դա նշանակում է լցնել նրանց վրա քո՛ իսկ Ապաշխարության Ընծան: Ինչպե՞ս կարող էիր ԴՈՒ դառնալ սրբացած, մեղմ, հեզ ու համբերատար, եթե ոչ զղջալով / ապաշխարելով: Հիմա ցու՛յց տուր նրանց, թե ինչպես այդ անել: Իսկ ավելի լավ է, ապաշխարիր նրանց առաջ, որ նրանք տեսնեն, թե ինչպես է դա արվում:

Որքան ավելի երկար ես դու մնում Կարմիր Վիշապի տակ, այնքան ավելի կույր ու հիմար ես դառնում. գալիս է ինչ-որ պահ, երբ դու արդեն թավալվում ես գետնին՝ հավի պես կչկչալով, կամ լացող արձաններ ես պաշտում կամ չարությամբ լցվում ցանկացած մեկի նկատմամբ, ով ամենաչնչին որևէ հարցում չի համաձայնում քեզ հետ, կամ ավելի վատ՝ կերակրում ես քո «ոչխարների հոտը մրգային թունավորված օշարակով», կամ էլ՝ քո 15 կանանց դուստրերի հետ ես հարաբերվում, կամ լիցքավորում քո ավտոմատ զենքերն՝ այն պահին, երբ «ալկոհոլի, ծխախոտի և պայթուցիկ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի բյուրոյի» («ATF») և Հետաքննությունների ֆեդերալ բյուրոի («FBI») աշխատակիցները (կամ ոստիկանության հատուկ նշանակման ջոկատը) իրենց տանկերը քո հյուրասենյակ են քշում: Եվ դու բացարձակապես վստահ ես, որ դա Աստծո գաղափարն էր, և վստահ ես, որ դու ճշմարիտ ճանապարհին ես: Այսինքն՝ մինչև ճիշտ այն պահը, երբ դու կանգնես Աստծո առաջ, և Նա ասի. «Ես քեզ երբեք չեմ ճանաչել:» Եվ ԱՅԴ ԺԱՄԱՆԱԿ կլինի լաց ու զղջում, սակայն արդեն շատ ուշ կլինի: Ավելի լավ չէ՞ր լինի հենց սկզբում դա անել և միգուցե խուսափել այդ ողջ սրտացավից:

Ի՞նչ ես կարծում, ինչպե՞ս, առանց դրա (զղջալու), մենք կարող ենք համոզել Նրան շրջվել: Ի՞նչ կասես այս հատվածի մասին: Մտածի՛ր, արդյոք սա ուղղակի լավ խորհուրդ է, թե՞ հրահանգ: Աստծո Խոսքի մեջ կա արդյո՞ք ՈՐԵՎԷ ԱՅԼ դեղատոմս, որը կհամոզի նրան շրջվել:

Բ Մնացորդաց 7:13-14

13 Եթէ երկինքը փակեմ, ու անձրեւ չլինի, եթէ հրամայեմ, որ մորեխն ուտի ծառերը, եթէ մահ առաքեմ իմ ժողովրդին, 14 եւ եթէ իմ ժողովուրդը, որի վրայ իմ անունն է դրուած, զղջայ, աղօթի եւ իմ երեսը փնտռի ու յետ դառնայ իր չար ճանապարհներից, ես էլ երկնքից կը լսեմ, կը ներեմ նրանց եւ կը բուժեմ նրանց երկիրը:

Ի՞նչ տեսք ունի Կարմիր Վիշապը

Այն տեսքով, ինչպես այն ինձ է ցույց տրվել, այն միանգամայն նման է չինական տոնահանդեսների կամ շքերթների մեծ վիշապին: Այն սեփական ոտքեր չունի և, առանց արտաքին ուժի՝ անշարժ կլիներ: Այն ունի վիթխարի ու ահարկու գլուխ՝ մեծ ատամներով և ստոր տեսքով և շատ դաժան ու տպավորիչ թվալու հետ միաժամանակ, նաև փաղաքշանք է ներշնում: Այն պատված է մետաքսով ու փայլերով և նախատեսված է՝ իր նկատմամբ ուշադրություն գրավելու համար: Սակայն այն չի կարող որևէ բան անել կամ որևէ տեղ գնալ՝ առանց այն մարդկանց ձեռքերի ու ոտքերի, որոնք դրա «ծածկի» տակ ես գտնվում դրան շարժելու համար: Ճիշտ այնպես, ինչպես շքերթների ժամանակ՝ այն մշտապես մի «Մարգարիտ» է հետապնդում: Սատանան պարտված թշնամի է, որն իր սեփական ուժը չունի: Նա ավարտին է հասցնում իր նպատակները՝ կողոպտելով մեր սեփական ֆիզիկական և հոգևոր էներգիան: Մենք ենք այն ոտքերը, որոնք ուժ են տալիս նրան:

Արտաքինից այն շատ կոկիկ է թվում. Վիշապին Պարեցնողների ոտքերը զարդարված են ու գույնզգույն, սակայն եթե դու նայես ներսի կողմից, ապա կտեսնես, որ դա փայտե բարակ մի կմախք է, որն իրենց վրա պահում են, հասարակ շապիկներ հագած, քրտնած, տղաները: Ներսից այն ամենևին աշխույժ կամ առանձնահատուկ չի թվում: Ողջ շեշտը դրված է արտաքին տեսքի վրա, և շատ աշխատանք է տարված վստահ լինելու համար, որ «փորոտիքն» ամբողջությամբ քողարկված է:

Կարող ես այստեղ դիտել մի տեսաերիզ չինական շքերթի փոքր վիշապի մասին.
http://www.chcp.org/wp-content/uploads/2014/02/SUMMER.mpg
Իսկ ավելի մեծ, ներսից լուսավորված մեկն էլ այստեղ կարող ես տեսնել.
http://www.theschoolbell.com/Links/Chinatown/dragon.mov
Իսկ ավելին չինական վիշապի մասին կարող ես դիտել այստեղ՝
http://www.moonfestival.org/legends/dragon.htm
և այստեղ՝ http://www.en.wikipedia.org/wiki/Chinese_dragon
Եթե դու համացանցում («Yahoo» կամ «Google») փնտրտուք կատարես, դու գուցե ցնցվես, այն հանգամանքից, թե որքան է այս կրոնական փառատոնի երկրպագությունը զտվել և այժմ որպես «մշակութային փորձ»՝ մատուցվում է նույնիսկ դպրոցական տարիքի երեխաներին: Կան ուսուցչական ձեռնարկների բազմաթիվ էջեր այն մասին, թե ինչպես տարրական դպրոցի երեխաներին սովորեցնել պարել վիշապի շքերթի պարը: Սա ԿՐՈՆԱԿԱՆ փառատոն է, սա ապահով, սիրուն զվարճանք ՉԷ՛ քրիստոնյա երեխաների համար: Ահա Սուրբ գրքից մի հետաքրքիր գրառում Վիշապի վերաբերյալ՝ այն մասին, թէ ինչու մենք պետք է այս հարցին լուրջ վերաբերվենք: http://www.eifiles.cn/dp-en.htm

Ես Կարմիր Վիշապը տեսել եմ մարդկանց վրա նույնպես: Սա ավելի փոքր տեսակն է՝ տեղակայված նրանց առջևի մասում՝ պոչը՝ վերև, իսկ գլուխը՝ ներքև: Այսինքն՝ այն կառչած է մարդու առջևից և նրա առջևի մասով ցած է շարունակվում՝ պոչը նրա երեսին դրած (կամ նրա վզի շուրջ փաթաթված): Այն կարող է լինել մեծ կամ փոքր, բայց այն համապատասխանում է Երկրորդ Օրենք 28-րդ գլխի անեծքին այն մասին, որ մենք կլինենք պոչը, այլ ոչ թե՝ գլուխը: Մենք գուցե մտածելիս լինենք, որ մենք ենք գլխավորը, սակայն իրականում մենք պարզապես նայում ենք Կարմիր Վիշապի ետևին: Այն երբեմն նաև նման է այն մարդու դեմքին, որին տվյալ անձը

գիտակցաբար կամ անգիտակցաբար իր աստվածն է դարձրել՝ Կալվինին, Լյութերին, Հռոմի Պապին, քարոզչին, կնոջը գուցե նաև՝ ինքն իրեն:

Ի՞նչ է «մարգարիտը»

Չինական կրոնական դիցաբանության և շքերթների մեջ վիշապները միշտ մի մարգարիտ են հետապնդում, որը ներկված է կապույտ ու կանաչ՝ ինչպես երկրագունդը. արդյո՞ք սա հենց Հայտնության գրքից չէ:

Վիշապն առջևում՝ իր վզից կախված, մի փայլուն գազար ունի ուշադրությունն իրենից շեղելու համար: Վիշապը բոլորին հավատացնում է, որ ինչ-որ նպատակ կա և օգտագործում է նրանց ողջ էներգիան, եռանդը, մղումը, ֆիզիկական ու հոգևոր ունեցվածքը՝ հասնելու համար այդ նպատակին, որը միշտ, Հիսուսին ճշմարտապես փնտրելուց **բացի, մի այլ բան է**: Դա կարող է լինել մի նոր մարզահրապարակ կամ նոր հողակտոր՝ ավելի մեծ մի սրբավայր կառուցելու համար, կամ մի նոր փորձ կամ նշան կամ ամենամեծ և ամենալավ աղոթքի ծառայությունը լինելու ձգտում, կամ խոհանոցում ապուր բաժանելը, կամ ցանկացած այլ բան, միայն թե, դա շարունակվի այքնան ժամանակ քանի դեռ նրանք ուղղակիորեն չեն փնտրում Հիսուսին և Նրա ամբողջական գլխավորությունն ամեն ինչում և ամեն պարագայում: Նպատակը մշտապես շարժման մեջ լինելն է և այնպես ԱՆԵԼԸ, որ այն միշտ ՈՒՂՂԱԿԻ լինի առջևում և հաստատուն առաջընթաց պահանջի: Եթե արդեն հասել են նպատակին, ապա անհապաղ մի այլ նպատակ կհաստատվի, որպեսզի Վիշապը կարողանա շարունակ խառնել բոլորին: Եթե նպատակն անհասանելի է թվում կամ երբեք չի իրագործվում, ապա այն կփոխարինվի մեկ ուրիշ նպատակով, որը կհամոզի Վիշապի Պարողներին և կստիպի նրանց առաջ ընթանալ: Այս «արժեքավոր մարգարիտն» ինչ էլ հանդիսանա, այն Աստծո Երկյուղի որոնումն ու Տիրոջ գլխավորության տակ ամբողջովին լինելն ու Նրա հետ, առանց որևիցե մի Մարդու կոմից կերտված միջանցիկ համակարգերի միջնորդության, մշտական Հաղորդակցություն ունենալու ցանկությունը **ՉԷ** - դա կկործաներ Կարմիր Վիշապին: Դրանից բացի՝ ամեն ինչ կարող է օգտագործվել: Վիշապը ՇԱՏ հնարամիտ է: Ես տեսել եմ ամեն տեսակ Մարգարիտներ, և դրանցից մի քանիսն իրոք պատվավոր ու վեհ են թվում, սակայն մարդկանց աչքերը սևեռված են Մարգարիտին, այլ ոչ թե՝ Հիսուսին, և Մարգարիտը նրանց թույլ չի տալիս տեսել Վիշապին, որը նրանց ծածկել է:

Եթե Մարգարիտը ՈՐԵՎԻՑԵ այլ բան է, այսինքն՝ այն չէ, ինչ Հիսուսն է ցանկանում, որ դու ճիշտ այդ պահին անես, ապա կպարզվի, որ դու Նեղ Արահետից, երջանիկ պարելով, ՀԵՌԱՆՈՒՄ ես դեպի Լայն Ճանապարհ, որը տանում է դեպի կործանում: Մի կողմում կա Նրա Կատարյալ Կամքը իսկ մյուսում՝ մնացած բոլոր բաները: Եթե դու նրա Կատարյալ Կամքի մեջ չես, ապա դու քո ուզած ձևով ես գնում: Եթե դու չես կարողանում լսել նրա ձայնը, ապա դու հավանաբար թեքվում ես դեպի քո սեփական հասկացողությունն ու ինքդ ուղղորդում քո սեփական ուղիները:

Ինչպե՞ս է այն գործում

Վիշապի Գլխավոր Պարողն այն մեկն է, որը ամենափորձառուն, ամենավարժը, ամենալավ-պատրաստվածն ու ամենացուցամոլն է: Նա այն մեկն է, որը կառավարում է Վիշապի գլուխը (կամ, համենայն դեպս, ինքն է այդպես կարծում): Նա ամենալավ ընդունելության արժանացողը, ամենաշատ աչքի ընկնողն է և նա է թելադրում Վիշապի ուղղությունը, ընթացքը, ոճն ու շարժումը (սակայն իրականում նա Մարգարտի ստրուկն է, իսկ Մարգարիտն ընտրել է Վիշապը): Երբ Կարմիր Վիշապը որևէ միաբանության կամ ծառայության վրա է, ծառայության գլխավորն այն մեկն է, ով Վիշապին ամենմոտն է գտնվում՝ Վիշապի ազդեցության տակ ամենաշատ ընկածն ու Վիշապի կողմից ամենալավ վարժեցվածն է: Բացարձակապես **քիչ հավանական** է, որ նա դեն կշպրտի Վիշապին, քանի որ այդ դեպքում ինքը հենց այն մեկն է, ով կորցնելու ավելի շատ բան ունի: Նա շատ երկար է աշխատել Վիշապի Գլխավոր Պարողը դառնալու համար, և դա նրան դուր է գալիս: Դրան ավելացրած այն, որ Կարմիր Վիշապը նրան էապես խրախուսում և շշնջում է, որ նա անհրաժեշտ ու կարևոր մեկն է:

Ինչպես Չինաստանում կան դպրոցներ, որտեղ սովորում են Վիշապի «գլուխը» լինել, այնպես էլ այստեղ կան դպրոցներ, որտեղ կարող ես սովորել, թե ինչպես լինել Վիշապի Գլխավոր Պարողը: (Սակայն այստեղ դրանք կոչվում են «սեմինարներ»:) Կարևորն այն է, որ դու կատարելության հասցնես այդ արվեստը՝ պարես իսկ և իսկ համապատասխան տարածաշրջանի ոճին և քո Վիշապի Ակումբի որոշակի «տեսակին»: (Այստեղ մենք դրանց կոչում ենք «քրիստոնեական ուղղություններ»:) Վիշապի Խմբերի միջև կան մրցակցություններ ու ցուցադրումներ տեսնելու համար, թե ով է ամենալավը, ամենափայլունը, ով է ամենամեծն ու ամենաարտիստիկը: Աչքի ընկնելու ու քո Վիշապին առանձնահատուկ դարձնելու՝ շատ տարբեր ձևեր կան: Յուրաքանչյուրն ունի մի այլ Վիշապ, ում ցանկանում է հաղթել կամ նմանվել: Գոյություն ունեն շատ գրքեր ու կոնֆերանսներ, որոնք գլխավորվում են Վիշապի Ամենահայտնի Գլխավոր Պարողների կողմից: Մենք շարունակ ներկայացնում ենք ավելի ժամանակակից ու ավելի մեծ Վիշապներ: Իրականում, մենք նույնիսկ վերցնում ենք մեզ վրա Վիշապներ, որ միանգամայն նման են «Ուոլ Սթրիթին» կամ «Մադիսոն Ավենյուին»: Մենք բիզնես-նախատիպերը հարմարեցնում ենք մեր կրոնական ձեռնարկություններին, որովհետև դրանք ավելի արդյունավետ են թվում: Սակայն այդ ամենն անելով՝ մենք ավելի ու ավելի ենք վշտացնում Աստծուն:

Ինքնին Կարմիր Վիշապին միևնույն է, թե դու ինչպես կպարես, այնքան ժամանակ, քանի դեռ դու շարունակում ես պարել և չես ազատագրվում: Նա ցանկանում է անդադար շարժում և անընդմեջ կխրախուսի ու կձգի, կքաշի նրանցից, ովքեր պատրաստ են շատ աշխատել դրան շարժման մեջ պահելու համար: Նա անհատների նկատմամբ սեր չունի, ու նրա նպատակն է սպանել, գողանալ ու ոչնչացնել: Նա կծամի մարդկանց ու հետո դուրս կթքի: Նա կհոգնեցնի նրանց ոտքերը, նրանց հնարամտությունը, նրանց միջոցները, ու դուրս կշպրտի նրանց՝ առանց երկմտելու, քանի որ շարժիչ ուժն ամենակարևորն է Վիշապի թիմի համար: Նա կշշնջա Գլխավոր Պարողի ականջին, որ վերջինս չանհանգստանա, եթե մարդիկ դուրս են մնում, քանի որ նրանք, իբր, հոգնում էին ու արդեն անօգուտ էին դառնում կամ այն, որ նրանք ապստամբ էին և չէին ցանկանում պարել այնպես, ինչպես հարկն է և՝ հետևել բոլորին: Եթե որևէ մեկը մատնանշի, որ պարը ոչնչի չի հանգեցնում, ապա՝ զգուշացի՛ր: Դա քեզ անմիջապես դուրս կվանի թիմից:

Այս ամբողջն արմատավորված ու հիմնված է Հպարտության վրա՝ «Ի՛նձ նայիր:» Նա ցանկանում է ընդլայնվել, ցանկանում է բարելավել իրեն՝ լինել ավելի գունագեղ ու գրավիչ, որպեսզի ավելի մեծ քանակությամբ մարդիկ նայեն իրեն և իրենց հայացքը շեղեն Հիսուսից: Նա ավելի շատ ոտքեր է ուզում, որ կարողանա ավելի շատ պարել ու ավելի երկար լինել: Նա իր բոլոր պարողներին շշնջում է. «Մենք լավագույն Վիշապն ենք, մենք նորն ենք ու ամենալավը: Բոլորը պիտի մեզ նման լինեն, ի դեպ՝ յուրաքնաչյուրը, ով ճիշտ և ճիշտ մեզ նման չի պարում, ամենևին էլ Վիշապ չէ: Մենք ենք ամենաճշմարիտ, ամենալավ, ամենայուրահատուկ, ամենաիսկական Վիշապը: Մենք ենք լավագույնը, իսկ մնացած բոլորը հաշվի մեջ չեն:»

Ճիշտ այնպես, ինչպես շքերթի վիշապն է. երբ դու ներսում ես, դու չես կարող տեսնել ոչինչ՝ բացի քո սեփական վիշապի փորոտիքից: Դու չես կարող տեսնել բնապատկերը կամ եղանակը կամ մնացած Վիշապներին: Դու ՊԵՏՔ Է կենտրոնանաս քո սեփական Վիշապի վրա և հետևես քո առջևում գտնվող պարողներին: Դու ՉՊԵՏՔ Է քո հայացքը քո գործից շեղես, քանի որ կա՛մ բաց կթողնես շրջադարձը, կա՛մ էլ կշեղվես ռիթմից և Վիշապի քո ողջ թիմին անհարմար վիճակի մեջ կդնես: Նմանապես, դու չես էլ կարող լսել Աստծուն, քանի որ դու Նրա՛ն չես նայում, այլ նայում ես քո Վիշապի թիմին, որպեսզի նրանք քեզ ցույց տան ուղղությունը և դու կարողանաս հետևել նրանց թմբուկների ու ծնծղաների ռիթմին: Դու կարող ես երբեմն կանգնել «մայթին» (կամ կոնֆերանսներին) և մի «շքերթ» (կամ տեսաժապավեն) դիտել ու տեսնել Վիշապի այլ թիմեր, սակայն դու տեսնում ես միայն նրանց մետաքսե փայլուն արտաքինը, այլ ոչ թե՝ ներսի անշուք հատվածը, որտեղ՝ Վիշապի ծածկի ներքո, կպչուն ժապավենով և վերարկուի կախիչներով իրար միացած՝ բանում են հասարակ շապիկներ հագած, քրտնած տղաները:

Այս կուրությունն ու մրցակցությունը պահում են մեզ միմյանցից առանձնացած ու անկախ, որպեսզի Քրիստոսի Մարմինը չկարողանա միասնականություն և ներդաշնակություն ձեռք բերել, քանի որ մենք բոլորս էլ հրաժարվում ենք մեր սեփական Վիշապի տակից դուրս գալ և դեռ բոլորս էլ պնդում ենք, որ մենք Վիշապի տակ չենք, սակայն համոզված ենք, որ, ԱՅՆ ՄՅՈՒՍՆԵՐՆ ա՛յ այնտեղ, հաստատ դրա տակ են: Մենք շատ լավ տեսնում ենք ՈՒՐԻՇՆԵՐԻ Վիշապներին՝ այն, ինչը խճճել, խեղաթյուրել է նրանց «քրիստոնեական ուղղությունը» կամ միաբանությունը և դարձրել այն ինչ-որ հերետիկոսական պաշտամունք, բայց մենք երբեք չենք կարողանում տեսնել մեր սեփական Վիշապին: Տարօրինակ է, չէ՞: Մենք այնքան կույր ենք, հիմար, ինքներս մեզ վրա կենրոնացած, որ ես կարող եմ հանգել միայն այն եզրակացությանը, որ սա գերբնականորեն է խթանված (որը հենց այն է, ինչ Աստծո Խոսքն ասում է, որ կլինի քեզ հետ, եթե դու վարվես քո ուզած ձևով, սակայն մինչ այսօր ես դա ոչ մի անգամ չէի նկատել): Ավելի հեշտ է Հիսուսի մասին խոսել աթեիստների և թմրանյութ վաճառողների կամ մանուշակագույն մազերով դեռահասների հետ, քան՝ «եկեղեցու» առաջնորդների հետ: Իմ փորձից ելնելով՝ եկեղեցու առաջնորդները, բացառությամբ մի քանիսի, թվում են ԳԵՐԲՆԱԿԱՆՈՐԵՆ կույր ու խուլ: Ըստ իրենց հարմարության՝ նրանք «կտրում-փակցնում են» Սուրբ Գրքից ցանկացած մաս, որը կվնասի իրենց «համակարգին»: Չնայած՝ մնացած առումներով նրանք շատ լավ մարդիկ են, և միակ եզրակացությունը, որին ես կարող եմ հանգել, այն է, որ գործի է դրված մի գերբնական ուժ - և դա լավ չէ:

Արդյո՞ք Կարմիր Վիշապները միայն Քրիստոնեական եկեղեցիների վրա են

Ես Կարմիր Վիշապներ տեսել եմ նաև բուդդայական տաճարների վրա, գուշակների տոնավաճառների վրա, մզկիթների վրա: Դա հակաքրիստոսի (նեռի) ոգին է և միշտ կառավարում է նրանց, ովքեր հետևում են հակաքրիստոսի կրոնական համակարգի միլիոնավոր տեսակներից որևէ մեկին: Տարբերությունը կայանում է նրանում, որ դրանց մի մասից մարդիկ կարող են ազատվել՝ առանց չափազանց մեծ ջանքների: Այսինքն՝ հեթանոսական համակարգի կամ հեթանոս անձնավորության վրա գտնվող Կարմիր Վիշապին հնարավոր է կապել կամ քշել (այնպիսի մեկի միջոցով, ով քայլում է արդարության ճանապարհով և բավականաչափ իշխանություն ունի): Այս դեպքում դրանք Աստծուց եկած անեծքներ չեն, այն առումով, որ դա ուղղակի «աշխարհն է, ու անում է այն ինչ աշխարհն է անում:»
Սակայն Աստծո Զավակների համար կանոններն այլ են: Անկախ այն հանգամանքից՝ արդյոք դու «ֆիզիկական» Իսրայելն ես (ժողովուրդը, ազգը) թե «հոգևոր» Իսրայելը (Եկեղեցին)՝ երբ դու չես հնազանդվում, վտանգն ավելի բարձր է լինում: Երբ դու աշխարհն ես, դու արդեն սատանայի գլխավորության տակ ես, սակայն, երբ դու Աստծունն ես ու որոշում ես, որ ավելի լավ է շարժվես քո ուզած ձևով (որն արդեն իսկ նշանակում է սատանայի ձևը կամ ուղին), ապա իսկապես ՎԱՏ բաներ կպատահեն քեզ, ու դա Աստված է անելու: Ճիշտ այնպես, ինչպես Նա կամեցել էր քեզ բարգավաճեցնել, նույնպես էլ կկամենա ճզմել քեզ: (Երկրորդ Օրենք 28:63) Սակայն մենք սա չենք սովորեցնում շահամոլների նկատմամբ բարյացակամ և հարմարավետ եկեղեցում, այնպես չէ՞:

Վստահ եմ, որ սա չի համապատասխանում Աստծո մասին ունեցած քո պատկերացմանը, չէ՞: Դու չե՞ս մտածում, որ Նա բարկացած է մեզ վրա: Դու չե՞ս կարծում, որ Նա նախաձախնդիր Աստված է. «Բայց վստահաբար, - ասում ես դու, - Հիսուսի Արյունը նշանակում է, որ մենք մաքրված ենք, և Աստծո բարկությունը մեզնից հեռացված է. մենք վերազնված ենք ու ապահով, և այդ «Հին Կտակարանի» Աստվածն այլևս չի գործում:» Իրո՞ք, դե լավ, նորից մտածիր: Այդ հորինվածքի վերաբերյալ քո դիրքորոշումը պնդելու համար դու պիտի ժխտես, որ Աստծո Խոսքը Ճշմարիտ է, ուղիղ ու այսօր էլ ակտիվ է և գործուն: Բայց ես չեմ զարմանա, եթե դու ցանկանաս Սուրբ Գրքից որոշ մասեր դուրս թողնել. հենց այդպես էլ ամենասկզբում մենք բոլորս Կարմիր Վիշապ Անեծքի տակ ենք ընկել (կամ դեռ դրա տակ ենք): Այո՛, Հիսուսի արյունը վստահաբար կբժշկի մեզ, բայց միայն այն դեպքում, երբ մենք զղջանք / ապաշխարենք ու ազատվենք վիշապից:

Թույլ տուր նշեմ, որ 2 Տիմոթեոս 3:16-ն ասում է. «Աստծո շնչով գրուած ամէն գիրք օգտակար է ուսուցման, հանդիմանության, ուղղելու և արդարության մեջ խրատելու համար, որպեսզի կատարյալ լինի Աստծո մարդը և պատրաստ բոլոր բարի գործերի համար»: Դու չես կարող Հին Կտակարանից անտեսել Աստծո մասին այն ամենն, ինչը չի համապատասխանում քո պատկերացրած Ջերմ-Փափլիկ-Սիրող-Հովիվ-Հիսուսի պատկերին: Ես քեզ հիմա զգուշացնում եմ, որ եթե մի օր դու ինձ առ-երես փաստես, որ «Հին կտակարանը Նոր Ուխտի Քրիստոնյաների համար չէ», ապա ես քեզնից կխնդրեմ քո Աստվածաշունչը, հետո ես նորից ու նորից կմեջբերեմ 2 Տիմոթեոս 3:16-ը և այդ ընթացքում ես, սկսելով Ծննդոց 1:1-ից, կպատռեմ քո Աստվածաշնչի էջերն այնքան ժամանակ, մինչև որ դու կանգնեցնես ինձ: Մի՛ մտածիր, թե ես դա չեմ անի: Եթե դու վիրավորես ու նվաստացնես իմ Աստծուն ու Նրա Խոսքը, ես քեզ կառարկեմ:

Դու չես կարող երկկողմանի խաղալ: Դու չես կարող պահանջել, որ Տասը Պատվիրանները փակցվեն դատարաններում ու դպրոցներում, իսկ հետո ժխտել, որ Հին Կտակարանն ուժի մեջ է: Դու չես կարող մարդկանց Մաղաքիա 3-ով «ապտակել» ու պնդել, որ նրանք Աստծուց են գողանում, եթե տասանորդ չեն տալիս, ու հետո ժխտել նույն Աստծուն ու հաջորդ պահին ուխտ կամ համաձայնագիր կնքել Նրա հետ: Նա հիանալի, ահեղ, նախաձախնդիր Աստված է ու Նա չի փոխվում: Եթե այս գիրքը քեզ չի համոզում, եթե ավերիչ նշաններն ու հրաշքները, որ Նա կանխանշել էր ու անձնամբ հավաստիացրել, որ կլինեն, ու ՀԵՆՑ ՀԻՄԱ, երբ դրանք պարզ ու ակնհայտ են, քեզ չեն համոզում, ապա դու մեծ վտանգի մեջ ես: Քո սիրտն այնքան կարծրացած է, և քո Կարմիր Վիշապն այնքան մեծ իշխանություն ունի քեզ վրա, որ ես մտածում եմ, թե արդյոք հնարավո՞ր է քեզ ազատել: Խնդրում եմ, շրջվի՛ր: Խնդրում եմ:

Լավ, արի շարունակենք: Մի՞թե Աստծուն իսկապես կգոհացներ փշրել ու ոչնչացնել իր սեփական զավակներին: Դե, Աստծո Խոսքն ասում է, որ այո.

Եսայի 53:10 (Արարատյան թարգմանություն)
ՏԷՐԸ կամենում է մաքրել նրան վէրքերից: Եթէ մեղքերի համար հատուցում տաք, ապա երկարակեաց սերնդի կ՚արժանանաք, որի միջոցով ՏԷՐԸ կը ցանկանայ ազատել նրան իր ցաւերից,

Եսայի 53:10 (Նոր Աշխարհ թարգմանություն)
ԱՍՏՎԱԾ հաճեց, ջախջախել նրան ու կամեցավ, որ նա տառապի: Եթե նրա հոգին հանցանքի ընծա դարձնես, նա կտեսնի իր սերունդը, կերկարացնի իր օրերը ու նրա ձեռքով կհաջողվի այն ինչ կամենում է ԱՍՏՎԱԾ:

Исаия 53:10 (Синодальный перевод)
Но ГОСПОДУ угодно было поразить Его, и Он предал Его мучению; когда же душа Его принесет жертву умилостивления, Он узрит потомство долговечное, и воля ГОСПОДНЯ благоуспешно будет исполняться рукою Его.

Isaiah 53:10 (King James Bible)
Yet it pleased the LORD to bruise him; he hath put [him] to grief: when thou shalt make his soul an offering for sin, he shall see [his] seed, he shall prolong [his] days, and the pleasure of the LORD shall prosper in his hand.

Եվ դա ՀԻՍՈՒՍԻ՝ Իր իսկ Որդու մասին է:

Երկրորդ Օրէնք 28 : 62-63
Թէեւ երկնքի աստղերի չափ շատ էիք, բայց սակաւաթիւ կը մնաք, որովհետեւ չլսեցիք ձեր ՏԷՐ ԱՍՏՈՒԾՈՒ ասածը: Տէրն ինչպէս որ ուրախանում էր ձեր մէջ ձեզ բարութիւն անելով ու ձեզ բազմացնելով, Տէրը նոյն ձեւով կ՚ուրախանայ ձեր մէջ ձեզ կոտորելով. եւ դուք կը վերանաք այն երկրից, ուր մտնելու էք այն ժառանգելու համար:

Կան ավելի շատ օրինակներ, սակայն ես այստեղ այդքան տեղ չունեմ: Կարդա՛ Ողբը և այն, ինչ Աստված արել է Երուսաղեմի հետ: Կանայք եփում ու ուտում էին իրենց սեփական երեխաներին: Ճիշտ այնպես, ինչպես Երկրորդ Օրենք 28-ն էր ասում, որ կլինի, եթե նրանք իրենց ուզած ձևով շարժվեն, իսկ նրանք այդպես էլ արեցին, և Նա էլ արեց: Իսրայելը մոտավորապես ամեն 50 տարին մեկ շարժվում էր իր ուզած ձևով, և Աստված ինչ-որ մեկին կամ ինչ-որ երևույթ էր ուղարկում նրանց ճնշելու կամ ոչնչացնելու համար: Հետո, եթե նրանք զղջում ու ապաշխարում էին, Նա ուղարկում էր մի դատավոր կամ զինվոր կամ թագավոր, որպեսզի ազատի նրանց: Ամերիկան ամեն 50 տարին մեկ մեծ և համատարած վերածնում էր ապրում, որը մարդկանց սրտերը նորից հետ՝ դեպի Աստվածն էր դարձնում: Նույնիսկ եթե մենք չենք պատվում Ազատագրման Տարին (Ղևտական 25), Աստված, միևնույն է, պատվում է այն: Ու հենց հիմա ճիշտ ժամանակն է, որ մենք կրկին Արթնացում ապրենք, սակայն այն միայն Ապաշխարությամբ է գալիս:

Անձնական չափսի Կարմիր Վիշապներ

(ի դեմս համակարգային/ինստիտուցիոնալ/եկեղեցական/աղանդավորական վիշապների)

Մարդիկ ընկնում են Աստծուց ուղարկված Կարմիր Վիշապ անեծքի տակ այն պատճառով, որ իրենց հայացքը շեղում են Հիսուսից ու շարժվում իրենց ուզած ձևով (Երկրորդ Օր. 28): Քո հայացքը Հիսուսից շեղելու համար թնամին կարող է օգտագործել ամեն ինչ: Հետո քո ուշադրության Օբյեկտը կարող է դառնալ այն Կարմիր Վիշապի դեմքը, որի տակ դու ընկել ես: «Օբյեկտը» կարող է լինել ցանկացած բան՝ ֆուտբոլ, քարոզիչ, դավանանք, նոր մեքենա, մի նոր զգացողություն կամ դրսևորում, կինդ կամ մի դոկտրինա/համոզմունք և այլն: Պիտի հասկանանք, որ սրանց մի մասը կարող են լինել անշունչ առարկաններ, և այսպիսով՝ անիմաստ է մատնանշել Օբյեկտին՝ որպես Կարմիր Վիշապի պատճառ: Ամենաշատն է պատասխանատու այն անձը, ով թույլ է տվել սա:

Երբ մարդը շարժվում է իր ուզած ձևով և հետևում, Աստծուց բացի, ուրիշ որևէ մեկին կամ որևէ երևույթի, ապա նա ինքնաբերաբար (որոշակի արտոնյալ ժամանակահատվածից հետո) ստանում է Կարմիր Վիշապ, որն ունի տվյալ մարդու դեմքը: Այն, նմանապես, կարող է ունենալ ա՛յն «Օբյեկտի» դեմքը, որին նա հետևում էր, սակայն, ի վերջո, այն իր սեփական դեմքն է ստացել, այն պատճառով, որ ՆԱ ԻՆՔՆ Է որոշել հետևել, Քրիստոսից բացի, ուրիշ որևէ մեկին կամ որևէ երևույթի: Կարմիր Վիշապի տակ լինելու ժամանակ նա դժվարանում է պարզորոշ լսել Աստծո Գահից: Հայրն արդար է և պահանջել է, որ նրանք, ովքեր շարժվում են իրենց ուզած ձևով, առանձնացված լինեն Իրենից: Որքան ավելի հեռու է սա գնում, այնքան ավելի է խորանում այն ուժեղ մոլորությունը, որը նրան կմատնի իր սեփական պիղծ մտքին ու նրան կբացի թշնամու այն բոլոր ուժերի դեմ, որոնք կկամենան գալ ու խանգարել կամ անհանգստացնել նրան: Որքան ավելի Ինքնակամ նա գործի (ինչը նա անխուսափելիորեն կանի, երբ Աստված նրա ճանապարհերը ճշգրտորեն չուղղորդի), այնքան ավելի շատ դոներ է նա բացում թշնամու առջև: Նա տարբեր տեսակ բաներ կլսի՝ երբեմն ինքնամեղադրական, սակայն նաև մեծագույն բաներ, օրինակ՝ իր՝ մայրցամաքի կամ աշխահի փրկիչը լինելու դերի մասին: Նա գուցե նույնիսկ լսի, որ իրեն ինչ-որ կերպ կարելի է շարունակել մնալ մեղքի մեջ, և Աստված, իբր, դեմ չի լինի: Ես մի մարդ գիտեմ, ով լսել է, որ ինքը «բացառման օծում» ունի և կարող է ազատորեն մեղք գործել:

Կան նրանք, որվքեր Կարմիր Վիշապի տակ են ընկել այն պատճառով, որ ցանկացել են հետևել որևիցե «Օբյեկտի» ու հավատացել նրան ավելի, քան հավատում (կամ լսում էին) Աստծուն: Դա կարող է լինել գոլֆը, դա կարող է լինել մի տուփ քաղցրաբլիթ, դա կարող է լինել մորմոնականությունը, Ջորջ Բուշը, Կարլ Մարքսը, Բրինթի Սփիրսը և այլն:

Կան նրանք, ովքեր Կարմիր Վիշապի տակ են ընկել այն պատճառով, որ սաստիկ ընդդիմացել / հակառակվել են են որևիցե «Օբյեկտի»: Նրանք, ըստ էության, Վիշապի «մեջ» չեն, բայց նրանք ֆլագելանտներ են, որոնք հետևում են «Օբյեկտին»՝ իրենք իրենց մտրակահարելով («ֆլագելանտ» - մարդ, որն ինքն իրեն մտրակահարում է կամ իրեն ենթարկում ուրիշների կողմից մտրակահարվելուն՝ որպես հանրային ապաշխարում:) Նրանք նմանապես և նույնչափ այս շքերթում են ու իրենք էլ են հետևում Վիշապին: Այն դեռևս ուղղորդում է նրանց ճանապարհները, քանի որ նրանք ԴՐԱՆ են հետապնդում՝ Աստծուն հետապնդելու փոխարեն: Հակա-աբորտի ընդդիմադիրը միգուցե կուռք դարձնի այդ ցործը, և իր ողջ կյանքը կծավալվի այդ մի խնդրի շուրջ, ու նրա հայացքը կշեղվի Հիսուսից: Մինչ դու գլխի կնկնես, թե ինչ է կատարվել, նա արդեն հիվանդանոցներ ռմբակոծելիս կլինի՝ միանգամայն վստահ, որ Աստված է իրեն ասել դա: Հերետիկոսություն որսացողը միգուցե իր ողջ կյանքը նվիրի եկեղեցու սխալների բացահայտմանը կամ մի հատուկ աղանդի կամ առաջնորդի բացահայտմանը - և այդպիսով՝ նա իր Հայացքը Հիսուսից շեղում է՝ սիրուց դրդված չի գործում, չի վստահում Աստծուն, որ Աստված Ինքն Իր սեփական պայքարը կտանի: Այսպիսով՝ նա Կարմիր Վիշապի տակ է ընկնում: (Սրա մասին ավելին հաջորդիվ):

Երկու խմբերն էլ Կարմիր Վիշապի ազդեցության տակ են, չնայած այն բանին, որ նրանց վարքը կդրսևորվի տարբեր ձև:

Նրանք, ովքեր դրա տակ են.

- Համակված կլինեն «Օբյեկտով»՝ նրա ապագայի, աճի, հովանավորման մտքերով
- Կցուցաբերեն խոր (և բարկացնող) Հոգևոր Հպարտության նշաններ:
- Դրա հանդեպ գերբնական սեր կտածեն, որը մերժում է տրամաբանությունն ու նորմալ զգացողությունը:
- Պատրաստ կլինեն հանուն նրա մեծ զոհողություններ անել:
- Դրա անունից ակտվորեն կավետարանեն՝ մյուսներին մեղադրելով ու նրան պաշտպանելով: Խաղաղության պակաս կզգան Օբյեկտի համար ինչ-որ մի բան չանելու ժամանակ
- Աղավաղումներ կունենան, որոնք էլ խճճում են հաղորդակցումը, շփումը և ամեն ինչ խորամանկորեն օգտագործում ի օգուտ Օբյեկտի: Նրանք միշտ կլսեն այն, ինչ ցանկանում են լսել:
- Կբևեռացնեն իրենց շուրջ գտնվողներին՝ որպես նրա կողմից կամ նրա դեմ եղողների՝ առանց որևէ միջին չափանիշի:
- Պատերազմող կլինեն, բարկություն կամ զայրույթի նոպաններ կունենան կամ, նույնիսկ, մահաբեր ցասում, այն դեպքում երբ ինչ-որ մեկը վիրավորի Օբյեկտին կամ հարձակվի դրա վրա:

- Կցուցաբերեն Սուրբ Գրքին անհապատասխան վարքագիծ, որն իրենց կողմից արդարացվում է՝ որպես անհրաժեշտ կամ անխուսափելի կամ, նույնիսկ, Աստծո կողմից ուղղորդված:
- Զղջման / Ապաշխարության Ընծայի պակաս կունենան, այն պարագայում, երբ դա առընչվում է Օբյեկտին ու իրենց մասնակցությանը դրա (Օբյեկտի) մեջ՝ Հիսուսին հնազանդվելու փոխարեն:
- Վստահության պակաս կցուցաբերեն այն բանի նկատմամբ, որ Աստված Ինքն ի վիճակի է զարգացնել, բարձրացնել, մեծացնել ու ապահովել Օբյեկտին:
- Կցուցաբերեն մյուսների նկատմամբ մրցակցության սուր ոգի՝ ապացուցելու համար, որ իրենց Օբյեկտն ամենահիանալին է:
- Կմերժեն ընկերանալ, համագործակցել կամ թեկուզ միայն աղոթել նրանց հետ, ովքեր իրենց հետ բացարձակ համաձայնության մեջ չեն՝ սրանով խրախուսելով տարանջատումը
- Մի այլ մեծ ցուցանիշ է բառերի հսկայական առատությունը. բազմաթիվ պարապ խոսքեր, որ ոչ մի իմաստ չունեն և հիմնականում ոչնչի չեն հանգեցնում:
- Ավելի ու ավելի կդժվարանան լսել Աստծուն և փոխարենն ավելի ու ավելի կընդունեն Օբյեկտի ձայնը: Երբ նրանք իսկապես լսեն Աստծուն, դա կարող է աղավաղված լինել, քանի որ կանցնի «Օբյեկտի ֆիլտրի» միջով:
- Իրենց հոգևոր որևիցե աճ կվերագրեն Օբյեկտին, այլ ոչ՝ Քրիստոսին:
- Խմբակիկներ, էնտուզիաստներ, հետևորդներ, հարճեր, խլուրդներ, պոռնիկներ (այդպես է Աստված նրանց կոչում):

Նրանք, ովքեր սաստիկ ընդդիմացած են դրան.

- Համակված կլինեն Օբյեկտով՝ նրա կործանման, ուղղման, սովամահության, հնազանդեցման մտքերով:
- Կցուցաբերեն խոր (և բարկացնող) Հոգևոր Հպարտության նշաններ:
- Նրան կատեն գերբնական ատելությամբ, որը մերժում է տրամաբանությունը կամ նորմալ զգացողությունը:
- «Օբյկետի» դեմ հենց ՀԻՄԱ որևիցե բան անելու անհաղթահարելի անհրաժեշտություն կզգան:
- Նրան կործանված տեսնելու համար պատրաստ կլինեն մեծ զոհողություններ անել, մինչև անգամ, Աստծո հետ իրենց հարաբերությունը զոհելու աստիճան:
- Դրան կործանելու համար նույնիսկ կարող են անկառավարելիորեն գործել և խախտել բարոյական կամ իրավական սահմաններ:
- Ակտիվորեն կավետարանեն նրա դեմ և կհավաքագրեն ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻՆ, ով կարող է օգնել իրենց, նույնիսկ, մարդկանց, որոնք ավելի վատն են:
- Խաղաղության պակաս կունենան Օբյեկտի դեմ ոչինչ չանելու ժամանակ:
- Կունենան Աղավաղումներ, որոնք խաճում են հաղորդակցումը և դա խորամանկորեն օգտագործում Օբյեկտի վատագույն կողմերը ցույց տալու համար
- Կբևեռացնեն իրենց շուրջ գտնվողներին՝ որպես նրա կողմից, կամ նրա դեմ եղողներ՝ առանց որևէ միջին չափանիշի:
- Պատերազմող կլինեն՝ բարկություն կամ զայրույթի անկառավարելի նոպաններ կունենան կամ նույնիսկ կունենան մահաբեր ցասում Օբյեկտի նկատմամբ:

- Կցուցաբերեն ոչ Աստվածաշնչյան վարքագիծ՝ այն արդարացնելով՝ որպես անհրաժեշտ կամ անխուսափելի կամ նույնիսկ, Աստծո կողմից ուղղորդված:
- Ապաշխարության Ընծայի պակաս կունենան, այն պարագայում, երբ այն առնչվում է Օբյեկտի նկատմամբ իրենց ուշադրությանն ու կենտրոնացմանը, Հիսուսի ուղղությամբ կենտրոնանալու փոխարեն:
- Կցուցաբերեն մյուսների նկատմամբ խոր մրցակցության ոգի՝ ցույց տալու համար, որ իրենք Օբյեկտից ավելի լավը (խելացի, սուրբ, ուժեղ, արագ, իմաստուն) են:
- Կցուցաբերեն վստահության պակաս այն բանի վերաբերյալ, որ Աստված Ինքն ի վիճակի է զբաղվել Օբյկետով, կամ կհավատան այն բանին, որ Աստված նշանակել է իրենց՝ որպես Աստծո ներկայացուցչի, Օբյեկտին պատժելու կամ ոչնչացնելու համար:
- Կմերժեն ընկերանալ, համագործակցել, կամ, թեկուզ միայն աղոթել այն անձանց հետ, ովքեր իրենց հետ բացարձակ համաձայնության մեջ չեն. սա խրախուսում է տարանջատումը:
- Մի այլ մեծ ցուցանիշ է բառերի հսկայական առատությունը. շատ պարապ խոսքեր, որ իմաստ չունեն ու ոչնչի չեն հանգեցնում:
- Ավելի ու ավելի կդժվարանան լսել Աստծուն և ավելի կատեն Օբյեկտի ձայնը: Երբ նրանք լսեն Աստծուն, դա կարող է «աղավաղվել»՝ անցնելով «Օբյեկտի ֆիլտրի» միջով:
- Նրանք կատեն Օբյեկտի խոսելն առհասարակ և գրեթե յուրաքանչուր իրենց լսածը կընկալեն հնարավոր վատագույն տարբերակով: Նրանք մշտապես կցանկանան որսալ Օբյեկտի սխալները, որպեսզի արադրացնեն իրենց հակադրությունն Օբյեկտի նկատմամբ: Ներում բացարձակապես չկա որևիցե սխալ-ասված կամ սխալ-հասկացված բառի դեպքում: Նրանց համար ամենը հերետիկոսություն է, և ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ մեկնաբանում, որը մաքուր բացարձակ ճշմարտությանը ՓՈՔՐ-ԻՆՉ չհամապատասխանի, նրանց համար մի ապացույց է, որ Օբյեկտը սատանայի գործիք է: Անասելի բարձր չափանիշներ՝ մասնավորապես, հաշվի առնելով նրանց իսկ խոսքերն ու գործերը:
- Նրանք կմեղադրեն Օբյեկտին իրենց իսկ սեփական անկումների մեջ, ընդունելու փոխարեն իրենց իսկ պատասխանատվությունն այն հարցում, որ իրենք իրենց հայացքը Հիսուսից շեղել են: Իրենց հետ պատահող ցանկացած վատ բան նրանք կվերագրեն Օբյեկտի հետ տարած պատերազմին կամ դրա անեծքներին՝ պատճառաբանելով, որ այն ցանկանում է հետ պահել իրենց, որ, իբր, իրենք չհավատան իրենց սեփական պատերազմի արդյունավետությանը
- Հալածողներ, ատողներ, մարդասպաններ, որսորդներ, խլուրդներ, պոռնիկներ (կրկին՝ ըստ Աստծո)

Բոլոր դեպքերում, նրանք գուցե լսեն ինչ-որ բաներ և ՇԱՏ վստահ լինեն, որ դա Աստվածն է, սակայն այն անխուսափելիորեն որոշ հուշումներ կառաջացնի այն մասին, որ ինչ-որ խնդիր կա: Հիսուսի զոհաբերությունը նշանակում էր, որ Նա նստած է Աստծո կողքին՝ մարդկանց ուղարկելու Ապաշխարության Ընծան (Գործք 5:31): Չնայած Աստծո Գահից եկող ուժգին մոլորությանը՝ Սուրբ Հոգին աշխատում է Որդու հետ միասին, որպեսզի գտնի ուղիներ հուշելու համար, որ ինչ-որ խնդիր կա, և նրանք, ովքեր ականջ ունեն՝ լսելու ու աչքեր՝ տեսնելու, շրջվեն ու բուժվեն: Սակայն կույրերը կգնան դեպի անդունդը: Միայն նրանք, ովքեր աչք ու ականջ ունեն, և ունեն իրենց անարժան լինելու և այս ամենի վտանգավորության ակնկալիքը,

նախապես կտեսնեն խնդիրն ու կկանգնեցնեն այն՝ նախքան այն շատ հեռու կհասնի: Լավագույն պաշտպանությունը Զղջման / Ապաշխարման հաստատուն վիճակն ու Աստծո Երկյուղն է:

Հայրն արդարություն է պահանջում, բայց Որդին ուզում է, որ ոչ ոք չկործանվի: Դրա համար Հիսուսը կասի Սուրբ Հոգուն, որ Նա այնպես խոսի, որ թեթև անհարմարավետություն առաջացնի կամ որևիցե հուշում թողնի, որպեսզի մարդիկ զգան, որ ինչ-որ մի խնդիր կա: Միշտ կլինեն նշաններ, որոնք թեև նուրբ ու աննկատ են, բայց հետո, երբ մառախուղը ցրվի, կդառնան պարզ տեսանելի: Սուրբ Հոգին կարող է նաև խոսել շրջապատի մարդկանց հետ՝ նրանց ցույց տալու համար, որ այդ անձը ճանապարհից շեղվել է: Նա միշտ «հացի փշրանքների» հետքեր կթողնի հետ՝ դեպի բուն միջադեպը, որպեսզի անձը կարողանա գտնել ճանապարհը հետ՝ դեպի սկզբնապատճառը, և զղջա: Եթե կարող ես, հետևիր այդ արահետին:

Շրջված Կարմիր Վիշապ - ֆլագելանտներ

«Ֆլագելանտնները» նրանք են, ովքեր իրենք իրենց մտրակահարումում են: Սա այն տեսողական պատկերն էր, որն Աստված ինձ ցույց տվեց այն մասին, թե իրականում ի՞նչ է տեղի ունենում, երբ որևէ մեկը բացասականորեն տարվում է որևէ Օբյեկտով (դա կարող է լինել ծառայություն/քարոզչություն, անձնավորություն և այլն) ու մտադրվում է ոչնչացնել այն: Նա վիրավորված է եղել և շարունակում է ինքն իր վրա վերքեր բացել ապացուցելու համար, թե ինքն ինչպիսի՜ նահատակ է (մարտիրոս) և այդպիսով՝ վշտացնում է Աստծուն ու դառնում այն, ինչ ինքն էր ատում:

2 Տիմոթեոս 2:23-24 - *հանդարտութեամբ խրատելու համար* ***հակառակողներին****, որ թերեւս Աստուած նրանց* ***ապաշխարութիւն*** *տայ, որպէսզի ճանաչեն ճշմարտութիւնը եւ զգաստանալով՝* ***ազատուեն Սատանայի որոգայթներից****, որոնց մէջ* ***բռնուած են*** *նրա կամքը կատարելու պատճառով:*

Սա այնքան կարևոր է, որ մենք ցանկացանք այս գրքի 4-րդ հրատարակության մեջ զգալի տեղ հատկացնել սրան: Ես ակնկալում եմ, որ սա ՇԱՏ ավելի համատարած կդառնա, երբ ավելի շատ քրիստոնյաներ սկսեն իսկապես վարվել Հիսուսի նման: Նրանք պետք է իմանան, թե ի՞նչ ակնկալել: ա) Տիրոջ համար արդյունավետ լինելու պատճառով տարվող պատերազմի և բ) Տիրոջը չինազանդվելու պատճառով ջախջախվելու **նմանությունները** կարող են սարսափեցնող լինել: Վերջին հաշվով դու պիտի լսես Տիրոջը և հաստատ իմանաս, որ ԴՈՒ Կարմիր Վիշապի ախտանիշներ (սիմպտոմներ) չես ցուցաբերում:

Կարևոր է հասկանալ նմանությունների հաջորդականությունը, հասկանալ այն, որ թշնամին կարող է քո հայացքը աջ կամ ձախ շեղել, և երկու դեպքում էլ, նա հաղթում է քեզ: Օրինակ՝ դու կարող ես կերակուրը կուռք դարձնել շատակերությամբ կամ անորեքսիայով (ախորժակի բացարձակ պակաս): Դու կարող ես սեքսուալությունը կուռք դարձնել անհագ ցանկությամբ կամ դրա հանդեպ սարսափելի վախով: Դու կարող ես ծառայությունը կուռք դարձնել՝ դրա տակ ընկնելով ու դրան քո կյանքի վրա լիիրավ իշխանություն տալով կամ ամենուր հետապնդելով՝ բացահայտելու (ջրի երես հանելու) ու ոչնչացնելու մտադրությամբ: Դու ամուսնուդ կամ կնոջդ դարձնում ես կուռք ու նրան ավելի շատ ես նայում, քան Աստծուն, հետո ամուսնալուծվում ես ու ողջ սերդ դարձնում դառը ատելություն: Դա կտրուկ գերբնական շեղում է մի ծայրահեղությունից մյուսը: Երկու դեպքում էլ, դու հայացքդ Հիսուսի խաչից շեղում ես ու հայտնվում հենց այնտե՛ղ, ուր Սատանան էր ուզում:

Ո՞րն է շրջված Հակա-Կարմիր Վիշապի նպատակը.

Բաժանություն բերել, սպանել, գողանալ, ոչնչացնել - ծառայությունները, հարաբերությունները, Աստծո արքայության շարժիչ ուժը: Քո մեջ անդամալուծություն և զոհի մտածելակերպ ձևավորելը: Ուրիշներին «ջրի երես հանելու» կամ էլ «փրկելու» սևեռուն փնտրտուք ստեղծելու միջոցով՝ քո մեջ արգելափակել տրտմության մեջ ուրախանալու և ցնծալու կարողությունն ու հնարավորությունը:

Ի՞նչպես է այն գործում.

Այն հարվածում է տվյալ մարդուն, ինչ միջոցով պատահի՝ սովորաբար առաջացնելով ֆիզիկական, ֆինանսական, էմոցիոնալ ճնշում/սթրես, որը նրան կթուլացնի: Իսկ հետո այն սկսում է ստեր ներարկել. «Սա ՆՐԱ մեղքով է, եթե ՆԱ դա չաներ, ամեն ինչ լավ կլիներ: Ես վախեցած եմ ու ցավի մեջ եմ ՆՐԱ պատճառով:» Միշտ ուշադրությունը տանելով դեպի անձը, ծառայությունը, դեպի ՀԻՍՈՒՍԸ տանելու փոխարեն: Միշտ ձախողելով տրտմության մեջ ուրախանալը, ձախողելով մեծ պատկերը տեսնելու հնարավորությունը, Աստծուն վստահելը, ամեն ինչի համար հույս ունենալը, ամեն ինչին հավատալը, ամեն ինչի դիմանալը, վատի մասին ոչ մի հուշ չպահելը (Կորնթ. Ա 13): Սերը կորում է: Բամբասանքն ու վատաբանումը շատանում են: Երբ դևը կարողանում է ստիպել նրան ականջ դնել, Աստծո ձայնից ԲԱՑԻ, ՄԻ ԱՅԼ ձայնի ու չհնազանդվել Աստծո հրամաններին, ապա այնժամ եղբայրներին մեղադրողն արդարացվում է՝ նրանց վրա Ղևտացու 26-ը և Երկրորդ Օրենքի 28-ը (և այլն) պահանջելիս:

Ի՞նչպես է այն թույլտվություն ստանում ցատկելու ինչ-որ անձի վրա.

Այն պատճառով, որ նրանք դադարում են լսել ու հնազանդվել Աստծուն և փոխարենը լսում են այն անձնավորությանը կամ դևին, որը նրանց ականջին շշնջում է բաներ, որ Աստծո դեմ են ելնում: Դա կարող է շատ աննշան լինել, և որքան ավելի ես դու Աստծուն մոտ, այնքան վտանգն ավելի մեծ է: Եթե դու հետագա պարզաբանման կարիք ունես, կարդա «Պիլիգիմի Առաջընթացը» և տե՛ս, թե Քրիստոնյաի կյանքն ԻՐԱԿԱՆՈՒՄ որքան դժվար կարող է լինել, և տես ողջ խորամանկությունը, որը թշնամին է կարող գործադրել քո հանդեպ:

Ի՞նչ է այն անում.

Այն սկսում է պատեր բարձրացնել և համոզել քեզ, որ ավելի հեռանաս այն անձնավորությունից, ում առնչվում էր տվյալ հարցը: Կարծրացնում է սիրտդ: Կողպված դռներ: Նրանց մասին գաղտնի խոսակցություններ: Տվյալ անձնավորությանը դեմ առ դեմ հանդիպելու և միասին դատողություններ անելու մերժում: Այդ անձնավորութանը հոգեպես վտանգավոր համարել, թեկուզ, նրա հետ պարզապես խոսելու համար, կամ համոզել, որ դա անօգուտ է:

Այն փորձում է ստիպել նրանց որոշ կամ բոլոր այն բաները, որոնք Աստված ատում է:

> *16 Նա ծիծաղում է այն ամէնի վրայ, ինչ ատում է Տէրը, եւ իր հոգու պղծութեան երեսից էլ պիտի կործանուի: 17 Այն աչքերը, որ թշնամանքով են նայում,այն լեզուն, որ սուտ է խօսում, 18 այն ձեռքերը, որ արդար արիւն են թափում, այն սիրտը, որ չար խորհուրդներ է նիւթում, այն ոտքերը, որ շտապում են չարիքներ գործել, պիտի ոչնչանան: 19 Անիրաւ վկան բորբոքում է ստութիւնը եւ գրգռութիւն է գցում եղբայրների միջեւ: Առակ. 6:16-19*

Ինչու՞.

Այս չար ոգին ՉԻ ցանկանում վտարվել: Այն չի ցանկանում, որ թյուրիմացությունը կամ սուտը պարզաբանվի ու մաքրվի, չի ցանկանում, որ մարդիկ զղջան ու հաշտվեն: Այն կանի ամեն ինչ, որպեսզի հեռացնի նրանց՝ կարգելափակի հեռախոսահամարները, կփոխի էլեկտրոնային հասցեները, ինչ էլ որ լինի, միայն թե այն կարողանա ցեմենտապատել հասցված վնասը: Ղևտական 26-րդ գլուխն ասում է, որ եթե դևը կարողանա նրանց ստիպել, որ ականջ դնեն, Աստծո ձայնից բացի, մի այլ ձայնի և դեմ գնան Աստծո հրամաններին (1. Սիրիր Տիրոջը, 2. Սիրիր ընկերոջդ ինչպես քեզ և այլն), ապա այն կարող է օրինական իշխանություն ստանալ՝ նրանց ահաբեկելու, որպեսզի նրանք փախչեն այնքան արագ, որքան կարող են՝ համակված անիրական և աներևակայելի վախով: Նպատակն է կանխել ամեն տեսակ ներումը կամ հաշտեցումը և ոչնչացնել Աստծո գործը: Տերը կարող է թույլ տալ, որ դա մեկին խոնարհեցնի, իսկ մյուսին զտի, բայց այնուամենայնիվ, բոլոր դեպքերում լուրջ զղջում և ապաշխարհություն է պահանջվելու դրանից դուրս գալու համար:

Որո՞նք են ՀԱԿԱ - Կարմիր Վիշապ ունենալու սիմպտոմներից մի քանիսը.

1. Դադարել սիրել, նույնիսկ այն ժամանակ, երբ դու շարունակ պնդում ես, որ այն ինչ դու անում ես, քեզ համար նշանակում է սիրել (Մաթ 5:44. «Իսկ ես ձեզ ասում եմ, սիրեցէ՛ք ձեր թշնամիներին, օրհնեցէ՛ք ձեզ անիծողներին, բարություն արէ՛ք ձեզ ատողներին և աղօթեցէ՛ք նրանց համար, որ չարչարում են ձեզ և հալածում»):
2. Մոռանալ նրանց կողմից երբևէ արված յուրաքանչյուր լավ բան՝ հիշողությունից կտրուկ մաքրված, դուրս մղված, կամ այդ լավ արարքների մասին խոսելու անկարողություն: Սա ամենասարսափելիներից մեկն է: Հատկապես ամուսնու և կնոջ միջև կամ մոտ եղբայրության մեջ: (Սաղմոս 55:12-14, Ղուկաս 21:16 և այլն):
3. Չափազանց ուռճացնել ցանկացած վատ բան՝ «լվից ուղտ սարքել» կամ դրանք ստեղծել: (Առ 6:16-19):
4. Ցանկացած բան, որ, թեկուզ, փոքր-ինչ նյարդայնացնող կամ վիճելի էր, մի սարսափելի բան դարձնել:
5. Ստեր հորինել՝ հիմնվելով որևիցե «կասկածելի» հանգամանքի վրա, նույնիսկ եթե այն հիմնավորելու ոչ մի իրական ապացույց չկա:
6. Երկրորդական դավանաբանական անհամաձայնությունը հասցնել փրկության հարցերի մակարդակին՝ արդարացնելու համար գործածված պիտակները. («Նրանք Եղբայր չեն և երբեք էլ չեն եղել այն պատճառով, որ նրանք այս-ինչ կամ այն-ինչ դիրքորոշումն ունեն»):
7. Մերժել միասին դատողություններ անել կամ մեղմ լինել: Հաղորդակցության կամ շփման դռները աղմուկով փակել: Այն, ինչ մենք կոչում ենք «սաստում՝ արագ անցնելով»: Ես մի մարդու հետ էի մնում, ով ինձ նամակ գրեց, որն այսպես էր սկսվում. «Ես գրում եմ այս սաստումը, ես այն կտպեմ, կջնջեմ իմ համակարգչից և ես չեմ ցանկանում սա երբևէ քեզ հետ քննարկել»: Հետո նա իր կնոջն ասաց, որ նա այն տա ինձ՝ առանց որևէ հերքման կամ քննարկման հնարավորության: Եվ նա միանգամայն վստահ էր, որ ինքն արդարացի էր այդ ամենի մեջ: Շատ անգամներ ես տեսել եմ, որ մարդիկ գիշերով փախչում են՝

մերժելով ամեն մի հաղորդակցություն, վախենալով, բացարձակ սարսափով, որ իրենց ետ կհամոզեն իրենց դիրքորոշումից:

8. Խնդիրների լուծման համար համապատասխան Աստվածաշնչյան հրահանգները մերժել (Մաթ 18), կամ դրանք օգտագործել բազմություններ հավաքելու համար. մեղադրել, բայց ոչ լուծել և հաշտվել կամ ճշմարտությունն ու խաղաղությունը փնտրել:
9. Գործածել «վերջնական» բառեր զգացմունքային ազդեցության նպատակով, առավելագույն վնաս հասցնելու համար՝ առանց մեծահոգության ու ողորմածության. «կեղծ ուսուցիչ», «ուրացող», «հերետկիոս», «կուլտի առաջնորդ», «հեթանոս», «անհավատ», «կախարդ», «ժեզեբել» և ավելի վատ բաներ: Նրանք մոռանում են Աստվածաշնչյան հրամանները՝ փորձել ապրել խաղաղության մեջ, չկործանել մեկը մյուսին, խուսափել երկրորդական հարցերի մասին անօգուտ վիճաբանություններից, եթե դու եղբայրներիդ քույրերիդ չես սիրում, ապա Աստծո սերը քո մեջ չէ, և այսպիսով՝ նրանք իրենք են դառնում են ուրացող (չներող, չսիրող, չուրախացող և այլն...) և այս ամենը «հավատքը պաշտպանելու» անվան տակ:
10. Որոշել, որ կյանքում հիմա իր անձնական առաքելություն է փրկել մյուս «գերիներին» և հնարավորինս շատ մարդկանց պատմել այն ամենն, ինչ ինքը «գիտի»: Կամ հավաքել ողջ կեղտը ՈՐԵՎԻՑԵ աղբյուրից՝ հաշվի չառնելով դրա հավաստիությունը կամ ճշմարտացիությունը: Սա շեղում է նրա աչքերը Խաչից և համակում նրան այս խնդրի օբյեկտով:
11. Եթե որևէ մեկը, ով նախկինում ՇԱՏ մոտ էր նրան և մի շատ հարգված Աստծո մարդ էր, ասում է նրան, որ նա սխալվում է, ապա այդ մարդը դիտարկվում է որպես «կուլտի մի մաս» կամ «մոլորության տակ գտնվող» և նախապաշարմամբ հեռացվում է: Բացարձակապես նշանակություն չունի, թե նախկինում նրանք որքան մոտ էին: Նա կփակի, կարգելի, կվանի, դատի կտա կամ սահմանափակող հրամաններ կտա յուրաքանչյուրին, ով կփորձի իրեն հակառակում համոզել:
12. Նա սկսում է ավելի ու ավելի մեծ դժվարությամբ լսել Աստծուն, և այսպիսով՝ նա հակված է Օրենքի տակ հետ մտնելուն: Նա նմանվում է Հրեա Օրենսգետներին, որոնք անխոս ընդունում են գրված օրենսգիրքը, դիետիկ օրենքները, սուրբ գրքի սև ու սպիտակ ընթերցումը՝ չունենալով ոչ մի ցանկություն դատողություններ անել Աստծո խորը գործերի կամ Օրենքի ետևում գտնվող հոգևոր կիրառումների ու ըմբռնումների մասին, որը գալիքի ստվերն էր: Նա այլևս չի կարող Սուրբ Հոգով առաջնորդվել, քանի որ Աստծուն չի լսում, այդպիսով՝ հետ է մտնում Օրենքի տակ: (Գաղատացիների 5:18): Ինչպես Հրեա Օրենսգետները, որոնք հալածում էին Պողոսին, նա էլ իր խնդիրն է դարձնում հետապնդել, դատապարտել և պատառոտել նրանց, ովքեր Հոգու միջոցով քայլում են Քրիստոսի ազատության մեջ, նույնիսկ եթե անցյալում նա ինքը նրանցից մեկն էր:
13. Անկարող լինելը լիովին ներել և առաջ շարժվել: Անցյալով մշտապես համակված լինելն ու այդ մասին հանգամանորեն խոսելը: (Մաթեոս 6:14-15, Մարկոս 11:26,Ղուկաս 6:37)
14. Միգուցե նա ֆիզիկապես կամ հոգեպես կրում է Ղևտական 26-րդ կամ Երկրորդ Օրենք 28-րդ գլուխների անեծքները՝ քայքայիչ անբուժելի հիվանդություններ, խելագարություն, կուրություն, սարսափ, անտրամաբանական վախ և այլն:
15. Որքան ավելի մոտ էր նա քայլում Աստծուն, այնքան ավելի մեծ է նրա ապստամբությունը, այսպիսով՝ ավելի հավանական է, որ Տերը կպատի նրան Ղևտական

26-ի, կամ Երկրորդ Օրենքի 28-ի որոշ կամ բոլոր անեծքներով: Դու կարող ես ասել, որ «որպես հավատացյալներ՝ մենք Օրենքի կամ Հին Ուխտի տակ չենք», սակայն եթե դու Աստծո դեմ ապստամբում ես, ապա դու Նրան ՉԵՍ հավատում և դու Սուրբ Հոգով ՉԵՍ առաջնորդվում և, հետևաբար, դու Օրենքի տակ ԵՍ (Գաղ. 5:18): Դու չես կարող ասել, որ քանի որ մի անգամ հնազանդվել ես Նրան, ապա մշտական մուտք ունես Նոր Ուխտ: Այսինքն՝ եթե դու համառ ես և չես հնազանդվում ու չես ուկնդրում Նրա ձայնին, ապա դու կթափառես անապատում, մինչև մեռնես: Եթե քո սիրտը թլպատված չէ, ուրեմն դու Արյան տակ գտնվող Իրական Հրեա չես: (Հռոմ. 2:28-29)

16. Վատագույնն այն է, որ նա սկսում է պատառոտել այն ամենն, ինչ իսկապես լսել է Աստծուց, կավճապատում է այն՝ ասելով, որ «ազդեցության տակ է եղել» կամ նրանց հետ միասին մոլորության մեջ թակարդված է եղել, և պարբերաբար քանդում է ամեն լավ բան, որն Աստված այդ ժամանակահատվածում ասել է նրան կամ արել է նրա համար: Սա սատանայի գործելակերպն է՝ նախկինում տարված հաղթանակներն ու տարածքները հետ վերցնելու համար:

Սրա ամենատարօրինակ դրսևորումներից մեկը, որ մենք տեսել ենք, ժամանակ առ ժամանակ հանդիպող մարդիկ են, որ համակվում են վախի ոգով կամ ավելի ճիշտ՝ սարսափելի, ակներև վախ, և նրանք թողնում են ծառայությունը՝ իրենց կյանքի համար ունեցած վերին աստիճանի վախից ու սարսափից դրդված: Խնդրում եմ, մի կարծիր, թե կատակում եմ: Մենք տեսել ենք շնչակտուր, ցնցվող, խուճապահար մարդիկ, որոնք չէին կարող իրենց վախին որևէ անվանում տալ, դրա պատճառաբանման համար ոչ մի իրական ապացույց չունեին, բայց պարզապես ՊԻՏԻ հեռանային ՀԵՆՑ ՀԻՄԱ՝ գիշերվա կեսին՝ առանց որևէ մեկին հաջողություն ասելու՝ երբեմն ետևում թողնելով շատ անձնական իրեր, կարծես, տունը վառվելիս լիներ: Սա միշտ չի պատահում, սակայն երբ պատահում է՝ ապշեցուցիչ գերբնական է: Ոչ մի այլ բացատրություն չկա: Երբեք ոչ մի տեսակ հայտարարություններ, ֆիզիկական բռնություն, սպառնալիքներ կամ որևէ այլ մի բան չի եղել, սակայն, այնուամենայնիվ, մարդիկ փախչում են, բառիս բուն իմաստով, իրենց կյանքի համար վախով համակված: Եվ միաժամանակ պնդելով, որ Աստված է նրանց ասել դա անել, և պնդելով որ իրենք խաղաղ են: Նրանք պնդում են, որ ոչ թե վախի ոգի ունեն, այլ՝ միայն սիրո, ուժի և պարզ մտքի (Բ Տիմոթեոս 1:7): Սակայն կողքից նրանց նայող ցանկացած հոգեբույժ կասեր, որ դա մի մոլեգին, զգայախաբ, հոգեկան դրվագ է, և կառաջարկեր դեղեր տալ կամ հոգեբուժարան տանել նրանց: Եթե նրանք իշխանություն ունենային, նրանք ուղղակի կսաստեին թշնամուն ու հաղթանակած կլինեին, սակայն նրանք չեն կարող: Եվ սերը ամբողջովին հեռացել է՝ բացարձակապես ջնջվել, մաքրվել և փոխարինվել վատի մասին ուռճացված հիշողություններով՝ առանց լավի մասին որևէ հիշողության: Օբյեկտը դիվահարված է: Նշանակություն չունի, թե նախկինում նրանք որքան մոտ էին միմյանց, նույնիսկ ամուսինները կամ ընտանիքի անդամները:

Աստված երբեք արդարամիտներին չի ասում, որ խուճապի մատնվեն: Աստված կարող է նրանց ասել, որ իրենց ոտքերի փոշին թափ տան և մի այլ վայր գնան կամ, նույնիսկ, շտապ փախչեն սարերը, եթե հակաքրիստոսը հայտնվի, սակայն ոչ խուճապահար: Ես գիտեմ, որ կարող եմ կախարդների համաժողովի մեջտեղում քնել ու ապահով լինել: Ես գիտեմ, որ կարող եմ հենց իր՝ սատանայի դեմ կանգնել ու ապահով լինել: Ես խուճապի ՉԵՄ մատնվի ՈՉ ՄԻ մարդու կամ դժոխքի դևի առջև: Որովհետև Աստված իմ կողմից է, և եթե ես արդարամիտ եմ, ապա ես կարող եմ

սիրով, խաղաղությամբ, համբերատարությամբ և ներողամտությամբ գործելու վստահություն ունենալ, բայց ոչ ԵՐԲԵՔ խուճապով:

Ինձ հարցրել են. «Մարդիկ քո ծառայությունը լքում են գիշերը՝ կյանքից զրկվելու վախով ու սարսափով լցված: Ինչպե՞ս կարող է սա նորմալ լինել: Ինչպե՞ս կարող է սա Աստված լինել: Քեզ հետ պիտի ինչ-որ բան սխալ լինի»: Դա խելամիտ հարց է, հետևաբար, ես փնտրեցի պատասխանն Աստծուց: Այն ժամանակ, երբ դա առավել վերջերս պատահեց, հենց հաջորդ օրն Աստված տվեց ինձ Ղևտական 26-ը: Աստվածաշունչը շատ անգամներ եմ կարդացել, բայց նախկինում երբեք այս ենթատեքստով չէի տեսել: Ճշմարտապես, այն պատասխան է տալիս այս հարցին, թե ինչպես կարող էր սա պատահել: Առակաց 26:1-ն ասում է, իսկ Ղևտական 26-ն ավելի հեռուն է գնում: Այն իրոք սարսափելի է: Աստծո հետ ճի՛շտ մնա, ուկնդի՛ր նրա ձային: Եթե դու ուրիշին լսես, եթե դու անտեսես նրա հրահանգներին ու հրամանները, դա ՇԱՏ վատ է: Արի նայենք:

Ավելի շատ ապացույցներ, որ սա ԱՍՏԾՈՒՑ է. *{մեկնաբանություններն ավելացված են}*

Ղևտական 26 :14-46

14 «Բայց եթէ չլսէք ինձ եւ չկատարէք իմ այս բոլոր հրամանները, 15 արհամարհէք դրանք, իմ կարգադրութիւններից ձանձրանալով *{ոչ միայն վարքագիծն է բավական, այլ քո սիրտը պետք է ճիշտ լինի}* **չկատարէք իմ պատուիրանները, վերացնէք իմ հաստատած ուխտը;** *{մերժես կատարել քո խոստումները, անել այն, ինչ գիտես, որ Նա քեզ ասել է անել}* **16 ապա ես նոյնը կ՚անեմ ձեր նկատմամբ. տագնապալից տառապանքների կը մատնեմ ձեզ,** *{հոգեւոր / մտավոր, խուճապ, սարսափ}* **քոսով ու դեղնախտով կը հիւանդացնեմ ձեզ,** *{կարող է լինել հոգևոր կամ ֆիզիկական հիվանդություն կամ՝ երկուսն էլ},* **որ պակասի ձեր աչքի լոյսը,** *{հոգևոր կամ ֆիզիկական՝ չես կարող տեսնել թշնամուդ, զոհման / ապաշխարության ոչ մի ոգի, ոչ մի հույս՝ չես կարողանում ուրախանալ տրտմության մեջ}* **եւ դուք հալումաշ լինէք:** *{որոշակիորեն հոգևոր, անպաշտպան, վահանները ցած դրած}* **Այնժամ զուր տեղը պիտի ցանէք ձեր սերմերը,** *{բիզնես, ծառայություն, վկայություն, երեխաներ, ջանքեր}* **եւ ձեր արտերի բերքը ձեր հակառակորդները պիտի ուտեն** *{թշնամիները, դևերը կսնվեն դրանցով}:* **17 Ես իմ զայրացած հայեացքը ձեզ վրայ պիտի յառեմ,** *{չի լսի}* **եւ դուք պիտի ընկնէք ձեր թշնամիների առաջ:** *{ թշնամիներ / դևեր}* **Ձեզ ատողները ձեզ հալածական պիտի անեն,** *{ճնշված, դիվահարված, չարչարված, իշխված}* **եւ դուք փախստական պիտի լինէք, եթէ անգամ որեւէ մէկը չհալածի ձեզ:** *{Խուճապահար փախչել՝ ԱՌԱՆՑ որևէ պատճառի: Սա կարևոր է: Իսկապես նշան է, որ ինչ-որ մի բան սխալ է: Աստված երբեք ԱՐԴԱՐԱՄԻՏՆԵՐԻՆ չի ստիպում խուճապահար փախչել: Առակներ 28:1-ն ասում է. «Ամբարիշտը փախչում է առանց որևէ մեկից հալածուած լինելու, բայց արդարն անձնապաստան է լինում, ինչպէս առյուծ:» ՄԵԾ տարբերություն կա ոտքերի փոշին թափ տալու՝ գնալու, այն պատճառով, որ քեզ թեն ընդունում և ԵՐԵՎԱԿԱՅԱԿԱՆ վտանգից վերին աստիճանի սարսափար փախչելու միջոց}:*

Եթե դա չբավանականացնի, ապա այն յոթ անգամ ԱՎԵԼԻ ՎԱՏ է դառնում:

18 Եթէ նման պատիժներից յետոյ էլ ինձ չլսէք, ձեր գործած մեղքերի համար եօթնապատիկ աւելի պիտի պատժեմ: 19 Ես պիտի խորտակեմ ձեր ամբարտաւան պարծենկոտութիւնը, *{ընկճված, փշրված, լավագույնը ձեռքից վերցված - կարող է լինել հոգևոր, ֆիզիկական կամ մտավոր}* երկինքը ձեզ վրայ երկաթի պէս ծանր պիտի դարձնեմ, *{աղոթքները տեղ չեն հասնի}* իսկ ձեր հողը՝ պղնձի պէս կարծր*: {ծանր աշխատանք ու քրտինք՝ առանց որևէ արդյունքի - հոգևոր կամ ֆիզիկական }:* 20 Ձեր զօրութիւնը ի չիք պիտի դառնայ, *{հոգևոր կամ ֆիզիկական}* հողը ձեր ցանած սերմի չափով իսկ բերք պիտի չտայ, ոչ էլ երկրի ծառերը պտուղ ***պիտի տան:*** *{Ինչ էլ, որ քո հողը լինի, այն պտուղ չի տա - հոգևոր կամ ֆիզիկական: Դու զրկված կլինես այն պտղից, որն Աստված է ակնկալում}:*

Եթե դա էլ չբավականացնի, ապա այն 49 անգամ ԱՎԵԼԻ ՎԱՏ է դառնում:

21 Իսկ եթէ դուք շարունակէք շեղուել ուղիղ ճանապարհից ու չկամենաք լսել ինձ, ձեր գործած մեղքերի համեմատ եօթնապատիկ աւելի պիտի պատժեմ ձեզ: 22 Ձեզ վրա պիտի ուղարկեմ երկրի վայրի գազաններ *{վայրի գազանները կարող են լինել նենգ մարդիկ, կարող են լինել դևեր, որոնք արդեն ազատ կլինեն քեզ խժռելու համար - կարող է լինել հոգևոր կամ ֆիզիկական}* ***ու նրանք կզրկեն ձեզ երեխաներից*** *{հոգևոր կամ ֆիզիկական ժառանգներ՝ մարդիկ ում դու «դաստիարակել ես», քեզնից կպոկվեն, կհեռացվեն},* նրանք պիտի լափեն ձեզ ու հոշոտեն ձեր անասունները *{հարստությունը, մթերքը, հպարտությունը, խնայողությունները՝ ամեն ինչ, կգնա - հոգևոր կամ ֆիզիկական}:* Այսպիսով պիտի պակասեցնեմ ձեր թիւը, եւ ձեր ճանապարհները ամայի պիտի դառնան: *{Դուք թվով շատ քիչ կլինեք, թվով կպակասեք, միայնակ կզգաք ձեզ և ի վիճակի չէք լինի ձեր հողը պահպանել - հոգևոր կամ ֆիզիկական}:*

Եթե դա էլ չբավականացնի, ապա այն 383 անգամ ԱՎԵԼԻ ՎԱՏ է դառնում:

23 Իսկ եթէ դրանից յետոյ էլ չխրատուէք *{այս ամենը բուժիչ նպատակ ունի}* ու հակառակուէք ինձ, 24 ես դարձեալ, զայրանալով, պիտի հակառակուեմ ձեզ եւ ձեր գործած մեղքերի համեմատ եօթնապատիկ աւելի պիտի պատժեմ ձեզ: 25 Ձեզ սրակոտոր պիտի անեմ՝ լուծելու համար իմ ուխտի վրէժը: {սա կարող է արտահայտվել թե՛ հոգևոր, թե՛ ֆիզիկական ոլորտներում}, Եւ եթէ ամրանաք ձեր քաղաքներում, ես ձեզ մահ պիտի ուղարկեմ, *{երբ դուք հավաքվեք մյուսների հետ միասին, ովքեր Աստծո դեմ ապստամբել են, ուր էլ որ դա լինի, որքան ապահով էլ լինի այն տեղը, ուր դուք կփախչեք, թեկուզ, համացանցում եղած խոսակցությունների-սենյակը - սա կարող է լինել հոգևոր մահ, հիվանդություն, սուտ, կաշառակերություն, կեղծ Ընծաներ, կեղծ օծումներ, մոլորություն, վախ կամ ֆիզիկական հիվանդություններ, ինչպիսիք են քաղցկեղի գոյացումները կամ քայքայիչ հիվանդությունները}* եւ դուք պիտի մատնուէք թշնամիների ձեռքը: *{մարդիկ կամ դևերը կգրավեն ձեզ, ձեզ ԿՀԱՆՁՆԵՆ նրանց ձեռքը - ֆիզիկական կամ հոգևոր գերություն}:* 26 Երբ ձեզ նեղեմ հացի պակասութեամբ, տասը կին ձեզ հաց պիտի եփեն մէկ թոնրի մէջ *{պաշարման ժամանակ այքան քիչ վառելիք և հացահատիկ կա՝ հացն այնքան քիչ քանակությամբ է, որ ինը մարդ կանգնած են դրա շուրջ՝ շատ մարդիկ մի փոքր գործ անելու*

համար} եւ ձեզ հաց *{ֆիզիկական հաց կամ ճշմարտության հոգևոր հացը}* ***պիտի բաժանեն հաշուած կշռով*** *{պաշարման/սովի հարաբերակցություն}* Պիտի ուտէք ու չպիտի կշտանաք *{Դուք ի վիճակի չէք լինի բավականաչափ հաց ստանալ բավարարվելու համար: Ճշմարտությունը կփախչի ձեզանից: Դուք կարող եք մի փոքր ճշմարտություն ունենալ, բայց դա մի փոքրիկ մաս է և դա չի բավականցնի}*:

Եթե նույնիսկ դա չբավականեցնի ապա այն 2,681 անգամ ԱՎԵԼԻ ՎԱՏ է դառնում:

27 Եթէ դրանից յետոյ էլ ինձ չանսաք ու հակառակ գնաք ինձ, 28 ես էլ, զայրանալով, *{անհավատալի է, որ սա այսքան հեռուն կարող էր հասնել}* պիտի հակառակուեմ ձեզ եւ ձեր գործած մեղքերի համեմատ եօթնապատիկ աւելի պիտի պատժեմ ձեզ: 29 Դուք պիտի ուտէք ձեր տղաների ու ձեր աղջիկների միսը: *{ՍԱ ՖԻԶԻԿԱՊԵՍ պատահել է Երուսաղեմին Երեմիա մարգարեի Ողբում: Ամենայն հավանականությամբ, հոգևոր որդիներն ու դուստրերը, որոնց դուք կհոշոտեք/կքաշեք, կչորացնեք/կոչնչացնեք՝ պարզապես բավարարելու համար ձեր ներսում գոյացող այրոցը, կամ զգալու, իբր, դուք ինչ-որ արդյունքի եք հասնում:}* 30 Ես պիտի կործանեմ ձեր արձանները, *{կռապաշտության ֆիզիկական կամ հոգևոր արձանները կամ ՄԻՏՔԸ }* պիտի խորտակեմ ձեր փայտեայ ձեռակերտ կուռքերը: *{ֆիզիկական կամ հոգևոր խորանները, որոնք դուք կառուցել եք՝ մտածելով, թե Աստծուն դուր է գալիս անուշաբույր հոտը, բայց Նրան դա դուր չի գալիս}*: Ձեր դիակները պիտի նետեմ ձեր ջարդուփշուր եղած կուռքերի բեկորների վրայ, *{ եթե սա այսքան հեռուն է հասել, նշանակում է, որ Նա ձեզ արդեն ներսից մեռած է համարում, բայց նա կոչնչացնի կուռքերը/պատկերները և ձեզ կթողնի նրանց վրա }* եւ իմ հոգին պիտի խորշի ձեզնից*: {Աստված մի կողմ կթեքի իր հայացքը և մեջքով կշրջվի ձեզ՝ ՆՈՂԿԱԼՈՎ, ԶԶՎԵԼՈՎ ՁԵԶՆԻՑ: Սա բավակին լուրջ է և ԿՈՊԻՏ: }*: 31 Ձեր քաղաքները աւերակ պիտի դարձնեմ, *{Ինչ պատսպարված քաղաք էլ դու ապավինես՝ ինչ ապահով տեղ էլ փախչես, կավերվի}* պիտի ամայացնեմ ձեր սրբարանները*; {այն ամենն, ինչ դու քո կռապաշտության մեջ սրբացրել ես}* եւ ձեր զոհաբերութիւնների անուշ բոյրը այլեւս չպիտի հոտոտեմ: *{Նա կանտեսի ձեր նվիրատվությունները և զոհաբերությունները - հոգևոր կամ ֆիզիկական:}* 32 Պիտի աւերեմ ձեր երկիրը, եւ նրա մէջ ապրող ձեր թշնամիները պիտի զարմանան դրա վրայ: *{Ձեր թշնամիները կլինեն մարդիկ կամ դևեր կամ՝ երկուսն էլ: Բայց նույնիսկ նրանք զարմանքից կապշեն, թե որքան շատ է Տերը հակառակված ձեզ}* 33 Ձեզ պիտի ցրեմ տարբեր ժողովուրդների մէջ, *{անհնազանդները հեռացված կլինեն նույնիսկ միմյանցից՝ ցաք ու ցրիվ կլինեն - աշխարհագրական, ֆիզիկական, հոգևոր կամ մտավոր իմաստով}* եւ ձեզ վրայ իջած սուրը պիտի կոտորի ձեզ: Ձեր երկիրը աւերակ պիտի դառնայ, իսկ ձեր քաղաքները՝ ամայի: *{Ապահով տեղերը, ուր դուք կփախչեք, բնակեցված չեն լինի նրանցով, ովքեր իսկապես հետևում են Աստծուն և ձեր պատճառով դատաստանն այնտեղ կթափվի բոլորի վրա:}* ***34 Այնքան*** ժամանակ, որ երկիրը աւերակ պիտի մնայպիտի վայելի իր հանգստեան օրերը, 35 իսկ դուք պիտի լինէք ձեր թշնամիների երկրում՝ օտար երկրում: *{գերության մեջ - հոգեպես կամ ֆիզիկապես տարօրինակ մի տեղում:}* Այնքան ժամանակ, որ երկիրը աւերակ պիտի մնայ, պիտի վայելի իր հանգստեան օրերը, պիտի հանգստանայ այն շաբաթ օրերի փոխարէն, որ չհանգստացաւ ձեր այնտեղ բնակուելու ժամանակ: *{Նա արդարություն պիտի բերի և Երկրին հանգիստ տա, այն պատճառով, որ ձախողվել եք՝ Շաբաթ օրը պահպանելու գործում, որը պետք է նվիրված լիներ Նրան ու Նրա հրամաններին:}*

Ըստ Աստծո հայեցողության՝ նրանցից ոմանք կստանան վերը նշված վերաբերմունքը, ոմանք կստանան սա կամ էլ սրա որևէ համակցություն:

36 Ձեր՝ թշնամիների երկրում վերապրածներիդ սրտում վախ պիտի գցեմ. *{թույլ սրտեր, ուժի բացակայություն, պաշտպանության բացակայություն, վախով ու խուճապով լի՝ անկախ այն բանից «ատողներն» իրական են, թե ոչ - կարող է լինել ֆիզիկական կամ հոգևոր - դներ կամ մարդիկ }* նրանք պիտի սարսռան տերևների սոսափիւնից, *{ամենաչնչին ձայնը պիտի թվա հզոր զորքի ձայն, և նրանք բացարձակ խուճապով կփախչեն ՈՉՆՉԻՑ՝ հիմնովին համոզված, որ դա արդարացված է – սա ծայրահեղ ՄՈԼՈՐՈՒԹՅՈՒՆ է:}* նրանք փախուստի պիտի դիմեն, ինչպէս փախչում են ռազմի դաշտից, եւ պիտի ընկնեն առանց որեւէ մէկից հալածուած լինելու: *{Նրանք կհավատան, որ սուրը վերահաս է՝ կործանումը, մահը, ամենավատ սցենարը - ֆիզիկական կամ հոգևոր - սարսափահար, սակայն ՈՉ ՈՔ չի հետապնդում նրանց: Իրականում նրանց հոգիների թշնամին, նրանց հետ անում է հենց այն, ինչ ուզում էր:}* ***37 Եղբայրը պիտի լքի իր եղբօրը,*** *{ջանալով արագ փախչել, միմյանց վրա ընկնելով}*, ինչպէս ռազմի դաշտում, առանց որեւէ մէկից հետապնդուած լինելու *{Նորից կրկնվում է՝ ՈՉ ՈՔ չի հետապնդում նրանց:}* Դուք չպիտի կարողանաք դիմադրել ձեր թշնամիներին *{դուք ի զորու չէք լինի դիմադրել ձեր թշնամիներին: Մոլորության մի մասն այն է, որ դու ՀԱՎԱՏՈՒՄ ես, որ նրանք քեզ ատողներն են, և դու փախչում ես նրանցից, բայց քեզ ՈՉ ՈՔ չի հետապնդում: Դա մի մոլորություն է, որը կերտում է մի թշնամի, որն իրականում ՉԿԱ, ու նրան ՀՄԿԱՅԱԿԱՆ է դարձնում, այն դեպքում, երբ դա նույնքան վտանգավոր էր, որքան ծառից ընկնող մի ՏԵՐԵՎ: Սակայն դները կքշեն քեզ իրենց առջև ու կիջնեն քեզ վրա:* 38 Դուք պիտի կորչէք ժողովուրդների մէջ, *{հոգեպես կամ ֆիզիկապես}* եւ ձեր թշնամիների երկիրը ձեզ կուլ պիտի տայ *{և դուք վերջիվերջո կկործանվեք այնտեղ}:* 39 Ձեզնից վերապրածները իրենց գործած մեղքերի համար պիտի կոտորուեն իրենց թշնամիների երկրում եւ իրենց հայրերի մեղքերի համար նրանց հետ միասին հալումաշ պիտի լինեն: *{Եվ եթե նրանք չմեռնեն, նրանք կհյուծվեն - հոգեպես կամ ֆիզիկապես, կամ երկուսն էլ}*

Բայց ... Ահա՛ լաւ լուրը: Վերջ ի վերջո նրանք կոտրվում են:

40 Այդ ժամանակ է, որ նրանք պիտի խոստովանեն իրենց ու իրենց հայրերի գործած մեղքերը, պիտի համոզուեն, որ յանցանք են գործել եւ արհամարհել են ինձ. 41 նրանք հակառակուեցին ինձ, ես էլ նրանց հակառակուեցի բարկութեամբ եւ ոչնչացրի նրանց իրենց թշնամիների երկրում *{նրանց հանձնել է դներին}* : Այնժամ պիտի ամաչի նրանց հեթանոս սիրտը, եւ իրենք պիտի զգան իրենց գործած մեղքերի ծանրութիւնը: *{եթե նրանք խոստովանեն իրենց մեղքերն ու շրջվեն}* 42 Ես պիտի յիշեմ Յակոբին, Իսահակին եւ Աբրահամին տուած իմ խոստումը, պիտի յիշեմ նաեւ այն երկիրը, 43 որը լքուելով նրանց կողմից, պիտի վայելի իր հանգստեան օրերը, քանի որ այն աւերակ էր դարձել իր բնակիչների պատճառով: Նրանք պիտի պատժուեն իրենց կատարած անօրէնութիւնների համար, *{ԿԱ հասանելի պատիժ այնքան ժամանակ, քանի դեռ Գառան Արյունը չի գործադրվել սրա համար}* այն բանի փոխարէն, որ արհամարհեցին իմ պատուիրանները, եւ իմ հրամանները նրանց համար տաղտկալի դարձան *{նրանց սրտերը ապստամբեցին այն բանի դեմ, ինչ նրանք ԳԻՏԵԻՆ, որ ճշմարիտ է և ուղիղ}*: 44 Երբ նրանք իրենց թշնամիների

երկրում էին, ես նրանց անտես չարեցի եւ ոչ էլ զզուեցի նրանցից նրանց հետ իմ կապած ուխտը լուծելու համար, որպէսզի չոչնչացնեմ նրանց, քանզի ես եմ նրանց ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾԸ *{Չնայած այս ԱՄԵՆԻՆ՝ Նա վերջնականորեն չի՛լքի նրանց՝ Նա դեռ կփորձի նրանց կոտրել, բայց չի՛լքի նրանց: Ինչպիսի՜ Աստված:}* ***45Ես*** **պիտի յիշեմ նրանց հետ կապած իմ նախկին ուխտը, երբ բոլոր հեթանոս ժողովուրդների աչքի առաջ նրանց հանում էի Եգիպտացիների երկրից՝ ստրկութեան բնակավայրից, որպէսզի լինեմ նրանց Աստուածը, քանզի ես եմ Տէրը»: Սրանք են այն պատգամները, հրամաններն ու օրէնքները, որ Տէրը Սինա լերան վրայ Մովսէսի միջոցով հաստատեց իր եւ Իսրայէլի որդիների միջեւ:**

Իսկ ՄԵ՞ՐԸ

Շրջված Կարմիր Վիշապը՝ Հակա-Կարմիր Վիշապը, գրեթե անմիջապես դուրս է քաշում ողջ սերը: Նշանակություն չունի, արդյոք դա քո ամենամոտ ընկերն էր, ծառայության/ժամերգության գործակիցդ, ընտանիքիդ անդամը, անգամ, սիրող կնոջ կամ ամուսնու դեպքում, այն դուրս կքաշի ողջ սերը: Եվ այն կարող է դա անել ԱՅՆՔԱՆ արագ և ԱՅՆՔԱՆ բացարձակապես, որ դա քեզ ուղղակի կապշեցնի: ՄԻԱԿ բացատրությունն այն է, որ սա գերբնական է: Ինչ էլ որ հանդիսանա այն, ինչը, կուռք էր դարձել, այսինքն՝ Օբյեկտը, որով անձը տարվել էր, դա նրա հայացքը Խաչից հեռու է պահում, և նա հիմա թակարդված է մոլորության մեջ: Նա համակված, տարված է տվյալ օբյեկտով, խաչով համակված լինելու փոխարեն: Միայն Աստված կարող է նրան ազատել:

1 Կորթացիներին 13

1 Եթէ խօսեմ մարդկանց լեզուները եւ հրեշտակներինը, բայց սէր չունենամ, կը նմանուեմ մի պղնձի, որ հնչում է, կամ՝ ծնծղաների, որ ղօղանջում են:

Թեև դու խոսում ես լեզուներով կամ շատ ես խոսում սիրո մասին - եթե այն քո մեջ չէ, ապա այդ ամենը միայն աղմուկ է: Մոլորությունը կստիպի քեզ, որ խոսես սիրուց բացի ամեն ինչի մասին: Սակայն դու ԿԱՄԵՍ, որ այն ամենն, ինչ դու անում ես տվյալ Օբյեկտին կործանելու համար, արվում է՝ նրա հանդեպ քո «սիրուց» մղված:

2 Եւ եթէ մարգարէութիւն անելու շնորհ ունենամ եւ հասկանամ բոլոր խորհուրդներն ու ամբողջ գիտութիւնը, եւ եթէ ունենամ ամբողջ հաւատը՝ մինչեւ իսկ լեռները տեղափոխելու չափ, բայց սէր չունենամ, ոչինչ եմ:

Թեև դու, գուցե, դեռ Ընծաներ ունես, անգամ մարգարե կամ առաքյալ լինելու կոչում, թեև դու հզոր հավատ ունես, սակայն եթե դու սեր չունես, ապա դու ՈՉԻՆՉ ես: Քո հավատը սխալ տեղում է, և դու մոլորության տակ ես: Ամենը, ինչ դու գիտես կամ կարծում ես, որ գիտես, զուր է վատնված կամ անօգուտ է:

3 Եւ եթէ իմ ամբողջ ունեցուածքը տամ աղքատներին եւ իմ այս մարմինը մատնեմ այրուելու, բայց սէր չունենամ, ոչ մի օգուտ չեմ ունենայ:

Նշանակություն չունի, թե ՀՍՏ ՔԵՋ, դու որքան շատ զոհաբերող ես: Թեև, դու նահատակվում ես, դա իզուր է, եթե չի արվել հանուն ճշմրիտ ՍԻՐՈ:

4 Սերը համբերող է, քաղցրաբարոյ է. սերը չի նախանձում, չի ամբարտաւանանում, չի զոռոզանում,

Մոլուցքը, Հակա-Կարմիր Վիշապը շատ ՀԱԿԱԴԻՐ է անվերապահ ազապե սիրուն: Այն ԵՐԲԵՔ համբերատար չէ, ԵՐԲԵՔ բարի չէ, այն նախանձում է տվյալ օբյեկտի հաջողությանն ու օրհնություններին, Նա պանում է՝ հույս ունենալով տեսնել կործանում և արդարացված լինել, պարծենում է այն ամենով, ինչ գիտի, Նա ԾԱՅՐԱՀԵՂ հպարտ է՝ իր արդար լինելու բացարձակ վստահությամբ, նույնիսկ այն ժամանակ, երբ «փաստեր» է հնարում և վախից, բարկությունից ու աններողամտությունից դրդված է գործում: Նա չի լսի ոչ ոքի, ով կասի, որ դա սխալ է. Նա անում է այն բոլոր բաներն ու ավելին, ինչում մեղադրում է տվյալ օբյեկտին: Նա ամբողջովին ինքնակենտրոնացած է ու ինքնարդարացված և չի լսի ոչ մի հերքում:

5 անվայել վարմունք չի ունենում, իրենը չի փնտռում, բարկութեամբ չի գրգռում, չար բան չի խորհում,

Նա ծայրահեղ կոպիտ է, նույնիսկ այն աստիճան, որ խախտում է այն, ինչ ՅԱՆԿԱՅԱԾ մեկը, նույնիսկ հեթանոսները կկոչեին հասարակ պարկեշտություն: Պատրաստ է ցանկացած մեկին ցանկացած բան ասել, միայն թե ապացուցի իր տեսակետը: Նա ամբողջովին զբաղված է իրեն «փորձագետ վկայի» պես պահելով և իր սեփական հեղինակությունը բարձրացնելով: Նա շարունակ կատաղած է, կարծես, մակերևույթի տակ մշտապես եռացող բարկության կաթսա լինի, որը կբղավի և ափերից դուրս կգա յուրաքանչյուր պահի, երբ սեղմվեն իր կոճակները: Նա կարգելափակի, կխոչնդոտի, կմոռանա ընկերությունը, դատի կտա կամ սահմանափակող հրամաններ կդնի յուրաքանչյուրի դեմ, ով չի համաձայնի իր հետ: Նա առաջացնում է սխալների ՄԻ ՀՍԿԱՅԱԿԱՆ ՅՈՒՅԱԿ՝ մի քանիսն իրական, մյուսները երևակայական, սովորաբար, բոլորը խճճած՝ մաքսիմալ ազդեցություն թողնելու համար, և նա կպատմի դրանք ցանկացած մեկին, ով իրեն կլսի: ՉԿԱ ոչ մի ներում, և նրան չի բավարարի տվյալ Օբյեկտի կողմից ոչ մի տեսակի զղջումը: Նա ԲԱՑ ՉԻ ԹՈՂՆԻ, մինչև որ Աստված Ինքը չազատի նրան այդ մոլորությունից և նրա վրա Ապաշխարություն չլցնի: Սխալները գրանցելը ՃԻՇՏ ՀԱԿԱՌԱԿՆ է այն հրամանի, որն ասում է, որ պետք է ուրախանալ տրտմության մեջ, հավատալ, ամեն ինչ կատարվում է լավ նպատակով նրանց համար, ովքեր սիրում են ՏԻՐՈՋԸ: Պետք է մյուս այտն էլ շրջել, պետք է ներել յոթանասուն անգամ յոթ անգամ, սիրել թշնամիներիդ, վրեժխնդրությունը թողնել ՏԻՐՈՋԸ և այլն: Դա բացարձակ ապստամբություն է Ավետարանի ՍՐՏԻ դեմ՝ ամբողջովին արդարացվելով՝ որպես ճիշտ և անհրաժեշտ՝ տվյալ օբյեկտին «բացահայտելու» համար:

6 անիրաւութեան վրայ չի ուրախանում, այլ ուրախանում է ճշմարտութեան վրայ.

Կատարվում է ճիշտ հակառակը. չարը ծաղկում, սնուցվում ու աճում է: Ճշմարտությունը, և ճշմարտությունը փնտրելու իսկական պատրաստակամությունը մեռնում են: Չայները, որ պաշտպանում են բարկությունը և աններողամտությունը, (ճշմարտապես ներելու անկարողությունը կամ ստրում ոխ պահելը) վեր են բաձրացվում, անկախ այն բանից, թե նախկինում դրանք որքա՞ն վատ հավաստիականություն են ունեցել: «Իմ թշնամու թշնամին իմ ընկերն է»: Չայները, որ կարող էին իրականում խոսել պատճառի, հավատի, սիրո, ճշմարտության,

խաղաղության, համբերատարության մասին, միանգամից դուրս են վանվում: Նույնիսկ այն անձը, ով նախկինում սրտով, մտքով խոսքով և վարքով գեղեցիկ ու աստվածային էր, կդառնա հեգնող, բամբասող, չարախոսող, ստախոս, վախկոտ, ատելությամբ լցված, չներող, սմքած կեղևն այն կերպարի, որն ինքը նախկինում կար:

7 ամէն բանի դիմանում է, ամէն բանի հաւատում է, մշտապէս յոյս է տածում, ամէն բանի համբերում:

Վիշապը ձգտում է սպանել, գողանալ և կործանել: Ձգտում է ինքնուրույն իրականացնել տվյալ Օբյեկտի մասին ասված կործանման, դատաստանի և ոչնչացման մարգարեությունները: Նա գործը Աստծուն չի վստահում, այլ փոխարենը, ինքն իրեն ձեռնադրում է որպես Աստծո օգնական այդ գործում: Նա չի վստահում տվյալ օբյեկտին պաշտպանող ոչ մի ձայնի, անկախ այն բանից, թե նախկնում նրանք որքա՞ն վստահելի էին: Նա հույս չունի, նա ինքն իրեն զոհ է դարձնում իսկ Օբյեկտին՝ պատասխանատու իր հետ պատահած ԲՈԼՈՐ վատ բաների համար: Նա ավելի շուտ նախընտրում է գիշերով փախչել, քան պնդել: Նա փախչում է այնքան արագ, որքան հնարավոր է, կտրում է հաղորդակցությունը և ՉԻ ԱՌԱՋԱՐԿԻ համբերատար լինելով դիմանալ, մինչ Աստված աշխատանք տանի այն ամենի հետ, ինչ սխալ է. (ԵԹԵ իհարկե ինչ-որ բան իսկապես սխալ է): Նա իրապես հույս չունի հարաբերությունների վերականգման կամ Մարմնի Միասնակությոան համար, այդ միտքը նրան հետ է մղում: Նա կարող է շրթունքներով աղոթել օբյեկտի վերահաստատման և նրա հոգու փրկության համար, բայց բոլոր արարքները տանում են դեպի օբյեկտի կործանումը, ամոթահար լինելը, նվաստացմումը կամ ավելի վատ բաների, այլ ոչ՝ դեպի սիրով նրա վերականգնումը:

8 Սէրը երբեք չի անհետանում. թէ մարգարէութիւններ են, պիտի չքանան. թէ լեզուներ՝ պիտի լռեն. թէ գիտութիւն՝ պիտի անցնի.

Սերը մեռնում է: Անկախ այն բանից, թե որքան մեծ էր, որքան մաքուր, որքան գեղեցիկ՝ այն դառնում է ատելության, սպանության, ստախոսության, երկպառակության, բաժանման և այլանդակության ոգի: Մարգարեությունները, տվյալ Օբյեկտի մասին ասված բոլոր դրական խոսքերը, որոնք նա ԳԻՏԵՐ, որ նախկինում Աստծու կողմից էին, այժմ բոլորն էլ վանվում են: Ցանկացած լավ բան, որ Տերը նրան ասել էր տվյալ Օբյեկտի մասին, կավճապատվում է, իբր թե դա «նրանց ստեղծած կախարդության տակ է եղել և Աստծո կողմից չի եկել:» Նա դա վերագրում է մարմնականին կամ սատանային՝ վտանգավոր կերպով խաղ անելով Սուրբ Հոգուն հայհոյելու հետ: Նրա լեզուն ԵՐԲԵՔ չի դադարում շտապել նրա մոտ, ով կլսի, բայց Օբյեկտի մասին լավը խոսելը կամ նրան օրհնելը դադարում է: Ճշմարտության գիտակցումը, իր համար արված որևէ լավ բանի մասին հիշողությունները, ջնջվում են նրա մտքից: Նա գործնականորեն անկարող կլինի նույնիսկ ՄՏԱԾԵԼ այն մասին, որ Օբյեկտը երբևիցե օրհնել է նրան, էլ ուր մնաց թե ընդունի դա:

9 քանզի շատից քիչը գիտենք եւ շատից քիչն ենք մարգարէանում: 10 Իսկ երբ գայ կատարեալը, շատից քիչը կ՝անհետանայ:

Սա Է անկատար գալիքը: Սա նույնիսկ կարող է լինել կատարյալ մոլորություն, որը համակում է և անում հակառակն այն ամենի, ինչ Հիսուսի գալուստը կաներ: Սա նման է այն բանին, երբ Տերն ինչ-որ մեկին տանում է ՍԻՐՈՒՑ այնքան ՀԵՌՈՒ, որքան հնարավոր է: Բայց այնուամենայնիվ, այդ անձը պնդում է, որ ինքն ամեն ինչ սիրուց դրդված է անում: Նա կպնդի, որ այնպիսի խաղաղություն

ունի, ինչպիսին երբեք չէր ունեցել, նույնիսկ այն ժամանակ, երբ ինքն անվերջ խառնակռիվ է սարքում ինքն իր վարքը և զգացմունքները արդարացնելու համար ու անվերջ հետապնդում է Օբյեկտին: Դրսից նայող մարդիկ չեն տեսնում խաղաղություն, հույս, սեր, ողորմածություն, մեղմություն կամ հոգու պտուղներից որևիցե մեկն այն հարցերում, որոնք վերաբերում են Օբյեկտին:

11 Մինչ երեխայ էի, խօսում էի ինչպէս երեխայ, խորհում էի ինչպէս երեխայ, դատում էի ինչպէս երեխայ. իսկ երբ տղամարդ դարձայ, երեխայական բաները մի կողմ թողեցի:

Այլ մարդիկ կնայեն ու ԿՅՆՅՎԵՆ այն բանից, թե որքան երեխայական է նրա վարքը, որքան է նա նման վախեցած փոքր երեխայի, որն ուղղակի սարսափած է կռվում է այնպես, ինչպես կարող է: Որքան թերահաս է դատողություններ անելու ունակությունը, որքան դժկամ է նա քննարկելու կամ միասին դատողություններ անելու մեջ, որքան շատ է նա ուղղորդվում ոչ Աստծո Հոգուց, ինչ աստիճանի է նրա ուղեղը ոչ ճիշտ աշխատում և չի մշակում ավելի բարձր ու խոր բաներ: Նա միայն տեսնում է Օրենքը, և նույնիսկ դա սխալ է կիրառվում: Նա միայն տեսնում է Օրենքի տառը և այլևս ի վիճակի չէ տեսնել Հոգու ավելի խոր գործերը, այն պարագայում, երբ հարցը վերաբերում է տվյալ Օբյկետին: Քանի որ նա այլևս Աստծո Հոգով չի առաջնորդվում այլ առաջնորդվում է մոլորությամբ: Ոչ մի մանկական բան ետևում չի թողնում: Նույնիկ գրված Օրենքը, որը կդատապարտեր նման վարքը, բացարձակապես անտեսվում է: (Հովհ. 15; Առակներ 6:16-19; Ղևտական 19:16; Առակներ 16:28; Առակներ 18:8; Առակներ 20:19; Ղևտական 26; 1 Կորնթացիներին 13; Գաղատացիներ 5; Հռոմեացիներ 12; 2 Կորնթացիներ 12:20; 1. Հովհ 4:18; 1 Պետրոս 3:14; Առակներ 10:12; և այլն):

12 Այժմ տեսնում ենք աղօտ, ինչպէս պատկերը հայելու մէջ. իսկ այն ժամանակ պիտի լինի դէմառդէմ: Այժմ շատից քիչը գիտեմ, իսկ այն ժամանակ կը գիտենամ՝ ինչպէս որ Նա ճանաչեց ինձ:

Նույնիսկ ԼԱՎԱԳՈՒՅՆ դեպքում, երբ ինչ-որ մեկն իսկապես հնազանդ է լինում Տիրոջը և մոլորության տակ ՉԻ ԳՏՆՎՈՒՄ, մենք միևնույն է մշուշոտ ենք տեսնելու: Սակայն այս դեպքում այն կարծես մի ամբողջական շղարշ լինի նրա մտքի, սրտի և աչքերի վրա, որ արգելափակում է ՈՂՋ ճշմարտությունն ու սերը (համենայն դեպս այնքանով, որքան դա առնչվում է տվյալ Օբյեկտին): Ոչ մի կասկած չկա, որ Աստված ամբողջապես ճանաչում է այս մոլորության տակ գտնվող մարդուն, սակայն նա կարծես ուրիշ ոչինչ ամբողջովին չի հասկանում՝ բացի իր իսկ սեփական ցավից, դառնությունից, բարկությունից, սեփական արդարության զգացումից և հպարտությունից: Ու նա կպնդի, որ մշուշոտ ապակու միջով ՉԻ տեսնում, երբ հարցը վերաբերում է տվյալ Օբյեկտին, այլ ունի կատարյալ, վստահելի մաքուր հայտնույթուն:

13 Բայց արդ, մնում են հաւատ, յոյս, սէր. սրանք՝ երեքը. եւ սրանցից մեծագոյնը սէրն է:

Բոլոր երեքն էլ վտանգված են, բայց սերը առաջինն է մեռնում: Միրո բացարձակ բացակայությունը մեկի մեջ, ով նախկինում իրական սեր ՈՒՆԵՐ, առաջին նշաններից է, որ ինչ-որ բան ծայրահեղ սխալ է: Եվ այս «սերը» հունարեն կոչվում է «ագապե» և նշանակում է մաքուր անվերապահ (անպայմանական), անդադար, անձնազոհ, Աստվածային ՍԵՐ: Դա Աստծո սերն է՝ մի բան, որ ՆԱ պիտի դնի մեր մեջ: Երբ դու կուռք ես սարքում ու հետապնդում նրան՝ լավ կամ վատ, ագապեն է, որ առաջինն է մեռնում: Աստված Ինքը ետ է քաշվում, և առաջին բանը, որ Նրա հետ միասին գնում է, դա Նրա սերն է:

Ինչպե՞ս կարող է մարդը խուսափել Օբյեկտ դառնալուց

Նա, ով ականջներ է խուտուտ տալիս, սուտ ու կեղծ բաներ է խոսում և ինքն իրեն է բարձրացնում ու նպաստում, իր հետևում կհավաքի այն մարդկանց, ովքեր նրան կդարձնեն իրենց երկպագության ու հիացմունքի Օբյեկտը: Նա, ով ակտիվորեն և արդյունավետորեն ինքն իրեն է նպաստում, միշտ դեպի իրեն կձգի, կքաշի մարդկանց, որոնք ենթակա են նման բանի: Սակայն այս պարագայում պարտադիր չէ խոսել «Ճշմարտություն» չհանդիսացող բաներ: Պողոս առաքյալը բժշկում էր և ճշմարտություն քարոզում Լյուսթրայում, և նրանք փորձեցին երկրպագել նրան՝ որպես Աստծո (Գործք 14): Նա ճիշտ վարվեց՝ այն իսկույն մերժելով ու չցանկանալով դառնալ նրանց Կարմիր Վիշապի դեմքը: Նա տեսավ, որ Կորնթացիները հենց այդ էին անում՝ ասելով. «Ես Պողոսի կողմից եմ: Ես Սեփասի կողմից եմ: Ես Ապողոսի կողմից եմ»: Պողոսը մերժեց դա ու փորձեց կանգեցնել նրանց և անել այնպես, որ նրանք միայն Քրիստոսին նայեն: Նույնիսկ բացառապես Հիսուսին նման լինելը երաշխիք չէ, որ ինչ-որ մեկը քեզ կուռք չի դարձնի և այդպիսով՝ կդադարի նայել դեպի Հայրն ու Խաչը:

Նմանապես և այն մարդը, ով Աստծո Գահից եկած Ճշմարտությունն է խոսում, չի կարող խուսափել Օբյեկտ դառնալ նրանց համար, ովքեր կդատապարտեն իրեն: Թշնամին միշտ ինչ-որ մեկին կշշնջա և կփորձի բաձրացնել <u>ցանկացած</u> մեկին, ով մոլեգնորեն կնվիրաբերի իր կյանքը Օբյեկտի կործանմանը, ինչն, իր կարծիքով, կնպաստի Ավետարանին: Լյուսթրայում, երբ Պողոսը նրանց թույլ չտվեց պաշտել և երկրպագել իրեն, նրանք անմիջապես շրջվեցին և որոշեցին սպանել նրան: Պողոսը ԴԵՌԵՎՍ հանդիսանում էր նրանց Կարմիր Վիշապի Օբյեկտը, սակայն հիմա նրանք մտադիր էին կործանել նրան: Հրաշքների ու բժշկումների մասին հիշողությունը, մեծարանքն ու երկյուղը, որ նրանք ունեին, ՄԻԱՆԳԱՄԻՑ վերացան:

Տիեզերքում կա ՄԵԿ Ճշմարտություն՝ մնացած ամենը թշնամու ստերն են: Միակ Ճշմարտությունն այն է, որ մենք պիտի լինենք Քրիստոսի ներքո ու հետևենք Նրա Երեսին: Նրա Երեսից <u>բացի՝</u> ցանկացած այլ բան թշնամու կեղծիքն է: Դու չես կարող Հիսուս Կարմիր Վիշապի տակ լինել՝ այդպիսի բան չկա: Դա է, ուր դու ՊԵՏՔ է լինես: Դրանից <u>բացի՝</u> ցանկացած բան Կարմիր Վիշապ է: Անգամ <u>մասնակիորեն</u> Նրա Գլխավորության տակ լինելը՝ կրկին սուտ է: Շատ տարբեր տեսակներ կան: Կուռք կարող է դառնալ գոյություն ունեցող ցանկացած բան: Թեորետիկ կառուցվածքներն՝ ինչպիսին է օրինակ՝ էվոլյուցիան, կարող են դառնալ Կարմիր Վիշապ: Նշանակություն չունի, թե այն որքան Ճշմարտություն է պարունակում, եթե միայն այն 100% մաքուր չէ, ապա այն խառնուրդ է և հետևաբար՝ սուտ:



Իսկ Կատարյալ Մաքրության այլ աղբյուր չկա՝ բացի Քրիստոսի ՄԵՋ լինելուց:

Հիսուս Քրիստոսը եղել է ՇԱՏ Հակա-Կարմիր Վիշապների դեմքը և շարունակում է լինել: Նա եղել է շատ մարդկանց ատելության, դատապարտման ու մահաբեր ցասման Օբյեկտն ու շարունակում է լինել: Եվ նա ասել է, որ նույնը կլինի նաև նրանց համար, ովքեր Իր նման են: Նա նույնիսկ ասել է, որ քո սեփական տան անդամները կսպանեն քեզ ու կկարծեն, թե իրենք Աստծուն լավություն են անում: Որքան ավելի ես դու Հիսուսին նմանվում, այնքան ավելի շատ մարդիկ կլինեն քո դեմքը կրող մահաբեր Հակա-Կարմիր-Վիշապի տակ: Մասնավորապես նրանք, ովքեր ենթակա են մրցակցության ոգուն:

Դու կարող ես վերացնել (կամ գոնե նվազագույնի հասցնել) այն մարդկանց քանակը, ովքեր փորձում են քեզ իդեալականացնել կամ պաշտել, սակայն դու ոչինչ չես կարող անել նրանց հետ, ոքեր ցանկանում են քեզ սպանել, եթե միայն, դու մեղմ ու փափլիկ չքարոզես ու երբեք ճշմարտությունը չխոսես: Որքան ավելի ես դու Հիսուսին նմանվում, այնքան ավելի մահաբեր-Հակա-Կարմիր Վիշապներ կկենտրոնանան քեզ վրա՝ որպես իրենց ատելության առարկայի, և այնքան ավելի քիչ կլինեն քեզ երկրպագողները: (Բայց հասկացիր, որ նրանք երկուսն էլ քեզ կուռք են դարձրել տարբեր ձևերով:) Կլինեն մարդիկ, ովքեր իսկապես ԿՍԻՐԵՆ քեզ, սակայն նրանք իրենց հայացքը դեպի Հիսուսն են պահում:

Մարդիկ կարող են աստվածացնել՝ պաշտամունքի առարկա դարձնել Աստծուն - հենց դա է գաղափարը: Նա, Իրենից ԲԱՑԻ, ոչ մի ուրիշ կուռք չի ցանկանում: Նա ՊԻՏԻ լինի քո երկրպագության միակ Օբյեկտը: Ցանկացած այլ բան դատապարտում կբերի քեզ Առաջին Պատվիրանը խախտելու պատճառով: Սխալ է անգամ Աստվածաշունչը կուռք դարձնելը: Դա Աստծո ամբողջությունը չէ: Գիրքն ինքնին Նրա խոսքն է, բայց դա Նա չէ: Մենք չենք կարող գրքի հետ հարաբերություններ ունենալ, նույնիսկ, գեղեցիկ, փառահեղ, կենդանի գրքի հետ. մենք, վերջին հաշվով, պետք է Նրան պաշտենք, ով Մարմնացած Խոսքն է, այլ ոչ թե պաշտենք Աստվածաշունչը...

Գուցե՞ դու դրախտն ես կուռք դարձնում: Գուցե՞ դու քո անձնական փրկությունն ես դարձնում Քրիստոսի հետ քո ճանապարհի էական տարրը: Սա արդեն իսկ ժխտում է այն, որ հիմնական նպատակը պետք է լինի Նրա հետ հարաբերությունն ու Նրա փառավորումը մեր ամենօրյա կյանքում, այլ ոչ թե՝ դժոխքից խուսափելը: Վերջին հաշվով, հաճույքի ձգտելն ու ցավից խուսափելը դեռևս հպարտություն է և մարդկային ցանկություն:

Այսպիսով՝ ճիշտ է, եթե մարդիկ Հիսուսին կուռք են դարձրել, նույնիսկ, այն ժամանակ, երբ Նա այստեղ էր: Հենց դա է գաղափարը Նա պիտի լինի կուռքը: Բայց արդյոք մարդիկ կուռք են դարձրել Պողոսի՞ն: Այո՛: Պետրոսի՞ն: Այո՛: Լեզուներ խոսե՞լը: Այո՛: Նշաննե՞րն ու հրաշքնե՞րը: Այո՛: Արդյո՞ք սրանք ինքնաբուստինքյան վատ բաներ են: Ո՛չ, եթե միայն դու քո հայացքը նրանց վրա չես կենտրոնացնում՝ Հիսուսի՛ն նայելու փոխարեն: Դրանք գործիքներ, հետևանքներ և մարդիկ են, բայց դրանք ՉՊԵՏՔ Է լինեն հիմնական խնդիրը:

Պողոսն ասել է. «Եղե՛ք ինձ նման, որովհետև ես Քրիստոսի նման էի»: Արդյոք այն փաստը, որ նա երբեք իր բերանը չէր բացում, ճշմարտությունից բացի, որևէ այլ խոսք ասելու համար, օգնեց նրան

խուսափել որևիցե մեկի համար կուռք դառնալուց Ո՛չ: Արդյո՞ք «իր իսկ անձից կամ միս-ու-արյունից մղված» որևիցե խոսք ասելը ստիպեց նրանց ընկնել Կարմիր Վիշապի տակ: Ո՛չ: Արդյո՞ք Ճշմարտությունը խոսելը զերծ պահեց նրան մարդկանց կողմից դատապարվելուց: Ո՛չ: Իրականում, որքան ավելի էր նա ճանաչված դառնում Ճշմարտությունը խոսելու համար, այնքան ավելի էր սաստկանում այդ դատապարտումը:

Ինչպե՞ս մենք կարող ենք զերծ պահել մարդկանց մեզ կուռք դարձնելուց

Մենք չենք կարող: Եթե մենք մեր ողջ ժամանակը վատնենք նրանց դրանից հետ պահելու համար, մենք մեզ կվտանգենք մեր ԻՍԿ հայացքը Հիսուսից շեղելուն և այդ ամենը ՄԵՐ մասին դարձնելուն: Այն ամենը, ինչ մենք կարող ենք անել, նրանց դեպի Հիսուսը մատնանշելն է ու խոսել միայն այն, ինչ Աստված է մեզ ասում, որ խոսենք, ու հանգստանալ՝ իմանալով, որ Աստված այն կմշակի: Մենք, միայն, կարող ենք Ճշմարտությունը խոսել ու թողնել, որ Տերը մշակի:

ԿԼԻՆԵՆ նրանք, ովքեր կփորձեն պաշտել քեզ: Նրանցից շատերի մասին դու երբեք չես էլ իմանա: Նրանք պարզապես մի բան կլսեն, կամ կկարդան ու կձգտեն նմանվել քեզ ու քեզ կնայեն Հիսուսին նայելու փոխարեն: Նրանց, որոնք քեզ հետ շփման մեջ ԿԼԻՆԵՆ, հարկավոր է հետ պահել դրանից: Դու դրան որոշ չափով կարող ես հասնել՝ մարդկային ու թափանցիկ լինելով ու միշտ նրանց դեպի Հիսուսը մատնանշելով: Թույլ մի՛ տուր հոգու ոչ մի անօրինական կապ՝ ընդունելով միացում կամ պարտականություններ, որոնք չպետք է լինեին: Պատասխանատվություն մի վերցրու պաշտպանել, կամ ապահովել կամ ուղղորդել կամ որևիցե այլ բան, որը նրանք պետք է հենց Աստծո Գահից ստանան: Ցանկացած դեպքում, դա պատրանք է, որ իբր, դու կարող ես որևէ կերպ ի կատար ածել այդ ամենից ինչ-որ մի բան:

Եթե դու լսես ու հնազանդվես, Տերը քեզ կասի, երբ է որևիցե մեկը դա անում քո նկատմամբ և ՔԵԶ է նայում՝ որպես իր Աղբյուրի, այն դեպքում, երբ չպետք է դա աներ: Արա այնպե՛ս, ինչպես ԱՍՏՎԱԾ է ուղղորդում: Մի՛ սնուցիր սա: Նրանց դեպի Խաչը մատնանշի՛ր ու ճանապարհից մի կողմ քաշվիր: Մենք չենք կարող լինել որևիցե մեկի «հախճապակե գունդը»: Մենք ՊԵՏՔ է օգնենք նրանց, որ կարողանան լսել Աստծուն, որպեսզի ՆԱ կարողանա ուղղորդել նրանց բոլոր ճանապարհները: Մեզնից ոչ ոք ի վիճակի չէ իր ՍԵՓԱԿԱՆ ճանապարհները ճշգրտորեն ուղղորդել, էլ ուր մնաց, թե ուրիշ որևէ մեկինը:

Պողոսը կարող էր ազնվորեն ասել, որ «ոչ մեկի արյունն իր գլխին չէր», քանի որ նա սա Ինքն ԻՐ մասին չէր դարձրել՝ նա մարդկանց դեպի իրեն չէր ձգել կամ քաշել. նա կանգնել էր նրանց հետևում և քշել նրանց Հիսուսի ուղղությամբ: Եթե մենք պահենք և կերակրենք «քահանաների» դասարան, որտեղ որոշ մարդիկ ավելի սուրբ են քան մյուսները, և դու ստիպված լինես անես այն, ինչ նրանք են քեզ ասում, ապա այդժամ մենք մարդկանց առջև արգելքներ ենք դնում և այդ արգելքը ՄԵՆՔ ԵՆՔ:
Խնդրում եմ, լսիր ինձ: Մատնանշիր նրանց դեպի Հիսուսը և հեռացիր նրանց ճանապարհից:

Եվ ուրախացիր տրտմության մեջ, երբ մարդիկ դատապարտորեն և ատեն քեզ: Հիսուսն ասել է, որ այդպես կլինի, եթե դու Նրա նման լինես: Փառաբանի՛ր Աստծուն, Դու պիտի որ նրան ավելի նմավելիս լինես: Սա ՊԱՏԵՐԱԶՄ Է. եթե ոչ ոք քեզ վրա չի կրակում, ապա, երևի, դու այնքան էլ վտանգավոր չես: Կամ էլ ավելի վատ, թշնամին գուցե արդեն գրավել է քեզ, և դու ստեղծել ես մի խորհրդավոր կրոն, որը վշտացնում է Աստծուն և ՔԵԶ տեղադրում է մարդկանց գլխին ու դու Կարմիր Վիշապի տակ ես և չգիտես էլ դրա մասին:

Գործնական Օրինակ 1

Սավուղը Փարիսեցի էր, որն իր ամբողջ սրտով ճշմարտապես հավատում էր, որ Քրիստոնյաներին սպանելով՝ Աստծուն բարեհաճություն էր անում: Նա Հակա-Քրիստոնեական Կարմիր Վիշապ ուներ և այն ՇԱՏ առաջադեմ էր: Վերջիվերջո, այդ ամենի ներքո Սավուղի ունեցած Կարմիր Վիշապ մոլորությունն ուներ նաև իր իսկ (Սավուղի) դեմքը, քանի որ նա փորձում էր իր համար մեծ Փարիսեցու անուն վաստակել: Հիսուսն ինքը պիտի հայտնվեր, դա Սավուղից ջարդելու հանելու համար, և նույնիսկ այդ ժամանակ Սավուղը դեռևս կույր էր, քանի որ, երբ Անանիան եկավ նրա համար աղոթելու՝ «թեփուկների» նման ինչ-որ բաներ ցած թափվեցին Սավուղի աչքերից: Ինչը ունի՞ թեփուկներ - օձերը, ձկները և ՎԻՇԱՊՆԵՐԸ: Դա մոլորությունն էր, որը ցած ընկավ, որպեսզի Սավուղը կարողանա պարզ տեսնել:

Գործնական Օրինակ 2

Ինչպե՞ս ենք մենք ծառայում Աստծուն. ջերմառանդորեն մասնակից լինում եղբայրությանը, վաճառում մեր ողջ ունեցվածքը և տալիս աղքատներին, աշխատում ավյունով և իսկապես վստահ լինում, որ մենք որևիցե կերպ չենք ընկնում ինչ-որ երևույթի կամ ազդեցության, հետևաբար՝ մոլորության տակ: Ապաշխարումը / զղջումը Եզեկիել 9-ի նշանն է և վստահեցնում է, որ մենք մեռած մարմիններ չենք պղծված տաճարների մեջ: Կարդա՛ այն և ողբա: Իսկապես, ողբա: Դա միակ ապահով բանն է:

Գործնական Օրինակ 3

Հիշու՞մ ես ավագ դպրոցում այն աղջկան, որին դու սիրահարված էիր, սակայն ում քո բոլոր ընկերներն ատում էին: Նույնիսկ ծնողներդ չէին հավանում նրան: Բայց դու ոչինչ չէիր ցանկանում լսել: Դու վստահ էիր, որ նա կատարյալ է: Մինչև այն պահը, երբ նա կապերը խզեց քեզ հետ: Ու այդ ժամանակ դու հասկացար, թե որքա՛ն հիմար էիր եղել, որ չէիր նկատել դա: Դա մոլորություն էր: Դու նրան կուռք էիր դարձրել, ու Աստված քեզ հանձնեց քո իսկ կուռքին:

Ո՞վ ՉՈՒՆԻ իր վրա Կարմիր Վիշապ

Մի քանի շաբաթ առաջ Աստված նորից առաջնորդեց ինձ Եզեկիել 9 (այս գլուխը վերջերս կանոնավոր կերպով է առաջ գալիս): Եթե դու չգիտես այն, ապա, խնդրում եմ, անհապաղ գնա, կարդա այն (և դրանից առաջ գտնվող գլուխները տեսնելու համար, թե նրանք ինչն էին սխալ անում): Հիմնականում Աստված Եզեկիելին այն տեսիլքն է տալիս, թե, իրականում, որքան սարսափելի է դարձել Իսրայելի հոգևոր վիճակը, և ողջ հեթանոսական արարքները, որ ներմուծվել են Աստծո երկրպագության մեջ (կամ փոխարինել դրան): Ավագներն ու քահանաները ամբողջովին ծախված են վատին և վարկաբեկմանը: Հետո Աստծո փառքը լքում է տաճարը, և Աստված հրեշտակ է ուղարկում, որպեսզի նշան դնի նրանց ճակատին, ովքեր զղջում են / ապաշխարում, լալիս և ողբում՝ Երուսաղեմի տխուր հոգևոր վիճակի համար: Հետո նա ուղարկում է մահվան հրեշտակներին, որ անգթորեն կոտորեն մնացածին՝ տղամարդկանց, կանանց և երեխաներին, և հանձնարարում է նրանց, որ սկսեն ավագներից, որոնք Տաճարի առջև են: Հետո վերցնեն բոլոր մեռած մարմինները և սահմանագծեն Տաճարը: Հիմա հիշիր, սա Աստծո ժողովուրդն էր, Աստծո քաղաքում, որը սահմանագծում էր Աստծո Տաճարը: Աստված հաստատ որոշել էր դա անել, և կան շատ Աստվածաշնչյան ապացույցներ, որ Նա առաջ էլ է դա արել: Միակ մարդիկ, որ փրկվում են, միակ մնացուկը, որը մնում է, նրանք են, ովքեր ապաշխարող էին Երուսաղեմի մեղքերի համար և հրեշտակի դրած նշանն ունեին իրենց ճակատին:

Հանկարածկի ես կարդում եմ այս գլուխը, և Տերն ասում է ինձ. «Գիտե՞ս, ես դա արդեն արել եմ: Ձեր տաճարները լի են մեռած մարմիններով:»

ՑԱՎՈՔ, ԱՅՈ: Ես չեմ կարող առարկել դրան: Անցած երկու տարիների ընթացքում ես եղել եմ տասնյակ միաբանություններում կամ քրիստոնեական հավաքույթներում, և նրանք, բավականին համընդհանուր կերպով, ճնշված, մոլորված և/կամ մեռած են: Վստահաբար, այնտեղ կան պայծառ լույսեր, սակայն, մեծամասամբ, նրանք մեռած են: Այստեղ՝ Կանզաս քաղաքում, նույնիսկ, մի խարիզմատիկ ծառայություն կա, որտեղ մեզնից մի քանիսը եղել են, և նրանց շենքի մի որոշակի հատուկ սենյակում բոլորս էլ տեսել ենք (հոգևոր ասպարեզում) մեռած մարմինների մեծ կույտեր և դեր, որոնք կերակրվում են դրանցով՝ ինչպես գիշատիչները: Ողջ այդ վայրում կա շատ ուժեղ, շատ զգալի ճնշվածություն, բայց նրանք ուղղակի ՎՍՏԱՀ են, որ իրենք Աստծո ընտրյալներն են և վստահ են, որ իրենք Նրա կատարյալ կամքի մեջ են:

Ինչպե՞ս կարող ես իմանալ, արդյոք դու ճշմարտապես ազա՞տ ես Կարմիր Վիշապից: Եթե քեզ տրվել է Զղջման / Ապաշխարության Ընծան երևույշների տխուր վիճակի համար, և դու վշտանում, ողբում և լալիս ես՝ Աստծո անունից կատարված բոլոր գարշելի բաների համար: Սակայն, եթե դու ապաշխարում ես միայն «այն մյուս մարդկանց» համար, ապա դա հաշվի չի առնվում: Եթե դու զղջում և ապաշխարում ես ինչ-որ հատուկ բանի համար, ինչպես օրինակ՝ աբորտները, ապա գուցե դու ընտրովի ապաշխարում ունես կամ պարզապես երեխաների համար ես տխրում: Բայց Եզեկիել 9-րդ գլուխը հստակ ասում է, որ միակ փրկվածները նրանք էին, ովքեր ապաշխարում էին իրենց քաղաքի հոգևոր վիճակի համար և դրա մեջ իրենց անձնական մասնակցության համար: Եթե քեզ մի փոքր ավել օգնություն է հարկավոր սկսելու համար, ապա կարդա Եզեկիել 16-րդ գլուխը և տե՛ս, արդյոք դա իրապես լավ պատկեր չէ՞ Ամերիկայի եկեղեցու վերաբերյալ: Կարդա նաև Օսէէն, տեսնելու համար, թե արդյոք մենք, նույնպես, չենք գործում այդ բոլոր արարքները, և Աստված ի՞նչ

է ասում, որ կպատահի բոլոր նրանց, ովքեր այդ անում են: Դու կարող ես կարդալ նաև Մաթեոս 23-րդ գլուխը և այն յոթ «վայերը», որ Հիսուսն ասում է Փարիսեցիների մասին, որոնք այդ ժամանակվա Կրոնի պահպանողներն էին: Մենք էլ ենք անում այդ բոլոր բաները: Եվ ԱՎԵԼԻ մեծ չափով: Մենք մեծ վտանգի մեջ ենք, և հնարավորինս շատ մարդիկ պետք է սկսեն զղջալ / ապաշխարել, որպեսզի Աստված շրջվի:

Անկասկած, դատաստանը կսկսվի տաճարի առջևի ավագներից: Հասկացիր, պետք չէ՛, որ մենք անհանգստանանք «ինչ-որ ապագա շեղման/անկան» և «եկեղեցու» մեծ մոլորության համար: Դա հենց հիմա է, և մենք ամբողջովին ընկած ու շեղված ենք: Այլ կերպ հնարավոր չէ բացատրել այնպիսի ակնհայտ չապաշխարող անհնազանդությունը, ինչպիսին է 37,000 «քրիստոնեական» ուղղություններ ունենալը, այն դեպքում, երբ մեզ հրամայվել է լինել ՄԵԿ ՄԱՐՄԻՆ: Աստծո Խոսքն ասում է, որ եթե դու սրտումդ ինչ-որ բան պահես եղբորդ դեմ և դու հաղորդությունը անարժանորեն վերցնես, դու կհիվանդանաս և կմեռնես: Համենայն դեպս մասնակիորեն, մենք բոլորս հիվանդ ենք և մեռնում ենք (հոգեպես և ֆիզիկապես, որովհետև մենք հաղորդությունը անարժանորեն ենք վերցնում): Ըստ սահմանման՝ եկեղեցին կիսելու և հավատացյալների միջև միությունը սահմանափակելու այլ ձև չկա՝ եղբորդ դեմ սրտումդ ինչ-որ բան պահելուց բացի: Երկրորդ Օրենք 28-րդ գլուխն ասում է, որ մենք կունենանք ավերիչ, անբուժելի հիվանդություններ և ոչ ոք մեզ օգնություն չի գա, մինչև որ մենք չապաշխարենք / չզղջանք:

Եթե տաճարներում՝ մեռած մարմինների մեջ, կան մարդիկ, որ դեռ ինչ-որ կերպ շնչում են, ապա նրանք պիտի հնարավորինս արագ դուրս գան «դրա միջից»: Եթե դու հոգեպես մեռած ես, և դևերը խժռում են քեզ, ու դու դա չգիտեիր, ապա (եթե կարող ես) սկսիր լալ և զղջալ / ապաշխարել, և Աստված գուցե շրջվի: Եթե դու վստահ չես, թե որքան մեռած ես, պարզապես հարցրու ինքդ քեզ, վերջին անգամ ե՞րբ էր, որ դու զգում էիր, որ քո հոգևոր «բաժակը» իրոք մինչև վերջ լիքն է, և դու ունեիր խաղաղություն, և՛ ուրախություն, և՛ հաղթանակ: Գուցե, դու կկարողանաս աղոթել այս աղոթքը.

> **Տեր Հիսու՛ս, ես վստահ չեմ, թե իրականում հոգեպես որքան մեռած եմ, բայց չեմ կարծում, որ այնքան լի եմ Քո Հոգով, որքան պիտի լինեի: Խնդրում եմ, ներիր ինձ, իմ արած այն ամենի համար, ինչը կանգնել է Քո ճանապարհին և ինձ հետ պահել Քո՝ ինձ համար ունեցած ամբողջ լիության մեջ քայլելուց: Ես ցավում եմ, որ թեքվել եմ իմ սեփական հասկացողության կողմն ու աշխարհի հետ փողոցիջման գնացել: Խնդրում եմ, ցույց տուր ինձ այն ամենն, ինչ կանգնած է Քո ու իմ միջև և տու՛ր ինձ ապաշխարելու/զղջալու կարողություն: Ես ուզում եմ խաղաղություն, ուրախություն և հաղթանակ: Ես չեմ ուզում, որ թշնամուց եկած որևէ բան գրավի ինձնից թեկուզ մի մաս: Խնդրում եմ, ցույց տուր ինձ, թե ինչպես իմ բաժակն այնքան լի պահեմ Հիսուսով, որ այնտեղ ուրիշ ոչինչ չտեղավորվի: Ես ցավում եմ իմ բաժնի համար այն ամենի մեջ, ինչը փառազրկել է Քեզ և վնաս է հասցրել Քո Մարմնին: Խնդրում եմ, ների՛ր ինձ: Ինձ ավելի շատ սովորեցրու Տիրոջ Երկյուղ: Դա լավ կլիներ: Այդպես ես կկարողանամ Քեզ ավելի կհնազանդվել և ավելի շատ իմաստություն կունենամ: Շնորհակալ եմ: Ես սիրում եմ Քեզ, Տե՛ր: Ես սա աղոթում եմ Հիսուս Քրիստոսի Անունով, Ամեն:**

Ինչպե՞ս կարող ես իմանալ, արդյոք դու Կարմիր Վիշապ անեծքի տակ ես

- Հպարտություն, մեծամիտ, գոռոզ աչքեր (Առակ. 6:16-19, Տիմ. Բ 2:15)
- Խաբող լեզու – Աստծո Խոսքից որոշ մասեր ակնհայտորեն դուրս թողնող կամ դրան այլ մասեր ավելացնող:
- Ձեռքեր, որ անմեղ արյուն են թափում - ոչխարների հանդեպ պատշաճ հարգանքի և խնամքի պակաս:
- Սիրտ, որ չար ծրագրեր է հնարում - չար ծրագրեր են համարվում բոլոր այն ծրագրերը, որոնք Աստծո ծրագրերը չեն:
- Ոտքեր, որ արագորեն վազում են չարի մոտ - «աշխարհի» հետ համաձայնագրեր և քո ոչխարների միջև խիստ տարածված ճնշումներ:
- Կեղծ վկա, որը ստեր է խոսում - կեղծ հավաստիացումներ մյուսներին, որ դու ճշմարտությունն ես ասում և գիտես բոլոր պատասխանները:
- Եղբայրության մեջ երկպառակություն բորբոքելը – աղանդավորական լինելը կամ քրիստոնեական որևէ ուղղությանը պատկանելը, տարաձայնություն և պառակտում թույլ տալը, դավանաբանական կամ անձնական հարցերի պատճառով՝ եղբայրությանը քո միությունից վանելը:
- Տիրոջ Երկյուղի պակաս - որն իմաստության ՍԿԻԶԲՆ է: (Առակ. 111:10 , Առակ. 3:5-6; 4:16)
- Ինստիտուցիոնալ/համակարգային, հիերարխիկ կառուցվածքի առկայությունը, որի փոխարեն հարկավոր էր լինել ճշմարտապես Սուրբ Հոգով ուղղորդվող՝ ԲՈԼՈՐ պարագաներում - Աստծուց բացի՝ ուրիշ մեկը, ով հաստատում է քո նպատակներն ու ուղեցույցները:
- Սիրո պակաս ԱՄԲՈՂՋ Մարմնի նկատմամբ (Հովհ. Ա 3:10-25)
- Սեռական անբարոյականություն, անմաքրություն և անառակություն; կռապաշտութուն և կախարդություն; ատելություն, արաձայնություններ, խանդ, կատաղություն, եսասեր ձգտումներ, անհամաձայնություններ և նախանձ, հարբածություն, օրգիաներ և այլ նման բաներ, որոնք ՉԵՆ ժառանգելու Աստծո Արքայությունը: (Գաղ. 5:19-21)
- Սխալ Հիսուսի երկրպագելը (կամ Սուրբ Հոգուն երկրպագելը):
- Երկրորդ Օրենք 28-րդ գլխի անեծքների առկայությունը ֆիզիկական և/կամ հոգևոր ոլորտներում:

- Զղջալու / ապաշխարելու անկարողություն - կամ անկարողություն, թեկուզ, պարզելու, թե ինչի համար զղջալ:
- Աստծո փառքը լքել է տաճարը - դու չես կարողանում զգալ Սուրբ Հոգին, կամ Աստվածաշնչի խոստումները բժշկման և ազատագրման մասին, չեն գալիս այնպես, ինչպես պիտի գային:
- Չես կարող լսել Աստծո ձայնը և/կամ Նրան թույլ չես տալիս ուղղորդել քո բոլոր ուղիները: (Առակ. 3:5-6)
- Մշտապես նոր, ավելի լավ մի բանի փնտրտուք. անհամբեր միտք, ձգտումից հոգնած աչքեր և հուսահատ սիրտ: Մշտապես հուսացող, որ կլինի մի ուրիշ և լավ որևէ բան: (Երկրորդ Օր. 28:65-67): Խաղաղության բացարձակ պակաս:
- Ձավակներիդ կորուստը դեպի դիվական համակարգեր և քո թշնամիների համակրգեր: (Երկրորդ Օր. 28)
- Եվ նման այլ բաներ...

Վերջին հինգ տարիների ընթացքում ես եղել եմ ավելի քան 400 միաբանություններում/ հավաքույթներում կամ ծառայություններում: Ես տեսել եմ այս կետերից յուրաքանչյուրը գործի մեջ, սովորաբար, բոլորը միասին: Ինձ միաբանությունից ֆիզիկապես վտարել են աղոթելու համար (լռակյաց աղոթելու): Ինձ, առանց հայտնի պատճառի, արգելել են Տիրոջը երկրպագել որոշ միաբանությունների/հավաքույթների հետ: Դա արել են նույնիսկ այն մարդիկ, որոնք հաստատել են, որ ես իմ ողջ սրտով սիրում եմ Հիսուսին, և Սուրբ Հոգին գործում է իմ մեջ: Նույնիսկ մարդիկ, որոնք ինձ մարգարե, բժշկող և Աստծո մարդ են հայտարարել, հետո բացարձակապես հետ են շրջվել: Կա «Հոգով-լցված» մի քարոզիչ, որն ինձ հիմա բնութագրում է՝ որպես մի «բան»՝ նույնիսկ ոչ մարդ: Մյուսը, որը նույնիսկ մերժում է ինձ հետ աղոթել, ուրիշները, որ պնդում են, թե ես դևերով եմ լցված, բայց չեն կարող ասել ինձ, թե դրանք ինչ դևեր են և ինձ չեն էլ օգնում ազատագրվել: Քարոզիչներ, որ ատում են ինձ, իսկապես ԱՏՈՒՄ են և ասել են, որ <u>չեն կարող</u> սիրել ինձ, քանի որ չգիտեն, թե ես ինչ «ոգուց» եմ, թեև Հիսուսը ՀՐԱՄԱՅԵԼ է մեզ՝ սիրել մեր թշնամիներին: (Մաթ. 10:22, Հովհ. 15:18-25, Մարկոս 3:22, Ղուկաս 7:33-34, Մաթ. 12: 22-30, Առակաց 6:16-19)

Սակայն, սովորաբար, ես կարծես լավ եմ շփվում Բափթիստների, Լյութերականների, Պրեսպետերականների, Մեթոդիստների և այլոց հետ: Սակայն «Սուրբ Հոգով-լցված»՝ Վիշապի Գլխավոր Պարողները (որոնք պիտի որ Աստծուն լավագույնը լսելիս լինեին), գերբնականորեն առավելագույնս անկարող են լսել որևէ բան, որը ես պետք է ասեմ. նրանք են որ առավել պատրաստ բաժանել (Քրիստոսի) Մարմինը և առավել վախենում են կորցնել վերահսկողությունը: Ում շատ է տրվել, նրանից շատ է ակնկալվում: Եթե Աստված խոսում է քեզ հետ, քեզ երազներ և տեսիլքներ է տալիս, Ընծաներ է տալիս, մի մեծ գործ է տալիս, որ անես, և ՀԵՏՈ դու այն դարձնում ես քո մասին ու քո կոնֆերանսների, քո տեսաերիզների և քո նոր գրքի մասին, ապա Աստված քեզ կհանձնի քո իսկ ապականված մտքին և դիվական այն ցանկացած ուժերին, որոնք կցանկանան գալ և խանգարել կամ անհանգստացնել քեզ, և դու նույնիսկ չես էլ նկատի դրանց գալը: Կգա ինչ-որ մի պահ, երբ դու, գուցե, հայտնվես ազգային լուրերում՝ քո համասեռամոլ մերսողի հետ սեռական

կապ ունենալու, կամ մերկապարուհի վարձելու, կամ փոքրիկ տղաներին շահագործելու պատճառով, և ՔՈ առանձնահատուկ Կարմիր Վիշապի տակ գտնվող բոլոր մարդիկ կասեն, որ չեն էլ նկատել դրա մոտենալը: Դա պարզապես գերբնական հիմարեցվածություն է և ոգիներին զանազանելու բացարձակ պակաս - քանի որ ՔՈ վիշապից դուրս եղած յուրաքանչյուրը տեսել է դրա գալը:

Իմ ածխատանքի մի մասը գործի դրված պանշները մաքրելն է: Ճիշտ այնպես, ինչպես Հիսուսը և Առաքյալները (և հազարավոր այլ մարդիկ, որոնք Հիսուսով լի մեծ բաժակ ունեն), մեծամասամբ, գրեթե ուր էլ ես գնում եմ, դևերը, որ թաքնված էին, սկսում են ջրի երես դուրս գալ և իրենց դրսևորել, որն էլ շատ լավ է: Դա այն է, ինչի համար ես աղոթել եմ (թեև դա երբեմն իրոք ցավեցնում է ինձ): Ավելի լավ է դրանք մաքրել, քան թողնել, որ թաքնված և ծպտված մնան: Բայց ես մշտապես ապշում եմ, թե որքան կարծրասիրտ կարող են լինել «Աստծո մարդ» կոչվածներից այդքան շատերը և անտեղյակ լինել իրենց իսկ մեղսալիությանն ու ակնհայտ հերետիկոսությանը, այն ժամանակ, երբ նրանք ՊՆԴՈՒՄ են, որ իրենք սուրբ են և մաքրագործված: Ես չեմ կարող հանգել ուրիշ ոչ մի եզրակացության, բացի այն մեկից, որ Նրանք գերբնականորեն կույր են, խուլ ու համր և Աստծուց ուղարկված ուժգին մոլորության տակ են: Սատանան չէր կարող սա նրանց նկատմամբ անել, եթե նրանք արդար լինեին: Այն պիտի որ Աստծուց գար: Եվ ես երկու տարի գլուխս էի կոտրում էի՝ փորձելով նրանց ազատել մի անեծքից, որն ԱՍՏՎԱԾ ԻՆՔՆ է դրել նրանց վրա և չի հեռացնում: Սակայն այդ ամենը ծրագրի մի մասն էր, որպեսզի ես տեսնեմ ողջ այս խառնաշփոթի ետևում եղած ճշմարտությունը:

Հիմա ես գիտեմ՝ պետք չէ, որ բարկությամբ, վրդովմունքով կամ էլ դառնությամբ գամ նրանց մոտ: Նրանք թակարդված են, կապկպված և անեծքի ճնշման տակ: Եվ ամենվատն այն է, որ դա Աստծուց է: Եվ միակ լուծումը զղջումը / ապաշխարումն է, սակայն անեծքը նրանց «հետ է պահում» զղջալուց: Իրականում, նրանցից շատերն են ԱՏՈՒՄ ապաշխարումը: Նրանք սարսռում են, երբ տեսնում են, որ մարդիկ արտասվում են, և նրանք միայն ցանկանում են կենտրոնանալ Աստծո «սիրո» վրա և՝ մարդկանց չստիպել վատ զգալ: Նրանցից շատերը վերացրել են միջնորդական աղոթքի հանդիպումներն ու իրենց միաբանությունից/հավաքույթից դուրս են մղել շատ մարդկանց, որոնք իրականում պատրաստ էին աղոթել առ Աստված և լալ: Իրական ապաշխարությունն այսօր «եկեղեցում» հանդիպող ամենահազվագյուտ երևույթն է - և տակավին, ՄԻԱԿ բանը, որը կշտկի այս խառնաշփոթը: Ես չեմ հիշում, որ իմ մանկության ու պատանեկության ողջ տարիների ընթացքում ես Բափթիստական եկեղեցում ԵՐԲԵՎԻՑԵ տեսած լինեմ մեկին, ով ծնկի եկած լալիս է: Անգամ, շատ խարիզմատիկ եկեղեցիներ, որոնք գիտեն, թե ինչ է նշանակում զգալ Աստծո ներկայությունը, թվում է, թե մտածում են, որ եթե դու «սուրբ ծոմ հայտարարես, սրբազան ժողով հավաքես, գետնին թավալ գաս ու հռհռաս, ապա Նա կշրջվի:» (Հակոբոս 1:13-14՝ ինչ-որ առումով) Սակայն դա ճիշտ չէ: Նույնիսկ մոտ էլ չէ դրան: Դա պարզապես ԵՐԲԵՔ չի գործի այս ամենը շտկելու համար: Դա այնքան է մոտ ապաշխարությանը, որքան նրանք, թվում է՝ ի վիճակի են ընկալել: Շատ խոսակցություններ կան այն մասին, թե ինչ խնդիրներ կան «այնտե՛ղ», բայց ոչ մի իրական լաց՝ իրենց իսկ մասնակցության համար դրա մեջ: Օ՜, մարդիկ կարող են զղջալ և ապաշխարել անձնական, անհատական հարցերի համար, բայց ո՛չ հավաքական՝ ողջ համակարգում ներկա՝ այնպիսի կրոնափոխության համար, ինչպիսին է Քրիստոսի Հոգևոր Մարմնի մասնատումը կամ Աստծո խոսքի ընտրովի գործածումը: Կամ նրանք կարող են ապաշխարել Մարմնի այն բոլոր մասերի համար, որոնք խավարի մեջ են, հավատուրաց են ու նահանջող, բայց ոչ իրե՛նց իսկ

սեփական մասնակցության համար այն բանի մեջ, որ չեն փորձել սա ավելի վաղ կասեցնել, դադարեցնել:

Ես չգիտեմ, թե նրանցից քանիսին մենք կարող ենք ազատագրել, բայց ես գիտեմ, որ նրանք իրոք սարսափելի տեղում են և ես շատ եմ ուզում, որ նրանք բոլորն ազատ լինեն: Դա կգա միայն այն դեպքում, եթե Տերը նրանց վրա լցնի Ապաշխարության Ընծան (կամ ուղղարկի մեկին, ով ունի այդ Ընծան), և նրանք կստանան դա: Եթե ոչ՝ նրանք հավանաբար վերջացած են և նրանց ոչխարներն էլ՝ իրենց հետ միասին:

Գործք 5:31
Աստված նրան բարձրացրեց իր աջ ձեռքով, որպես առաջնորդ և փրկիչ՝ Իսրայելին տալու համար ապաշխարություն և մեղքերի թողություն:

Սա է այն հերթականությունը, որով սա գործում է: Սկզբում Աստված տալիս է զղջումը, և հետո դու ներում ես ստանում: Հիսուսը եկավ, որպեսզի աջակողմյան մուտքի հնարավորություն ունենա՝ մեզ Ապաշխարության Ընծան տալու: Աստված վեհացրեց Հիսուսին, որպեսզի Հիսուսը միջնորդ լինի և մեր անունից խնդրի, որ Հայրը մեզ տա Ապաշխարության Ընծան, նույնիսկ այն ժամանակ, երբ մենք դրա մասին խնդրել չգիտենք, քանի որ մենք խուլ ենք, կույր ու հիմար: Միայն ԱՅԴ ԺԱՄԱՆԱԿ մենք կարող ենք ներում ստանալ մեր մեղքերի համար՝ անհատական և հավաքական: Երբ դու կորցնում ես Ապաշխարության Ընծան, դու պիտի սկսես անհանգստանալ, որ դու գուցե հե՞տ ես գնացել Կարմիր Վիշապի տակ:

Տիմոթեոս 2 2:23
հանդարտութեամբ խրատելու համար հակառակողներին, որ թերեւս Աստուած նրանց ապաշխարութիւն տայ, որպէսզի ճանաչեն ճշմարտութիւնը:

Գործք 11:18
Այս բանը լսելով՝ լռեցին եւ փառաւորում էին Աստծուն ու ասում. «Ուրեմն Աստուած հեթանոսներին եւս դէպի կեանք տանող ապաշխարութիւն տուեց»:

Հռոմէացիներ 2:4
Եթէ արհամարհում ես նրա բարութեան առատութիւնը եւ ներողամտութիւնն ու համբերութիւնը, չգիտե՞ս, որ Աստծու բարութիւնը քեզ ապաշխարութեան է տանում:

Պետրոս 3:9
Տէրը չի ուշացնի իր խոստումը, ինչպէս կարծում են ոմանք, թէ ուշացած է, այլ համբերատար է ձեր հանդէպ. քանզի չի ուզում, որ որեւէ մէկը կորստեան մատնուի, այլ ուզում է, որ ամէնքը ապաշխարեն:

Եբրայեցիներ 12:24-28
24 Զգո՛յշ եղէք, չլինի թէ հրաժարուէք Նրանից, ով խօսում է. որովհետեւ, եթէ նրանք երկրի վրայ Աստծու պատգամները տուող Մովսէսին մերժելով չազատուեցին, որչա՛փ եւս առաւել չպիտի ազատուենք մենք, եթէ թիկունք դարձնենք երկնքից խօսողին, 25 որի ձայնը

երկիրը շարժեց այն -ժամանակ, իսկ այժմ այս խոստումն է անում եւ ասում. «Մի անգամ էլ պիտի շարժեմ ոչ միայն երկիրը, այլ նաեւ՝ երկինքը»: 26 Եւ «մի անգամ էլ» -ը ցոյց է տալիս, որ շարժուած բաները պիտի փոփոխուեն, որպէսզի անշարժ բաները մնան հաստատուն: 27 Դրա համար, քանի որ անշարժ թագաւորութիւն ենք ընդունում, ամուր պահենք շնորհը եւ այդ շնորհով էլ ծառայենք Աստծուն՝ իրեն հաճելի ձեւով՝ ահով եւ դողով, 28 քանզի մեր Աստուածը ոչնչացնող կրակ է:

Խնդրում եմ, հասկացիր ինձ: Խնդրու՛մ եմ: Տե՛ս Աստծո արդարությունը և խստությունը: Զղջա՛ և շարունակի՛ր զղջալ մինչև որ այս ամենը շտկվի: Աչքերիդ հանգիստ մի՛ տուր, մինչև որ ԵրուսաղեմՆ ազատագրվի և, նմանապես, մնացած բոլոր քաղաքները: Բղավիր սա աշտարակների վրայից: ՉԿԱ ԱՅԼ լուծում, ՉԿԱ սա հետ շրջելու այլ ձև: Լաց եղի՛ր, մղկտա՛ և վշտացի՛ր այն բոլոր գարշելի բաների համար, որ արվում են Եհովայի և Հիսուսի անունով: Եթե դու չես կարող զղջալ այս խառնաշփոթի մեջ ունեցած քո բաժնի համար, ապա սկսիր անհանգստանալ այն մասին, թե արդյոք դու քո սեփական Կարմիր Վիշապի տակ չես: Կխուսափի ՄԻԱՅՆ Եզեկիել 9-ի մնացուկը: Եթե հնարավոր էր սա ավելի վաղ ետ շրջել, ապա դու պիտի փորձած լինեիր: Մի՛ մեղադրիր ուրիշ ոչ ոքի, սա ՔՈ գլխին է: Եթե վճռական և պատրաստակամ մի մարդ Սուրբ Հոգու օծման տակգտնվելով՝ կարող է փոխել աշխարհը, ուրեմն դու պիտի այն փոխած լինեիր: Դադարեցրու մատնանշել մյուսներին և զղջա, որ ավելի վաղ չես գործել:

Եսայի 62:6-7

6 Քո պարիսպների վրայ, ո՛վ Երուսաղէմ, ամբողջ օրն ու ողջ գիշերը պահապաններ պիտի կարգեմ, որ մինչեւ վերջ չդադարեն յիշել Տիրոջը: 7 Ձեր նմանը չի լինի, երբ նա վերստին ուղղի եւ Երուսաղէմը դարձնի պարծանք երկրի վրայ:

Այն փաստը, որ դու լսում ես Աստծուն, և Նա շարունակ ասում է, որ քեզ մոտ ամեն ինչ լավ է, դեռ ապացույց չէ: Եթե դու վիշապի տակ ես, դու կլսես Աստծուն և վստահ կլինես, որ դա Աստվածն է, և ոգիներին ստուգելու քո իմացած բոլոր ձևերով ստուգելուց հետո, այն կրկին որպես Աստված է ներկայանում, բայց այն, դեռևս, կարող է Գահից ուղարկված խաբող ոգի լինել, որի նպատակը քո կործանումն է: Զղջումը միակ ապահով տեղն է: Հավատա՛ ինձ, ԻՐԱԿԱՆՈՒՄ շատ հեշտ է հետ գնալ Կարմիր Վիշապի տակ. դրա համար բավական է միայն, որ դու քո ուզած ձևով շարժվես՝ թեկուզ մի փոքր, և այդ ժամանակ դու, փաստացիորեն, ստեղծում ես քո սեփական կրոնը, որն ասում է, որ դու կարիք չունես Աստծուն ԱՄԲՈՂՋ ժամանակ հնազանդվել, որ դու կարող ես ընտրել, թե Նրա պատվիրաններից, որոնք են կարևոր: Եթե դու Նրա կատարյալ կամքի տակից դուրս գաս և շատ հեռու գնաս, գուցե այլևս չկարողանաս հետ ճանապարհը գտնել: Որոշ մարդիկ երբեք նույնիսկ չեն էլ ԵՂԵԼ Նրա կատարյալ կամքի մեջ, այնպես, որ նրանք նույնիսկ չգիտեն, թե ինչի նման կլիներ, եթե Աստված ուղղորդեր ամեն մի քայլը կամ, ավելի վատ, նրանք չեն հավատում, որ Աստված հետաքրքրված է կամ պատրաստ է կամ ի վիճակի է ուղղորդել նրանց ամեն մի քայլը, իսկ սա հակասում է Աստծո խոսքին: Մենք չպետք է հակվենք մեր սեփական հասկացողությանը և ուղղորդենք մեր ճամփաները՝ նույնիսկ մի փոքր:

Այլևս ժամանակ չկա՝ վիճելու, թե ով է ավելի մեծ հերետիկոս: Բոլորս էլ կուլտեր ենք: Յուրաքանչյուր քրիստոնեական ուղղություն էլ կուլտ է: Չկա ոչ մի Աստվածաշնչյան արդարացում երկրորդական հարցերի պատճառով Մարմնի բաժանման համար: Մեզ հստակ հրամայվել է՝

Աստծո խոսքին ոչինչ չավելացնել և չպակասեցնել, բայց, միևնույն է, քրիստոնեական ամեն մի ուղղություն ունի ընտրված իր ավանդույթները, որոնք ավելացվում են Աստծո Խոսքին կամ՝ Սուրբ գրքից մասեր, որոնք հարմարավետորեն այլ կերպ են բացատրվել կամ էլ ընդհանրապես անտեսվել են: Դադարեցրու վիճել, թե ով է ավելի շատ շեղվել ուղղուց: Այնքան ժամանակ, քանի դեռ մենք պատրաստ ենք մասնատել Քրիստոսի Մարմինը մանր կտորների կամ չխոսել դրա դեմ, մենք մեղավոր ենք: Մենք ինը-պոչանի մտրակով հարվածում ենք Հիսուսի Մարմնին, այն ժամանակ, երբ Նրա թանկագին արյունը թափված է, և դա ոչ ոքի կարծես չի էլ անհանգստացնում: Մենք պետք է սրան վերջ դնենք քանի դեռ շատ ուշ չէ:

Արդյո՞ք Աստվածաշունչը նախապես զգուշացրել է այս մասին

Այո՛:

2 Թեսաղոնիկեցիներ 2: 3-12

*Թող ոչ ոք ձեզ չխաբի եւ ոչ մի ձեւով. որովհետեւ այն օրը չի գալու, եթէ նախ ապստամբութիւնը չգայ, եւ չյայտնուի անօրէնութեան մարդը՝ կորստեան որդին՝ հակառակորդը, որ գոռոզանում է այն ամենի վրայ, որ կոչւում է աստուած կամ պաշտամունքի առարկայ, մինչեւ այն աստիճան, որ նա նստի Աստծու տաճարում եւ ինքն իրեն ցոյց տայ, թէ աստուած է: Չէ՞ք յիշում, որ, մինչ ձեզ հետ էի դեռ, ասում էի այդ բանը: Եւ այժմ դուք ինքներդ գիտէք, թէ ինչն է նրան յետ պահում, որ այդ Հակառակորդը ինքն իրեն յայտնի անի մինչեւ ժամանակը գայ. որովհետեւ անօրէնութեան այդ խորհրդաւոր ուժը արդէն գործի վրայ է. բայց այդ պիտի չյայտնուի մինչեւ այն ժամանակ, երբ մէջտեղից կը վերացուի նա, որ այժմ նրան յետ է պահում: Եւ ապա պիտի յայտնուի Անօրէնը, որին Տէր Յիսուս պիտի կործանի իր բերանի շնչով եւ պիտի ոչնչացնի իր յայտնութեամբ իր գալստեան ժամանակ: Նրա՝ Անօրէնի գալուստը Սատանայի ներգործութեամբ է, ամենայն զօրութեամբ, նշաններով, խաբեբայական զօրաւոր գործերով եւ անիրաւութեան բոլոր պատրանքներով կորստեան մատնուածների վրայ. եւ այդ ամէնը այն բանի փոխարէն, որ չընդունեցին ճշմարտութեան սէրը, որպէսզի փրկուեն: Դրա համար էլ **Աստուած** նրանց պիտի ուղարկի զօրաւոր մի մոլորութիւն, որ նրանք հաւատան ստին եւ դատապարտուեն բոլոր նրանք, որ չհաւատացին ճշմարտութեանը եւ հաճոյք գտան անօրէնութեան մէջ:*

Եթե ես ճիշտ եմ, ապա ապստամբությունն ինչ-որ ապագա երևույթ չէ: Մենք արդեն իսկ այնքան ապստամբ ենք և ընկած, որ ես չեմ կարծում, թե մեր կառուցած համակարգերի և կառուցվածքների մեծամասնության համար որևէ հույս կա: Ամեն շաբաթ մեր ձեռքով միլիոնավոր մարդիկ են մեռնում, քանի որ այս «Պոնզիի» սխեման, որը մենք կոչում ենք «եկեղեցի», շարունակում է մնալ այնպիսին, ինչպիսին կա: (Եվ ես դա կարող եմ ապացուցել փաստերով և վիճակագրական տվյալներով՝ առանց երկմտանքի որևէ մի հնարավորության: Ոչ մի այլ եզրակացություն չի կարող լինել՝ բացի այն մեկից, որ մենք զանգվածաբար և գերբնականորեն շրջված ենք գլխիվայր:)

Այսպիսով՝ սկզբում պետք է որ ապստամբությունը լինի, ճի՞շտ է: Կարո՞ղ է ապստամբություն համարվել 37,000-ից ավել քրիստոնեական ուղղություններ ունենալն, այն դեպքում, երբ Հիսուսն ասել է՝ լինել Մեկ Մարմին: Դու կարող ես, անշուշտ, մտածել, որ սա կարող է համարվել ապստամբություն, այնպես չէ՞:

Այսպիսով՝ ո՞վ է անօրինության այս մարդը, որը պետք է հայտնվի: Կարո՞ղ է դա լինել այն մարդը, որը չի հավատում, որ Հին Կտակարանն այսօրվա համար է, և մտածում է, որ «Հիսուսը չի եկել օրենքը լրացնելու, այլ եկել է այն վերացնելու, և, իբր, այն բանից հետո, երբ մենք մի անգամ Քրիստոսի Արյան տակ ենք մտնում և ընդունում Նրան՝ որպես մեր անձնական փրկչի, մենք արդեն կարող ենք անել այն, ինչ ցանկանանք, քանի որ մենք ապահով ենք:» Սա ինձ բավականին անօրեն

է թվում (գիտեմ, որ սա Աստվածաշնչյան այս հատվածի միակ կիրառությունը չէ, բայց ես կարծում եմ, որ վստահաբար, սա դրա պարուրագծերից մեկն է:)

Իսկ ո՞վ է այն մեկը, ով զսպել է անօրինության գաղտնի ուժը: Ես միանգամայն վստահ եմ, որ դա Սուրբ Հոգին է եղել: Իսկ ո՞վ է սահմանափակել Սուրբ Հոգուն և Նրան ճանապարհից դուրս հանել: Ես միանգամայն վստահ եմ, որ երբ մենք ժխտեցինք, որ Սուրբ Հոգին խոսում է մարդկանց հետ, ժխտեցինք, որ Սուրբ Հոգու Ընծաներն իրական են և այսօրվա համար / արդիական, մենք մեր այդ քայլով ժխտեցինք, որ Նա պետք է ուղղորդեր մեր ԲՈԼՈՐ ճանապարհները: Մենք մեջքով շրջվեցինք Սուրբ հոգուն և շարժվեցինք մեր ուզած ձևով ու վարձեցինք խորհրդատուներ և շուկայական փորձագետներ, փոփ-հոգեբանության խոսնակներ և վարձված մասնագետ հովիվներ, որ նրանք մեզ առաջնորդեն այնտեղ, ուր, ԻՐԵՆՑ կարծիքով, կանաչ մարգագետին է: Ես միանգամայն վստահ եմ, որ մենք վերցրինք Սուրբ Հոգուն ու մի կողմ դրեցինք: Եվ երբ մենք դա արեցինք, Նա դադարեց զսպել անօրինության գաղտնի ուժն ու այն մեզ համակեց: Եվ մենք նույնիսկ չնկատեցինք էլ դա, քանի որ դա ԳԱՂՏՆԻ էր: Առանց ասելու էլ՝ պարզ է, այնպես չէ՞: Եթե Աստված քեզ ուժեղ մոլորությանը հանձնի, դու դա չես իմանա, հակառակ դեպքում, դա այնքան լավ մոլորություն չէր լինի: Տեսնու՞մ ես: Հասկանու՞մ ես:

Իսկ ինչպիսի՞ խաբեբայական նշաններ և զորավոր գործեր պետք է ակնկալենք: Դե ամենաակնհայտներից մեկն այն է, որ աշխարհը սկսում է քեզ սիրել: Դու ապրում ես խաղաղության մեջ նրանց հետ, ովքեր պիտի դատապարտեին քեզ և դու մտածում ես, թե դա նշանակում է, որ դու նրանց սովորեցնում ես, այնինչ իրականում դու աշխարհին ես ընկեր և՝ թշնամի Աստծուն (Հակոբոս 4:4): Որո՞նք են աշխարհի վերջի խաբեայական նշաններն ու զորավոր գործերը: Ես համոզված եմ, որ դա ներառում է այն բոլոր մարդկանց, ովքեր քարոզում են «խաղաղություն և ապահովություն», և ուտում են ու խմում, կին են առնում ու մարդու գնում մինչև աշխարհի վերջը: Սա ինձ բավականին խաբեբայական է թվում. այն, որ նրանք ասում են, թե սիրում են Հիսուսին, բայց աշխարհի ընկերներն են և բացարձակապես անտեղյակ են, թե ամեն ինչ որքա՛ն վատ է: Հովհաննես Պողոս 2-րդ պապը համարվում էր մոլորակի ամենահանրաճանաչ, հարգված ու սիրված մարդը, սակայն Հիսուսն ասել է, որ եթե դու Իր (Հիսուսի) նման լինես՝ դու կդատապարտվես և քեզ կատեն:

Ինչպե՞ս է տապալվելու անօրենը: Նա կտապալվի «Հիսուսի բերանի շնչով» և կկործանվի Հիսուսի գալստյան հայտնությամբ: Դե ես չեմ ասում, որ Աստվածաշնչյան այս հատվածն Ապոկալիպտիկ կիրառում չունի, բայց ես ունեցել եմ անձնական փորձ, երբ իմ մեջ գտնվող անօրենը տապալվել է Հիսուսի բերանի շնչով և Նրա գալստյան հայտնությամբ: Եվ հիմա ես գիտեմ, որ սա նաև ուրիշ իմաստ ունի: Երբ Հիսուսը ողջ ուժով հայտնվում է՝ անօրենը վառվում է:
Կարդա Երեմիա 4:11-12-ը.
«Այն ժամանակ դու պիտի ասես այդ ժողովրդին ու Երուսաղէմին. «Սա անապատում քո մոլորութեան համար է: Իմ ժողովրդի դստեր ճանապարհը ո՛չ մաքրութեան եւ ո՛չ էլ սրբութեան համար էր: Նրանց այդ յորդաբուխ շունչն է, որ ողջ սաստկութեամբ գալու է դէպի ինձ. այսուհետեւ ես էլ նրանց հետ իմ դատաստաններով եմ խօսելու»:
(Կարդա՛ այդ գլխի մնացած հատվածները և տե՛ս, արդյո՞ք այն չի բնութագրում եկեղեցու վիճակը: Լաց եղիր, եթե կարող ես:)

Այս հատվածը ՉԻ ԱՍՈՒՄ, որ սատանան է այս ամենի պատասխանատուն: Այն ասում է, որ անօրենի գալուստը կլինի սատանայի գործողություններին համապատասխան: Դա չի նշանակում, որ սատանան է դա անում կամ իշխանությունը ունի: Դա նշանակում է, որ այն կլինի սատանայի նման և ներդաշնակության մեջ կլինի նրա նպատակների, ծրագրերի և ոճի հետ: Եթե «եկեղեցին»՝ մարդկանց հոգեպես, էմոցիոնալ կամ նյութապես սպանելու, գողանալու կամ կործանելու ազդեցություն ունի, ապա այն ավարտին է հասցնում սատանայի գործը նրա համար և համապատասխանում է խավարի սովորական գործերին:

Այն ասում է, որ կլինեն կեղծ նշաններ, զորավոր գործեր և չարիքի ամեն տեսակ պատրանքներ, որոնք մոլորեցնում են նրանց, ովքեր կործանվում են: Թույլ տուր անկեղծ լինեմ, ամենա-զարմանահրաշ, զորավոր բանը, որ ես տեսել եմ, այն է, որ մարդիկ, որոնք ճառում են հստակորեն հերետիկոսական, լրացուցիչ–Աստվածաշնչյան և վտանգավոր ԱՆՀԵԹԵԹՈՒԹՅՈՒՆ, մշտապես հանդուրժվում են Եկեղեցում: Ի՞նչ տեսակ հրաշք է հարկավոր, որպեսզի վարդագույն մազերով, բազմա-միլիոնատեր մի կին, որը մշտապես լալիս ու փող է խնդրում բազմամիլիարդ արժողությամբ հեռուստաալիքի համար, համարվի Հիսուս Քրիստոսի Եկեղեցու նորմալ, ընդունելի մի մասը: Ի՞նչը կարող է ավելի զարմանահրաշ լինել, քան այն, որ «Ատվածաշնչի» բարձրագույն աստիճաններ ունեցող մարդիկ բացարձակապես ՄԵՐԺՈՒՄ ԵՆ որոշ հատվածների՝ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ ԼԻՆԵԼՈՒ փաստն անգամ: Որքանո՞վ է զարմանահրաշ այն, որ մենք մոլորակի ամենաբաժանված, տարանջատված, աղանդավորական կրոնն ենք և ՄԵՆՔ հենց նրա՛նք ենք, ում հիմնադիրն ասել է՝ ԵՐԲԵՔ մասերի չբաժանվել: Քանի՞ քանիսն են ոչնչանում, այն պատճառով, որ երկրպագում են սխալ Հիսուսի, սակայն ուղղակի վստահ են, որ իրենց մոտ ամեն ինչ լավ է: Քանի՞ քանիսն են խաբվել: Որտեղի՞ց նույնիսկ սկսեմ մատնանշել այն ողջ հերետիկոսությունը, որը մարդկանց ուղիղ Դժոխք կուղարկի, որը սակայն քարոզվում է «եկեղեցում» և միլիոնավոր - կամ միլիարդավոր - մարդկանց համոզել է, որ իրենք ապահով են:

Ինչու՞ են այս բոլոր մարդիկ կործանվում: Ինչու՞ են նրանք խաբված: Ինչու՞ են նրանք քայլում սատանայի գործերին համապատասխան: ԱՅՆ ՊԱՏՃԱՌՈՎ, ՈՐ նրանք հրաժարվել են սիրել ճշմարտությունը:

«ՍՊԱՍԻ՛Ր: - Ասում ես դու: - Ես կարծում էի, թե դա այն պատճառով է, որ հակաքրիստոսն է եկել, և սատանան է պատասխանատու, և Սուրբ Հոգին Հափշտակումից հետո «մեջտեղից վերացվել է», և այդ ժամանակ է, երբ բոլորը ապստամբել են:» Լավ: Հավատա ինչին կուզես: Բայց ես համոզված եմ, որ մենք արդեն ապստամբ ենք և որ մենք արդեն Սուրբ Հոգուն ճանապարհից հանել ենք՝ դեն նետել՝ վշտացնելով և անարգելով Նրան հազար-միլիարդերորդ անգամ և մենք հզոր մոլորության տակ ենք ու մենք կորպորատիվ կերպով աշխատում ենք Սատանայի համար, քանի որ մենք հրաժարվել ենք ճշմարտությունը սիրել և այդպիսով՝ փրկվել:

Սատանա՞ն է ուղարկում հզոր մոլորությունը: Ո՛չ: Կարդա՛ նորի՛ց: **Աստված** ինքն է դա արել: Նա ասել էր, որ կանի և արել է: Մենք դրա մեջ ենք, և հազիվ թե կա մեկը, ով կարողանում է տեսնել դրա միջից: Ի՞նչ ես կարծում, որքա՞ն հզոր մոլորություն է դա: Եթե մենք Հիսուսի Արյունով ծածկված լինեինք և Սատանան մոլորություն ուղարկեր, մենք պիտի որ ի վիճակի լինեինք տեսնել դրա միջից: Ինչևիցե, դա իմ փորձն է: Մենք պիտի որ ի վիճակի լինեինք յուրաքանչյուր միտք գերի

վերցնել և բոլոր մտքերը հնազանդեցնել Քրիստոսին: Վերջիվերջո, պատերազմի մեր զենքները հզոր են, և խավարի ոչ մի ուժ չի կարող կանգնել մեր դեմ:

Բայց մի՞թե դու իրոք կարծում ես, որ դու բավականաչափ մեծ ես տեսնելու համար այն մոլորության միջից, որն Աստծուց է եկել: Ինչպե՞ս է Քրիստոսի Արյունը պաշտպանում մեզ Աստծուց եկած մոլորությունից: Մի՞թե մե՛նք չենք հրավիրում մոլորությունն, այն պատճառով, որ մենք իսկապես չենք սիրել Ճշմարտությունը և գուցե այն պատճառով, որ առաջնահերթ, Քրիստոսի Արյան տակ չենք եղել:

«Կդատապարտուեն բոլոր նրանք, որ չհաւատացին ճշմարտութեանը եւ հաճոյք գտան անօրէնութեան մէջ: » Վերջակետ: Դա Աստծո խոսքն է և այն վերջնական է: Մեր քրիստոնեական ուղղություններնը, աղանդներն ու ծառայությունները հաճույք են գտել անօրինության մեջ: Յուրաքանչյուր օր, երբ մենք շարունակում ենք հավատալ, որ, իբր, մեզ մոտ ամեն ինչ լավ է և ամեն ինչ հրաշալի է, մենք շարունակում ենք գնալ Հայտնության 3-րդ գլխի Լաոդիկիայի եկեղեցու ճանապարհով, և մենք ավելի կույր, ավելի մերկ ու ավելի թշվառ ենք դառնում, ու ավելի շատ մարդիկ են մեռնում մեր պատճառով:

Մեզ համար ավելի լավ կլինի հետ գնալ դեպի Ճշմարտությունը, բայց անարատ, մաքրամաքուր, մարդու կողմից չդիպչած, բացարձակ Ճշմարտությունը, քանի դեռ չափազանց ուշ չէ: Եվ ես գաղափար չունեմ, թե դա ինչ տեսք կունենա, բայց և գիտեմ, որ դու ԵՐԲԵՔ չես գտնի այն, այնքան ժամանակ, քանի դեռ Կարմիր Վիշապի տակից դուրս չես եկել, իսկ դու չես կարող դուրս գալ Կարմիր Վիշապի տակից՝ առանց զղջման և «դրա միջից դուրս գալու» ու «այն քո միջից դուրս հանելու»: Իսկ Կարմիր Վիշապը քեզ ԱՄԵՆ ԳՆՈՎ փորձելու է հետ պահել զղջալուց ու ապաշխարելուց: Տեսնու՞մ ես խնդիրը:

Ես Թեսաղոնիկեցիների այս հատվածից չեմ բացառում, որ այն ունի ապագա կիրառություն՝ կապված ինչ-որ հակաքրիստոս անձի հետ, որը վշտացնում է աշխարհը, սակայն, ինչպես և ողջ Աստվածաշունչը, դա ունի մի քանի կիրառումներ, և կարծում եմ, որ եկեղեցու կոնտեքստում մեղքի այս մարդը, նզովքի այս որդին **մենք ենք**: Կարծում եմ՝ Տերը շատ պարզ է նշում, որ ապստամբությունը, անկումը ավելի ու ավելի կվատանա, մինչև որ մենք հասկանանք, որ մենք ինքներս մեզ բարձրացրել ենք վեր այն ամենից, որ կոչվում է Աստված, մենք դրել ենք մեզ (կամ մարդկանց, որոնց մենք ենք օծել և նշանակել՝ որպես կուռքեր մեր տաճարներում և ինքներս մեզ Աստված ենք հայտարարել: Մենք վարձել ենք խորհրդատուներ, որ մեզ սովորեցնեն, թե ինչպես ավելի շատ նմանվել աշխարհին: Մենք անկողին ենք մտել կառավարության, բիզնեսի, շուկայական հարաբերությունների/մարքեթինգի, հիմնադրամ-հավաքելու և ամեն տեսակ այլ երևույթների հետ, ամուսնացել ենք ազգերի հետ, որոնց պիտի տեղահան անեինք ու ոչնչացնեինք: Մենք ընդունել ենք նրանց աստվածներին և երկրպագել դրանց և սա անելով՝ ինքներս մեզ Աստված ենք հայտարարել: **Մենք** ենք նզովքի որդիները (Հովհ. 17:6-26):

Որո՞նք են սատանայի գործերը, որ գալիս են ողջ իշխանությամբ, բոլոր նշաններով և խաբող հրաշքներով:

Այն, որ մեզ մոտ ամեն ինչ պարզապես լավ է և այնպես է, ինչպես պիտի լիներ. - «Խաղաղություն և

ապաահովություն: Խաղաղություն և ապաահովություն: Ամեն ինչ լավ է: Նորից գնացեք քնելու:» - Նա խաբել է «եկեղեցուն», և գրեթե բոլոր «ընտրյալներն» **ԱՐԴԵՆ** մոլորվել են:

Ո՞րոնք են այս ժամանակաշրջանի ճշմարիտ նշանները և զարմանահրաշ գործերը, որոնք էլ ապացուցում են Աստծո զերիշխանությունը:

Երկրորդ օրենք 28:45-48

*Քեզ վրայ կի՛ջնեն այս անէծքները, կը հալածեն քեզ, մինչեւ որ կոտորեն, ոչնչացնեն քեզ, քանի որ չլսեցիր քո ՏԷՐ ԱՍՏԾՈՒԱՍԱԾԸ՝ չպահեցիր նրա այն պատուիրաններն ու օրէնքները, որ նա պատուիրեց քեզ: **Քեզ ու քո սերնդի վրայ յաւիտեան նշաններ ու զարմանահրաշ գործեր կը լինեն** ի դիմաց այն բանի, որ քո Տէր Աստծուն ուրախութեամբ ու անկեղծ սրտով չպաշտեցիր, հակառակ ամէն ինչի շատութեան: Դրա համար էլ ամէն տեսակ սովի, ծարաւի, մերկութեան ու աղքատութեան մէջ կը ծառայես քո թշնամիներին, որ Տէրը կո՛ւղարկի քո դէմ: Նա երկաթէ լուծ կը դնի քո վզին, մինչեւ որ ոչնչացնի քեզ:*

Երկրորդ օրենք 28:62-63

Թէեւ երկնքի աստղերի չափ շատ էիք, բայց սակաւաթիւ կը մնաք, որովհետեւ չլսեցիք ձեր ՏԷՐ ԱՍՏԾՈՒԱՍԱԾԸ: Տէրն ինչպէս որ ուրախանում էր ձեր մէջ ձեզ բարութիւն անելով ու ձեզ բազմացնելով, Տէրը նոյն ձեւով կո՛ւրախանայ ձեր մէջ ձեզ կոտորելով. եւ դուք կը վերանաք այն երկրից, ուր մտնելու էք այն ժառանգելու համար:

Արդյո՞ք Հիսուսը նախապես զգուշացրել է այս մասին

Այո՛:

Մաթեոս 24:4-25

Յիսուս պատասխանեց եւ ասաց նրանց. «Զգո՛յշ եղէք, գուցէ մէկը ձեզ խաբի. որովհետեւ շատերը կը գան իմ անունով ու կո՛ասեն, թէ՝ ես եմ Քրիստոսը. եւ շատերին կը մոլորեցնեն: Լսելու էք պատերազմների ձայներ եւ պատերազմների լուրեր. զգո՛յշ եղէք, չխռովուէք, որովհետեւ պէտք է, որ այդ ամէնը լինի, բայց դա դեռ վախճանը չէ: Ազգ ազգի դէմ պիտի ելնի, եւ թագաւորութիւն՝ թագաւորութեան դէմ, եւ պիտի լինեն սով, համաճարակ ու տեղ-տեղ երկրաշարժներ: Սակայն այս ամէնը սկիզբն է երկանց:

Այն ժամանակ ձեզ նեղութեան պիտի մատնեն եւ պիտի սպանեն ձեզ. եւ իմ անուան պատճառով բոլոր ազգերի կողմից ատելի պիտի լինէք: Եւ այն ժամանակ շատերը պիտի գայթակղուեն եւ միմեանց պիտի մատնեն ու միմեանց պիտի ատեն: Եւ բազում սուտ մարգարէներ պիտի ելնեն ու շատերին պիտի մոլորեցնեն: Եւ անօրինութեան շատանալուց՝ շատերի սէրը պիտի ցամաքի: Բայց ով մինչեւ վերջ համբերեց, նա պիտի փրկուի: Եւ արքայութեան այս Աւետարանը պիտի քարոզուի ամբողջ աշխարհում՝ ի վկայութիւն բոլոր հեթանոսների. եւ ապա պիտի գայ վախճանը»:

«Արդ, երբ տեսնէք սարսափելի սրբապղծութիւնը, - որի մասին ասուած է Դանիէլ մարգարէի միջոցով, - որ հաստատուած է սուրբ վայրում (ով ընթերցում է, թող հասկանայ), այն ժամանակ, ովքեր Հրէաստանում կը լինեն, թող փախչեն լեռները. եւ ով տանիքի վրայ կը լինի, իր տնից բան վերցնելու համար թող ցած չիջնի. եւ ով հանդում կը լինի, իր վերնազգեստը վերցնելու համար թող յետ չդառնայ։ Բայց վա՜յ այդ օրերին յղիներին ու ստնտուներին։ Աղօթեցէ՛ք, որ ձեր փախուստը չլինի ձմրանը եւ ոչ էլ շաբաթ օրը. որովհետեւ այդ ժամանակ մեծ նեղութիւն պիտի լինի, որպիսին չի եղել աշխարհի արարչագործութեան սկզբից մինչեւ այժմ եւ այլեւս չի էլ լինի։

Եւ եթէ այդ օրերը չկարճեցուէին, ոչ մի մարմին չէր ազատուի. բայց ընտրեալների պատճառով այդ օրերը պիտի կարճեցուեն։ Այն ժամանակ եթէ մէկը ձեզ ասի՝ ահա՛ Քրիստոսը այստեղ է կամ այնտեղ, չհաւատաք նրան. որովհետեւ սուտ քրիստոսներ եւ սուտ մարգարէներ պիտի ելնեն եւ մեծամեծ նշաններ ու զարմանալի գործեր պիտի ցոյց տան՝ Աստծու ընտրեալներին անգամ մոլորեցնելու աստիճան, եթէ հնար լինի։

Կրկին, այս հատվածն ունի համատարած, աղետալի (ապոկալիպտիկ) կիրառում, սակայն այն նման է կրկնվող և աճող պարուրագծի: Նախքան աշխարհին վերաբերելը՝ այն վերաբերում է Եկեղեցուն: Նախ՝ հոգևորն է գալիս, հետո՝ այն դրսևորվում է բնականում: Եթե մենք դիտարկենք սրա ներիմաստը Եկեղեցում, ապա կարծում եմ՝ դու կարող ես տեսնել, որ մենք արդեն լցված ենք այս ամենով, և Հիսուսը սա կանխորոշել էր: Եվ դա պիտի պատահեր հոգևոր Իսրայելին՝ նախքան բնական Իսրայելին ու աշխարհին պատահելը:

Մենք պետք է ուշադիր լինեինք, որպեսզի ոչ ոք մեզ չխաբեր: Մենք դա չարեցինք: Ազգերի և թագավորությունների միջև պատերազմներ կլինեն, այնպես, ինչպես քրիստոնյաները Միջնադարում (Խաչակրաց արշավանքներ) և Ռեֆորմացիայի ժամանակ (16-րդ դարում բողոքական եկեղեցու անջատումը Կաթոլիկ եկեղեցուց) սպանեցին բազմաթիվ այլ քրիստոնյաների, և այնպես, ինչպես մենք 37,000-ից ավել քրիստոնեական ուղղություններ ունենք և ամեն երկու օրը մեկ նորն ենք սկսում: Կարո՞ղ ես դու իրականում կիսել խումբդ՝ առանց սրտումդ ատելություն ունենալու: Իսկ եթե դու ստրումդ ատելություն ունես եղբորդ հանդեպ՝ դա նույնն է, ինչ սպանությունը: Հոգևոր սով կա Աստծո մարդկանց մեջ, և կան «երկրաշարժի հազվադեպ ցնցումներ», երբ թվում է՝ հիմա մի բան կկոտրվեր, բայց շուտով ավարտվում է: Այս ամենը երկունքի ցավերի սկիզբն է:

ՀԵՏՈ մեզ կմատնեն դատապարտման: Ովքե՞ր: Թշնամին՝ Կարմիր Վիշապը: Եվ շատերը սպանվել են Կարմիր Վիշապի միջոցով: Մենք խաբում ենք իրար, և աշխարհը ատում է մեզ: Շատերը հեռացել են հավատքից և դավաճանել ու ատում են իրար: Շատ սուտ մարգարեներ հայտնվել են ու խաբել շատերին: Ամեն մարդ, ով ասում է, թե մենք կարիք չունենք մեկ Մարմին լինելու և կարիք չունենք Աստծո խոսքին հնազանդվելու և եղբայրներին անվերապահորեն սիրելու, սուտ մարգարե է, իսկ նրանք մի լեգեոն են: Շատերի սերը սառել է, այն պատճառով, որ մենք թույլ ենք տվել, որ չարությունը ներս մտնի, այն ժամանակ, երբ սկսել ենք հետևել ենք սուտ մարգարեներին: Բայց կփրկվեն ՄԻԱՅՆ նրանք, ովքեր կանգուն կմնան մինչև վերջ: Կփրկվվեն ՄԻԱՅՆ նրանք, ովքեր

Կարմիր Վիշապի տակ չեն: ՄԻԱՅՆ նրանք կարող են Արքայության իրական ավետարանը քարոզել բոլոր ազգերին:
Ավերածություն առաջացնող այդ նողկանքը հակաքրիստոսն է, և երբ տեսնում ենք Հակաքրիստոսի Ոգին մեր սրբավայրերում, մեր հավաքույթների և ծառայությունների վրա կամ մեր սրտերում, մենք պիտի փախչենք սարերը և ետ չնայենք: Չվերցնենք ոչինչ, ոչնչի համար հետ չդառնանք: Ոչ ոքի ցտեսություն չասենք: Փախչենք և հետ չնայենք: Եթե դու հետ գնաս, դու Կարմիր Վիշապի տակ հետ կմտնես: Եվ եթե դու զգույշ չլինես, դու կմտնես քո ստեղծած Կարմիր Վիշապի տակ, նույնիսկ, տանը միայնակ լինելիս էլ:

Տերը հստակեցնում է, որ շատ շատերը կխաբվեն և շատ շատերը կմեռնեն, որ ՈՉ ՈՔ չէր փրկվի, եթե դա չկարճեցվեր: Կարմիր Վիշապը կլանել է գրեթե ամեն ինչ: Օրերը կարճեցվել են հանուն նրանց, ովքեր ամուր կանգնած են մինչև վերջ: Այլապես, նույնիսկ ընտրվածներից վերջինները կխաբվեին, և ոք չէր մնա:

Ես աղաչում եմ քեզ, դու՛րս արի դրա տակից: Փախի՛ր, հեռացի՛ր: Դու՛րս արի Կարմիր Վիշապի տակից և դու՛րս հանիր Կարմիր Վիշապին քո միջից: Եվ միակ ուղին ապաշխարությունը / զղջումն է: Ապաշխարության Ընծան ունեցող մեկը պիտի լցնի այն քեզ վրա: Հիմա ես, ավելի լավ քան երբևէ, հասկանում եմ, թե ինչու՞ Աստված ինձ ասաց, որ գրեմ «Ներողության Նամակը Աշխարհին»: Աստված ասաց, որ եթե ես ինչ-որ մեկի հետ աղոթեմ և նրանց առաջ անկեղծորեն զղջամ այն բաների համար, որ արել եմ, և նրանք, ի նշան համաձայնության, թեկուզ միայն գլուխը շարժեն՝ ընդունելով, որ իրենք էլ են նույնն արել և ներման կարիք ունեն, ապա Նա կշրջվի նրանց հանդեպ ունեցած Իր մոլեգին զայրույթից և կբուժի նրանց ու կվերականգնի նրանց հողը: Նա իսկապես ցանկանում է վերացնել այս անեծքը, բայց Նա արդար է, և Նրա կանոնները հստակ են: Առանց ապաշխարության՝ չկա մեղքերի թողություն: Իսկ ուժգին մոլորությունը քեզ հետ կպահի ապաշխարելուց ընդհանրապես: Ուրեմն՝ դու կմեռնես: Վերջակետ: Եթե միայն Աստված քեզ ազատելու մի ձև չգտնի: Եթե միայն Աստված չուղարկի մեկին, որ քեզ ցույց տա ճանապարհը, դու կմոխրանաս: Ես դրա տակ էի և ես գիտեմ, թե որքա՛ն շատ խաբված էի: Եվ եթե ես նորից դրա տակ մտնեմ՝ գիտեմ, որ նույնիսկ ավելի վատ կլինի, քանի որ «խաղադրույքներն» անընդհատ ավելի են բարձրանում:

Դե ոչ միայն դա, բայց դու նաև պետք է տեսնես, որ Հիսուսը, որպես առաքյալներ՝ հավաքել էր մարդկանց, որոնք այդ ժամանակ Կարմիր Վիշապ անեծքի տակ չէին: Փարիսեցիներն ու Սադուկեցիները գերբնականորեն համառ էին ու կույր, և Հիսուսն ասաց, որ նրանք դժոխքի որդիներն էին և դրախտ չէին մտնելու (Մաթ 23)՝ չնայած նրանք Սինագոգում աղոթում էին նվազագույնն ՕՐԱԿԱՆ երեք անգամ (իսկ դա վստահաբար ավելի բարեպաշտ է, քան միայն Կիրակի օրերին և Չորեքշաբթի երեկոները աղոթք անելը:)

Անկասկած, Իսրայելն այդ ժամանակ արեն իսկ իր ուզած ձևով էր շարժվել, և նրանք երկրպագում էին ամեն տեսակ այլ երևույթներ, միակ ճշմարիտ Աստծուն երկրպագելու փոխարեն: Կարծում եմ՝ բավականին արդյունավետ կերպով կարելի է փաստարկել, որ Հիսուսը տեղյակ էր Կարմիր Վիշապի կրոնական ոգիների և Երկրոդ Օրենք 28-ի անեծքի մասին և բավականաչափ իմաստուն էր՝ որպես առաքյալ հավաքագրելու համար այն մարդկանց, որոնք դեռևս դրա տակ չէին: Չնայած որ նրանք Սուրբ Գրքի մասին ավելի քիչ գիտելիք ունեին՝ նրանց համար ավելի հեշտ էր տեսնել

իրենց Փրկչին (Մեսիային) և ընկալել նրա ուղերձը, քանի որ նրանք Աստծո անեծքի տակ չէին: Էլ ինչու՞ պիտի Նա մշտապես հարկահավաքների, ձկնորսների ու մարմնավաճառների հետ շփվեր, այսինքն՝ այն բոլոր մարդկանց հետ, ում կրոնական հաստատությունն անմաքուր էր համարում: Միգուցե, հենց նրանց «անմաքրությու՞նն» էր, որ նրանց ապահով էր պահում Կարմիր Վիշապ անեծքից: Եթե ես ճիշտ եմ, ապա դա իսկապես փոխում է ողջ մոտեցումն այն հարցին, թե մենք ու՞մ պետք է հասնենք, այնպես չէ՞: Մարդկանց մի Վիշապից մյուսին փոխանցելու փոխարեն արի գնանք, գտնե՛նք մարդկանց, որոնք Աստծո անեծքի ՏԱԿ ՉԵՆ, քանի որ նրանք, առաջնահերթ, երբեք չեն էլ եղել «եկեղեցական» համակարգում:

Ես ուղղակի միանգամայն վստահ եմ, որ Հիսուսը սա իսկապես լավ էր հասկացել, և դա էր, որ երանգավորում էր Նրա ոճը և մոտեցումը ծառայությանը/քարոզչությանը: Գնա՛, գտիր փոքր երեխաներին՝ նրանց, որոնք երեխայի պես են հավատում, նրանց, որ անկաշառ են հակաքրիստոսի կրոնական համակարգի և ժամանակի կառուցվածքի կողմից ու լի են իմաստությամբ, և եթե դու նրանց ճանապարհին գայթակղության քար դնես ու նրանց Կարմիր Վիշապի տակ դնես՝ քեզ համար ավելի լավ կլիներ, եթե քո վզից ջրաղացի քար կապված լիներ ու դու օվկիանոսը գցված լինեիր: (Մաթ. 18:6)

Ինչպե՞ս պետք է դու դուրս գաս դրա տակից

Լուծումը դարձյալ Եզեկիել 9-նն է: Անհատական և խմբակային Զղջումը ՄԻՇՏ ճիշտ պատասխան է: Ես դա արդեն ասե՞լ եմ: Դա հնարավոր չէ չափազանցնել: Զղջումը միակ բանալին է, որ բացում է ամեն դուռ:

Միակ բանը, որ պիտի անես, ներողություն խնդրելն է ու դրանում անկեղծ լինելը: Նա անխոհեմ չէ, Նա միայն սպասում է, որ դու տեսնես թե ի՞նչն ես սխալ արել և ընդունես դա: Արդյո՞ք դու քո երեխաների հետ այլ կերպ ես վարվում: ԴՈՒ թույլ կտա՞ս նրան հետ ստանալ խաղալիք մեքենան, եթե նա ներողություն չխնդրի այն բանի համար, որ դրանով իր եղբոր գլխին է հարվածել: Ճի՛շտ է, Ո՛Չ: Նրանք պատժված կմնան այնքան ժամանակ, որքան հարկավոր կլինի նրանց՝ մտածելու այն մասին, թե ինչ են արել և ներողություն խնդրեն: Ո՞ր ծնողն է աչքաթող անում, երբ մի երեխան մյուսի գլխին ուժեղ հարվածում է: Արդյո՞ք դա այն չէ, ինչ մենք ենք մշտապես անում եկեղեցում: Դու պատժից դուրս չես գա, մինչև ներողություն չխնդրես:

> **Հակոբոս 4:7-10**
> *Հնազանդուեցէ՛ք ուրեմն Աստծուն եւ դիմադրեցէ՛ք Սատանային, ու նա կը փախչի ձեզանից: Մօտեցէ՛ք Աստծուն, եւ նա կը մերձենայ ձեզ: Մեղաւորնե՛ր, մաքրեցէ՛ք ձեր ձեռքերը. երկմիտնե՛ր, ուղղեցէ՛ք ձեր սրտերը. **տառապեցէ՛ք, սգացէ՛ք եւ լացէ՛ք**. ձեր ծիծաղը սուգի թող վերածուի, եւ ձեր ուրախութիւնը՝ տրտմութեան: Խոնա՛րհ եղէք Տիրոջ առաջ, եւ նա ձեզ կը բարձրացնի:*
>
> **Մնացորդաց 7:14**

*եւ **եթէ** իմ ժողովուրդը, որի վրայ իմ անունն է դրուած, զղջայ, աղօթի եւ իմ երեսը փնտռի ու յետ դառնայ իր չար ճանապարհներից, **ես էլ** երկնքից կըլսեմ, կը ներեմ նրանց եւ կը բուժեմ նրանց երկիրը:*

Երեմիա 3:12-13

*Սհաւասիկ գնա՛ եւ այս պատգամները հռչակի՛ր հիւսիսի կողմերում՝ ասելով. «Ինձ մո՛տ դարձիր, ո՛վ դու Իսրայէլի բնակիչ, - ասում է Տէրը: - Ես ձեզ վրայ չեմ բարկանայ, քանզի ես ողորմած եմ, - ասում է Տէրը, ձեր դէմ յաւիտեան ոխ չեմ պահի: Բայց **դու գիտակցի՛ր քո անօրէնութիւնները,** որովհետեւ դու ամբարշտացար քո ՏԷՐ ԱՍՏԾՈՒ դէմ եւ օտարների համար քո ճանապարհները տարածեցիր բոլոր սաղարթախիտ ծառերի տակ, իսկ իմ ձայնը չլսեցիր, - ասում է Տէրը:*

Երեմիա 26:14

Ուրեմն ձեր ճանապարհներին ու ձեր գործերին ուղի՛ղ ընթացք տուէք եւ ակա՛նջ դրէք ձեր ՏԷՐ ԱՍՏԾՈՒ ձայնին, որպէսզի ՏԷՐԸ յետ կանգնի այն չարութիւններից, որոնց մասին յայտնեց ձեզ:

Եզեկիել 18:21-32 – (Գնա կարդա՛ այն:)

Սրա նման ՇԱՏ ԱՎԵԼԻՆ (Տես էջ 101՝ հավելված Գ)

Յովել 1-13:14

«Մարդո՛ւ որդիներ, քուրձե՛ր հագէք, ողբացէ՛ք քահանանե՛ր, սգացէ՛ք, խորանի՛ պաշտօնեաներ, մտէ՛ք, ննջեցէ՛ք, քուրձ հագած Աստծո՛ւ պաշտօնեաներ, քանի որ ձեր Աստծու տնից պակասեցին զոհերն ու զենումը: Ծոմի օ՛ր նշանակեցէք, աղօ՛թք կազմակերպեցէք, հաւաքեցէ՛ք ծերերին, երկրի բոլոր բնակիչներին ձեր Աստծու Տանը եւ աղօթեցէ՛ք Տիրոջը անկեղծ սրտով: (Եվ կրկին Հովել 2:15-17 - ում)

Հետո Տերը պատասխանում է **Յովել 2:18-19- ում.**

Տէրը նախանձախնդիր եղաւ իր երկրի համար ու խնայեց իր ժողովրդին: Տէրը պատասխանեց իր ժողովրդին եւ ասաց. «Ահա ես ուղարկում եմ ձեզ ցորեն, գինի եւ իւղ, եւ դուք կը կշտանաք դրանցով, ու այլեւս ձեզ չեմ յանձնի ազգերի նախատինքին:

Ու ՀԵՏՈ, երբ նրանք ներողություն են խնդրում և նա խղճում է նրանց ու շրջվում, <u>ԱՅԴ ԺԱՄԱՆԱԿ՝</u>

Յովել 2:29-32

«ԱՅՆ ՕՐԵՐԻՆ իմ Հոգուց կը հեղեմ իմ ծառաների վրայ, իմ աղախինների վրայ, որոնք կը մարգարէանան: Հրաշքներ ցոյց կը տամ երկնքում եւ երկրի վրայ՝ արիւն, հուր եւ ծխի մրրիկ Կարմիր արեգակը կը խաւարի, եւ լուսինը արիւն կը դառնայ, քանի դեռ չի եկել Տիրոջ մեծ ու երեւելի օրը»: Այո՛, կը լինի այնպէս, որ, ով որ կանչի Տիրոջ անունը՝ կ՚ապրի: Սիոն լերան վրայ եւ Երուսաղէմում փրկութիւն կը լինի, Տէրը կը կանչի իր մօտ, ինչպէս որ ասաց եւ ծանուցեց:»

Մարդիկ իսկապես սխալ են գործածում այդ վերջին մասը. «*ով որ կանչի Տիրոջ անունը՝ կ՛ապրի*:» Այն չի ասում կանչել «Հիսուս Փրկչի» անունը, այն ասում է կանչել ՏԻՐՈՋ անունը՝ տեր, թագավոր, հրամանատար, կառավարիչ, միապետ. սա նշանակում է ամենօրյա, անընդմեջ, արմատական հնազանդություն, ո՛չ թե մեկ անգամ կանչելը՝ ինչպես փրկարարին տեղական լողավազանի մոտ: Բայց սա այստեղ չի վերջանում. այդ փրկվածները «բոլորը» չեն, այլ նրանք, ովքեր կանչում են Տիրոջ անունը Ու այն փրկվածների մեջ են, ում ՏԵՐՆ է կանչում: Ովքե՞ր են փրկվածները: Եզեկիել 9-ի մնացուկը, ովքեր լալիս են, ապաշխարում ու սգում իրերի տխուր վիճակի համար: Ոչ ԱՄԵՆ ՈՔ, ով Տիրոջ անունն է կանչում, կփրկվի: Մաթ 25:31-46-ից պարզ է, որ շատերը կասեն «Տե՛ր, Տե՛ր» և Նա կարող է դեռևս ասել. «Հեռացե՛ք ինձնից, ես ձեզ երբեք չեմ ճանաչել»: Հիշի՛ր, Եզեկիել 9-րդ գլխում Նա ասում է մահվան հրեշտակներին, որ սրախողխող անեն բոլորին և սկսեն ավագներից, որոնք տաճարի առջև էին: Քեզ շատ հարմարավետ մի՛ զգա, քեզ համար ավելի լավ է, որ ԻՍԿԱՊԵՍ վստահ լինես, որ դու ճիշտ թիմում ես: Նույնիսկ, եկեղեցու ավագ լինելը երաշխիք չէ, որ դու ապահով ես: Բանալին ապաշխարությունը և զղջումն է:

Կարճ ասած՝ եթե դու չես կարողանում ապաշխարել, կամ չես կարծում, որ պիտի ապաշխարես, ապա հավանաբար դու անեծքի տակ ես: Գտի՛ր մեկին, ով ԿԱՐՈՂ Է ապաշխարել, և թող նա քեզ ցույց տա, թե ինչպե՞ս դա անել կամ իր Ընծան քեզ վրա լցնի: Ես հիմնականում կենտրոնացած եմ այն բանի վրա, որ ոտքի կանգնեցնեմ մարդկանց, ովքեր Վիշապից ազատ են և կարող են այդ վիճակում էլ մնալ: Եթե դու կարիք ունես, որ ես գամ և աղոթեմ քո ծառայության համար, ես դա հաճույքով կանեմ (եթե Աստված թույլ տա):

Կան նաև ուրիշները, ես չեմ ասում, թե միայն ես եմ, սակայն նրանք այնքան շատ չեն, որքան դու կմտածեիր: Նույնիսկ, կան շատ մարդիկ որոնք «եկեղեցական համակարգից» դուրս են, սակայն դեռևս իրենց սեփական Կարմիր Վիշապի տակ են: Կա նաև «տնային եկեղեցի» Կարմիր Վիշապ: Կա «միայնակ գայլ», «թափառող մարգարե» Կարմիր Վիշապ: (Ես այդպիսներին ՇԱՏ եմ հանդիպել): Եվ, նմանապես, հազարավոր այլ տեսակներ:

Եթե դու կարդում ես սա և դու քարոզիչ ես, քահանա, տեր-հայր, առաքյալ, հռոմի պապ, խմբի առաջնորդ, ծնող կամ որևէ այլ պարագայում ուրիշը մեկը, որն իր խնամքի տակ գտնվող մարդկանց ցանկացած չափի խումբ ունի, խնդրու՛մ եմ, աղոթի՛ր սա քո ողջ սրտով, եթե կարող ես:

> **Սիրելի Հիսու՛ս, ես իսկապես գաղափար չունեմ, թե իմ պաշտպանած երևույթներից որքանն է կեղծ՝ ձեռակերտ, բայց վստահ եմ, որ մի մասը հենց այդպիսին է: Ես իսկապես ցավում եմ, խնդրում եմ, ների՛ր ինձ: Ես ուզում եմ, որ Քո Հոգին ամեն պարագայում լիովին, ամբողջովին և գլխավորը լինի ինձ համար: Եթե իմ կամ իմ ծառայության մեջ կա որևէ բան, որը Քեզ չի գոհացնում, խնդրում եմ, սպանիր այն: Ինչ գնով էլ լինի, պոկի՛ր այն, վառի՛ր, պատռի՛ր ու ցնցի՛ր այն: Եթե ես չեմ կարող այն դեն նետել, ուրեմն պոկի՛ր այն իմ գրկից: Եթե ես չեմ կարողանում դա տեսնել, խնդրում եմ, ինչ գնով էլ լինի, միայն թե հեռացրու թեփուկներն իմ աչքերից: Պարզապես մաքրիր քո տաճարը և սկսի՛ր ինձնից: Թույլ մի՛ տուր, որ ինքնագոհ լինեմ և համաձայնվեմ այն ամենին, ինչ կար: Ես ուզում եմ Քո լիարժեք ներկայությունը հենց հիմա: Խնդրում եմ, Տե՛ր, լցրու՛ Ապաշխարության Ընծան իմ և իմ ոչխարների վրա՝ լրիվ չափաբաժնով: Թո՛ւյլ տուր, որ տեսնեմ Քո աչքերով, նույնիսկ եթե դա ցավեցնի ինձ: Ես անկեղծ եմ ասում՝ ինչ գնով էլ լինի: Խնդրում եմ, միայն բռնիր իմ**

ձեռքը, երբ ցավի: Ես Քեզ սիրում եմ, Հիսու՛ս, ես Քեզ վստահում եմ: Ների՛ր, որ երբևէ իմ ուզած ձևով եմ շարժվել՝ նունիսկ ամենափոքր չափով: Խնդրում եմ, Հա՛յր, Հիսուսի Անունով խնդրում եմ, նորոգիր սա: Ամեն:

Ինչ՞ կլիներ, եթե մենք ամբողջովին ազատ լինեինք Կարմիր Վիշապից

Դե երբ Իսրայելը լիովին հնազանդ էր և հետևում էր Աստծո հրամաններին, ոչ մի ազգ չէր կարողանում նրանց դիմադրել: Աստծո խոսքն ասում է, որ Նա կբարձրացնի քեզ ազգերի վրա և քո դեմ գործադրված ոչ մի զենք հաջողությոան չի հասնի: Այսպիսով՝ այնպես, ինչպես ես եմ դա տեսնում, մարդիկ որ լրիվ ազատ են ամեն տեսակ կապանքներից և ամեն անեծքից դուրս են եկել, իրենց մտքի նորոգմամբ վերափոխվել են և մեռած են, ու Քրիստոսն է, որ ապրում է նրանց մեջ, նրա՛նք են, որ Աստծո բացահայտ որդիներն են, որոնց համար հառաչում է աշխարհը: (Հռոմ. 8:19) Մենք նախկինում տեսել ենք դրա առկայծումները Եղիայի, Եղիսեի, Մովսեսի, Աբրահամի, Ենոքի և այն մյուս բոլորի մեջ, որոնք արդար էին համարվում: Բայց Աստծո խոսքն ասում է, որ մարգարեներից ամենամեծը Հովհաննես Մկրտիչն էր, և որ, ՄԵՐ միջից ամենափոքրն, ով իր մեջ ունի Սուրբ Հոգին, նրանից ավելի մեծ է: Ուրեմն ինչու՞ է, որ մենք դա չենք տեսնում յուրաքանչյուր քրիստոնյայի մեջ՝ ամենուրեք: Այն պատճառով որ նրանք չեն դրսևորում իրենց ՈՐԴԻ ԼԻՆԵԼԸ, քանի որ նրանք իրենց ուզած ձևով են շարժվում:

Մտածիր մի պահ, մարդիկ հաճախ քննարկում են այն բոլոր հնարավոր պատճառները, թե ինչու Աստված կարծես ավելի հաճախ և ավելի կտրուկ բուժում է մարդկանց Աֆրիկայում, Հնդկաստանում և Ասիայում: Ես ընկերներ ունեմ, որոնց վստահում եմ, և նրանք իրենց աչքերով տեսել են, թե ինչպես են մարդկանց վերջույթները նորից աճում կամ ողնաշարն է ուղղվում կամ հսկայական ուռուցքներն պարզապես պոկվում-ընկնում են կամ, անգամ, քաշի զարմանահրաշ նվազեցում՝ աղոթքի շարքում կանգնած լինելու ժամանակ: Ես տեսել եմ, թե ինչպես Իմ միջով անցնող Աստծո զորությամբ, մարդիկ բուժվում են աութիզմից, լսողության խնդիրներից, սրտի, հոդերի խնդիրներից, միգրեններից, խրոնիկ կամ սուր տարատեսակ ցավերից, ողնաշարի և գլխի վնասվածքներից, ինչպես նաև, դիվական կեղեքումներից՝ ինչպիսիք են շիզոֆրենիան, ագուրաֆոբիան, ընկճախտը (դեպրեսիան), վախը, ցանկասիրությունը և այլ ամեն տեսակ հակումներ՝ բոլորն անմիջապես անցել են: Ես գիտեմ՝ դա իրական է և գիտեմ, որ այսօր էլ Աստված շարժվում է այդ կերպ:

Ես ամեն տեսակ թեորիաներ եմ լսել այն մասին, թե ինչու մենք այդպիսի բաներ շատ չենք տեսնում Ամերիկայում, սկսած այն պատճառաբանումից, որ կա հավատքի պակաս, մինչև այն, որ մենք, երեխաների նման, բավականաչափ չենք հավատում: Ոմանք էլ ասում են, թե բուժումները կեղծ են կամ սատանայական և, համենայն դեպս, ամենևին էլ Աստծուց չեն: (Եվ ես համարձակվում եմ քեզ ասել, որ դու փորձես Աստծո Խոսքի մեջ ԻՆՉ-ՈՐ ՄԱՍ գտնել, որտեղ ասվում է, թե սատանան մարդկանց բուժում է): Ինչևէ, այս փաստարկներից ոչ մեկն ինձ չի գոհացնում: Մարդիկ այնտեղ բուժվում ԵՆ և նույնիսկ վերակենդանանում: Սրա հետևում մի այլ բան կա:

Լավագույն պատասխանը, որը ես գտել եմ, սա է. Երկրորդ օրենք 28-րդ գլուխն ասում է, որ դու կունենաս ավերիչ հիվանդություններ, որոնք անբուժելի են, որ դու վշտացած կլինես, և ոչ ոք չի լինի որ քեզ օգնի, որ քո գլխավերևում երկինքը ժանգոտ կլինի, որ դու կտառապես մինչև որ կործանվես: Երբ ազգը կամ մարդիկ կամ գյուղը Աստծուն չեն ճանաչում ու երբեք էլ չեն ճանաչել և երբ արդար ու Աստծուց ուղարկված մեկը հայտնվում է և աղոթում նրանց բուժման համար, ապա ամենայն հավանականությամբ, նրանք կբուժվեն, որպեսզի Աստված ցույց տա Իր փառքը և ապացուցի նրանց, որ Ինքը կա: Բայց երբ երկիրը կամ մարդիկ կամ գյուղը, որոնք արդեն ճանաչել են Աստծուն և նպատակադրված ու ապստամբ շարժվել են իրենց ուզած ձևով, չպետք է ակնկալեն, որ որևէ գերբնական բժշկություն կհայտնվի որևիցե մի սովորական հիմքով: Եվ եթե դա այնուամենայնիվ հայտնվում է, ապա դա միայն ողորմություն է ինչ-որ անհատների վրա այստեղ կամ այնտեղ:

Այսպիսով՝ լավագույն պատասխանն այն հարցին, թե ինչու մարդիկ բժշկվում են Աֆրիկայում ու Ասիայում և սակայն ո՛չ Ամերիկայում կամ Արևմուտքում, այն է, որ Արևմուտքն արդեն ավետարանվել է ու մեջքով է շրջվել Աստծուն՝ ստեղծելով իր սեփական խառնածին, խորհրդավոր կրոնները և դրանք անվանել «Քրիստոնյա», և Աստված նրանց վրա ուղարկել է Երկրորդ Օրենք 28-րդ գլխի անեծքները: Արդար մարդու աղոթքը ընդունակ է շատ բանի: «Դավանաբանական» մարդու աղոթքը գուցե առհասարակ որևէ բանի բանի ընդունակ չլինի:

Տաք, փափլիկ ու «շահամոլների հանդեպ բարյացակամ» լինելը չի օգնի: Ուզում ես իմանալ, թե ո՞րն է քո նպատակը: Դա պարզելու համար քեզ քառասուն օր հարկավոր չէ: Պարզապես արտասվի՛ր ու ապաշխարի՛ր ու ողբա՛ խորանի առաջ այն փաստի համար, որ դու ամբողջությամբ չես իմացել, թե որն է Աստծո նպատակը քեզ համար և չես շարժվել՝ ըստ դրա: Հնարավոր չէ ասել, թե քո գլխին որքան արյուն կա՝ բաց թողնված հնարավորությունների ու ակնհայտ ապստամբության համար, այն բանի պատճառով, որ դու այս ողջ ժամանակ շարժվել ես քո ուզած ձևով: **Դու չես վերակենդանանում/ վերածնվում, մինչև ներողություն չխնդրես այն բանի համար, որ այն տեսակ անձ ես եղել, որը հիմա արդեն վերակենդանացման/վերածնման կարիք ունի:** Եթե ատրասվես ու կանչես Նրան, Նա կբացի դռները և ամեն ինչ կբացատրի, և Սուրբ Հոգին կլինի քո ուսուցիչը: Ոչ մի ՄԱՐԴ չի կարող քեզ ասել, թե դու Քրիստոսի մեջ ով ես, անգամ դու ինքդ չես կարող: Դու պիտի ուղղակիորեն Աստծուն լսես և ուղղակիորեն, ըստ դրա, շարժվես:

Այսպիսով՝ ինչպե՞ս կդրսևորվեր Վիշապից լիովին ազատ լինելը: Մեկն այն է, որ եգիպտացիների հիվանդություններն այլևս քեզ չէին կպչի, և քո աղոթքներն ու ազատագրումներն իրական ուժ կունենային: Գուցե մարդիկ Ամերիկայում սկսեին իսկապես բժշկվել և ազատագրվել մեծ մասշտաբով: Քո բաժակը Հիսուսով լի պահելուն և ճրագակալ քաղաքը լինելուն համատեղ, հավանաբար ոչինչ չէր կարողանա քեզ դիմակայել: (Սրա մասին ավելին կարող ես կարդալ մեր համացանցային կայքում)

Ի՞նչ կլիներ, եթե մենք ամբողջովին Քրիստոսի գլխավորության տակ լինեինք

Ճիշտ է, ես լիովին չեմ հասել նպատակին, բայց ես ճիգ եմ թափում, որպեսզի հասնեմ դրան և ամեն օր մեռնում եմ, որպեսզի Քրիստոսն իմ մեջ կարողանա ապրել: Ի փառս Իրեն՝ Նա թույլ է տվել, որ ես Իր ձայնը շատ հստակ լսեմ. ոչ միայն երազներում և տեսիլքներում, այլ՝ ամբողջ օրն՝ ամեն օր: Նա ուղղորդում է իմ ճամփաներն ամեն մի պարագայում: Ես խորհուրդ կտայի, որ դու կարդաս «Աստծո Ներկայության Պրակտիկան», որը գրել է Եղբայր Լոուրենսը (հայերեն թարգմանությունը դեռևս չկա): Ես այդ տեսակ մտերմություն էի փնտրում Աստծո հետ: Եվ Նա ասել է, որ եթե դու փնտրես Նրան, դու Նրան կգտնես: Եվ ես գտա:

Նա է ինձ առավոտյան արթնացնում: Ես զարթուցիչ չունեմ: Ես ժամացույց չեմ կրում: Նա ասում է ինձ, թե Սուրբ Գրքի որ մասը կարդամ, ինչ է այն նշանակում և ինչպես այն կկիրառվի իմ օրվա մեջ: Նա է ինձ ասում, թե որ գործը վերցնել (կամ չվերցնել) և՝ թե ինչպես այն իրականացնել: Նա ասում է ինձ՝ ինչի համար աղոթել: Նա աղոթում է իմ միջով կամ խոսում է իմ միջով նրանց հետ, ովքեր կարիքի մեջ են: Նա ամեն օր ջախջախում է դևերին, որոնք գալիս են իմ դեմ: Նա իմ վահանն է ու իմ մատակարարը: Նա իմ Գլուխն է, ու ես Նրա պարտական-ծառան եմ: Ես ոչ մի մարդուց չեմ վախենում և ոչ մի մարդու չեմ հետևում: Ես ոչ ոքի «ծածկի» տակ չեմ, որովհետև Քրիստոսն է իմ գլուխը: Իմ և Աստծո միջև կանգնած ոչ մի մարդ չկա ու չի ասում ինձ, թե ինչ անել: Թեև իմ շուրջ կան շատ եղբայրներ, որոնք խորհուրդներ են տալիս, զրուցում են, սովորեցնում, վերահաստատում ու սաստում, սակայն, վերջին հաշվով, ամեն ինչի համար ես պետք է հաստատումն Աստծո Գահից ստանամ: Ես պլաններ չեմ կազմում, ես փող չեմ ծախսում, ես ոչ մի տեղ չեմ գնում, ես ոչինչ չեմ ուտում՝ առանց վստահ լինելու, որ դա այն է, ինչ Նա ցանկանում է, որ ես անեմ: Եվ ես ավելի շատ ուրախություն ու խաղաղություն ունեմ, քան երբևէ իմացել եմ, որ հնարավոր է ունենալ, նույնիսկ, ի դեմս ապշեցուցիչ քանակությամբ ընդդիմության ու տրտմության:

Սխալներ անու՞մ եմ: Այո՛: Երբեմն ես սխալ եմ լսում, երբեմն Նրան ձանձրացնում եմ եմ, մինչև որ թույլ տա ինձ անել այն, ինչ Նա այնքան էլ չէր ցանկանա, որ անեի, սակայն Նա զիջում է՝ ինձ դաս տալու նպատակով: Երբեմն ես հարցնում եմ. «Կարո՞ղ եմ անել», հարցնելու փոխարեն. «Պե՞տք է, որ անեմ» (այս մեկի պատճառով ՇԱՏ փորձանքների մեջ եմ ընկել, մինչև որ Տերը բացատրեց տարբերությունը և գրեց այն իմ սրտում:) Պատահել է, որ ես իմ ստեղծած Կարմիր Վիշապի տակ եմ եղել և լսում էի այն, ինչը վստահ էի, որ Աստվածն էր, սակայն դա Գահից եկած սուտ ոգի էր՝ ինձ կործանելու մտադրությամբ, այն բանի համար, որ ես իմ ուզած ձևով էի շարժվել: Երբեմն իմ շուրջ գտնվող մարդիկ սխալ են լսում, և ես Աստծո հետ կրկնակի չեմ ստուգում դա: Երբեմն ես պարզապես վեր եմ ցատկում՝ նախքան հարցնելը, թե ինչ պիտի ասեմ: Երբեմն ես բարձրաձայնել եմ հայտնությունը, որն ընանձամբ միայն ինձ համար էր, այլ ոչ որևէ այլ ականջի: Սակայն ընթացքում այս ամենը մշտապես ավելի է բարելավվում, և ես ԵՐԲԵՔ նրան չեմ խնդրում մեղմացնել զտող կրակը:

Ծառայությունը, որին Նա ինձ կանչում է, Նրա գլխավորության տակ է: Նա է թելադրում ընթացքը, մասշտաբը, ազդեցությունը, կենտրոնակետը, բյուջեն, մեթոդը, ժամանակը՝ ամեն ինչ: Չկան որևէ

տեսակ կոմիտեի ժողովներ: Չկան քվեարկություններ, չկան վճարված խորհրդատուներ, կա միայն Քրիստոսը՝ որպես գլուխ, իսկ ես՝ որպես ձեռքեր ու ոտքեր: Երբ ես հաստատման կարիք ունեմ, Նա դա ապահովում է: Երբ ես հանդիմանության կարիք ունեմ, Նա Ինքն է դա անում կամ որևէ մեկին է ուղարկում դա անելու:

Երկրպագության կամ աղոթքի հանդիպման դեպքում Նա է նշանակում ժամանակը և տեղը, Նա է հրավիրում մարդկանց, Նա է ուղղորդում աղոթքները, Նա շարժվում է մեր միջով այնպես, ինչպես կամենում է: Նա ճանաչում է ներկա գտնվող մարդկանց կարիքներն ու համոզվում է, որ դրանք առաջնահերթ կարգով կլուծվեն: Ես երբեք ոչ մի այլ տեղ չեմ զգացել Աստծո նման տեսակ ներկայությունն ու զորությունն այնպես, ինչպես Միսուրի նահանգի Լիբերթի քաղաքում գտնվող կահույքի իմ փոքրիկ խանութում: Ու թեև այդ ժամանակն արդեն անցյալում է՝ Նա շարունակում է գալ ամեն անգամ, երբ մենք Նրա ճանապարհից շեղվում ենք ու անկեղծորեն հրավիրում Նրան՝ լիովին գլխավոր լինելու և Նրան հանում ենք որևիցե մի արկղից, ուր մենք Նրան փորձել ենք խցկել:

Ի՞նչ կլիներ «եկեղեցու» հետ, եթե այն իսկապես, ճշմարտապես մի կողմ քաշվեր Աստծո ճանապարհից: Արդյո՞ք մենք զոնե տեսնում ենք, թե որքան ենք Նրա ճանապարհը փակում: Մեր սրտերի կուրության պատճառով ես կասկածում եմ, որ հազիվ թե եկեղեցական կամ աղանդավորական որևիցե առաջնորդ իսկապես տեսնում է, թե որքան են նրանք վշտացնում Սուրբ Հոգուն: Ես շատ կուզենայի նրանց ասել ու երբեմն փորձել եմ, սակայն դա կարծես երբեք օգուտ չի տալիս: Իրականում, դա կարծես գերբնականորեն երբեք օգուտ չի տալիս: Ամենակարծրացած աշխարհիկ մարդիկ կամ աթեիստներն ու բիզնեսմենները ավելի քաղաքավարի կերպով են լսում՝ մտածելով, որ գուցե ես ինչ-որ տեսակետ ունեմ ինչ-որ բանի վերաբերյալ ու միգուցե դա կբարելավի այն, ինչ նրանք անում էին: Ռեստորանների կամ սպասարկման կետերի մեծ մասն ունեն հաճախորդների դիտողությունների տուփ և ուշադիր զննում են հետադարձ կապը, սակայն սա թվում է ԱՄԵՆԱվերջին բանը, որին որևէ քարոզիչ ցանկանում է ժամանակ տրամադրել: Ինչպե՞ս կարող է այն մարդը, որն ասում է, որ սիրում է Աստծուն և երկնչում Նրանից, այդքան սառնասրտորեն և ակնհայտորեն անտեսել մեկին, ով գալիս է Տիրոջ անունով և ցույց է տալիս նրանց իրենց սխալը. սա ինձ համար անհասկանալի է: Դա ՊԻՏԻ ՈՐ գերբնական լինի: Ես չեմ կարող գտնել ոչ մի ուրիշ բացատրություն, թե ինչպես կարող են սովորաբար սիրող, հոգատար, քաղցր, քրիստոնյա մարդիկ քարկոծել մարգարեներին, բացի այն բացատրությունից, որ Աստված կարծրացրել է նրանց սրտերը, կուրացրել նրանց աչքերը, փակել նրանց ականջները և դեռևս չի ցանկանում, որ նրանք ազատ լինեն:

> **Մաթ. 13:14-15**
> *14 Եւ նրանց վրայ կատարւում է Եսայու մարգարէութիւնը, որ ասում է՝ պիտի լսէք, պիտի լսէք ու պիտի չիմանաք, պիտի նայէք, պիտի նայէք ու պիտի չտեսնէք. 15 որովհետեւ այս ժողովրդի սիրտը կարծրացաւ, եւ իրենց ականջներով ծանր են լսում. եւ փակեցին իրենց աչքերը, որպէսզի երբեք աչքերով չտեսնեն ու ականջներով չլսեն եւ սրտով չիմանան եւ դարձի չգան, ու ես նրանց չբժշկեմ*

Այն ամենն, ինչ Նա ինձ սովորեցրել է վերջին երկու տարիների ընթացքում (և դրանից առաջ) ինչ-որ կերպ ամբողջություն է կազմում Կարմիր Վիշապի մասին այս ուղերձում: Ես գիտեմ, որ եթե

մենք Նրա գլխավորության տակ լինեինք, եկեղեցու մոդելը կլիներ քաղաք-եկեղեցին՝ մեկ Մարմին մեկ քաղաքում՝ Նրա գլխավորության տակ և Նրա ուղղորդվածությամբ աշխատելիս: Թե իրական պրակտիկայում դա ինչպես կդրսևորվի և ինչ տեսք կունենա յուրաքանչյուր քաղաքում՝ ես գաղափար չունեմ: Որոշ քաղաքներում դուք բոլորդ կարող էիք հավաքվել մի շենքում: Որոշ այլ քաղաքներում դա կնշանակեր տուն-եկեղեցիներ՝ սփռված ողջ քաղաքով մեկ, մյուսներում՝ մարդկանցով լի մարզադաշտեր: Որոշ քաղաքներում, գուցե, դա շատ չտարբերվեր այն բանից, ինչ հիմա կա: Ես գաղափար չունեմ: Բարեբախտաբար, քո քաղաքն ուղղորդելն իմ գործը չէ: Իմ գործն է ազատել քեզ Կարմիր Վիշապից, որպեսզի դու կարողանաս լսել Աստծուն և ՆԱ կարողանա ուղղորդել քո բոլոր ճանապարհները:
Ես գիտեմ, որ եթե մենք Նրա գլխավորության տակ լինեինք, այն, թե ինչ կերպ ենք մենք վարվում փողի հետ, կտարբերվեր այժմ կիրառվող ձևից: Այն, թե ինչ կերպ ենք մենք համակարգորեն վերաբերվում կառավարությանը, շատ կտարբերվեր այժմ կիրառվող ձևից: Այն, թե ինչպես ենք մենք վարվում այլ քրիստոնյաների հետ, շատ կտարբերվեր այն ամենից, ինչ հիմա ենք անում: Երաժշտությունն այլ կլիներ, եկեղեցու «ծառայություններն» այլ կլինեին, Առաջնորդությունն այլ կլիներ, բժշկումն այլ կլիներ: Կարծում եմ, որ մենք չենք էլ կարող պատկերացնել, թե Աստված որքան ստեղծագործ և հնարամիտ կարող է լինել հարմարեցնելու համար յուրաքանչյուր իրավիճակ այդ պահին ներկա գտնվող մարդկանց ճիշտ կարիքներին: Ոչինչ չէր լինի կրկնվող կամ կանխատեսելի: Մարդիկ, որոնցից մենք երբեք չէինք ակնկալի նման բան, կլինեին ամենահզոր ավետարանիչներն ու մարգարեները, ուսուցիչներն ու երաժիշտները: Սուրբ Հոգին քամու պես սլանում է, և ոչ ոք չգիտե, թե ուր է Նա գնում կամ որտեղից է Նա գալիս: Մենք այսպիսին կլինեինք: Սակայն մենք պիտանի կլինեինք Ավետարանի համար և հետ կմղեինք խավարը՝ դրա կողմից գրավված լինելու փոխարեն:

Հենց որ Կարմիր Վիշապը դադարի օգտագործել մեր ոտքերն ու հոգևոր իշխանությունն ու մեր միջոցները՝ իր նպատակներին հասնելու համար, այդժամ մենք ձեռք կբերեինք վերին ձեռք ու կսկսեինք ճզմել դրան մեր կրնկի տակ:

Արդյո՞ք լավ չէր լինի:

Դեռ կա Մեծ Հանձնարարության փոքրիկ խնդիրը՝ Հիսուսի վերջին հանձնարարությունը, որ ՃՇՄԱՐԻՏ Ավետարանը տարածվի ողջ աշխարհով մեկ (Մաթ. 28:18-20, Մարկոս 16:14-20): Կա՞ սրանից ավելի կարևոր մի ուրիշ բան: Հատկապես ինչպե՞ս պետք է մենք դա անենք, եթե մենք կռվում ենք, իրարանցում ստեղծում միմյանց միջև և բոլորս շարժվում ենք մեր ուզած ձևով: Ու՞մ Ավետարանն ենք մենք քարոզում: Հիսուսը ՉԻ ասել գնալ ողջ աշխարհով մեկ և քարոզել Բափթիստական Ավետարանը կամ Պենտեկոստական Ավետարանը կամ Լյութերական Ավետարանը: Մենք պետք է քարոզենք Հիսուսի և Նրա խաչված լինելու մասին: Մենք պետք է Մեկ Մարմին լինենք ու պիտի սիրենք իրար: Եթե նրանք մեզ՝ մեր սիրով պիտի ճանաչեին, իսկ մենք լի ենք ատելությամբ, բարկությամբ, գժտություններով ու երկպառակություններով, ապա գուցե մենք պիտի դադարենք ՈՐԵԻՑԵ ԲԱՆ քարոզել, մինչ որ մենք սրան վերջ դնենք և մինչև որ ՏԵՐՆ ԻՆՔԸ բացի մեր բերանները: Գուցե մենք պիտի երեսնիվայր ընկնենք ու ընդունենք, որ մենք ԲՈԼՈՐՍ անմաքուր բերան ունեցող մարդիկ ենք և աղաչենք Աստծուն, որ Նա մեր մեջից վառի հանի դա, ինչ գնով էլ լինի (Եսայի 6): Մենք պետք է դադարենք ցամաքով ու ծովով ճամփորդել և մեզնից երկու անգամ ավելի շատ դժոխքի որդիներ ստեղծել Նրա համար (Մաթ. 23:15) Այո՛, լավ կլիներ:

Մենք չենք կարող տարածել ճշմարիտ Ավետարանը, քանի դեռ մենք ճշմարիտ Քրիստոնյաներ չենք: Ու մենք չենք կարող ճշմարիտ Քրիստոնյաներ լինել, քանի դեռ մենք ամբողջովին Քրիստոսի գլխավորության տակ չենք: Մենք պետք է ապաշխարենք ու դուրս շպրտենք բոլոր Կարմիր Վիշապներին: Բոլորի՛ն: Հայտնության 2-3-րդ գլուխներում՝ յոթ եկեղեցիներին ուղղված յոթ նամակներում, դրանցից երկուսը չքննադատվեցին՝ Զմյուռնիան ու Ֆիլադելֆիան՝ երկուսն էլ աղքատ: Կարևոր չէ, թե ինչի համար քննադատվեցին մյուս հինգը, բայց դեղատոմսը միշտ նույնն էր՝ ԱՊԱՇԽԱՐԻ՛Ր, ԶՂՋԱ՛:
Հիսուսի կողմից առաջարկված Ոչ ՄԻ ԱՅԼ լուծում չկա: Ուրիշ հույս չկա: Չկա որևիցե քանակությամբ պաշտամունք, երաժշտություն ու երեխաների խնամքի իսկապես գերազանց հաստատություններ կամ լավ բացատրական ուսուցանում, որոնք կկարողանային սա շտկել: ՄԻԱԿ լուծումը՝ միակ դեղատոմսը՝ միակ բանը, որ կգրավի Նրա ուշադրությունը, դա ապաշխարումն է:

Սկսիր այստեղից՝ Հավելված Գ: Գուցե դու այն արդեն տեսել ե՞ս: Կարդա «Ներողության բաց նամակն աշխարհին» և եթե զգաս, որ դու էլ ես եղել մի մասը, որն օգնել է կառուցել կամ անձամբ ավելի շատ չփորձել կասեցնել մի համակարգ, որն այն չէ, ինչ Աստված էր ցանկանում, ապա ապաշխարիր քո մեղքերի ու քո պապերի մեղքերի համար: **Ու անկեղծ եղի՛ր, ու հետ մի՛ գնա:** Փախի՛ր սարերը հենց հիմա և, նույնիսկ, հետ մի՛ դարձիր՝ վերցնելու քո վերարկուն: Դուրս ե՛կ ԴՐԱ միջից իմ ժողովուրդ ու նաև դուրս հանի՛ր դրան ՔՈ մեջից (Հայտ. 18:4-8):

> **Տե՛ր, լցրու Ապաշխարության Ընծան Քո Մարմնի ու այս ազգի վրա: Խնդրում եմ, ներիր մեզ մեր ուզած ձևով շարժվելու համար: Խնդրում եմ, ողորմի՛ր մեզ ու ետ շրջվի՛ր Քո ճշմարտացի բարկությունից: Դու արդար ես ու ճշմարիտ, և Քո դատաստանն արդարացի է: Մենք արժանի ենք շատ ավելի վատին, քան Դու ես արել: Խնդրում եմ, Հա՛յր, խնդրում եմ, հանուն Քո Սուրբ անվան, հիշիր Քո ժողովրդին ու շրջվիր Քո ցասումից: Խնդրում եմ, ուղարկիր այն մնացուկը, որը կսովորեցնի մեզ, թե ինչպե՞ս աղոթել ու ինչպե՞ս ապաշխարել հոգով և ճշմարտությամբ: Խնդրում եմ, շտկիր սա, Աբբա՛, խնդրում եմ, նորոգիր: Ես շատ եմ ցավում, որ մենք կոտրել ենք այն, ներիր խնդրում եմ: Ես շատ եմ ցավում, որ մենք չենք հետևել հրահանգներին: Սա չի գործում և կան դուրս մնացած մասեր: Խնդրու՛մ եմ, նորոգի՛ր այն, Հայրի՛կ: Հիսուս Քրիստոսի անունով, մեր Տե՛ր, Ամե՛ն:**

Եթե սա քեզ չի բավականացնում, և դու չես զգում, որ բավականաչափ ապաշխարել ես և դուրս եկել քո Կարմիր Վիշապի տակից, ապա կապվիր ինձ հետ: Ես հատուկ օծում ունեմ մարդկանց և խմբերին մեղմորեն ասելու, թե նրանք ինչն են աչքաթող արել, որի համար պետք է ապաշխարեն: Եվ նաև, նրանց առաջ ապաշխարելու, որպեսզի նրանք կարողանան տեսնել, թե ինչպես է դա արվում:

Եթե սա օգնում է, և Տերը լցնում է քեզ վրա ճշմարիտ և խոր Ապաշխարության Ընծան, ապա ԽՆԴՐՈՒ՛Մ ԵՄ, ես աղաչում եմ քեզ, խնդրում եմ, գնա գտիր մեկին և լցրու այդ Ընծան նրա վրա նույնպես: Գնա, արտասվիր նրանց հետ, մինչև որ նրանք տեսնեն, թե որքա՛ն վատ է սա և թե որքա՛ն անհուսալի վիճակում ենք մենք: Ես անցած ամառ (2006թ.-հուլիս) երկու օր անց եմ կացրել՝

քաղաքի մեջտեղում՝ մայթին, արտասվելով: Արա այն ամենն՝ ինչ կպահանջվի, լցրո՛ւ Ապաշխարության քո Ընծան քո շուրջ գտնվող այն մարդկանց վրա, որոնք Կարմիր Վիշապի տակ են: Եթե կարող ես, լցրու այն Վիշապի գլխավոր պարողների վրա, բայց իմացիր, որ նրանք առավել մեծ դժվարությամբ են այն ստանում:

Խնդրում եմ, եղբայնե՛ր, եթե լսելու ականջ ունեք, խնդրում եմ, լսեք: Հետո ԳՆԱՑԵ՛Ք ողջ աշխարհով մեկ և ցույց տվեք նրանց, թե ինչպես ապաշխարել:

Դուրս թողնված մասեր

Թագաւորութիւններ Ա 2:14

14 ՏԻՐՈՋ հոգին վերացաւ Սաւուղից, եւ Տիրոջ կողմից առաքուած մի չար ոգի նեղում էր նրան:

Այո՛, Աստված կարող է վշտացնել կամ տանջանք պատճառել քեզ: Մի՛ կարծիր, թե Նա չի կարող: Եթե դու գնաս քո ուզած ձևով, Նա Ինքը կվշտացնի քեզ:

Հռոմեացիներին 1:18-32

*18 Արդարեւ Աստծու բարկութիւնը երկնքից յայտնուելու է մարդկանց ամբողջ անհաւատութեան եւ անիրաւութեան վրայ, քանի որ նրանք ճշմարտութիւնը անիրաւութեամբ են բռնած պահում: 19 Ինչ որ կարելի է իմանալ Աստծու մասին, յայտնուած է նրանց, քանզի Աստուած ինքը յայտնեց այն նրանց. 20 արդարեւ ի սկզբանէ աշխարհի Աստծու աներեւոյթ յատկութիւնները, այն է՝ Նրա մշտնջենաւորութիւնը եւ զօրութիւնը եւ աստուածութիւնը, իմանալի կերպով տեսանելի են Նրա ստեղծածների մէջ. այնպէս որ, ամենեւին արդարանալ չեն կարող. 21 որովհետեւ ճանաչեցին Աստծուն, բայց իբրեւ Աստուած չփառաւորեցին կամ գոհութիւն չմատուցեցին նրան, **այլ իրենց մտածումների մէջ նանրացան, եւ նրանց սրտերը անմտութեամբ խաւարեցին:** 22 Իրենք իրենց իմաստունների տեղ էին դնում եւ յիմարացան: 23 Եւ անեղծն Աստծու փառքը փոխեցին՝ այն նմանեցնելով մարդու եղծելի պատկերի եւ թռչունների եւ չորքոտանիների եւ սողունների: 24 Դրա համար, ըստ իրենց սրտերի ցանկութեան, Աստուած նրանց **մատնեց** պղծութեան, որ անարգեն իրենց մարմինները իրենք իրենց մէջ. 25 նրանք փոխանակեցին Աստծու ճշմարտութիւնը ստով, հնազանդուեցին ու պաշտեցին արարածներին եւ ոչ Արարչին, որ օրհնեալ է յաւիտեանս: Ամէն: 26 Ահա թէ ինչու Աստուած նրանց մատնեց անարգ կրքերի. որովհետեւ նրանց էգերը բնական կարիքները փոխանակեցին անբնական կարիքներով: 27 Նոյնպէս եւ արուները, թողնելով էգի հանդէպ բնական կարիքները, իրենց ցանկութիւններով բորբոքուեցին միմեանց հանդէպ. արուները արուների հետ խայտառակութիւն էին գործում եւ փոխարէնը իրենք իրենց անձերի մէջ ընդունում էին իրենց մոլորութեան հատուցումը:*

*28 Եւ քանի որ չկամեցան ճանաչել Աստծուն, **Աստուած նրանց մատնեց անարգ մտքերի, որ անվայել բաներ անեն**՝ 29 լցուած լինելով ամենայն անիրաւութեամբ, պոռնկութեամբ, անզգամութեամբ, ագահութեամբ, չարութեամբ, կատարեալ նախանձով, սպանութեամբ, կռուազանցութեամբ, նենգութեամբ, չարասրտութեամբ. 30 բանսարկու, չարախօս, աստուածատեաց, նախատող, հպարտ, ամբարտաւան, պոռոտախօս, չարահնար, ծնողատեաց, 31 անմիտ, ուխտադրուժ, անագորոյն, անգութ, անողորմ. 32 **նրանք գիտէին***

Աստծու արդար դատաստանը, թէ այսպիսի բաներ գործողները մահուան են արժանի. եւ ոչ միայն նրանք, որ անում են այդ բաները, այլ նաեւ նրանք, որ գործողներին հաւանութիւն են տալիս:

Հովհաննես 9:35-41

35 Յիսուս լսեց, թէ նրան դուրս են հանել. եւ երբ նրան գտաւ, ասաց. «Դու Աստծու Որդուն հաւատո՞ւմ ես»: 36 Նա պատասխան տուեց եւ ասաց. «Տէ՛ր, ո՞վ է, որ նրան հաւատամ»: 37 Յիսուս նրան ասաց. «Ե՛ւ տեսար նրան, ե՛ւ նա է, ով խօսում է քեզ հետ»: 38 Ու նա ասաց. «Հաւատում եմ, Տէ՛ր»: Եւ երկրպագեց նրան: 39 Եւ Յիսուս ասաց. «Դատաստանի համար եկայ այս աշխարհը, որպէսզի, ովքեր չեն տեսնում, տեսնեն, եւ ովքեր տեսնում են, կուրանան»: 40 Փարիսեցիներից ոմանք, որ Յիսուսի հետ էին, այդ լսեցին ու նրան ասացին. «Միթէ մե՞նք էլ կոյր ենք»: 41 Յիսուս նրանց ասաց. «Եթէ կոյր լինէիք, դուք մեղք չէիք ունենայ, բայց հիմա ասում էք, թէ՝ տեսնում ենք. եւ ձեր մեղքը ձեր մէջ հաստատ է մնում»:

Գործք 17

29 Եւ արդ, որովհետեւ Աստծու զարմն ենք, չպէտք է խորհենք, թէ աստուածայինը նման է ոսկուն կամ արծաթին կամ քարին, որոնք ճարտարութեամբ եւ մարդու խելքով են քանդակուած: 30 Բայց Աստուած, անգիտութեան ժամանակներն անտես առնելով, ***այժմ այն է պատուիրում մարդկանց, որ ամէն ոք ապաշխարի****.. 31 քանի որ սահմանել է մի օր, երբ աշխարհը արդարութեամբ պիտի դատի այն մարդու ձեռքով, որի միջոցով որոշեց հաւաստիք տալ ամենքին՝ նրան մեռելներից յարութիւն տալով»:*

Եթե դու քո միաբանության մեջ չես քարոզում ապաշխարություն, ապա դու ուղղակիորեն անհնազանդ ես Աստծո ճշգրիտ հրամանին: Եթ դու երկրպագում կամ հետևում ես որևիցե կառուցվածքի, համակարգի, անձնավորության կամ ձեռակերտ (մարդկանց կողմից ստեղված, կեղծ) որևէ երևույթի, ապա քեզ հրամայվում է՝ ապաշխարել: Չկա ոչ մի այլ տարբերակ / պլան Բ:

Ներողության Բաց Նամակ Աշխարհին

Խնդրում եմ, համբերատար եղիր ինձ հետ: Սա վաղուց պետք է արվեր, և ասելու շատ բան կա: Ես ուզում եմ վստահ լինել, որ կասեմ ամբողջը: Ո՛չ միայն ինձ համար, այլ նաև այն պատճառով, որ ես կարծում եմ՝ անհրաժեշտ է, որ դու սա լսես: Միգուցե ինչ-որ տեղ էլ կան այլ Քրիստոնյաներ, որոնք նույնպես կարիք ունեն ներողություն խնդրելու և այստեղ քաջություն կգտնեն: Ես գնահատում եմ քո ժամանակը, գիտեմ, որ այն արժեքավոր է:

Աշխարհի սիրելի անդամներ՝

Ես սովորական մարդ եմ, իրականում ոչ ոք: Քարոզչի ու միսիոների որդի եմ: Երկար տարիներ հաճախել եմ արձակուրդային աստվածաշնչյան դպրոց, ամառային ճամբարներ, մասնակցել եմ երիտասարդական լեռնադահուկային արշավների, տիկնիկային ներկայացումների, հավատքի վերածնումների, երգչախմբային արշավների և նման այլ բաների: Անգամ, քրիստոնեական քոլեջ եմ հաճախել և կրոնագիտության աստիճան ստացել: Վերջում ես հայտնվեցի բիզնեսի աշխարհում, սակայն երկու տասնամյակ անց եմ կացրել՝ տասանորդ գանձելով, կոմիտների հանձնաժողովներում նստելով, Կիրակնօրյա դպրոցում դասավանդելով, սեմինարների ու կոնֆերանսների հաճախելով և այլն: Մինչև անգամ, եկեղեցու «միայնակների» դասարանում եմ ծանոթացել կնոջս հետ: Ես վատ մարդ չեմ. հիմնականում, ինձ լավ եմ պահել, և կարծես բոլորն ինձ սիրում են:

Սակայն վերջերս ես փորձում էի ավելի լավ հասկանալ Հիսուսին, և ինձ սկսեցին անհանգստացնել երևույթներ, որոնք առաջ երբեք չէի նկատել: Ես շուրջս էի նայում ու դժվարանում էի իմաստավորել այն, ինչ մենք ստեղծել ենք այստեղ: Այսպիսով՝ ուղղակի թվում է, որ անկախ այն բանից, արդյո՞ք ինչ որ մեկը կասի դա թե՞ ոչ, ես պետք է պասասխանատվություն կրեմ այն մասնակցության համար, որը ես եմ ունեցել այս ամենի մեջ և հիմա պետք է ասեմ այն, ինչ անհրաժեշտ է, որ ասեմ:

Սկսենք...

Ես գիտեմ՝ դու կարծում ես, որ քրիստոնյաները կեղծավորների մի մեծ խումբ են: Մենք ասում ենք, որ մենք ավելի «կրոնապաշտ» ենք ու մենք դրախտ ենք ընկնելու իսկ դու՝ ոչ: Ու հետո մենք վարում ենք մեր մեծ փայլուն մեքենաները՝ ետնամասին փակցված փոքրիկ ձկնիկների նկարներով («քրիստոնեական» նշան է) և երթևեկելիս քո ճանապարհը կտրում ենք՝ փողոցի անկյունում կանգնած անտուն մարդու կողքով շատ արագ սլանալով: Մենք, միջին հաշվով, մեր գումարի ընդամենը 25%-ն ենք հատկացնում եկեղեցուն և բարեգործությանը, չնայած՝ մենք ասում ենք, որ Աստվածաշունչն Աստծո Խոսքն է, իսկ **այն** ասում է, որ մենք պետք է **ամեն ինչ** տանք: Միջին հաշվով, մենք նույն քանակությամբ մեծ էկրանով հեռուստացույցներ ու մոտորանավակներ, դիմահարդարանք, բեյսբոլի քարտեր ու համացանցային փորն ենք գնում, որքան մնացած բոլոր մարդիկ: Գուցե, նույնիսկ, ավելի շատ: Դու ականատես ես եղել, թե ինչպես են մեր մի առաջնորդը մյուսի հետևից հայտնվում բանտում՝ որևէ տեսակի սեքս սկանդալի պատճառով:

Դե ... Դու ճիշտ ես: Մենք այդ ամենում մեղավոր ենք: Մենք արել ենք այդ ամենը: Եվ Ես իսկապես շատ եմ ցավում:

Դու տեսնում ես մեր զարշելի հեռուստատեսային շոուները և կոկիկ հարդարված մարդկանց, որոնք այնտեղ փող են մուրում: Եվ դու զգում ես, որ այստեղ շատ լուրջ ստոր ու սխալ մի բան կա: Բարձր ճնշման տակ իրականացվող գումար հավաքելու կոչ, ինչ է թե, նրանք կարողանան եթերում մնալ: Արդյո՞ք մենք պետք է օգտագործեինք Հիսուսին՝ որպես հերթական ժամանցի ձև: Մեր կարծիքով ու՞մ ենք մենք խաբում: Այս ամենի մեջ ու՞ր է Հիսուսը: Արդյո՞ք մենք Նրան չպիտի ապավինեինք: Չ՞է որ Նա կհոգա մեր կարիքները, եթե մենք Նրա կամքի մեջ լինենք:

Ի՞նչ պատահեց զոհաբերմանը, տառապանքին, աղքատներին օգնելուն: Ես ուղղակի զզվել եմ այս ամենից: Ես ի նկատի ունեմ, որ եկեղեցու առաջնորդներից ոչ բոլորն են վատ մարդիկ, և նրանց մեջ շատ ու շատ կան այնպիսիք, ովքեր շատ ջանք են թափում և լավ նպատակներ ունեն, սիրում են, խնամում ու հոգ տանում համայնքի իրական կարիքների մասին: Նրանցից ոմանք հասկանում ու սիրում են Հիսուսին, սակայն ես միանգամայն վստահ եմ, որ այս հովիվները Բենթլի չեն վարում, չունեն բազմամիլոն դոլլար արժողությամբ տներ ու իրենց անձնական ինքնաթիռները: Ի նկատի ունեմ՝ այդ ի՞նչ աստված ենք մենք երկրպագում: Փո՞ղը: Մեր ե՞սը: Իշխանությու՞նը:

Դու ամենուր տեսնում ես մեր մեծ փայլուն շենքերը: Ճշմարիտ, գուցե մենք, նույնիսկ, զրկել ենք քեզ քո տնից՝ մեր ավտոկայանատեղին ընդլայնելու համար: Դու չես կարողանում գլուխ հանել, թե մեզ ինչու են հարկավոր չորս տարբեր եկեղեցիներ՝ խաչմերուկի չորս անկյուններում: Մենք ունենք խաղահրապարակներ և բոուլինգի արահետներ ու բասկետբոլի թիմեր: Մենք սրբավայրում Սթարբաքսի սուրճ ունենք: Մենք նվագխմբեր, հսկայական ջահեր ու դրսում դրված շատրվաններ ունենք: Մեր գրախանութները լի են կրոնական ամեն մի երևակայելի ոճով ու երանգով գրված «հիսուս թափոններով»: Բայց ու՞ր է Հիսուսը: Արդյո՞ք սա այն է, ինչ Նա էր ուզում:

Օ՜, անշուշտ, ամենուր կան լավ մարդիկ, և ոչ բոլոր եկեղեցիներն են նման մի խառնաշփոթ, սակայն քրիստոնյաներն են, որ ասում են, որ մենք պետք է «Մեկ Մարմին» լինենք: Այսպիսով նույնիսկ լավ քրիստոնյաները մեղավոր են, որ սրան դեռ ավելի վաղուց վերջ չեն դրել: Մենք պետք է շարքում պահեինք միմյանց և չհանդուրժեինք խմբակցություններ, տարաձայնություններ, ագահություն ու կռապաշտություն՝ այս ամենն ու մնացած այլ վատ բաները: Այո՜, մենք իսկապես փչացրել ենք սա: Մենք 37,000-ից ավել քրիստոնեական ուղղություններ ունենք, և նրանց մեծ մասը միմյանց հետ չեն խոսում: Մենք օրական 5 միլիոն դոլլար ենք կորցնում՝ եկեղեցու ներսում գտնվող «վստահված» մարկանց ձեռքով: Մենք մեր գումարի 95%-ը վատնում ենք մեր իսկ հարմարավետության ու հաղորդումների ու երջանիկ ընտանեկան ժամանցային շոուների վրա և թույլ ենք տալիս, որ մնացած երկնքներում գտնվող 250 ՄԻԼԻՈՆ քրիստոնյաներ հազիվ գոյատևեն սովի եզրին: Էլ չասած՝ թվով մոտ մեկ միլիարդ մարդկանց մասին, որ երբեք չեն էլ լսել Հիսուսի անունը կամ էլ այն անտուն մարդու մասին, որին քիչ էր մնում, մնում մեքենայի տակ գցեինք, երբ քո ճանապրհն էինք կտրում:

Մենք միանգամայն մեղավոր ենք: Բոլո՜ր: Ոչ ոք բացառություն չէ: Մենք պիտի դեռ վաղուց վերջ դնեինք սրան: Սակայն ես չեմ կարող բոլորի անունից ներողություն խնդրել: Սա իմ մասին է:

Ես գիտեմ, որ դու հավանաբար հաճախել ես եկեղեցի, երբ դեռ երեխա էիր ու դադարեցիր հաճախել հենց այն պահից սկսած, երբ կարողացար: Գիտեմ, որ գուցե, նաև ինչ-որ մեկը

եկեղեցում քեզ շահագործել է: Գուցե, մենք քեզ արդեն ոգեշնչել էինք և հետո ուղղակի թույլ տվեցինք, որ դու մարես, կարծես, դա մեզ ամենևին չէր էլ հուզում: Գուցե, դու պարզապես չես համապատասխանում մեր նկարագրին, միգուցե, դու «փիրսինգ» կամ դաջվածքներ ես ունեցել կամ բանտում ես եղել ու քո ներսում ինչ-որ տեղ ուղղակի գիտես, որ, նույնիսկ եթե դու ցանկանայիր Կիրակի օրը գնալ եկեղեցի, ապա դա լավ չէր ընթանա: Ես ցավում եմ դրա համար: Հիսուսը քեզ սիրում է: Նա միշտ շփվում էր ամենանսպասելի մարդկանց հետ: Նա առավել սրտացավ էր այն մարդկանց հանդեպ, ում մնացած բոլորը փորձում էին անտեսել: Ի՞նչ արեցինք մենք: Մենք քեզ ասացինք, որ դու սվիթեր ու կոշիկներ հագնես, այլապես չես կարողանա դրախտ գնալ: Սիրտս ուղղակի խառնում է այս ամենից:

Ես գիտեմ, որ դու զայրացած ես: Եվ դու դրա իրավունքն ունես: Մենք քեզ հետ արդեն ԵՐԿԱՐ ժամանակ է ինչ սխալ ենք վարում: Հիսուսի վերաբերյալ կան որոշ բաներ, որ մարդիկ պետք է լսեն, սակայն մենք հիասքանչ գլուխգործոցը թաղել ենք վարդագույն փափուկ լատեքսե ներկի տակ: Եթե ձեռքիդ տակ Աստվածաշունչ կա նայիր Մաթեոս 23-րդ գլուխը: (Եթե չկա, կարող ես այն կարդալ այստեղ. http://www.armenianchurchlibrary.com/files/easternarmenianbible/Mattew.html Գտա՞ր: Ուշադիր կարդա: Փարիսեցիներն այն ժամանկվա «կրոնապաշտ» մարդիկ էին՝ հավատքի առաջնորդները: Այս գլխում Հիսուսը ՅՈԹ անգամ ասում է, թե նրանք որքան խղճուկ ու անիծված են այն պատճառով, ինչ անում են այն մարդկանց նկատմամբ, ում նրանք պիտի որ առաջնորդեին: Նա նրանց նույնիսկ անվանում է «մահացած մարդկանց ոսկորներով լի՝ սպիտակ, լվացված դամբարաններ» և «իժերի ծնունդներ»: Ես այստեղ այդքան ժամանկ չունեմ, սակայն դու կարդա այն և տե՛ս, թե արդյո՞ք մենք չենք անում ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ մասն այդ ամենից: Հիսուսը, հաստատ, երջանիկ չէ այն ամենով, ինչ մենք քեզ արել ենք քո նկատմամբ:

Իհարկե, մենք ուզում ենք խաբել ինքներս մեզ ու ձևացնել, թե ամեն ինչ լավ է, սակայն դա այդպես չէ: Մեզ ատում են: Հիմա խնդրում եմ, հասկացիր, Հիսուսին էլ էին ատում: Սակայն դրա պատճառն այն էր, որ Նա ծանր բաներ էր ասում, իսկ մարդկանց երբեմն դուր չի գալիս լսել ճշմարտությունը: Եվ Նա խոստացավ, որ մեզ էլ կատեն, եթե մենք Նրա նման լինենք: Բայց դա այն չէ, ինչի համար մեզ հիմա են ատում: Հիմա մեզ ատում են, որովհետև մենք կեղծավորների մի մեծ կույտ ենք, որոնք ասում են մի բան ու անում են մի այլ բան: Եթե մեզ ատեին այն պատճառով, որ մենք Հիսուսի նման ենք, դա այլ բան կլիներ, սակայն սա ամենևին էլ այդ դեպքը չէ: Մեր ուրախ երաժշտությունից և փափլիկ ծառայություններից դու զգում ես, որ այստեղ մի բան հուսահատորեն սխալ է: Մենք մյուս բոլորից ոչնչով չենք տարբերվում, բացի նրանից, որ մենք ասում ենք, թե քեզնից ավելի լավն ենք:

Սա երբեք չպիտի այս կերպ լիներ: Հիսուսը խնդրել էր մեզ՝ հոգ տանել այրիների ու որբերի մասին, կերակրել քաղցածներին, այցելել բանտարկվածներին, հասնել կորածներին: Նա ուզում էր, որ մենք սիրենք մեր թշնամիներին ու աղոթենք նրանց համար: Նա հոգում էր մարդկային արդարության մասին, տառապածների, կորածների ու միայնակների մասին: Սակայն ես չեմ կարծում, որ Նա ցուցանակով դուրս կգար ցույցի երթի. Նա մտահոգվում էր ավելի մեծ խնդիրների մասին: Նա ցանկանում էր, որ մենք կենտրոնանանք հավերժական բաների վրա, այլ ոչ թե՝ առօրյա: Նա երբեք ոչ մի անգամ չի ասել՝ ամբողջ աշխարհով մեկ գնալ ու մեծ շենքեր կառուցել, բաժանվել խմբակցությունների ու Բենթլիներ գնել: Ճիշտ հակառակը: Ես հասկանում եմ, որ դու զայրացած ես մեզ վրա և ես կարծում եմ, որ դու դրա իրավունքն ունես: Բայց խնդրում եմ, հասկացիր, դու զայրացած ես այն ամենի պատճառով, ինչ մենք ինքներս ենք արել՝

համաձայն մեր իսկ իշխանության, դու զայրազած ես «եկեղեցապաշտության վրա»: Դա տարբերվում է Հիսուսից և այն ամենից, ինչ Նա էր ուզում: Մի՛ զայրացիր Հիսուսի վրա: Այս խառնաշփոթը Նրա գաղափարը չէր:

Ես իսկապես ցավում եմ ու ներողություն եմ խնդրում քեզնից: Ես ստանձնում եմ պատասխանատվությունն այն մասի համար, որը ես էլ եմ ունեցել քեզ ցավեցելու մեջ: Բայց ես խոստանում եմ ձեզ բոլորիդ՝ աշխարհի սիրելի անդամներ, որ ես այդպես այլևս չեմ վարվի: Այլևս ոչ մի լումա: Ես չեմ պատրաստվում իմ հավատը դնել «եկեղեցապաշտության» կամ որևիցէ առաջնորդի կամ հեռուստատեսային շոուի մեջ, այլ միայն՝ Քրիստոս Հիսուսի ու Նրա Փրկության: Այդ ժամանակ էր, որ ես ազատագրվեցի և սկսեցի տեսնել, որ Աստված ցանկանում ու մեզնից ակնկալում է սրանից ավելին: Եվ ես չեմ օգնում ոչ ոքի, ով ամբողջովին հավատարիմ չէ այս նույն բանին:

Դարեր են պահանջվել այս հրեշին կառուցելու համար, և մի գիշերում այն չի շտկվի: Սակայն ժամանակները փոխվում են, ու մենք արդեն վաղուց պիտի նոր մի բան արած լինեինք: Մեծ, վատ բաներ են տեղի ունենում, ինչպես օրինակ՝ Ասիայում տեղի ունեցած ցունամին, ու կարծում եմ, որ դեռ ավելին է սպասվում: Ես չեմ ուզում, որ ավելի շատ ժամանակ անցնի և սա չասվի: Ես ցավում եմ ու ներողություն եմ խնդրում իմ վատնած ողջ ժամանակի ու դրամի համար: Բայց Հիսուսը փրկում է: Իսկապես: Խնդիրն ինքնին եկեղեցին չէ: Հիսուսն է իրականը: Նա ապրեց ու Նա մահացավ իմ մեղքերի համար և Նա կրկին հարություն առավ: Նա այն է, ինչ ասել էր, որ Է, ու Նա հոգ է տանում իմ ու քո մասին: Նա մեր միակ հույսն է: Մեզ հարկավոր են վայրեր, ուր դու կկարուղանաս գնալ, և որտեղ միայն Հիսուս կսովորեցնեն ու չեն տարվի, գայթակղվի կամ շեղվի որևէ այլ բանով: Աստծո կամքով դա գալիս է:

Խնդրում եմ, մի՛ կարծիր թե բոլոր Քրիստոնյաներն ուղղակի ցուցամոլներ են: Նրանցից ոմանք իրոք անկեղծ են, երբ ասում են, որ Քրիստոսին են պատկանում: Խնդիրը հիմնականում Արևմուտքում է, որտեղ մենք բոլորս հարմարավետ ու ինքնագոհ ենք, և հենց այդպես էլ մեզ դուր է գալիս: Չինաստանում և այլ վայրերում Քրիստոնյաները մահու չափ լուրջ են: Հիսուսից բացի՝ ոչ մի այլ բանի համար տեղ չկա այն դեպքում, երբ դու փախչում ես Կառավարությունից: Նրանք ամեն օր մահանում են իրենց հավատքի պատճառով և անասելի դժվար բաներ են անում, որովհետև նրանք նվիրված են Հիսուսին: Սրանք մարտիրոսներ են՝ նահատակներ: Մարդիկ, որոնք պատրաստ են ամեն օր իրենցից մի փոքր մաս խաչել՝ Քրիստոսին ավելի շատ նմանվելու համար: Մարդիկ, որոնք պատրաստ են մի կողմ դնել այն ամենն, ինչ իրենք են ցանկանում՝ անելու համար այն, ինչ Քրիստոսն է ցանկանում: Մարդիկ, որ պատրաստ են փտել բանտում, ծեծվել կամ մեռնել, եթե դա հենց այն է, ինչ անհրաժեշտ է: Մարդիկ, որ գործում են դրդված մաքուր սիրուց ու երբեք չեն նահանջում: Այստեղ էլ կան նրանց նմանները, և ես հույս ունեմ, որ մենք կունենաք ավելի շատ մարդիկ, որոնք կսկսեն այդ կերպ ապրել: Դա վաղուց պետք է սկսվեր:

Եթե դու խոսում ես մեկի հետ, և նա ասում է, որ քրիստոնյա է, հարցրու նրան, արդյո՞ք նա այնպիսի քրիստոնյա է, որը միշտ է այդպիսին, թե՞ այն տեսակը, որը միայն կիրակի օրերին է քրիստոյա: Աստվածաշունչն ասում է, որ մենք նրանց իրենց «պտուղներից» կճանաչենք – նրանց գործերի ու խոսքերի մաքրությունից ու սիրուց: Երբ դու գտնես մեկին, ով՝ քո հանդեպ ունեցած իր սիրով կապացուցի, որ Քրիստոսն իր մեջ կա, խնդրի՛ր նրան, որ պատմի քեզ Հիսուսի մասին: Եթե դու ճանաչում ես այդ անվախ նահատակներից մեկին, որը մաքուր, անբասիր, ծանր

Ճշմարտությունից բացի այլ բան չի խոսում՝ նրան շատ հարցեր տուր: Ճշմարտությունը շատ ավելի հազվագյուտ է, քան դու կարծում ես: Բայց այլևս մի համաձայնիր փափուկ, հաճելի ու հարմարավետին. դա Աստվածաշնչում չկա:

Ինչ վերաբերում է ինձ ու իմ տանը, մենք իսկապես ցավում ենք ու ներողություն խնդրում: Այս պահից ի վեր մենք ծառայելու ենք միայն Տիրոջը, այլ ոչ՝ «եկեղեցապաշտությանը»: Մենք կփորձենք միացնել այդ նահատակներից այնքան շատերին, որքանին հնարավոր կլինի միացնել, և կջանանք սկսել անել այն, ինչ Քրիստոսն էր ցանկանում: Եթե ես մի օր հանդիպեմ քեզ, խնդրում եմ, ինձ հնարավորություն տուր քո ձեռքը սեղմել և անձամբ ներողություն խնդրել: Այս պահից ի վեր ես ավելի շատ կջանամ, խոստանում եմ: Ես կարծում՝ կան շատ-շատերը, որոնք նույնն են զգում, այնպես որ, չզարմանաս, եթե սկես ավելի հաճախ լսել այս տեսակ խոսքեր:

Շնորհակալ եմ քո ժամանակի համար: Հուսով եմ, որ սա կօգնի:

Դագ Պերի – Կանզաս Սիթի, Միզուրի, ԱՄՆ

www.FellowshipOfTheMartyrs.com- fotm@FellowshipOfTheMartyrs.com

Հավելված Ա

Կարմիր Վիշապի բնորոշ ախանշանները / կողմնակի բարդությունները կամ հետևանքները.

Կտրող-ու-փակցնող դև – Ցանկացած երևույթ, որը չի առնչվում ՔՈ արածին, կարևոր չէ: Սուրբ գրքի այն մասերը, որոնք հակասում են քո դիրքորոշմանը, գոյություն չունեն: Բափթիստներն անտեսում, մեկուսացնում կամ այլ կերպ են բացատրում Գործք Առաքելոց Գլուխը: Պենտեկոստականներն անտեսում են «պարկեշտությամբ ու ըստ կարգի» արտահայտությունը (1 Կորնթ14:40): «Նույականության խմբերը» անտեսում են Հոր, Որդու և Սուրբ Հոգու վկայակոչումները: Յոթերորդ Օրվա Ադվենթիստներն անտեսում են, որ ՀԻՍՈՒՍԸ Շաբաթ օրվա Տերն է և ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ օր պետք է նվիրված լինի Նրան: Ցանկացած երևույթ, որը հակասում է, ԳԵՐԲՆԱԿԱՆՈՐԵՆ արգելափակվում է տեսադաշտից դուրս: Կարծես, նրանց Աստվածաշնչում այդ մասն ուղղակի չկա կամ անորոշ մի կաղապար ունի իր վրա: Ճիշտ այնպես, ինչպես Վիշապի մեջ լինելիս, երբ դու չես տեսնում բնապատկերը, այլ տեսնում ես միայն քո սեփական Վիշապի ներքին մասն ու քեզ հետ այնտեղ գտնվող բոլոր պարողներին:

Խուլ-ու-Համր դև – Չես կարող տեսնել, չես կարող լսել, թե ուր ես գնում՝ բացի քո առջևիններին հետևելուց: Դու կարող ես տեսնել, թե որտեղ ես եղել, բայց գաղափար չունես, թե քո առջևում ինչ է: Դու հետևում ես Գլխավոր Պարողին ու ենթադրում, որ նա գիտի, թե ուր է գնում: Ու նա կարծում է, թե նա է գլխավորը, սակայն իրականում Վիշապն է այն մեկը, որ նրան ասում է, թե ինչպես պարել ու որտեղ: Երբ քննադատություն է գալիս, այն անտեսվում է, քանի որ այն գալիս է Վիշապի արտաքին կողմից: Եթե քննադատությունը գալիս է Վիշապի ներքին կողմից, այդ լուրը բերողը մերժվում է՝ որպես անհավատարիմ և անկարող ճիշտ ձևով պարելու և Վիշապի թիմը: Վիշապը ՉԻ հանդուրժի մասնատվածությունն իր ծածկի տակ :

Մրցակցության ոգի – սերտորեն կապված է Հպարտության հետ, սա խրախուսում է Վիշապի թիմին՝ լինել ԱՄԵՆԱԼԱՎԸ և անտեսել թուլությունները: Նրանք պիտի ԳԵՐԱԶԱՆՑ Վիշապ լինեն, մասնավորապես այն պատճառով, որ այն ամենն ինչ նրանք անում են, անում են «Աստծուն փառք ու պատիվ բերելու համար:» Նրանց հարկավոր է ԳԵՐԱԶԱՆՑ մետաքս ու փայլեր և լավագույն հանդերձանքներն ու պարողները: Նրանց հարկավոր են խորհրդատուներ, անձնական մարզիչներ ու մասնագետ պարուսույցներ/խորեոգրաֆներ: Եթե հնարավոր է՝ բարելավված ձայնային, լուսային ու տեսագրության համակարգեր, որպեսզի նրանք կարողանան պատշաճ կերպով ձայնագրել, թե իրենք ինչպես են պարում: Ուժեղ կողմերը շեշտող և թուլություններն անտեսող մի քանի սերունդ անց այս նրանք դառնում են լիովին բնածին և ձևավորում են իրենց սեփական լեզուները, առանձնահատկություններն ու ոճը: Քրիստոսի Մարմնում նրանք դառնում են մի գոմ, որը լի է ոտքի մատներով, ու դա նրանց հենց այդպես էլ դուր է գալիս, և նրանք ամենուր ոտքի նոր մատներ են կլոնավորում՝ այնքան արագ, որքան կարող են: Նրանք անհավասարակշիռ են, սակայն ամենուր «ոտքի մատների« ամենալավ կույտն են:

Կապվածության ոգի – Վիշապը շատ ջանք է թափում բոլոր ներգրավվածներին շշնջալու համար, որ նրանք ծայրահեղ կարևոր են թիմի բարօրրության համար, և ՊԵՏՔ Է մնան Վիշապի տակ: Նրանք ՉԵՆ ԿԱՐՈՂ որոշել ինքնուրույն ընթանալ կամ գնալ որևէ այլ մրցակից Վիշապի մոտ:

Նրանք ՊԵՏՔ Է մնան Վիշապի կամ Վիշապի Պարողի «ծածկի» տակ, այլապես նրանք մերժված ու միայնակ կլինեն, ու թշնամին կհասնի նրանց: Ի՞նչ թշնամի: Նույն թշնամին, որի տակ նրանք արդեն իսկ են, բայց այն երբեք դա չի ընդունի:

Շտապողականության ոգի – Սա արհեստականորեն ներդնում է տարատեսակ վերջնաժամկետներ և հարկադրաբար առաջացնում է անհապաղության զգացողություն: Սա բոլորին մշտապես զբաղված է պահում՝ երկու անգամ կիրակի և չորեքշաբթի օրերին, հետո այցեցություններն ու ֆուտբոլի թիմերը, ճաշկերույթներն ու ամառային ճամբարները, կոմիտեի ժողովներն ու Սուրբ Ծննդի տոնական շքերթն և շատ ու շատ ավելին: Մշտապես ավելի շատ է լարում նրանց, ովքեր արդեն իսկ գերլարված են, և մշտապես թարմ «ոտքեր» է փնտրում Վիշապի համար: Այն ՊԻՏԻ շարունակի պարել: Այն պիտի շարունակի բոլորին շարժման մեջ պահել: Սա թեքում է մարդկանց աչքերը Հիսուսից՝ եթե կարողանում է նրանց կենտրոնացած պահել Վիշապի կառուցվածքի, ոճի, ժամանակի, ծրագրերի, անձնակազմի, բարելավման և աճի վրա:

Նախանձի, խանդի ու ատելության ոգիներ – Գաղ. 5:19-21 - անզուսպ են Ամերիկայի միաբանություններում ու աղանդներում: Մշտապես մյուսներին մատնանշելն ու մեկը մյուսին ցած գցելու փորձերը: Վիշապը մշտապես շշնջում է, որ ՔՈ Վիշապն ավելի սիրուն է, ավելի խելացի, ավելի հասուն, ավելի լավը, ավելի երկար, փայլուն ու ավելի արագ, քան այն մյուս բոլոր Վիշապները: Չափազանց կարևոր է, որ Վիշապի մեջ գտնվող մարդիկ ԻՄԱՆԱՆ, թե մյուս բոլոր Վիշապներն այդ ինչն են սխալ անում, և թե ինչու է ԻՐԵՆՑ Վիշապը նրանցից առավել լավը: Նրանք նույնիսկ կդատապարտեն միմյանց ու կմերժեն միասին մասնակցել միջոցառումներին: Չնայած մենք պետք է ՄԵԿ ՄԱՐՄԻՆ լինենք (Հովհ. 17)՝ թշնամին մեզ բաժանել է մրցակցող թիմերի, և մենք երբեք չենք կարողանում միասին որևէ տեղ հասնել:

Դատարկ խոսքերի ոգի – Եփես 5:5-17, Հոբ 35:13 - Սա քողարկվում է «ընկերության» տակ, սակայն իրականում այն պարզապես իզուր վատնած ժամանակ է: Ավելի լավ է միասին կապ հաստատել ընդհանուր պայքարում կամ ուսուցողական ճամբարում, քան ուղղակի բարևել իրար՝ ասես նույն լողափում գտնվող տուրիստներ: Այս ոգին կարող է քողարկվել Աստծո արածների մասին պատմություններ պատմելու տակ, որը լավ է, սակայն այն գրավում է ժամանակն ու չի թողնում, որ մենք տեսնենք այն, ինչ Աստված ՀԵՆՑ ՀԻՄԱ է անում մեր մեջ: Աստծո մեծության ու վեհության մասին պատմություններ պատմելը հնազանդություն չէ, եթե միայն ՆԱ ԻՆՔԸ քեզ չի ասում այդ պատմությունը հենց այդ պահին պատմել: Դա կարող է հիանալի պատմություն լինել, բայց դու անսարք ես, եթե սխալ ժամանակ ես այն պատմում: Դա օծված չի լինի և չի ունենա այն օգուտը, որն Աստված է ցանկանում: Սա ՇԱՏ-ՇԱՏ տարածված է «եկեղեցում» և այն դանդաղորեն դուրս է քաշում կյանքը միլիոնավոր մարդկանց միջից՝ Աստծուն ավելի շատ տեսնելու հնարավորությունները բաց թողնելու պատճառով, քանի որ մենք չենք կարողանում մեր բերանը փակել:

Ցանկասիրության ու Ագահության ոգի - Կարմիր Վիշապի տակ գտնվող գրեթե ԲՈԼՈՐ ՄԱՐԴԻԿ ցանկասիրության ոգի ունեն և մշտպես ավելին են ցանկանում: Զարմանալի չէ, որ մենք չափազանց տարածված գիրություն, սեռական այլասերվածություն, ամուսնալուծություն, ագահություն, դավաճանություն և այլ խնդիրներ ունենք «եկեղեցու» ներսում: Միշտ կա «սպառազիությունների մի մրցավազք»՝ հասնելու կամ անցնելու Վիշապի մյուս թիմերին: Եվ այն

տարածվում է բոլոր անդամների անձնական կյանքի վրա՝ նույնիսկ, Վիշապի պարից դուրս: Վիշապն ամբողջապես կլանված է, կենտրոնացած՝ կուտակման, աճի ու հավաքման վրա՝ իր իսկ ինքնաբավարարման համար: Այս ոգին չափազանց տարածված է, և չկա մեկը, որ կանգնեցնի, կասեցնի սա, քանի որ սա Կարմիր Վիշապի էության էական տարրն է:

Վախի ոգի – Վիշապը ՄԵԾԱՊԵՍ հետ է պահում անհատականությունը և պատճառների մշտական հոսք է ներկայացնում այն մասին, թե ինչու տվյալ անհատն ի վիճակի չէ պաշտպանել ինքն իրեն, մենակ կանգնել կամ արդյունավետ լինել՝ առանց թիմի: Մշտապես ասելու փոխարեն այն, որ Աստված բավարար է, և «ավելի մեծ է Նա, ով մեր մեջ է, քան նա ով աշխարհում է», Վիշապը պնդում է, որ յուրաքանչյուրն, ով «ծածկի» տակ չէ և ակտիվորեն ու կանոնավոր կերպով չի կատարում Վիշապի պարը, կուտվի խավարի կողմից՝ որպես ճաշ: Ամեն տեսակ վախերը խրախուսվում են, և սա տարածվում է նաև բոլոր Պարողների անձնական կյանքի վրա: Մենք ունենք չափազանց շատ տարածված ընկճախտ (դեպրեսիա), ահանգստության նոպաներ, տարածավախ (ագորաֆոբիա), նույնիսկ ինքնասպանության մտքեր, այն պատճառով, որ այս ոգին անդադար հարվածներ է հասցնում պարողներին: (Եվ դա Աստվածը ՉԷ՛:)

Մյուսների ահաջողություններով հրճվող ոգի – Ուրախանում է մյուս եղբայների անկման դեպքում: Դա հակառակ է Ա Կորթնացիներ 13-ին: Չի ուրախանում իր անձնական տրտմության մեջ, բայց հաստատ ուրախանում է՝ տեսնելով, թե ուրիշներն ինչպես են տրտմում և անկում ապրում կամ առհասարկ դուրս են վանվում Վիշապի պարի մրցույթից:

Խարիզմանիա – Հարաբերություններից առավել բարձր որևէ այլ արտահայտչամիջոցի ցանկություն՝ հոգով հարբած լինելը, հաչելը, ակնկալելը, որ երկրպագության ընթացքում կստանան «ոսկյա ատամներ» կամ այլ նշաններ, հոգով տապալված լինելը, մարգարեական որևէ խոսք, գիտելիքի խոսք, օժտված լինելը կամ ցանկացած այլ մի բան: Կարող է լինել կատարելապես պատճառաբանված, կատարելապես Աստվածաշնչյան, կատարելապես պատշաճ և ըստ կարգի, սակայն ՈՉ այն դեպքում, երբ սա դառնում է ձգտման ԽՆԴԻՐԸ (օբյեկտը): Այն դառնում է հետապնդման մարգարիտը, այլ ոչ թե Քրիստոսի հետ հարաբերություններն ու լիարժեք հնազանդությունը: Դա նրանց կբացի ցանկասիրության ոգու առջև, որն էլ ամեն տեսակ այլ վնասներ կհասցնի: Եթե դու մի ընծա ես փնտրում, որը քեզ ավելի լավ կսպառազինի Աստծո պատերազմի համար, ապա դա մի այլ բան է, սակայն եթե դու այն փնտրում ես ցուցադրելու կամ մյուս բոլորին նմանվելու, կամ ավելի մեծ ծառայություն ունենալու կամ էլ քեզ համար անուն վաստակելու նպատակով՝ դա ամենևին լավ չէ, և դրա հետևանքը վստահաբար կլինի քո կործանումը (եթե դու չապաշխարես):

Սրտերի կարծրացում – Եփ. 4:17-19, Շարունակական ցանկասիրություն՝ ավելին ունենալու կամ ստանալու համար՝ հեշտասիրությանը տրվելը: Սա ամենասարսափելիներից է: Այս մեկը Կարմիր Վիշապից չի գալիս, սա հենց Աստծուց է գալիս: Երբ մենք սկսեցինք շարժվել մեր ուզած ձևով, Տերը մեզ ավելի ու ավելի մեծ մաշտաբով հանձնեց Վիշապին և կարծրացրեց մեր սրտերը: Այս հրեշավորության ԱՄԵՆԱՎԱՏ հետևանքն այն է, որ փաստացիորեն ԱՆՀՆԱՐ Է զղջալ, ապաշխարել: Մինչ այժմ «եկեղեցիներում» ամենաքիչ հանդիպած, ամենաքիչ քարոզված, ամենաքիչ գործածված արտահայտչաձևը՝ իրական, ճշմարիտ ապաշխարումը՝ զղջումն է: Նույնիսկ ավելի հազվադեպ է հանդիպում ապաշխարումն այն բանի համար, որ մենք եղել ենք

մասնիկը մի համակարգի, որն այն չէր, ինչ Աստված էր ցանկանում, և դա դավաճանություն էր ու այն շեղվել էր ճշմարիտ ճանապարհից: Վիշապի տակ գտնվող յուրաքանչյուրը, ով առհասարակ ապաշխարում է Վիշապի մասնիկը լինելու համար, գրեթե միանգամից մերժվում է դատապարտմամբ, ինչն էլ իր հերթին շատ դժվար է դարձնում ավելի մեծ թվով մարդկանց հանել Վիշապի տակից:

Թույլ տուր կրկնեմ: Սա ԱՍՏԾՈՒՑ ԵԿԱԾ ԱՆԵԾՔ Է այն պատճառով, որ մենք շարժվել ենք մեր ուզած ձևով, և անեծքն իր հետ բերում է սրտերի կարծրացում: Անեծքի տակից դուրս գալու միակ ձևը ապաշխարությունն է, բայց անեծքը քեզ հետ է պահում ապաշխարելուց: Իրականում, այն քեզ հետ է պահում լսելուց ցանկացած մեկին, ով թեկուզ միայն ԽՈՍՈՒՄ Է ապաշխարելու մասին: Եթե դու կարդում ես սա և այսքան հեռուն ես հասել, ապա դա իսկապես լավ նշան է, որ դու կա՛մ ազատ ես, կա՛մ քո վրա գոյացած կապանքը կոտրվում է:

Սա ԲՆԱՎ ավարտուն չէ: Մեծամասամբ, ՈՐԵՎԷ այլ տեսակի կեղեքում կամ դիվական ազդեցություն, որը կա սատանայի զինանոցում, առկա է և օգտագործվում է այս նպատակով: Աստված կհանձնի քեզ այն ամենին, ինչը կցանկանա գալ և անհանգստացնել քեզ, և միգուցե դու ամենևին չկարողանաս մաքրագործվել դրանից՝ մինչև չզղջաս քո ուզած ձևով շարժվելու համար:

http://www.chcp.org/mpeg/summer.mpg

ՀԱՎԵԼՎԱԾ Բ

Երկրոդ օրենք 28 – մեկնաբանությամբ ու կիրառությամբ

Օրհնություններ Հնազանդության համար:

*1 «**Եթէ** լսէք մեր ՏԷՐ ԱՍՏՈՒ ասածները, որ ես այսօր ձեզ եմ պատգամում, այն է՝ **հետեւելով** նրա **պատուիրաններին՝ կատարէք դրանք**, ապա ձեր ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾԸ ձեզ երկրի բոլոր ազգերից աւելի բարձր կը դասի:*

*2 **Այս** բոլոր օրհնութիւնները կ՚իջնեն քեզ վրայ ու **կը** գտնեն քեզ, եթէ լսես քո ՏԷՐ ԱՍՏՈՒ ձայնը: 3 Օրհնեալ կը լինես դու **քաղաքում** եւ օրհնեալ՝ **դաշտում**:*

*4 Օրհնեալ **կը** լինեն քո **որովայնի ծնունդները**, քո **երկրի բերքը**, քո **արջառների նախիրները** եւ քո **ոչխարների հօտերը**:*

*5 Օրհնեալ **կը** լինեն քո **շտեմարաններն** ու քո **ամբարները**:*

*6 Օրհնեալ **կը** լինես դու միշտ՝ **ելնես** թէ **մտնես**:*

*7 Քո ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾԸ քո առջեւ **կը կոտորի** քո թշնամիներին ու հակառակորդներին: Նրանք քո դէմ կ՚ելնեն մէկ ճանապարհով, բայց եօթը ճանապարհով կը **փախչեն** քեզանից:*

*8 ՏԷՐը օրհնութիւն **կ՚առաքի քեզ**, քո **շտեմարաններին** ու **բոլոր այն գործերին**, որոնց կը ձեռնարկես **այն երկրում**, որ քո ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾԸ տալու է քեզ:*

*9 **Եթէ** լսես մեր ՏԷՐ ԱՍՏՈՒ ասածը եւ ընթանաս նրա ճանապարհով, ապա քո ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾԸքեզ իր **սուրբ** ժողովուրդը **կը դարձնի**, ինչպէս **երդուել է** քո հայրերին: 10Եւ երկրի բոլոր ազգերը **կը** տեսնեն, որ քո վրայ է դրուած Տիրոջ անունը, ու քեզանից **կը** վախենան: 11Քո ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾԸ քեզ **կը** բազմացնի բարիքներով՝ քո **որովայնի** ծնունդներով, քո **երկրի** բերքով, քո ոչխարների ծնունդներով **այն երկրում**, որ քո հայրերի Տէրը երդուել է տալ քեզ երկնքի ու երկրի ստեղծուելու օրից ի վեր:*

*12 Տէրը քեզ համար **կը բացի իր բարիքների շտեմարանը՝ երկինքը**, որպէսզի ժամանակին **անձրեւ** տայ քո երկրին, կ՚օրհնի քո **ձեռնարկած բոլոր գործերը**, փող **փոխ կը** տաս շատ ազգերի, բայց ինքդ նրանցից **փոխ չես առնի**: 13Եթէ լսես քո ՏԷՐ ԱՍՏՈՒ **պատուիրանները**, որ պահելու եւ կատարելու համար հաղորդում եմ քեզ այսօր, ապա բազում ազգերի վրայ կ՚իշխես, բայց քեզ վրայ չեն իշխի: Քո ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾԸ քեզ **կը** դարձնի **գլուխ**, բայց **ոչ պոչ**, **բարձր կը** լինես եւ ոչ թէ՝ **ցած**: 14Դու **չպիտի խախտես այն խօսքերը**, որ ես պատգամում եմ քեզ այսօր, չպիտի շեղուես **ո՛չ աջ** եւ **ո՛չ ձախ**, որ չգնաս օտար աստուածների յետեւից եւ չպաշտես դրանք»:*

Երկու վկաների վկայությամբ գործը հաստատվում է. աստեղ, Աստված ԵՐԵՔ ԱՆԳԱՄ կրկնում է, որ ԵԹԵ դու կատարես որոշակի գործեր, ԱՊԱ Նա կպատասխանի որոշակի ձևով: Դա ԵՐԱՇԽԻՔ է: Եթե դու լիովին հնազանդվես, ապա դու Կշահես այս օրհնություններից: Սա Աստծո համար կամընտրովի չէ: Սա ինքնաշխատ և տիեզերական օրենք է՝ ինչպես ձգողականությունը: Եթե դուք Նրա զավակներն եք և դուք խոստումների ծածկոցի տակ եք մտնում ու հնազանդ լինում, ապա այս ամենը Կգա, որպեսզի հանձնվի ձեզ: Սակայն որքան ավելի լավ ես դու ճանաչում Աստծուն, այնքան ավելի բարձր է «լարախաղացի պարանը:» Ոչ ոք ավելի մոտ չէր Աստծուն քան Մովսեսը, և այն միակ սխալը, որը նրան գուցե խանգարեր ժառանգել Աստծո խոստումն, այն էր, որ Մովսեսը հարվածեց քարին՝ դրա հետ խոսելու փոխարեն: Աստված այստեղ չի կատակում: Նա ակնկալում է ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ: Մասնավորապես, Իր այն զավակներից, որոնք Իրեն ամենալավն են ճանաչում: Խաղաղրույքները/մրցանակները ամենաբարձրն են նրանց համար, ովքեր Աստծուն ամենամոտն են:

Սա պիտի բավականին պարզ լինի: ԵԹԵ դու հնազանդվես, ԱՊԱ Աստված կպահպանի քեզ որևէ վնասից ու կբարձրացնի քեզ ազգերի վրա, և դու կլինես գլուխ, այլ ոչ թե պոչ: Նա դա ԿԱՆԻ: Ես այստեղ անորոշ ոչինչ չեմ տեսնում: Միգուցե այն չդրսևորվի քո մտածածի պես, սակայն Նա դա ԿԱՆԻ:

Բայց ահա սարսափելի մասը.

Անեծքներ անհնազանդության համար:

*15 **Իսկ եթէ չլսես** քո ՏԷՐ ԱՍՏԾՈՒ ասածը՝ **չպահես** ու **չկատարես** նրա **բոլոր** պատուիրանները, որ ես **այսօր** պատգամում եմ քեզ, ապա **այս անէծքները կը** թափուեն քո գլխին, կը հասնեն քեզ:*

Սրանք բնութագրվում են՝ որպես բնական հետևանքներ բնական Իսրայելի վրա, սակայն դրանք ունեն նաև հոգևոր ճյուղավորումներ: Հոգևոր Իսրայելի համար (եկեղեցին) դրանք հիմնականում հոգևոր հետևանքներ են, բայց նաև բնական ճյուղավորումներ ունեն: Արի ավելի մանրամասնորեն դիտարկենք:

*16 Անիծեալ **կը** լինես դու **քաղաքում** եւ անիծեալ՝ **դաշտում**: 17 Անիծեալ **կը** լինեն քո **շտեմարաններն** ու քո **ամբարները**:*

Քո հավաքույթներն անիծված կլինեն, լինի դա քաղաքում, թե՞ քաղաքից դուրս: Քո հոգևոր հացը սակավ կլինի: Դու, մի օրվա հին մանանայից բացի, այլ կերակուր չես ունենա: Հիսուսը՝ կյանքի հացը, հեռու կլինի:

*18 Անիծեալ՝ քո **որովայնի ծնունդները**, քո **երկրի բերքը**, քո **արջառների** նախիրներն ու **ոչխարների** հոտերը:*

Քո հետևորդները նույնիսկ ավելի հեռու կլինեն Աստծուց քան դու ես: Քո հոտի երիտասարդները անիծված կլինեն: Արդյո՞ք մենք չենք տեսնում երիտասարդների մեծ կորուստ եկեղեցուց: Արդյո՞ք մենք չենք տեսնում մեր երիտասարդական խմբերում և մեր երեխաների մեջ, Աստծուց հեռանալու զանգվածային շարժում: Արդյո՞ք այսօրվա մշակույթը չի հաղթում ու գրավում նրանց:

*19 Անիծեալ **կը** լինես դու միշտ՝ **մտնելիս** թէ **ելնելիս**:*

Դու անիծված կլինես, երբ ներս ես գալիս և երբ դուրս ես ելնում: Նշանակություն չունի, թե դու ուր կգնաս՝ տնային առաքելության կամ օտարերկրյա առաքելության, պատերի ներսում կամ պատերից դուրս, քո ջանքերը շատ քիչ հոգևոր արդյունք կունենան:

*20 ՏԷՐԸ քեզ **աղքատ** ու **կարիքաւոր կը** դարձնի եւ **ձեռնարկած** ու **ձեռնարկելիք** բոլոր գործերդ **անյաջողութեան կը մատնի**, մինչեւ որ կոտորի քեզ ՏԷՐԸ, մինչեւ որ քեզ ոչնչացնի իսկոյն քո չար ընթացքի համար, քանի որ դու **ինձ լքեցիր**:*

Տերը քեզ վրա անեծքներ, շփոթություն կդնի և կհանդիմանի քեզ ամեն ինչում, մինչև որ դու կործանվես: Կարո՞ղ ես գտնել մի որևէ քրիստոնեական ուղղություն, որը լի չէ շփոթմունքով ու հանդիմանությամբ: Որևէ մեկը, որը չի վիճաբանել երկրորդական հարցերի շուրջ և երկպառակտված դարձել: Արդյո՞ք մենք մշտական շփոթմունքով լցված չենք այս կամ այն դոկտրինայի կամ ուսմունքի վերաբերյալ:

*21 ՏԷՐԸ **մահ կը** սփռի քեզ վրայ, մինչեւ որ սպանի ու **վերացնի** քեզ այն երկրից, ուր մտնելու ես այն ժառանգելու համար: 22 ՏԷՐԸ քեզ **կը** տանջի **տարակուսանքներով, տենդով** եւ **սարսուռով, շլութեամբ** ու **երկիւղով, խորշակով** ու **դժգունութեամբ**, եւ սրանք քեզ **կը հետապնդեն**, մինչեւ որ **քեզ կորստեան մատնեն**:*

Արդյո՞ք մեր եկեղեցիները լի չեն մարդկանցով, ովքեր տառապում են հոգևոր հիվանդություններով, որոնք թվում է, թե բուժում չունեն: Արդյո՞ք նրանք բորբոքված չեն իրենց կրքերով, հակումներով ու իրենց ցանկասիրությունների տենդով: Արդյո՞ք մեր քարոզիչների 50%-ը չեն օգտվում փորնոգրաֆիայից (համաձայն Բառնայի:) Արդյո՞ք մեր հոգևորականությունը երբեք սեռական կերպով չի շահագործում փոքրիկ երեխաներին: Արդյո՞ք մենք եկեղեցում ավելի շատ ամուսնալուծություններ չունենք, քան՝ ընդհանուր բնակչության մեջ: Արդյո՞ք մենք սովամահ չենք լինում Աստծո Խոսքի իրական «մսի» համար: Արդյո՞ք մենք կենդանի ջրի ծարավից չենք մեռնում: Արդյո՞ք մեր մարդիկ աշխարհով վքնած չե՞ն և Աստծո սովից չե՞ն մեռնում: Մենք՝ մեր եկեղեցական կազմակերպությունների ներսում կատարվող խարդախությունների պատճառով կորցնում են տարեկան 16 ՄԻԼԻԱՐԴ դոլլար: Մենք կորցնում ենք անհաշվելի միլիարդներ՝ վատնելու, շագործելու համար: Միլիոնավոր քրիստոնյաներ են օրական մահանում մեր արհամարհանքի պատճառով:

*23 Քո գլխի վրայ **երկինքը պղնձից կը** լինի, իսկ քո տակի **երկիրը՝ երկաթից**:*

Քո աղոթքները պատասխան չեն ստանա՝ դրանք անկատար ետ կվերադառնան:

*24 ՏԷՐԸ քո արտին անձրեւի փոխարէն **փոշի կը** թափի, երկնքից քեզ վրայ հող **կը** թափի, մինչեւ որ քեզ սպանի ու **կորստեան մատնի**:*

Տերն ասում է, որ Ինքը կուղարկի քեզ վաղ ու վերջին անձրևներ, բայց ո՛չ մինչև քո ապաշխարելը: Դրա փոխարեն դու կստանաս հող ու փոշի, և դա քո գործն է՛լ ավելի կդժվարացնի ու կխեղդի այն ամենն, ինչ կաճեցնես:

*25 ՏԷՐԸ թշնամիներիդ առջեւ քեզ **պարտութեան կը** մատնի. **դու** նրանց դէմ մէկ ճանապարհով կ՝ելնես, բայց **եօթը** ճանապարհով կը փախչես:*

Արդյո՞ք մենք արդեն սարսափի առարկա չենք: Արդյո՞ք մենք ծաղրի առարկա չենք աշխարհի համար: Ինչու՞ պետք է որևէ մեկը ցանկանա միանալ այս խառնաշփոթին: Ինչ է՞ թե, նրանք կարողանան իրենց եկամտի 10%-ը տալ՝ շաբաթական մեկ անգամ կազմակերպվող համերգի ու խրախուսիչ քարոզի համար: Մենք տարեկան 250 միլիարդ դոլլար ենք հավաքում ու դրա 95 %-ը վատնում ենք մեր հարմարավետության վրա: Մեր հոգևոր թշնամիները հարվածներ են հասցնում մեզ: Մեր պատերի ներսում վխտում են են վատ հակումները, ցանկասիրությունը, վախը, բարկությունն ու ատելությունը, և այս ամենի դեմ արդյունավետ կերպով պայքարելու ոչ մի ծրագիր հորիզոնում չի էլ նկատվում: Մեր թշնամիները հետապնդում են մեզ, ու մենք փախչում ենք: Մենք հաղթանակ չունենք:

*26 Ձեր **դիակները** երկնքի **թռչունների** ու երկրի **գազանների** կեր կը դառնան, եւ ոչ ոք չի լինի, որ քշի դրանց:*

Սա դևերի և խավարի հոգևոր ուժերի մասին է, որոնք գիշատիչ գազանների պես կհոշոտեն մեզ: Ես սա տեսել եմ (հոգով) մի տեղական միաբանությունում: Մի հսկա սենյակ՝ լի մեռած մարմիններով, որոնք խժռվում էին մութ դիվական թռչունների ու գազանների կողմից: Եվ չկա ոչ ոք, որ դրանց քշի: Մենք շատ ազատագրման ՇԱՏ ՔԻՉ ծառայություններ ունենք, և նույնիսկ ավելի քիչ են նրանք, որոնք որևէ իրական իշխանություն ունեն և արդյունավետ են: Եվ ես նույնիսկ ավելի քչի մասին եմ տեղյակ, որոնք ի վիճակի են քաղաքով մեկ կամ տարածաշրջանային հոգևոր պատերազմ մղել հոգևոր պատնեշների դեմ:

*27 ՏԷՐԸ քեզ **կը** հիւանդացնի եգիպտացիների **խոցով** ու **թութքով**, **սուր քոսով** ու **բորոտութեամբ**, որպէսզի **չկարողանաս բուժուել**:*

Երբ մենք անապատում էինք՝ Աստծո պաշտպանության տակ, Իսրայելի զավակները չէին հիվանդանում: Գործք Առաքելոց գրքում, առաքյալները բուժում էին յուրաքնչյուրին, ով հիվանդ էր: Միակ բժշկական խորհուրդը, որը քրիստոնյաներին տրվել է Նոր Կտակարանում, դա ավագներին կանչելն է՝ և հավատքի աղոթքը ԿԲՈՒԺԻ նրանց: Սակայն մեր եկեղեցիները ԼԻ են մարդկանցով, որոնք ունեն բազմատեսակ վիճակներ, սինդրոմներ կամ հիվանդություններ, և մեր աղոթքները կարծես շատ քիչ ազդեցություն են ունենում: Շատ անբուժելի հիվանդություններ խիստ տարածված են եկեղեցիներում: Ինչու՞ Աստված չի լսում: Եթե մենք հնազանդ ենք, ինչու՞ մենք հիվանդ մարդիկ ունենք:

*28 ՏԷՐԸ քեզ **կը** հիւանդացնի **մտագարութեամբ, կուրութեամբ** ու **ցնորամտութեամբ**:*

Արդյո՞ք մենք մոլորակի ամենաշփոթված, անգործունակ, շիզոֆրենիկ կրոնը չենք (Հրեաների հնարավոր բացառմամբ:) Արդյո՞ք մեր եկեղեցական նստարանները լի չեն մարդկանցով, որոնք հոգևոր դիսլեքսիա և ամեն տեսակ խառնուրդներ ունեն: Արդյո՞ք մենք լի չենք մարդկանցով, որոնք ընկճախտ/դեպրեսիա, անհանգստության, խուճապի նոպաներ, Ալզհեյմերի, Պարկինսոնի հիվանդություններ ու հիշողության սուր խանգարման ու ծալապակասության ամեն տեսակ հիվանդություններ ունեն:

*29 Օրը ցերեկով կը խարխափես այնպէս, ինչպէս **կոյրն է** խարխափում խաւարի մէջ, եւ **քո ուղիղ ճանապարհը չես գտնի**: Այդ ժամանակ յաւիտենապէս **զրկուած** ու **կողոպտուած** կը լինես, եւ ոչ ոք օգնութեան չի գայ քեզ:*

Արդյո՞ք մենք խավարի մեջ չենք խարխափում՝ փնտրում ամեն հնարավոր նոր ծրագիր ու ուսումնական պլան, որը կփրկեր մեր հիվանդ եկեղեցիները: Եթե դա Նպատակաուղղված չէ՝ դա Մարսը/Վեներան, կամ Հովվությունը, կամ Տորոնտոն կամ Բրաունսվիլը կամ Հավատքի Խոսքը կամ հազարավոր այլ նորաձև ու նորոճ ծառայություններն են, որոնք մեզ մի որոշ ժամանակ ներգրավված են պահում և հույս տալիս, որ վերջապես գտել ենք վերածնման ուղին: Նույնիսկ, չնայած լույսերը ողջ պայծառությամբ վառվում են՝ մենք չենք կարողանում տեսնել այն ակնհայտը, որն ուղիղ մեր դիմաց է՝ այն, որ ԱՊԱՇԽԱՐՈՒՄԸ / ԶՂՋՈՒՄԸ ՄԻԱԿ Աստվածաշնչյան դեղատոմսն է, որն օգնում է այս հիվանդության դեպքում: Վիճակագրությամբ՝ մենք անհաջողակ ենք այն ամենում, ինչ անում ենք: Մենք վիթխարի փող կորցնողներ ենք և ամեն օր ճնշվում ու կողոպտվում ենք՝ տարեկան ՆՎԱԶԱԳՈՒՅՆԸ 16 ՄԻԼԻԱՐԴ դոլլարի չափով: Եվ ոչ ոք, կարծես, չի էլ գալիս մեզ փրկելու:

*30 Կին **կ՚առնես**, բայց մի **ուրիշ** տղամարդ նրան **կը խլի** քեզանից: Տուն **կը** շինես, բայց ինքդ **չես բնակուի** նրա մէջ: Այգի **կը** տնկես, բայց ինքդ **չես քաղի բերքը**: 31Քո արջառը **կը** մորթուի քո առջեւ, բայց դու **չես ուտի** դրանից: Քո էշը **կը** գողանան քեզանից, բայց դու այն **յետ չես դարձնի քեզ մօտ**: Քո ոչխարը **կը** մատնուի քո թշնամու ձեռքը, եւ **ոչ ոք չի լինի, որ օգնի քեզ:***

Չնայած այն ամենին, ինչ քո կարծիքով քեզ խոստացված է՝ դու այն չես ստանա: Թեպետ դու շատ տարիներ աշխատել ես ինչ-որ բան կառուցելու համար՝ դու դրա մեջ չես ապրի: Դու չես վայելի քո աշխատանքի բարիքները, քանի որ դրանք իզուր էին: Քո թշնամիները կլինեն քո տների և ապրուստի սեփականատերերը: Խավարի ուժերը հիմա ամողջովին խրամատվել են Ամերկայի եկեղեցիներում և ամրապնդվելուց ու ուժեղանալուց բացի՝ այլ նշան չեն ցուցաբերում: Այն ամենն, ինչի համար դու աշխատել ես, քամուն է տրվում:

*32. Քո **տղաներն** ու **աղջիկները օտար ազգի** ձեռքը **կը** մատնուեն, եւ դու **տկարացած կկոցած աչքերով կը** նայես նրանց, եւ **քո ձեռքը չի հասնի** նրանց:*

Եկեղեցին հոգևոր զինվորներ չի մեծացնում: Այն մեծացնում է երիտասարդություն, որը եկեղեցի է գալիս, մեծամասամբ, փիցա-փարթիների և դահուկային արշավների ու կինո-երեկոների համար: Նրանք չեն լսում Աստծո ձայնը, իսկ մենք չգիտենք, թե ինչպես նրանց սովորեցնենք՝ լսել Աստծո ձայնը, կամ չենք հավատում, որ դա հնարավոր է: Բայց նրանք հրապուրված են Ուիկայի կամ Նոր Դարի իրենց ընկերների պատմած գերբնական պատմություններով: Նրանք քաղցած են Աստծո

ուժի ու ճշմարտության համար, բայց չեն կարող այն գտնել, քանի որ այն թաղվել է «Կրոնի» տակ: Մեր եկեղեցական երիտասարդության շրջանակներում խիստ տարածված են սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները: Մենք մի ամբողջ սերունդ ենք կորցնում: Նրանց ծնողները Աստծուց ավելի հեռու էին քան իրենց տատերն ու պապերը, իսկ այս երեխաներն է՛լ ավելի հեռու են: Մշակույթը, լրատվամիջոցները, երաժշտությունը և հասարակական դպրոցները (և սատանան) խժռում են նրանց:

*33 Քո երկրի բերքն ու քո ամբողջ վաստակը **կո՛ւտի** քեզ անծանօթ մի ազգ, եւ դու մշտապէս **զրկուած** ու **խորտակուած կը** մնաս: 34 Քո տեսած արհաւիրքներից **կը ցնորուես:***

Մեր կառուցած համակարգերը խժռվում են պայծառ-ապագա-կերտողների ու սոց-գիտնականների ու փոփ-հոգեբանների կողմից: Մշակույթը ճզմում է մեզ, իսկ «եկեղեցին» ոչ ոքի իրական չափով չի պաշտպանում: Իմ երեխաները հեռուստատեսությամբ այլևս գրեթե ոչինչ չեն կարող դիտել, և այն ամենն, ինչ լուրերում կա, ճնշող է, դաժան և սարսափելի: Մենք ցունամիներ երկրաշարժեր, փոթորիկներ, պատերազմներ և ահաբեկիչներ ունենք, իսկ խաղաղություն չունենք: Ինչպե՞ս կարող էր դա պատահել, եթե մենք հնազանդ ենք Աստծուն: Արդյո՞ք մենք չպիտի լինեինք գլուխը: Ինչպե՞ս է պատահել, որ մենք մեզ պոչի պես ենք զգում այս աստիճան ուժգին:

*35 ՏԷՐԸ **ծնկներդ** ու **սրունքներդ, ոտքերիդ ծայրից մինչեւ գլուխդ անբուժելի խոցերով կը** վարակի, եւ դու չես կարողանայ բուժուել:*

Քո ընթացքը խիստ կտուժի: Սկզբում դա միայն քո ոտքերը կլինեն, սակայն որքան ավելի ախտահարվի քո հոգևոր ընթացքն, այնքան ավելի սա կտարածվի, մինչև նույնիսկ գլուխդ գրավի: Հետո դու կծածկվես ցավոտ թարախապալարներով ու վերքերով, որոնք չեն լավանա: Հոգեպես, քրիստոնյաների մեծամասնությունը, որոնց ես հանդիպում եմ, թվում է, թե ծածկված են հոգևոր թարախապալարներով, և կարծես թե ոչ ոք դա չի նկատում և ոչ ոքի դա չի հուզում:

*36 ՏԷՐԸ **քեզ** եւ քո ժողովրդի վրայ նշանակուած իշխաններին **կը տանի կը յանձնի** այնպիսի մի ազգի ձեռքը, որին ո՛չ դու, ո՛չ քո հայրերն են ճանաչել, եւ այնտեղ **կը** պաշտես **օտար** ՝ փայտէ ու քարէ **աստուածներ:** 37 Զուարճաբանութեան, առակի եւ ծաղրուծանակի նիւթ **կը** դառնաս բոլոր այն ազգերի մէջ, որոնց **կը** յանձնի քեզ ՏԷՐԸ:*

Որքա՞ն ազգերի միջից ենք մենք դուրս քշվել: Արդյո՞ք մենք հիմա գերի չենք մի ազգում, որին այլևս չենք ճանաչում: Արդյո՞ք Ամերիկան չի խոնարհվում աստվածների առաջ, որոնց մեր հայրերն ու պապերը չէի՛ն էլ ճանաչում: Արդյո՞ք մենք չենք պաշտում մեր համակարգերը, շենքերն ու մայր տաճարները՝ փայտից ու քարից կառուցված: Արդյո՞ք մենք սարսափի, արհամարհանքի և ծաղրի առարկա չենք: Գուցե ոչ ամբողջովին, բայց, վստահաբար, շատ ավելի քան կայինք, և օր օրի սա ավելի է վատանում: Եվ արդյո՞ք մենք իսկապես պիտի թագավոր նշանակեինք մեզ վրա: Արդյո՞ք Քրիստոսը չէ՞ թագավորը:

*38 **Շատ սերմ կը ցանես** արտում, բայց **քիչ բերք կը հաւաքես**, որովհետեւ **մորեխը պիտի ուտի այն:** 39Այգիներ **կը** տնկես ու **կը** մշակես, բայց գինի **չես խմի,** ուրախութիւն չես ունենայ դրանից, որովհետեւ **որդը կերած կը լինի այգիդ:** 40Քո բոլոր սահմաններին ձիթենիներ **կը***

*լինեն, բայց իւղով **չես օծուի**, որովհետեւ քո ձիթենիներն իրենց բերքը **թափած կը** լինեն: 41 **Տղաներ** ու **աղջիկներ կը** ծնես, բայց նրանք **քոնը չեն լինի**, որովհետեւ **գերութեան մատնուած կը լինեն**: 42 Քո բոլոր տնկած ծառերն ու հողի բերքը թրթուրը կո՛ւտի:*

Մինչև 2000 թվականը մենք տասնյակ Միլիարդավոր դոլլարներ ենք ծախսել՝ ամբողջ աշխարհին ավետարանելու համար և նույնիսկ չենք էլ հասցրել բնակչության աճի հետ: Միջին կարգի մկրտությունը Միացյալ Նահանգներում արժե 1,550,000 դոլլար: Մենք կառուցում, տնկում և աճեցնում ենք, իսկ դևերը դրանք գրավում են: Մենք օր-օրի ավելի ու ավելի ենք կորցնում մեր երկիրն ու հաստատությունները: Արդյո՞ք սա կարող է հաղթանակ լինել:

*43 Քեզ մօտ բնակուող եկուորը **քեզանից աւելի կը բարձրանայ**, իսկ **դու գնալով կի՛ջնես**: 44 **Նա քեզ փող փոխ կը տայ**, իսկ **դու չես կարողանայ նրան փոխ տալ**: Նա **գլուխ կը լինի**, իսկ **դու՝ պոչ:***

Ամեն մի օտար կրոն, ամեն Արևելյան գուրու, Նոր Դարի ամեն տարօրինակություն, ամեն այլընտրաքային ապրելաոճ հիմա ընդունվում է՝ հիմնական հոսք ստանում: Ամերիկան ամեն օր ավելի ու ավելի արագ վերածվում է Իսլամի և Ուիկայի և հազարավոր այլ ստերի:

*45 Քեզ վրայ **կի՛ջնեն այս** անէծքները, **կը հալածեն** քեզ, մինչեւ որ **կոտորեն, ոչնչացնեն** քեզ, քանի որ **չլսեցիր քո ՏԷՐ ԱՍՏՈՒԾՈՒ ասածը**՝ չպահեցիր նրա այն **պատուիրաններն** ու **օրէնքները**, որ նա պատուիրեց քեզ: 46 **Քեզ ու քո սերնդի վրայ յաւիտեան նշաններ ու զարմանահրաշ գործեր կը լինեն 47 ի դիմաց այն բանի, որ քո ՏԷՐ ԱՍՏՈՒԾՈՒՆ ուրախութեամբ ու անկեղծ սրտով չպաշտեցիր, հակառակ ամէն ինչի շատութեան: 48Դրա համար էլ ամէն տեսակ սովի, ծարաւի, մերկութեան ու աղքատութեան մէջ կը ծառայես քո թշնամիներին, որ ՏԷՐԸ կո՛ւղարկի քո դէմ: Նա երկաթէ լուծ կը դնի քո վզին, մինչեւ որ ոչնչացնի քեզ:*

Խնդրու՛մ եմ, հասկացի՛ր, սա մահացու է: Եթե միայն դու չանես միակ բանը, որը կդադարեցնի սա, ապա այս ընթացքի երաշխավորված արդյունքը բացարձակ կործանումն է: Չկա ՈՒՐԻՇ ՈՉ ՄԻ ելք: Ապաշխարումը / զղջումը սա վերանորոգելու միակ ձևն է:

*49 Ինչպէս արծիւն է խոյանում, այնպէս էլ հեռու վայրերից՝ երկրի չորս ծագերից ԱՍՏՈՒԱԾ **քո դէմ կը** հանի մի ազգ, որի լեզուն չես հասկանայ: 50Այդ ազգը կը լինի դէմքով լպիրշ, ծերերին չի խնայի, մանուկներին չի խղճայ: 51Նա **կո՛ւտի** քո հօտերից ծնուած անասուններին եւ քո երկրի բերքը: Նա **կը խլի քո ցորենը, գինին, իւղը, կը** վերցնի քո արջառների նախիրներն ու ոչխարների հօտերը, **մինչեւ որ կորստեան մատնի քեզ**: 52Քեզ կը ճնշի քո բոլոր քաղաքներում, **մինչեւ որ տապալուեն** քո **բարձր պարիսպներն** ու ամրութիւնները, որոնց վրայ յոյս ես դրել քո ամբողջ երկրում: Քեզ **կը** ճնշի քո **բոլոր** այն **քաղաքներում**, որ քո ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾԸ տուել է քեզ:*

Ես կարծում եմ, որ այս տողերի մեկնաբանություններից ու գործածություններից մեկն այն է, որ դևերը կգրավեն մեզ և կկուտակվեն մեզ վրա: Եվ նրանք արդեն սկսել են դա անել: Եկեղեցիները խճողված են դրանցով: Նրանք խժռում են ամեն ինչ, և Աստծո երեք կողմերից և ո՛չ մեկը չեն թողնում՝ հացը, գինին ու յուղը (ձեթը): Նրանք պաշարել են ամեն քաղաք: Ամերիկայում չկար ոչ մի քաղաք-եկեղեցի՝ ոչ մի վայր, ուր Քրիստոսի Մարմինը միաբանված և Նրա գլխավորության

տակ լիներ: Եկեղեցու բարձր ամրապնդված պատերը, որոնց ներսում մենք հույս ունեինք պաշտպանվել, բոլորն էլ փլվում են: Մենք պաշարված ենք բոլոր կողմերից՝ մշակույթով, լրատվամիջոցներով, կախարդությամբ և խավարի բոլոր այլ ուժերով, որ շարք են կանգնել մեր դիմաց:

*53 Քո թշնամու քեզ պատճառած **տառապանքի** ու **նեղութեան** ժամանակ **կ՛ուտես քո որովայնի ծնունդները**՝ Տիրոջ քեզ տուած քո **տղաների** ու **աղջիկների միսը**: 54Ձեր մէջ գտնուող ամենափափկակեաց եւ քնքուշ տղամարդը չար աչքով **պիտի** նայի իր եղբօրը, իր ծոցում պառկող կնոջն ու ողջ թողած իր որդիներին, 55որպէսզի նրանցից ոչ մէկին **չտայ** իր կերած որդիների մսից: Այսպէս պիտի վարուի նա, որ քո **անձկութեան** եւ **նեղութեան մէջ**, որոնցով **պիտի** նեղեն քեզ քո թշնամիները քո բոլոր քաղաքներում, նրան ուտելու ոչինչ պիտի չմնայ: 56Ձեր մէջ գտնուող ամենափափկակեաց եւ քնքուշ կինը, որը քնքուշ ու փափկակեաց լինելու պատճառով փորձ իսկ չի արել երկրի վրայ ոտքով քայլելու, չար աչքով **պիտի** նայի իր ծոցում գտնուող ամուսնուն, իր տղային ու աղջկան, 57պիտի խորովի եւ ուտի իր **միջից** ընկած **ընկերքն** ու իր իսկ **ծնած զաւակին**: Զրկուած լինելու պատճառով նա բոլորից **կը թաքցնի դա** իր անձկութեան եւ նեղութեան մէջ, որովհետեւ թշնամին քո բոլոր քաղաքներում քեզ տառապանք **է պատճառելու**:*

Արդյո՞ք մենք ագահաբար չենք խժռում մեր երեխաներին: Արդյո՞ք մենք չենք մեծացնում հոգևոր երեխաներ՝ կցելով նրանց «եկեղեցու» կամավոր աշխատանքների, մինչև որ նրանք, օգտագործվելով, սպառվեն, և հետո էլ մենք «դուրս թքենք» նրանց: Արդյո՞ք մենք ստիպողաբար չենք կթում նրանց՝ նրանցից տասանորդ գանձելու համար, մինչև որ նրանք սնանկանան: Դու երբևէ՞ տեսել ես, թե ինչպե՞ս է մի քարոզինչը մյուսին պատառոտում ոչխարներին գողանալու պատճառով: Ես տեսել եմ: Ինչու՞: Որովհետև նրանց ՊԵՏՔ ԵՆ այդ ոչխարներն՝ այս ամբողջը գործի մեջ պահելու համար: Շատ դժվար է գնալ, գտնել ուրիշ մեկին: Նույնիսկ մարդիկ, ովքեր ասում են, թե իրենք Աստծո մարդիկ են, ավելի շուտ ագահաբար կուտեն իրար և կբաժանեն եկեղեցիներն ու կթշնամանան, կկռվեն, կխաբեն, քան կտան իրենց «որովայնի զավակին», որին նրանք մտադրվել են ուտել պաշարման ժամանակ: Եթե մենք մեծապես աճեինք, և ոչինչ չկարողանար մեր դեմ ելնել, ու մարդիկ զանգվածաբար չշեղվեին, և նրանց կյանքը չոչնչացվեր դիվական ուժերի կողմից, ապա մենք այսքան նախանձաբար չէինք հսկի ու կառավարի ամեն մի փոքրիկ ոչխարին: Չե՞ս կարող տեսնել: Խնդրու՛մ եմ, տե՛ս:

*58 Եթէ **յանձն չառնէք կատարել** այս գրքում գրուած օրէնքների **բոլոր** խօսքերը՝ **չվախենաք** ձեր ՏԷՐ ԱՍՏԾՈՒ պատուական ու սքանչելի անունից, 59 ապա Տէրը **նոր նշաններով**՝ մեծ ու **զարմանալի հարուածներով, խոր** ու **խիստ ցաւերով կը** պատուհասի քեզ ու **քո սերնդին**: 60 Նա քեզ **կը** հիւանդացնի եգիպտացիների բոլոր վատ հիւանդութիւններով, որոնցից սոսկում էիր, եւ որոնք բուն կը դնեն քո մէջ: 61 Օրէնքների այս գրքում գրուած **բոլոր հիւանդութիւններն** ու **արհաւիրքները** ՏԷՐԸ **կը** թափի քո գլխին, մինչեւ որ ոչնչացնի քեզ: 62 Թէեւ երկնքի աստղերի չափ շատ էիք, բայց **սակաւաթիւ կը** մնաք, որովհետեւ **չլսեցիք ձեր ՏԷՐ ԱՍՏԾՈՒ ասածը: 63 Տէրն ինչպէս որ ուրախանում էր** ձեր մէջ **ձեզ բարութիւն անելով** ու **ձեզ բազմացնելով**, ՏԷՐԸ նոյն ձեւով **կ՛ուրախանայ** ձեր մէջ **ձեզ կոտորելով.** եւ դուք **կը վերանաք** այն երկրից, ուր մտնելու էք այն ժառանգելու համար:*

Նորից, Տերը կրկնում է ամբողջը: Մենք պետք է ԶԳՈՒՇՈՐԵՆ ՀԵՏԵՎԵՆՔ ՆՐԱ ԲՈԼՈՐ խոսքերին և կարգադրություններին: Այո՛, մենք Նոր Կատակարանի հավատացյալներ ենք: Դա չի նշանակում չհետևել Տասը Պատվիրաններին, դա նշանակում է, որ մենք մեր մեջ ունենք Սուրբ Հոգին՝ մեզ հետ խոսելու, մեզ ուղղորդելու և Նրա խոսքերը մեր սրտում գրելու համար: Բայց եթե մենք խուսափենք Նրա ձայնից, ապա մենք մատնվում ենք մեր սեփական հասկացողությանը և Կարմիր Վիշապի կեր ենք դառնում:

Կարո՞ղ է արդյոք Նա էլ ավելի պարզ լինել: Կարո՞ղ է արդյոք էլ ավելի որոշակի լինել: Սա ԿՊԱՏԱՀԻ քեզ և Աստված Ինքը ԿԱՆԻ սա: Եվ Աստված արդեն արել է սա մեզ հետ: Մենք դժբախտություններ, աղետներ և լուրջ ու երկարատև հիվանդություններ ունենք՝ ֆիզիկապես և հոգեպես: Մենք չենք տարբերվում Եգիպտոսից, որից մեզ ասվել էր հեռանալ: Նա, նույնիսկ, նոր հիվանդություններ ու զրկանքներ է ստեղծում, որոնք Աստվածաշնչում նշված չեն: Նա ասում է, որ կստեղծի տարբեր տեսակ նոր տանջանքներ, եթե դուք չինազանդվեք: Ինչպես օրինակ՝ մարդու մարմինն ուտող վիրուսներն ու ՁԻԱՀԸ/ՄԻԱՎԸ, ջրծաղկի նոր տեսակներն ու նոր տեսակի դիվական կեղեքումները՝ ինչպիսիք են անորեքսիան կամ տրանս-սեռականությունը և ով գիտե, թե է՞լ ինչ: Եթե դու Նրան իսկապես լավ ես լսում, հարցրու՛ Նրան: Եթե մենք չզղջանք՝ վստահաբար թվով շատ քչերը կմնան այն ժամանակ, երբ Նա մեր վերջը տա: Եթե նա չկրճատի օրերը՝ ոչ ոք չի մնա:

Եվ ճիշտ այնպես, ինչպես նրան հաճելի էր Ամերիկան և եկեղեցին բարգավաճեցնել, նրան հաճելի կլինի փշրել այն: Բայց Նա իհարկե կնախընտրեր, որ մենք զղջայինք/ապաշխարեինք և սկսեինք հնազանդվել: Նա ԿՇՐՋՎԻ, եթե ՄԵՆՔ շրջվենք:

> *64 Քո ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾԸ քեզ **կը** ցրի **բոլոր** ազգերի մէջ՝ երկրի մի ծայրից մինչեւ միւս ծայրը, եւ դու այնտեղ **կը** պաշտես քեզ ու քո հայրերին անծանօթ փայտէ ու քարէ օտար աստուածներ: 65 Այդ ազգերի մէջ էլ **հանգստութիւն չի տայ քեզ**, եւ **քո ոտքերը կանգնելու տեղ չեն ունենայ:** Այնտեղ նա քեզ **կը տայ տխուր սիրտ, արտասուաթոր աչքեր** ու **հիւծուած մարմին**: 66 Քո աչքերի առաջ քո կեանքը մազից կախուած **կը** լինի, գիշեր ու ցերեկ **կը զարհուրես** ու վստահ **չես** լինի քո կեանքի համար: 67 **Քո սրտի ապրած վախի** ու **քո աչքերի տեսած դէպքերի պատճառով** առաւօտները **կ՚**ասես. «Ե՞րբ է երեկոյ լինելու», իսկ գիշերները **կ՚**ասես. «Ե՞րբ է առաւօտ լինելու»: 68 Եւ ՏԷՐԸ այդտեղից նաւերով, հազարաւոր զօրքերով քեզ կը վերադարձնի Եգիպտոս այն նոյն ճանապարհով, որն այլեւս չէիք տեսնելու: Այնտեղ ձեր թշնամիներին իբրեւ ստրուկ ու աղախին **կը** վաճառուէք, **բայց ոչ ոք ձեզ չի գնի**»:*

Արդյո՞ք մենք մշտապես չենք փնտրում որևիցե մի նոր ծրագիր կամ նոր մի ուսումնական նախագիծ, որն այս ամենը կշտկի: Արդյո՞ք մեր աչքերը կարոտից հոգնած չեն, և մենք փափագով չենք սպասում ինչ-որ բանի, որը հոգով ու ճշմարտությամբ կհասնի մարդկանց: Ինչպե՞ս կարող ենք մենք այսքան գոլ ու քնած լինել, և կարծես՝ ոչինչ ու ոչ ոք այն մեզնից չի թոթափում: Այն պատճառով, որ դա Աստծուց եկած անեծք է:

Ամերիկայի «եկեղեցում» տեղի ունեցող միակ աճը՝ մեգա-եկեղեցիներն են: Ու դա նոր աճ չէ, դա խոշոր մոնոլիտների կողմից սպանվող՝ փոքր եկեղեցիների փոխդրված աճն է, և այդ մոնոլիտները զբաղվում են մարդկանց «պահեստավորմամբ», բայց արի ու տես, որ նրանք լավ

երաժշտություն ու երեխաների խնամքի լավ կենտրոններ ունեն: Մարդիկ բոլորն ավելի լավ մարգագետիններ են փնտրում: Երանի՜, երեկո լիներ: Երանի՜, առավոտ լիներ: Սակայն ոչինչ չի գոհացնում: Ինչու՞:

Այն պատճառով, որ մենք Աստծո անեծքի տակ ենք:

Եթե դա սատանայից լիներ, մենք կարող էինք դա Քրիստոսի Արյունով ծածկել և կապել ու դեն նետել: Սակայն խավարի ուժերի դեմ աղոթքի ոչ մի քանակություն «եկեղեցու» դրությունը չի փոխել: Այն պատճառով, որ դրանք օրինական հիմքեր ունեն: Այն պատճառով, որ մենք ջանասիրաբար ու ուշադիր չենք հետևում Աստծուն, և Նա մեզ վրա դրել է այս ամենը, մինչև որ մենք ամբողջովին կլանվենք ու կործանվենք կամ էլ զղջանք - որն էլ որ առաջինը կատարվի:

Վերջում, եթե մենք չշրջվենք, մենք մեզ կառաջարկենք «Եգիպտոսին»՝ Աշխարհի Մեկ Կառավարությանն ու Աշխարհի Մեկ Եկեղեցուն, սակայն նրանք նույնիսկ չեն ցանկանա վերցնել մեզ: Նրանք մեզ՝ որպես ստրուկ, կվերցնեն և փոխարենը ոչինչ չեն տա:

Եվ դա Տիրոջ Խոսքն է:

ՀԱՎԵԼՎԱԾ Գ
ԱՊԱՇԽՐԻՐ

Թագավորություններ Գ 8:47 եւ եթէ գերի տարուած երկրում **զղջան** իրենց հոգում, դառնան դէպի քեզ, աղաչեն քեզ գերութան երկրում եւ ասեն՝ «Մեղանչեցինք, անօրէնութիւն ու անիրաւութիւն գործեցինք»,

Հոբ 42:6 Այդ պատճառով նուաստ համարեցի ինձ ու հալուեցի ես: Ինքս ինձ հող ու մոխիր եմ դիտում»:

Սաղմոս 134:14 ՏԷՐԸ **դատում է իր ժողովրդին,եւ մխիթարում իր ծառաներով:**

Երեմիա 18:8 եւ եթէ այն ազգը դարձի գայ իր չարութիւններից, որոնց մասին խօսեցի, - ես եւս կը զղջամ այն չարիքների համար, որ մտածեցի անել նրանց նկատմամբ:

Երեմիա 18:10 բայց նրանք չարութիւն անեն իմ առաջ՝ ականջ չդնելով իմ ձայնին, - ես եւս կը զղջամ այն բարիքների համար, որ ասացի, թէ կ՝անեմ նրանց:

Երեմիա 26:4 Թերեւս լսեն, ու ամէն մէկը յետ կանգնի իր չար ճանապարհից, ես էլ **յետ կանգնեմ** այն չարութիւններից, որ մտածում եմ անել նրանց՝ ի պատասխան իրենց չար ընթացքի»:

Երեմիա 26:14 ուրեմն ձեր ճանապարհներին ու ձեր գործերին ուղի՛ղ ընթացք տուէք եւ ակա՛նջ դրէք ձեր ՏԷՐ ԱՍՏՈՒԾՈՒ ձայնին, որպէսզի ՏԷՐԸ **յետ կանգնի** այն չարութիւններից, որոնց մասին յայտնեց ձեզ:

Երեմիա 42:10 «Եթէ մնաք այս երկրում, ձեզ կը շէնացնեմ եւ ոչ թէ կը քանդեմ, ձեզ կը տնկեմ եւ ոչ թէ արմատախիլ կ՝անեմ, որովհետեւ **մեղմացել եմ** այն չարութիւնից, որ ասացի, թէ ձեր նկատմամբ պիտի անեմ:

Եզեկիել 14:6 Ուստի ասա՛ Իսրայէլի այդ տանը. «Այսպէս է ասում ՏԷՐԸ, ԱՄԵՆԱԿԱԼՆ ԱՍՏՈՒԱԾ. դարձէ՛ք, **յե՛տ դարձէք** ձեր ճանապարհից, ձեր բոլոր ամբարշտութիւններից, դարձրէ՛ք ձեր երեսները դէպի ինձ:

Եզեկիել 18:30 Ուստի Իսրայէլի այդ տանը, իւրաքանչիւրին ըստ իր բռնած ճանապարհի եմ դատաստան անելու, - ասում է Ամենակալ Տէրը: - Դարձէ՛ք, յե՛տ կանգնեցէք ձեր բոլոր ամբարշտութիւններից, եւ անիրաւութեան համար տանջանքների չէք մատնուի:

Եզեկիել 24:14 Ես՝ ՏԷՐՍ խօսեցի: Ու գալու է օրը, անելու եմ այդ ու չեմ խորշելու, ոչ էլ ողորմելու եմ կամ **զղջալու**, այլ ըստ քո բռնած ճանապարհի ու քո վարմունքի էլ պատժելու եմ քեզ», - ասում է ԱՄԵՆԱԿԱԼ ՏԷՐԸ: - «Ուստի քեզ պատժելու եմ ըստ քո թափած արեան, ըստ քո մտածումների եմ պատժելու քեզ, ո՛վ պիղծդ ու անուանարկեալդ, որ սաստկացրել ես ինձ դառնացնելը»:

Յովել 2:14 Ո՞վ գիտի, թերեւս դառնայ ու **խղճայ**, եւ իրենից յետոյ լինի օրհնութիւն, զոհ եւ զենում մեր Տէր Աստծուն։։
Հովնան 3:9 «Ով գիտէ, թերեւս ԱՍՏՈՒԱԾ միտքը փոխի եւ **յետ կանգնի** իր խիստ բարկութիւնից, եւ կորստի չմատնուենք»։

Մաթ. 3:2 «Ապաշխարեցէ՛ք, որովհետեւ երկնքի արքայութիւնը մօտեցել է»։

Մաթ 4:17 Դրանից յետոյ Յիսուս սկսեց քարոզել եւ ասել. «Ապաշխարեցէ՛ք, որովհետեւ երկնքի արքայութիւնը մօտեցել է»։

Մարկոս 1:15 «Ժամանակը հասել է, եւ մօտեցել է Աստծու արքայութիւնը. ապաշխարեցէ՛ք եւ հաւատացէ՛ք Աւետարանին»։

Մարկ 6:13 Եւ նրանք ելան ու քարոզում էին, որպէսզի մարդիկ **ապաշխարեն**։

Ղուկաս 13:3 Ո՛չ, ասում եմ ձեզ, սակայն, եթէ **չապաշխարէք,** ամէնքդ էլ նոյնպէս պիտի կորչէք։

Ղուկաս 13:5 Ո՛չ, ասում եմ ձեզ, սակայն եթէ **չապաշխարէք,** ամէնքդ էլ նոյնպէս պիտի կորչէք»։

Ղուկաս 17:3-4 Զգո՛յշ եղէք ձեր անձերի համար»։ «Եթէ քո եղբայրը մեղանչի, սաստի՛ր նրան. եւ եթէ **զղջայ,** ների՛ր նրան։

Ղուկաս 17:5 Եւ եթէ եօթն անգամ մեղանչի քո դէմ եւ եօթն անգամ դառնայ քեզ եւ ասի՝ **զղջում եմ**, ների՛ր նրան»։

Գործք 2:38 Պետրոսը նրանց ասաց. «**Ապաշխարեցէ՛ք,** եւ ձեզանից իւրաքանչիւրը թող մկրտուի ՏԷՐ Յիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողութեան համար, եւ պիտի ընդունէք Սուրբ Հոգու պարգեւը.

Գործք 3-19 Արդ, **ապաշխարեցէ՛ք** եւ դարձի՛ եկէք ձեր մեղքերը ջնջելու համար,

Գործք 8:22 Դու քո այդ չարութեան համար **ապաշխարի՛ր** եւ աղաչի՛ր ՏԻՐՈՋԸ, թերեւս քո սրտի նենգ խորհուրդները քեզ ներուեն.

Գործք 17:30 Բայց Աստուած, անգիտութեան ժամանակներն անտես առնելով, այժմ այն է պատուիրում մարդկանց, որ ամէն ոք ապաշխարի.

Գործք 26:20 այլ նախ բոլոր նրանց, որ Դամասկոսում էին ու Երուսաղէմում եւ Հրէաստանի բոլոր գաւառներում, ապա նաեւ հեթանոսներին քարոզեցի, որ զղջան եւ դառնան կենդանի Աստծուն ու ապաշխարութեան արժանի գործեր անեն։

Հայտն 2:5 Յիշի՛ր այժմ որտեղի՛ց որ ընկար, **ապաշխարի՛ր** եւ քո նախկին գործերն արա՛, ապա թէ ոչ ես իսկոյն կը գամ եւ կը շարժեմ քո աշտանակներն իրենց տեղերից, եթէ **չապաշխարես**: ***(Եփեսոսի եկեղեցի)***
Հայտն 2:16 Արդ, **ապաշխարի՛ր**, ապա թէ ոչ իսկոյն կը գամ եւ կը մարտնչեմ նրանց դէմ իմ բերանի սրով: ***(Պերգամոնի եկեղեցի)***

Հայտն 2:21 Եւ նրանց ժամանակ տուի **ապաշխարելու** իրենց պոռնկութեան համար, բայց չապաշխարեցին:

Հայտն 2:22 Ահա՛ւասիկ, ես հնո՛ցն եմ գցում նրան, իսկ նրա գործակիցներին, որոնց հետ նա շնացաւ՝ մեծամեծ նեղութիւնների մէջ, եթէ **չապաշխարեն** իրենց գործերի համար:
(Թիւատիրի եկեղեցի)

Հայտն 3:3 Արդ, յիշի՛ր, թէ ինչպէ՛ս լսեցիր խօսքը. եւ պահի՛ր այն ու **ապաշխարի՛ր**. իսկ եթէ չարթնանաս, կը գամ ինչպէս գող, եւ իմ գալուստը քեզ մօտ ոչ ոք չի իմանայ: ***(Սարդիկէի եկեղեցի)***

Հայտն 3:19 Ում սիրում եմ ես, նրան յանդիմանում եմ եւ խրատում: Նախանձախնդի՛ր եղիր ուրեմն եւ **ապաշխարի՛ր**: ***(Լաւոդիկէի եկեղեցի)***

ԱՆԷԾՔ / ՆԶՈՎՔ

Gen 12:3 Պիտի օրհնեմ քեզ օրհնողներին, իսկ քեզ անիծողներին պիտի **անիծեմ**: Քեզնով պիտի օրհնուեն աշխարհի բոլոր ժողովուրդները»:

Երկրորդ Օրէնք 11:26 «Ես այսօր, ահա, ձեր առջեւ դնում եմ օրհնութիւններ ու անէծքներ:
Երկրորդ Օրէնք 11:27 Օրհնութիւն կը ստանաք, եթէ լսէք ձեր ՏԷՐ ԱՍՏՈՒԾՈՒ պատուիրանները, որոնք ես այսօր պատգամում եմ ձեզ,
Երկրորդ Օրէնք 11:28 եւ անէծքներ՝ եթէ չլսէք ձեր ՏԷՐ ԱՍՏՈՒԾՈՒ պատուիրանները, որոնք ես այսօր պատգամում եմ ձեզ, շեղուէք այն ճանապարհից, որ ես ցոյց տուեցի ձեզ, գնաք պաշտէք ձեզ անծանօթ օտար աստուածներ:.

Երկրորդ Օրէնք 29:19 Եթէ լինի մէկը, որ, լսելով այս **նզովքի** պատգամները, մտածի ու ասի՝ «Թողութիւն թող լինի ինձ, հակառակ որ ես իմ մոլոր ճամփով եմ ընթանում», այդ դէպքում մեղաւորն անմեղին կորստեան կը մատնի:

Երկրորդ Օրէնք 30:1 «Եթէ քեզ հասնեն իմ հաղորդած այս բոլոր պատգամները՝ օրհնութիւնները կամ **անէծքները**, եւ հոգուդ մէջ յիշես դրանք այն բոլոր ազգերի մէջ, ուր ՏԷՐԸ քեզ ցրելու է,

4 Թագաւորաց 22:19 ՝՝Քո լսած խօսքերի իմաստը այս է. քանի որ քո սիրտը փափկեց, դու խոնարհ գտնուեցիր ՏԻՐՈՋ առջեւ, երբ լսեցիր, թէ ինչ է ասուել Երուսաղէմի եւ նրա բնակիչների մասին, թէ

լինելու է աւերածութիւն ու անէծք, եւ պատառոտեցիր քո զգեստները, լաց եղար իմ առջեւ, իսկ ես լսեցի այդ, ուստի ՏԷՐՆ ասում է.

Նէեմի 10:29 Եւ նա, ով երբեւէ զանց կ՝առնի քո օրէնքները, այսօր քո առջեւ երդմամբ հաստատում ենք, որ նա նզովքների եւ անէծքների կ՝ենթարկուի, նա, ով չի պահի քո օրէնքները, որ տրուեցին քո ծառայ Մովսէսի միջոցով: Իսկ մենք մեր ամբողջ կամքով կը պահենք եւ կը կատարենք ՏԷՐ ԱՍՏԾՈՒԻ բոլոր պատուիրանները եւ նրա օրէնքներն ու հրամանները:

Սաղմոս 62:4 61-5 5 Նրանք ինձ պատուից զրկելու մասին էին մտածում միայն՝ տոչորուելով նախանձից: Իրենց բերանով օրհնում էին, բայց իրենց սրտով անիծում:

Առակ 24:24 Ամբարշտին արդար ասողը պիտի արժանանայ ժողովուրդների անէծքին եւ ատելի պիտի լինի ազգերից:

Առակv 26:2 Ինչպէս թռչուններն ու ճնճղուկները զուր տեղը չեն թռչում, այնպէս էլ ոչ մէկն իզուր անէծքներ չի տալիս: 3Ինչպէս մտրակը ձիու համար է, խթանը՝ էշի, այնպէս էլ գաւազանն է անմիտների համար:

Առակ 28:27 Աղքատներին բաժին տուողը չի աղքատանայ, բայց ով իր աչքը թեքում է նրանցից, նա շատ բանի կարօտ կը մնայ:

Առակ 30:10 Մի՛ մատնիր ծառային իր ՏԻՐՈՋ ձեռքը, որ երբեք քեզ չանիծի, եւ դու ապականուած չմնաս:

Եսայի 24:6 Նզովքը պիտի ճարակի երկիրը, որովհետեւ նրա բնակիչները մեղք գործեցին: Դրա համար էլ նրա բնակիչները տնանկ պիտի դառնան, եւ սակաւաթիւ մարդիկ են կենդանի մնալու:

Եսայի 43:28 Իշխանները պղծեցին իմ սրբութիւնները, ուստի **Յակոբին կորստեան մատնեցի** եւ Իսրայէլը՝ նախատինքի»:

Եսայի 65:15 Ձեր անունն իմ ընտրեալների նողկանքի համար պիտի թողնէք, եւ ՏԷՐԸ ձեզ պիտի մեռցնի: Իմ ծառաներին նոր անուն պիտի տրուի, որը պիտի օրհնաբանուի երկրի վրայ:

Երեմիա 15:10 Վա՜յ ինձ, վա՜յ ինձ, մա՛յր իմ. իբրեւ ո՞ւմ ծնեցիր ինձ. իբրեւ մի մարդո՞ւ, որին երկրում ամենուրեք դատափետել են, 11քաշքշել դատարան: Ո՛չ ես եմ ինչ-որ բան պարտք, ո՛չ էլ ուրիշն է ինձ որեւէ բան պարտք, բայց ինձ **անիծողներից** իմ ուժն սպառուեց:

Երեմիա 24:9 Դրանց պիտի ցրեմ աշխարհի բոլոր թագաւորութիւնների մէջ՝ նախատինքի, անարգանքի, ատելութեան ու անէծքի արժանացնելով ամենուրեք, ուր էլ որ վտարեմ դրանց:

Երեմիա 25:18 Երուսաղէմին եւ Յուդայի երկրի քաղաքներին, նրա թագաւորներին եւ նրա իշխաններին՝ մատնելու դրանք աւերի ու անապատի, սուլոցի ու անէծքի, ինչպէս որ այս օրերում են,

Երեմիա 26:6 ապա այդ Տունը կը դարձնեմ Սելոմի նման, իսկ այս քաղաքն աշխարհի բոլոր ցեղերի անէծքին կը դատապարտեմ»:
Երեմիա 29:18 Նրանց պիտի հալածեմ սրով, սովով ու մահով, նրանց պիտի մատնեմ աշխարհի բոլոր թագաւորութիւնների ցասումին, նզովքին, ապականութեանը, սուլոցի ու նախատինքի՝ այն բոլոր ազգերի մէջ, ուր պիտի ցրեմ նրանց,

Երեմիա 42:18 Այսպէս է ասում Զօրութիւնների ՏԷՐԸ՝ Իսրայէլի Աստուածը. «Ինչպէս որ իմ զայրոյթն ու բարկութիւնը թափուեց Երուսաղէմի բնակիչների վրայ, նոյնպէս էլ իմ զայրոյթը պիտի թափուի ձեզ վրայ, երբ դուք մտնէք Եգիպտոս: Պիտի լինէք անապատում, վտարանդի, նզովուած ու նախատուած, այլեւս չպիտի տեսնէք այս վայրերը»,

Երեմիա 44:8 ձեր ձեռքի գործերով ինձ դառնութիւն պատճառէք եւ Եգիպտացիների երկրում, ուր դուք գնացել էք բնակուելու, խնկարկէք օտար աստուածներին, որ բնաջնջուէք եւ անէծքի ու նախատինքի առարկայ դառնաք աշխարհի բոլոր ազգերի մէջ,

Երեմիա 44:12 2Պիտի առնեն Յուդայի երկրի մնացորդներին, որոնք դիմեցին ու եկան Եգիպտացիների երկիրը՝ այստեղ բնակուելու համար, Եգիպտոսում եղած բոլոր մնացորդներին պիտի կորստեան մատնեն. պիտի սրի քաշուեն եւ սովից բնաջնջուեն, փոքրից մինչեւ մեծերը սրից պիտի ընկնեն ու սովից մեռնեն, պիտի մատնուեն նզովքի ու կորստեան, անէծքի ու նախատինքի:

Երեմիա 44:22 չար արարքների եւ ձեր արած գարշելի գործերի պատճառով ՏԷՐԸ չկարողացաւ համբերել, եւ ձեր երկիրը, բնակիչներից զրկուած, դարձաւ աւերակ ու անապատ եւ նզովքի առարկայ, ինչպէս այսօր է:

Դանիէլ 10:11 Ամբողջ Իսրայէլը զանց առաւ քո օրէնքները եւ շեղուեց, որ չլսի քո ձայնը, եւ անէծք ու երդում թափուեցին մեզ վրայ, գրուած քո ծառայի՝ Մովսէսի օրէնքում, ՏԷ՛Ր, քանի որ մեղանչեցինք նրա դէմ:
Զաքարիա

Զաքարիա 8:13 Ո՛վ Յուդայի տունդ եւ Իսրայէլի տունդ,դուք, որ անէծք էիք ազգերի մէջ,պիտի այնպէս լինի,որ ես նոյնպէս ձեզ պիտի փրկեմ,եւ դուք օրհնութիւն պիտի դառնաք.քաջալերուեցէ՛ք, եւ թող զօրանան ձեր ձեռքերը»:

Մաղաքիա 2:2 Եթէ չլսէք եւ չմտածէք փառք տալ իմ անուան, - ասում է ամենակալ ՏԷՐԸ, - ձեզ վրայ անէծք կ՚ուղարկեմ, կ՚անիծեմ ձեր օրհնութիւնները, կը նզովեմ դրանք, քամուն կը տամ ձեր օրհնութիւնները, եւ չեն մնայ ձեր մէջ, քանի որ դրանք չդրեցիք ձեր սրտերում:

Մաղաքիա 3:9 Չէ՞ որ տասանորդներն ու պտուղները ձեզ մօտ են, եւ դուք չարութեամբ նախանձում եւ խաբում էք ինձ:.

Մաղաքիա 4:5 որպէսզի նա հօր սիրտը դարձնի դէպի որդին, մարդու սիրտը՝ դէպի իր ընկերը. չլինի այնպէս, որ գալով հարուածեմ երկիրը միանգամից:

Գաղ 3:10 Նրանք, որ օրէնքի գործադրողներն են, անէծքի տակ են, քանզի գրուած է, թէ՝ «Անիծեալ է ամէն մարդ, որ օրէնքի գրքում եղած բոլոր գրուածները չի պահում եւ չի գործադրում»:
Գաղ 3:13 Քրիստոս մեզ վերստին գնեց օրէնքի անէծքից՝ անէծք դառնալով մեզ համար (որովհետեւ գրուած է, թէ՝ «Անիծեալ է այն մարդը, որը կախուած է փայտից»),

(Այո՛, բայց ... եթե դու ստեղծես քո սեփական օրենքն ու հետ մտնես դրա տակ, դու այն նորից ոգեկոչում ես քեզ վրա և ժխտում ես Քրիստոսի գործը:)

Հայտն 22:3 Եւ այնտեղ այլեւս **նզովք** չի լինելու. Աստծու եւ նրա Գառան գահը գտնւում էր նրա մէջ. եւ նրա ծառաները պաշտում էին նրան. 4նրանք տեսնում էին նրա դէմքը, եւ նրա անունը գրուած էր իրենց ճակատների վրայ:

ՆԻՐՀ , ՔՈՒՆ, ՀԻՄԱՐՈՒԹՅԱՆ ՈԳԻ

Եսայի 56:10 Տեսէ՛ք, ամէնքն էլ կուրացել են եւ չգիտեն, թէ ի՛նչ է իմաստութիւնը. ամէնքն էլ կարծես համրացած շներ են, որ չեն կարողանում հաչել, իրենց անկողիններում երազներով են տարուած, սիրում **են նիրհել**:

Rom 11:8 ինչպէս գրուած է՝ Աստուած նրանց **յիմարութեան հոգի** տուեց, աչքեր, որոնցով չպիտի տեսնեն, եւ ականջներ, որոնցով չպիտի լսեն, - մինչեւ ներկայ ժամանակները:

Gen 2:21 ՏԷՐ Աստուած **թմրութիւն** բերեց Ադամի վրայ, եւ սա քնեց: Աստուած հանեց նրա կողոսկրերից մէկը եւ այդ տեղը մաշկով ծածկեց:

Gen 15:12 Արեւի մայր մտնելու ժամանակ Աբրամը **թմբիրի** մէջ ընկաւ, սարսափելի վախ համակեց նրա սիրտը:

1Sa 26:12 Դաւիթն առաւ նրա սնարի մօտ դրուած գեղարդն ու ջրի կուժը, եւ գնացին: Ոչ ոք ոչինչ չտեսաւ կամ չիմացաւ կամ չզարթնեց, քանզի **թմրութիւնը** ՏԻՐՈՋ կողմից իջած լինելով նրանց վրայ՝ բոլորը **քնի** մէջ էին:

Սաղմոս 76:6 7 Յակոբի Աստուած, քո սաստից **քուն մտան** նաեւ ձի հեծնողները:

Սաղմոս 127:2 3Իզուր էք վաղ արթնանում. արդ, վե՛ր կացէք՝ քանի դեռ չէք ննջել:Դուք տառապանքի հացն էք ուտում, մինչ Նա **քուն է տալիս** իր սիրելիներին:

Առակ 3:24 Եթէ նստես, աներկիւղ կը լինես, եթէ **քնես**, **քունդ** անուշ կը լինի,

Առակ 4:16 Խուսափի՛ր նրանցից եւ խորշի՛ր այդ վայրից, քանզի նրանք մինչեւ չարիք չգործեն, չեն քնում: **Քունը** փախչում է նրանց աչքից եւ չեն **քնում**,

Առակ 19:15 Ծուլութիւնը յատուկ է թուլամորթին, եւ գործ անել չսիրող մարդը քաղցած կը մնայ։

Առակ 20:13 Մի՛ սիրիր չարախօսել, որպէսզի չզրկուես կեանքից.աչքերդ բա՛ց արա եւ կշտացի՛ր հացով։

Եսայի 5:27 Ո՛չ քաղց են զգալու եւ ո՛չ էլ յոգնելու, ո՛չ **նիրհելու** են եւ ո՛չ էլ **ննջելու**, ո՛չ իրենց մէջքի գօտիներն են արձակելու, ո՛չ էլ իրենց կօշիկների կապերն են քանդուելու։

Եսայի 29:10 քանզի ՏԷՐԸ ձեզ **յիմարութեան** ոգի խմեցրեց եւ խցանեց ձեր, ձեր մարգարէների, ձեր իշխանների ու ձեր տեսանողների աչքերը։

Երեմիա 51:40 իրենց տաք խշտիների մէջ՝ նրանց արհաւիրք եմ բերելու, հարբեցնելու եմ նրանց, որ **թմրեն** ու **ննջեն** յաւիտենական քնով եւ չարթնանան, - ասում է ՏԷՐԸ։

Երեմիա 51:58 եւ սաստիկ հարբեցնի նրա զօրավարներին ու նրա իմաստուններին, նրա իշխաններին, նրա զօրագլուխներին ու նրա զօրաւոր մարդկանց. նրանք պիտի ննջեն յաւիտենական քնով եւ չարթնանան», - ասում է արքան, որի անունը Տէր Ամենակալ է։ -

1 ՅՈՎՀ. 11:11 Այս բաներն ասելուց յետոյ նորից ասաց նրանց. «Մեր բարեկամ Ղազարոսը **ննջել է**, սակայն ես գնում եմ, որ նրան արթնացնեմ»։

Rom 13:11 Այս էլ իմացէ՛ք ներկայ ժամանակիս մասին, որովհետեւ հիմա ճիշտ ժամն է, որ մենք **քնից** զարթնենք. քանի որ փրկութիւնն այժմ մեզ աւելի մօտ է, քան երբոր մենք հաւատացինք։

1Կորնթ 11:28 Թող մարդ նախ ինքն իրե՛ն փորձի եւ ապա ուտի այդ հացից ու խմի այդ բաժակից։

1Կորնթ 11:29 որովհետեւ, ով ուտում է եւ խմում անարժանօրէն, իր իսկ դատապարտութիւնն է ուտում եւ խմում, քանի որ չի զատորոշում ՏԻՐՈՋ մարմինը։

1Կորնթ 11:30 Դրա համար իսկ ձեր մէջ բազում հիւանդներ եւ ցաւագարներ կան, եւ շատերն էլ **մեռած են։**

(Եթե ես ճիշտ եմ՝ Կարմիր Վիշապի և բաժանման ու պառակտման առումով, ապա մենք մեր Եղբայրների դեմ ինչ-որ վատ բան ենք պահել և պետք է զղջանք, իսկ եթե մենք չենք զղջում, ապա մենք հաղորդությունն անարժանորեն ենք վերցնում, և մեր միաբանություններում, համայնքներում մարդիկ կհիվանդանան ու կմահանան։ Ու նրանք հիվանդանում ու մահանում են։)

1 Թեսաղ. 5:6 Ուրեմն **չքնենք** մնանք, ինչպէս՝ ուրիշները, այլ արթուն եւ զգաստ լինենք.

ԿՈՒՅՐ

Ելք 4:11 **ՏԷՐՆ ասաց Մովսէսին. «Ո՞վ է մարդուն բերան տուել, կամ ո՞վ է ստեղծել խուլին ու համրին, տեսնողին ու կոյրին: Մի՞թէ ոչ ես՝ Աստուածս:**
Lev 19:14 Համրին մի՛ վիրաւորիր, **կոյրի** ոտքերի առջեւ խոչ ու խութ մի՛ դիր: Երկնչի՛ր քո ՏԷՐ Աստծուց, քանզի ես եմ քո ՏԷՐ Աստուածը:

Երկրորդ Օրէնք 16:19 19աչառութիւն չանեն ու կաշառք չվերցնեն, որովհետեւ կաշառքը **կուրացնում է** իմաստուն մարդկանց աչքերը, խեղաթիւրում արդար մարդկանց խօսքերը:

Երկրորդ Օրէնք 27:18 «Անիծեալ լինի այն մարդը, որը կը մոլորեցնի **կոյրին** ճանապարհի վրայ»: Եւ ամբողջ ժողովուրդը թող ասի. «Այդպէս թող լինի»:

Երկրորդ Օրէնք 28:29 **Օրը ցերեկով կը խարխափես այնպէս, ինչպէս կոյրն է խարխափում խաւարի մէջ, եւ քո ուղիղ ճանապարհը չես գտնի: Այդ ժամանակ յաւիտենապէս զրկուած ու կողոպտուած կը լինես, եւ ոչ ոք օգնութեան չի գայ քեզ:**

Սաղմոս 146:8 **ՏԷՐԸ բացում է կոյրերի աչքերը, ՏԷՐԸ ոտքի է կանգնեցնում գլորուածներին:Սիրում է ՏԷՐՆ արդարներին:**

Եսայի 29:18 **Այն ժամանակ խուլերը պիտի լսեն այդ գրուածքի խօսքերը, եւ խաւարի ու մէգի մէջ գտնուող կոյրերի աչքերը պիտի տեսնեն. (ԳՆԱ՛, ԿԱՐԴԱ՛ ԱՅՍ ԳԼՈՒԽԸ:)**

Եսայի 35:5 **Այն ժամանակ կոյրերի աչքերը պիտի բացուեն, եւ խուլերի ականջները լսեն: (ԳՆԱ՛, ԿԱՐԴԱ՛ ԱՅՍ ԳԼՈՒԽԸ:)**

Եսայի 42:7 **որպէսզի կոյրերի աչքերը բանաս եւ խաւարի մէջ նստած կալանաւորներին հանես բանտից ու զնդանից:**

Եսայի 42:16 **Կոյրերին պիտի առաջնորդեմ մի ճանապարհով, որ նրանք չգիտեն, պիտի քայլել տամ այնպիսի շաւիղներով, որոնք ծանօթ չեն նրանց. խաւարը լոյս պիտի դարձնեմ նրանց համար եւ դժուարանցանելին՝ դիւրին: Այս բաները պիտի անեմ նրանց համար եւ չեմ լքելու նրանց:**

Եսայի 42:18. Խուլե՛ր, լսեցէ՛ք, կոյրե՛ր, նայեցէ՛ք ու տեսէ՛ք.

Եսայի 42:19 ո՞վ է **կոյրը**, եթէ ոչ իմ ծառաները, ովքե՞ր են խուլերը, եթէ ոչ այն մարդիկ, որ տիրում են նրանց: Ո՞վ է **կոյրը**, եթէ ոչ ուծացածը: Կուրացան ԱՍՏԾՈՒ ծառաները:

Եսայի 43:8 Բարձրացրի **կոյր** ժողովրդին. եւ թէպէտ աչքեր ունեն, սակայն **կուրացած** են նրանք, եւ խցանուած են նրանց ականջները:

Եսայի 56:10 Տեսէ՛ք, ամէնքն էլ կուրացել են եւ չգիտեն, թէ ի՛նչ է իմաստութիւնը. ամէնքն էլ կարծես համրացած շներ են, որ չեն կարողանում հաչել, իրենց անկողիններում երազներով են տարուած, սիրում են նիրհել:

Եսայի 59:10 **Կոյրերի** պէս նրանք պատերն են շօշափելու, խարխափելու են աչքերից զրկուածների պէս, կէսօրին գլորուելու են, ինչպէս կէսգիշերին, օրհասական մարդկանց պէս հոգեվարքի տանջանքներ են տանելու

Երեմիա 31:8 Ահա նրանց պիտի բերեմ ես հիւսիսի երկրից, աշխարհի ծագերից պիտի հաւաքեմ նրանց՝ պասեքի տօնին. նրանց մէջ մեծ բազմութեամբ որդիներ պիտի ծնուեն, **կոյրն** ու կաղը, յղին եւ ծննդաբերուածը միահամուռ, իբրեւ մեծ ժողովուրդ, պիտի վերադառնան այստեղ:

ՈՂԲ 4:14 Ճանապարհների գլխին ցնցուեց ու սասանուեց նրանց զօրութիւնը, մեռածների արեամբ պղծուեցին ու թաթախուեցին այնպէս, որ նրանց հագուստները հնարաւոր չէր մաքուր վիճակում նրանց վրայից հանել: (ԳՆԱ՛, ԿԱՐԴԱ՛ ՍԱ ԿՈՆՏԵՔՍՏՈՒՄ)

Սոփոնիա 1:17 «Մարդկանց նեղութեան կը մատնեմ, եւ նրանք կոյրերի պէս կը՝ընթանան, քանի որ մեղանչեցին ՏԻՐՈՋ դէմ եւ նրա անունը դրեցին սնոտիների վրայ, որոնք ոչնչով չկարողացան օգնել նրանց. կը թափուի նրանց արիւնը հողի նման եւ նրանց մարմինը՝ աղբի պէս»:

ԿԱՐԾՐԱՑԱԾ

Կամ դու ինքդ ես դա քեզ արել կամ էլ Աստված է արել դա քեզ: Չկա ՈՉ ՄԻ նշում, որ սատանան կարող է դա անել:)

Ելք 7:13 **Կարծրացաւ** փարաւոնի սիրտը, եւ նա չլսեց նրանց, ինչպէս որ ասել էր ՏԷՐԸ:

Ելք 7:14 ՏԷՐՆ ասաց Մովսէսին. «Փարաւոնի սիրտը **կարծրացել է**. նա որոշել է չարձակել ժողովրդին:

Ելք 7:22 Իրենց կախարդութեամբ նոյնն արեցին նաեւ եգիպտացի մոգերը: **Կարծրացաւ** փարաւոնի սիրտը, եւ, ինչպէս որ ասել էր ՏԷՐԸ, նա չլսեց նրանց:

Ելք 8:15 Երբ փարաւոնը տեսաւ, որ դժուարութիւնը վերացել է, նորից **կարծրացաւ** նրա սիրտը, նա չլսեց նրանց, ինչպէս որ ասել էր ՏԷՐԸ:

Ելք 8:19 Մոգերն ասացին փարաւոնին. «Սրա մէջ Աստծու մատը խառն է»: **Կարծրացաւ** փարաւոնի սիրտը, եւ նա, ինչպէս որ ասել էր ՏԷՐԸ, չլսեց նրանց:

Ելք 8:32 Բայց դրանից յետոյ էլ փարաւոնի սիրտը կարծրացաւ, եւ նա չուզեց արձակել ժողովրդին։

Ելք 9:7 Երբ փարաւոնը տեսաւ, որ իսրայէլացիների ոչ մի անասուն չի ոչնչացել, **կարծրացաւ** նրա սիրտը, եւ նա ժողովրդին չարձակեց։
Ելք 9:12 ՏԷՐԸ **կարծրացրեց** փարաւոնի սիրտը, եւ, ինչպէս որ ասել էր ՏԷՐԸ Մովսէսին, փարաւոնը չլսեց նրանց։

Ելք 9:34 Երբ փարաւոնը տեսաւ, որ անձրեւը, կարկուտն ու ձայները դադարել են, դարձեալ մեղք գործեց. նա **կարծրացրեց** իր ու իր պաշտօնեաների սիրտը։

Ելք 9:35 **Կարծրացաւ** փարաւոնի սիրտը, եւ նա իսրայէլացիներին չարձակեց, ինչպէս որ յայտնել էր ՏԷՐԸ Մովսէսի միջոցով։

Ելք 10:1 Դիմելով Մովսէսին՝ ՏԷՐՆ ասաց. «Մտի՛ր փարաւոնի մօտ, որովհետեւ ես կարծրացրել եմ նրա ու նրա պաշտօնեաների սիրտը, որպէսզի իմ նշանները հերթով թափուեն նրանց գլխին,

Ելք 10:20 ՏԷՐԸ **կարծրացրեց** փարաւոնի սիրտը, եւ նա չարձակեց իսրայէլացիներին։

Ելք 10:27 ՏԷՐԸ **կարծրացրեց** փարաւոնի սիրտը, եւ փարաւոնը չուզեց արձակել նրանց։

Ելք 11:10 Մովսէսն ու Ահարոնը Եգիպտացիների երկրում փարաւոնի առաջ արեցին այս բոլոր նշաններն ու զարմանահրաշ գործերը։ ՏԷՐԸ **կարծրացրեց** փարաւոնի սիրտը, եւ փարաւոնը չուզեց իսրայէլացիներին Եգիպտացիների երկրից արձակել։

Ելք 14:8 ՏԷՐԸ **կարծրացրեց** եգիպտացիների արքայ փարաւոնի սիրտը, եւ սա հետապնդեց իսրայէլացիներին։ Իսրայէլացիները գնում էին՝ ձեռքները բարձր պահած։

Երկրորդ Օրէնք 2:30 Եսեբոնի արքայ Սեհոնը, սակայն, չկամեցաւ, որ մենք անցնենք նրա երկրով, որովհետեւ մեր ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾԸ**խստացրել** էր նրա ոգին ու կարծրացրել նրա սիրտը, որպէսզի նրան այդ օրը յանձնի քո ձեռքը։

Թագ. Ա 6:6 Ինչո՞ւ էք ձեր սրտերը կարծրացնում այնպէս, ինչպէս Եգիպտոսն ու փարաւոնն էին **կարծրացրե**լ իրենց սրտերը։ Չէ՞ որ Աստուած նախ յաղթեց եգիպտացիներին եւ յետոյ միայն իսրայէլացիներին ազատ արձակեց, որ գնան։ Արդ, տախտակ վերցրէ՛ք եւ մի նոր սայլ պատրաստեցէ՛ք։

4 Թագաւորաց 17:14 Նրանք չլսեցին, աւելի **ըմբոստացան**, քան իրենց հայրերը, չհաւատացին իրենց ՏԷՐ Աստծուն։

Բ Մնացորդաց 36:13 Նա չարիք գործեց իր ՏԷՐ ԱՍՏՈՒառաջ, **չպատկառեց** ո՛չ Երեմիա մարգարէից, ո՛չ էլ ՏԻՐՈՋ խօսքերից։

Նէեմի 9:16 Բայց իրենք իսկ՝ մեր հայրերը, գոռոզացան ու անօրինացան, **խստացրին իրենց պարանոցները**, չլսեցին քո պատուիրանները,

Նէեմի 9:17 իրենց աչքերը շեղեցին քո օրէնքներից, չյիշեցին քո հրաշքները, որ դու արեցիր նրանց համար, այլ **խստացրին իրենց պարանոցները**, իրենց թիկունքները դարձրին դէպի քեզ եւ ուզեցին նորից ստրկութեան վերադառնալ Եգիպտոս։ Բայց դու, Տէ՛ր Աստուած մեր, որ գթած ես եւ ողորմած, համբերատար եւ բազումողորմ, իսպառ չլքեցիր նրանց։

Նէեմի 9:29 եւ դարձեալ նրանց պատուիրեցիր դառնալ քո օրէնքներին։ Իսկ նրանք, յիմարացած, անմտութեամբ չհնազանդուեցին քո օրէնքներին եւ մեղանչեցին քո այն հրամանների ու պատուիրանների դէմ, որ դու ասել ու հրամայել էիր, թէ՝ մարդկանցից ով որ կատարի քո պատուիրանների պահանջները, կ՝ապրի նրանցով։ Բայց նրանք դարձրին իրենց թիկունքները դէպի քեզ, **եղան խստապարանոց** ու չլսեցին քո խօսքը։

Յոբ 9:4 Աստուած մտքով իմաստուն է, զօրաւոր ու մեծ. այդ ո՞վ է նրա դէմ յամառել ու յաջողութիւն գտել։

Յոբ 39:16 Հեռանում է նա իր ձագերից, կարծես իրենը չլինեն դրանք. իր վաստակի կորստեան վախը չունի նա,

Եսայի 63:17 Ինչո՞ւ մեզ թողեցիր, որ մոլորուենք քո ճանապարհներից, ո՛վ ՏԷՐ, ինչո՞ւ կարծրացրիր մեր սրտերը, որ քեզնից չվախենանք. դարձի՛ր ի սէր քո ծառաների, դարձի՛ր ի սէր քո ժողովրդի,որ քո ժառանգութիւնն է։

Երեմիա 7:26 Սակայն նրանք չլսեցին ինձ, նրանց ականջը չանսաց, եւ նրանք աւելի **անհնազանդ** դարձան, քան իրենց հայրերը։

Երեմիա 19:15 «Այսպէս է ասում Զօրութիւնների ՏԷՐԸ՝ Իսրայէլի Աստուածը. «Ահաւասիկ այս քաղաքի վրայ բերելու եմ ամենայն չարիք, ինչպէս ասացի նրա մասին, նաեւ սրա միւս բոլոր քաղաքների ու աւանների վրայ, քանզի նրանք **խստապարանոց դարձան**, որպէսզի չլսեն իմ խօսքերը»։

Դանիէլ 6:20 Երբ գոռոզացաւ նրա սիրտը, եւ նրա ոգին համարձակուեց ամբարտաւանանալ, նա ընկաւ իր թագաւորական աթոռից, պատիւը վերացաւ նրանից,

Mar 6:52 քանի որ մտքները **բթացած** լինելով՝ չէին հասկացել նաեւ այն, ինչ վերաբերում էր հացի բազմացմանը։'
Mar 8:17 Յիսուս իմացաւ նրանց խորհուրդը եւ նրանց ասաց. «Թերահաւատնե՛ր, ինչո՞ւ էք ձեր սրտերում խորհում, թէ հաց չունէք. դեռ չէ՞ք հասկանում եւ չէ՞ք յիշում. **ապշութի՞ւնն** է ձեր մտքերը պատել։

1 ՅՈՎՀ. 12:40 «Նրանց աչքերը կուրացրեց եւ նրանց սրտերը կարծրացրեց, որպէսզի աչքերով չտեսնեն ու սրտերով չիմանան եւ դարձի չգան, ու ես նրանց չբժշկեմ»։

Գործք 19:9 Երբ ոմանք **խստասիրտ** էին մնում եւ ընդդիմանում՝ բազմութեան առաջ վարկաբեկելով ՏԻՐՈՋ ճանապարհը, նրանցից բաժանուեց, աշակերտներին զատեց եւ խօսում էր ամէն օր Տիւրան անունով մէկի դպրանոցում։

ԵԲՐ 3:9 Բայց յորդորեցէ՛ք միմեանց ամէն օր, քանի այդ Այսօրը դեռ առջեւում է, որպէսզի ձեզնից ոչ ոք չկարծրանայ մեղքի խաբէութեամբ.

ԱՄԲԱՐԻՇՏ, ԽՍՏԱՍԻՐՏ, ԱՆՕՐԵՆ, ՄԵՂԱՎՈՐ, ԱՆԻՐԱՎ

Ելք 9:27 Փարաւոնը մարդ ուղարկելով՝ կանչեց Մովսէսին ու Ահարոնին եւ ասաց նրանց. «Մեղք եմ գործել։ Այսուհետեւ ՏԷՐՆ արդար է, իսկ ես ու իմ ժողովուրդը **ամբարիշտներ** ենք։

Ելք 23:1 «Ականջ մի՛ դիր սուտ լուրերին։Յանձն մի՛ առ յօգուտ **անիրաւի անիրաւ** վկայ լինել։

Num 16:26 Մովսէսը դիմեց ժողովրդին եւ ասաց. «Հեռացէ՛ք այդ **խստասիրտ** մարդկանց վրաններից, նրանց ոչ մի իրին ձեռք չտաք, որպէսզի կորստեան չմատնուէք դրանց գործած մեղքերի պատճառով»։

Թագ. Ա 2:9 Նա ուխտաւորի ուխտն է կատարում, արդարների տարիներն է օրհնում։ Ուժեղն իր շնորհքով չէ, որ հզօր է։ ՏԷՐԸ տկարացնում է իր հակառակորդներին։ ՏԷՐԸ սուրբ է։ Ո՛չ իմաստունը թող պարծենայ իր իմաստութեամբ, ո՛չ հզօրն իր զօրութեամբ, ո՛չ էլ մեծատունն իր հարստութեամբ։ Պարծեցողը պէտք է պարծենայ նրանով, որ իմանում ու ճանաչում է ՏԻՐՈՋԸ, երկրում իրաւունք եւ արդարութիւն է գործադրում։

4 Թագաւորաց 17:11 բոլոր բարձունքների վրայ խունկ էին ծխում այն բոլոր ազգերի նման, որոնց ՏԷՐԸ վտարել էր նրանց առջեւից։ Նրանք **վատ** ընկերակիցներ ունեցան եւ **վատ** հաւաքոյթներ կազմակերպեցին, որպէսզի բարկացնեն ՏԻՐՈՋԸ։

Բ ՄՆԱՑՈՐԴԱՑ 6:23 եւ դու երկնքում լսելով՝ կատարի՛ր քո ծառաների դատը, արժանի՛ն հատուցիր **անօրէնին**, իր գլխի՛ն թափիր նրա արածը, արդարացրո՛ւ արդարին եւ հատուցի՛ր ամէն մէկին ըստ իր արդարութեան չափի։

Բ ՄՆԱՑՈՐԴԱՑ 7:14 եւ եթէ իմ ժողովուրդը, որի վրայ իմ անունն է դրուած, զղջայ, աղօթի եւ իմ երեսը փնտռի ու յետ դառնայ իր **չար** ճանապարհներից, ես էլ երկնքից կը լսեմ, կը ներեմ նրանց եւ կը բուժեմ նրանց երկիրը։

Նէեմի 9:35 **Դու մեզ տուեցիր քո զթութիւնները եւ բազում բարութիւնները, տուեցիր մեզ այս լայն, ընդարձակ ու պարարտ երկիրը, բայց մենք քեզ ծառայել չիմացանք, մեր սիրտը շրջեցինք քո օրէնքներից եւ մեր մեղքերի պատճառով մատնուեցինք գերութեան։**

Սաղմոս 7:12 Արդար, հզօր եւ համբերատար դատաւոր է Աստուած, որն իր զայրոյթը չի թափում հանապազ։

Սաղմոս 9:17 **Մեղաւորները** կրկին դժոխք կ՚ընկնեն, նաեւ բոլոր հեթանոսները, որոնք մոռացան Աստծուն։

Սաղմոս 9 : 23 **Ամբարշտի յոխորտալուց տոչորում է աղքատը. թող խափանուեն այն հնարքները, որ խորհեցին նրանք**

Սաղմոս 9 : 24 **քանզի գովաբանում է մեղաւորն իր ցանկութիւնների համար, գովաբանում է եւ նա, ով զրկում է։**

Սաղմոս 9 : 25 **Իսկ մեղաւորն ինչո՞ւ բազում դառնութեամբ զայրացրեց Աստծուն,թէ չի ստանայ հատուցում։**

Սաղմոս 9:34 **Իսկ ամբարիշտն ինչո՞ւ բարկացրեց Աստծուն՝ ասելով իր սրտում, թէ ինքը չի քննուի։**

Սաղմոս 9:36 Թող խորտակուի **մեղաւորի** ու չարագործի բազուկը, թող փնտռուեն նրա մեղքերն ու այլեւս չգտնուեն։

Սաղմոս 10 : 3 Չէ՞ որ **մեղաւորներն** ահա լարել են աղեղներն իրենց, պատրաստել են նետերը կապարճներում, որ մութն ընկնելիս ձգեն ուղղամիտների վրայ։

Սաղմոս 10 : 6 ՏԷՐԸ քննում է արդարին եւ **ամբարշտին**. ով սիրում է մեղքը՝ ատում է անձն իր։

Սաղմոս 10 : 7 **Մեղաւորների վրայ որոգայթ, հուր եւ ծծումբ կը տեղայ, փոթորկի շունչն է նրանց բաժակի բաժինը։ 8Արդար է ՏԷՐԸ, արդարութիւն է սիրում, ճշմարտութեանն է նայում երեսը նրա։**

Սաղմոս 11 : 9 **Ամէն կողմ ամբարիշտներ են շրջում. քո բարձրութեան համեմատ դու մեծութի՛ւն տուր մարդկանց որդիներին։**

Սաղմոս 27:3 **Ամբարիշտների շարքը մի՛ դասիր ինձ եւ մի՛ կործանիր ինձ նրանց հետ, որ անօրէնութիւն են գործում, որ հաշտութեան մասին են խօսում իրենց ընկերների հետ, բայց սրտներում չարութիւն կայ։**

Սաղմոս 30:18 ՏԷ՛Ր, ամօթով թող չմնամ, որ քեզ դիմեցի. թող **ամբարիշտնե՛րն** ամաչեն ու դժոխք իջնեն։
Սաղմոս 31:10 Շատ են **մեղաւորների** տանջանքները, բայց ովքեր իրենց յոյսը դրել են ՏԻՐՈՋ վրայ, ՏԻՐՈՋ ողորմութիւնը կը պարուրի նրանց։

Սաղմոս 33:22 Մեղաւորի մահը չարաչար է, իսկ արդարին ատողը կը զղջայ։

Սաղմոս 35:2 **Անօրէնն ասում է իր մտքում մեղանչելիս,թէ իր աչքերի առջեւ ԱՍՏԾՈՒ վախ չկայ։**

Սաղմոս 36:13 **Մեղաւորը** հետապնդում է արդարին եւ իր ատամներն է կրճտացնում նրա վրայ։

Սաղմոս 36:15 **Մեղաւորները** սուր քաշեցին եւ լարեցին իրենց աղեղները՝ աղքատին ու տնանկին հարուածելու, սրտով խոնարհներին սպանելու համար։

Սաղմոս 36:17 Արդարի քիչն աւելի լաւ է, քան մեղաւորների մեծ հարստութիւնը։

Սաղմոս 36:21 Արդ, **մեղաւորները** կորստեան կը մատնուեն, եւ ՏԻՐՈՋ թշնամիներն իրենց փառքի ու վերելքի ժամին կը սպառուեն, ինչպէս ծուխն է սպառում։

Սաղմոս 36:2 ՏԷՐԸ սիրում է իրաւունքը, եւ իր սրբերին երեսի վրայ չի թողնում, այլ յաւիտեան պահպանում է նրանց։ **Անօրէնները** կը քշուեն կը գնան միասին, եւ ամբարիշտների սերունդը կ՝ոչնչանայ։

Սաղմոս 36:33 Մեղաւորը նայում է արդարին եւ ձգտում սպանել նրան։

Սաղմոս 36:36 Տեսայ ամբարշտին մեծացած ու բարձրացած, ինչպէս Լիբանանի մայրիները։

Սաղմոս 36:39 Անօրէնները կը քշուեն կը գնան գլխովին, եւ **ամբարիշտների** սերունդը կորստեան կը մատնուի։ 40Արդարների փրկութիւնը ՏԻՐՈՋից է, նեղութեան ժամանակ նա է նրանց օգնականը։

Սաղմոս 36:41 ՏԷՐԸ կ՝օգնի ու կը փրկի նրանց, կ՝ազատի մեղաւորներից ու կը պահպանի նրանց,քանզի նրանք իրենց յոյսը դրել են Նրա վրայ։

Սաղմոս 38:2 Ասացի՝ «Զգուշանամ իմ ճանապարհին, որ լեզուովս չմեղանչեմ»։ Բերանիս պահպանակ դրի, երբ **մեղաւորը** հակառակուեց ինձ։

Սաղմոս 49:16 Սակայն **մեղաւորին** Աստուած ասում է. «Իսկ դու ինչո՞ւ ես պատմում իմ արդարութիւնը, կամ բերանդ չես առնում իմ ուխտը։

Սաղմոս 54:4 Թշնամու ձայնից եւ մեղսագործի հալածանքից նրանք անիրաւութեամբ դէպի ինձ շրջուեցին, բարկութեամբ ոխ պահեցին իմ դէմ։

Սաղմոս 72:3 Նախանձեցի ես անօրէններին՝ մեղաւորների խաղաղութիւնը տեսնելով։

Սաղմոս 73:19 Քեզ խոստովանողին մի՛ մատնիր գազաններին (չար), եւ քո տնանկներին մի՛ մոռացիր երբեք։

Սաղմոս 74:9 ՏԻՐՈՋ ձեռքի բաժակը լի է անապակ գինով, որ մատուցում է սրան ու նրան։ Սակայն նրա մրուրը չի պակասի, եւ երկրի բոլոր **մեղաւորները** կը խմեն այն։

Սաղմոս 74:11 **Մեղաւորների** բոլոր եղջիւրները դու պիտի փշրես, եւ արդարի եղջիւրը պիտի բարձրանայ։

Սաղմոս 81:2 **«Մինչեւ ե՞րբ պիտի անիրաւութեամբ դատէք. եւ աչառութիւն անէք մեղաւորներին:**

Սաղմոս 91:8 **Մեղաւորները**՝ բուսնելով ինչպէս խոտ, եւ անօրէնութիւն գործողները՝ ծաղկելով, կը կործանուեն յաւիտեանս յաւիտենից։

Սաղմոս 91:12 Աչքս դիպաւ թշնամիներիս, որոնք **չարութեամբ** յարձակուել են վրաս։ Ականջս կը լսի նրանց։

Սաղմոս 96:10 **Տիրո՛ջը սիրողներ, ատեցէ՛ք չարութիւնը. ՏԷՐԸ պահպանում է իր սրբերի հոգիները, մեղաւորների ձեռքից փրկում է նրանց։**

Առակ 3:33 ՏԻՐՈՋ անէծքն **ամբարիշտներ**ի տներում է, մինչդեռ արդարների տներն օրհնւում են։

Առակ 4:15 Մի՛ գնա **ամբարիշտների** ճանապարհով եւ մի՛ նախանձիր անօրէնների ճանապարհներին։

Առակ. 4:20 **Ամբարիշտների** ճանապարհները նման են խաւարի, եւ նրանք չգիտեն, թէ ինչպէս պիտի սայթաքեն։

Առակ. 5:22 **Չարագործին** պիտի որսան նրա անօրէնութիւնները, եւ իւրաքանչիւրը պիտի կապկպուի իր մեղքի թելերով։

Առակ. 6:18 այն ձեռքերը, որ արդար արիւն են թափում, այն սիրտը, որ **չար** խորհուրդներ է նիւթում, այն ոտքերը, որ շտապում են չարիքներ գործել, պիտի ոչնչանան։

Առակ. 9:7 Ով խրատ է տալիս **չարերին**, նա անարգանք է ստանում, եւ ով յանդիմանում է ամբարիշտներին, նա ատելութիւն է վաստակում։

Առակ. 10: 3 ՏԷՐԸ սովամահ չի անում արդարին, բայց **ամբարիշտների** կեանքը պիտի կործանի։

Առակ. 10:6 ՏԻՐՈՋ օրհնութիւնն արդարների գլխին է, բայց տարաժամ սուգը պիտի փակի **ամբարիշտների** բերանը։

Առակ. 10:7 Արդարների յիշատակը մնալու է գոհաբանութեամբ, բայց **ամբարիշտների** անունը պիտի ջնջուի։

Առակ. 10:11 Արդարի ձեռքին է կեանքի աղբիւրը, բայց **ամբարշտի** կորուստը կը փակի նրա բերանը։

Առակ. 10:16 Արդարների գործերը կեանք են տալիս, **ամբարիշտների** բերքը՝ մեղքեր։

Առակ. 10:20 Արդար լեզուն ընտիր արծաթ է, **ամբարշտի** սիրտը պիտի նուաղի։

Առակ.10:24 **Ամբարիշտը** շրջում է կորուստը իր հետ, բայց արդարի ցանկութիւնը պիտի կատարուի։

Առակ 10:25 **Ամբարիշտը** պիտի ջնջուի ինչպէս անցնող մրրիկ, բայց արդարը խուսափելով՝ կ՝ապրի յաւիտեան։

Առակ. 10:27 ՏԻՐՈՋ երկիւղն աւելացնում է կեանքի օրերը, բայց **ամբարիշտների** տարիները պիտի կրճատուեն։

Առակ. 10:28 Արդարների ուրախութիւնը պիտի երկարի, իսկ **ամբարիշտների** յոյսը պիտի կորչի։

Առակ.11:11 Ուղղամիտների օրհնութեամբ բարձրանում է քաղաքը, բայց կը կործանուի **ամբարիշտների** բերանով։

Առակ 11:18 **Ամբարիշտն** անիրաւ գործեր է կատարում, բայց արդարների զաւակը ճշմարտութեան վարձկան է։

Առակ 12:6 **Ամբարիշտների** բերանները նենգաւոր են. ուղղամիտների բերանը կը փրկի իրենց։

Առակ 12:7 **Ամբարիշտը** որ կողմ էլ դառնայ, պիտի բնաջնջուի, բայց արդարների տները պիտի յարատեւեն։

Առակ 14:11 **Ամբարիշտների** տները պիտի կործանուեն, բայց արդարների բնակարանները պիտի հաստատ լինեն։

Առակ 14:32 **Ամբարիշտը** պիտի մերժուի իր չարիքի պատճառով, բայց իր անձի համար մաքրութիւն ցանկացողը արդար կը լինի։

Առակ 15:8 **Ամբարիշտների** զոհագործութիւնները պիղծ են ՏԻՐՈՋ առջեւ, բայց ուղղամիտների ուխտը հաճելի է նրան։

Առակ 15:9 **Ամբարիշտների** ճանապարհները պիղծ են ՏԻՐՈՋ առջեւ, բայց ով հետեւում է արդարութեանը, ՏԷՐԸ սիրում է նրան։
Առակ 15:26 **Անիրաւ** խորհուրդը պիղծ է ՏԻՐՈՋ առջեւ, բայց սրբերի խօսքերը պարկեշտ են։

Առակ 17:4 **Չարագործը** հնազանդւում է անօրէնի լեզուին, բայց արդարը չի նայում ստախօս շուրթերին։ Հաւատարիմ մարդու համար ամբողջ աշխարհը լի է հարստութեամբ, բայց անհաւատարիմը մէկ գրոշ իսկ չունի։

Առակ 17:15 Ովքեր անիրաւին համարում են արդար ու արդարին՝ անիրաւ, նրանք պիղծ ու գարշելի են ՏԻՐՈՋ առջեւ։

Առակ 21:4 Ամբարտաւանը մեծամիտ է իր յոխորտանքի մէջ. ամբարիշտների լապտերը մեղքն է։

Առակ 25:26 Ինչպէս որ մէկը խցանելով աղբիւրի ակը՝ խափանում է ջրերի հոսանքը, այնպէս էլ տգեղ է արդարի խոնարհուելը **ամբարիշտ** մարդու առաջ։

Առակ 26:23 Նենգամտութեամբ տրուած արծաթը նման է խեցու. ողորկ շուրթերը թաքցնում են **տրտում** սրտերը։

Առակ 28:1 **Ամբարիշտը** փախչում է առանց որեւէ մէկից հալածուած լինելու, բայց արդարն անձնապաստան է լինում, ինչպէս առիւծ։

Առակ 28 : 4 նոյնպէս էլ նրանք, որ մերժում են օրէնքը, գովում են ամբարշտութիւնը. բայց նրանք, ովքեր սիրում են օրէնքը, իրենց շրջապատում են պարսպով։

Առակ 28:15 Նա, ով աղքատ է, քաղցած առիւծի եւ ծարաւած գայլի պէս **դաժան** կը լինի թշուառ ժողովրդի նկատմամբ։

Առակ 29:7 Արդարը գիտէ տնանկներին իրաւունքով դատել, բայց ամբարիշտը խելամուտ չի լինում այն գիտենալու մէջ, իսկ աղքատն էլ իրաւախոհ միտք չունի։

Առակ 29:12 Այն թագաւորը եւ նրա հետ բոլոր նրանք, որ ականջ են դնում անիրաւութեան խօսքերին, անօրէններ են։

Առակ 29:16 Ամբարիշտների բազմանալու դէպքում բազմապատկւում են յանցանքները, բայց արդարները ահով պիտի համակուեն նրանց կործանման ժամանակ։

ԺՈՂՈՎՈՂ 3:17 Եւ սրտիս մէջ ասացի, թէ՝ «Աստուած պիտի դատի արդարին եւ **ամբարշտին**, քանի որ ամէն բանի ժամանակը կայ, եւ ժամ ու ժամանակ կայ բոլոր գործերի համար»։

ԺՈՂՈՎՈՂ 8:13 Բայց ամբարշտի համար բարութիւն պիտի չլինի. նա իր օրերը պիտի չերկարեցնի, այլ դրանք պիտի լինեն ստուերի նման, քանի որ նա երկիւղ է կրում Աստծու ներկայութիւնից։

Եսայի 3:11 Վա՜յ **անօրէնին**, չարիքներ պիտի գան նրա վրայ՝ ըստ իրենց կատարած չար գործերի։
Եսայի 11:4 Նա տնանկի իրաւունքը պիտի պաշտպանի եւ արդարութեամբ պիտի դատի երկրի տառապեալներին. իր բերանի խօսքով հարուածի երկրին եւ իր շուրթերի շնչով ոչնչացնի ամբարիշտներին։

Եսայի 13:11 Չարիքի համար, ամբարիշտների մեղքերի համար վճիռ պիտի արձակեմ համայն աշխարհին, պիտի կործանեմ անիրաւների հպարտութիւնը, ամբարտաւանների մեծամտութիւնը պիտի խոնարհեցնեմ։

Եսայի 26:10 որովհետեւ ամբարիշտը պապանձուեց։ Ով երկրի վրայ արդարութիւն չի ուսանում,նա ճշմարիտ բան չի կատարի։ Թող կորչի ամբարիշտը, որպէսզի չտեսնի փառքը ՏԻՐՈՋ։

Եսայի 55:7 ամբարիշտը թող հրաժարուի իր ընթացքից, անօրէն մարդը՝ իր խորհուրդներից, թող նա վերադառնայ ՏԻՐՈՋ մօտ՝ եւ ողորմութիւն կը գտնի, մեր Աստծո՛ւ մօտ, որը բազմապատիկ թողութիւն պիտի շնորհի ձեր անօրէնութիւններին

Երեմիա 5:28 Դրա համար էլ նրանք հարստացան, մեծացան, գիրացան ու պարարտացան եւ չարութեամբ զանց առան իմ խօսքերը. արդար դատաստան չարին, որբի իրաւունքը չպաշտպանեցին, այրուն արդար դատով չդատեցին:

Երեմիա 25:31 քանզի ՏԷՐՆ ազգերի մէջ դատաստան պիտի տեսնի, պիտի դատի ամէն մարդու, եւ ամբարիշտները սրի են մատնուելու», - ասում է ՏԷՐԸ:

ԵԶԵԿԻԷԼ 3:18 Երբ անօրէնին ասեմ՝ ստոյգ պիտի մեռնես, դու այլեւս չես զգուշացնելու նրան, ոչ էլ ասելու ես անօրէնին, որ զգուշանայ, յետ դառնայ իր չար ճանապարհից ու ապրի: Այդ անօրէնն իր անօրէնութեան մէջ է մեռնելու, եւ նրա արիւնը քեզնից եմ պահանջելու:

ԵԶԵԿԻԷԼ 3:19 Իսկ եթէ դու անօրէնին զգուշացնես, ու նա յետ չդառնայ իր անօրէնութիւնից եւ իր ճանապարհից, - այդ անօրէնն իր անօրէնութեան մէջ է մեռնելու, իսկ դու քեզ փրկելու ես:

ԵԶԵԿԻԷԼ 13:22 Այն բանի համար, որ անիրաւութեամբ խոտորում էիք արդարի սիրտը (ե՛ս չէի մոլորեցնում), ինչպէս նաեւ նրա համար, որ զօրացնում էիք անօրէնի բազուկը, որպէսզի նա երբեք յետ չդառնայ իր անօրէնութիւնից, իր չար ճանապարհից ու ապրի,

ԵԶԵԿԻԷԼ 18:20 Ով որ մեղանչի, նա էլ պիտի մեռնի, իսկ որդին հօր մեղքը չպիտի կրի, ոչ էլ հայրը՝ իր որդու անիրաւութիւնները: Արդարի արդարութի՛ւնն է իր վրայ ընկնելու, **անօրէնի** անօրէնութիւնը՝ իր վրայ»:

ԵԶԵԿԻԷԼ 18:21 «**Անօրէնը** եթէ յետ կանգնի իր գործած անօրէնութիւններից ու պահի իմ բոլոր պատուիրանները, արդարութիւն գործի ու ողորմածութիւն անի, - ապրելով ապրելու է ու չի մեռնելու:

ԵԶԵԿԻԷԼ 18:23 Մի՞թէ ես **մեղաւորի** մահն եմ տենչում, - ասում է ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾԸ, - եւ ոչ թէ այն, որ նա չար ճանապարհից յետ դառնայ ու ապրի:

ԵԶԵԿԻԷԼ 18:24 Իսկ եթէ արդարն իր արդարութիւնից շեղուի, անարդարութիւն գործի, ըստ **անօրէն** մարդու կատարած բոլոր անօրէնութիւնների՝ նրա կատարած բոլոր արդար գործերն էլ չեն յիշուելու: Այն մեղքերի համար, որոնց մէջ նա ընկել է, եւ այն յանցանքների համար, որ գործել է, - դրանց մէջ էլ մեռնելու է:

ԵԶԵԿԻԷԼ 18:27 Իսկ եթէ **անօրէնը** յետ կանգնի իր անօրէնութիւնից, օրէնքներս կատարի, արդարութիւն անի, - ինքն իր հոգին փրկելու է,

ԵԶԵԿԻԷԼ 21:3 եւ կ՝ասես Իսրայէլի երկրին. «Այսպէս է ասում ՏԷՐԸ, ԱՄԵՆԱԿԱԼՆ ԱՍՏՈՒԱԾ. ահա ես քո դէմ եմ: Մերկացնելու եմ սուրս իր պատեանից եւ քո միջից ոչնչացնելու եմ **անիրաւին** ու **անօրէնին:**

ԵԶԵԿԻԷԼ 21:4 Եւ քանի որ քո միջից ոչնչացնելու եմ **անիրաւին** ու **անօրէնին**, ուստի իմ սուրն իր պատեանից դուրս է գալու բոլոր մարդկանց վրայ՝ արեւելքից մինչեւ հիւսիս:

ԵԶԵԿԻԷԼ 33:8 Երբ ես **մեղաւորին** ասեմ՝ հաստատ կը մեռնես, իսկ դու չխօսես ու չզգուշացնես **ամբարշտին** իր ճանապարհից, ինքը՝ **անօրէնն** իր անօրէնութեան մէջ կը մեռնի, բայց նրա արիւնը քեզնից կը պահանջեմ:

ԵԶԵԿԻԷԼ 33:9 Իսկ եթէ նախօրօք ասես **ամբարշտին** իր ճանապարհի մասին, որպէսզի յետ դառնայ դրանից, բայց նա յետ չկանգնի իր ճանապարհից, - ինքն իր ամբարշտութեան մէջ է մեռնելու, իսկ դու քո հոգին փրկելու ես»:

ԵԶԵԿԻԷԼ 33:11 Ասա՛ նրանց. «Ամենակալ ՏԷՐՆ ասում է՝ կենդանի եմ ես եւ **ամբարշտի** մահը չեմ ուզում, այլ՝ նրա յետ կանգնելն իր չար ճանապարհից ու ապրելը: Դարձէ՛ք, յե՛տ դարձէք ձեր **չար** ճանապարհից, ինչո՞ւ մեռնէք, ո՛վ տունդ Իսրայէլի»

ԵԶԵԿԻԷԼ 33:12 Դո՛ւ էլ, մարդո՛ւ որդի, ասա՛ քո ժողովրդի զաւակներին. «Արդարի արդարութիւնը նրան չի փրկելու այն օրը, երբ մոլորուի, **անօրէնի** անօրէնութիւնն էլ նրան չի չարչարելու այն օրը, երբ յետ կանգնի իր բոլոր անօրէնութիւններից: Արդարը չի կարողանալու ազատուել իր մեղքերի օրը:

ԵԶԵԿԻԷԼ 33:14 Իսկ երբ ես **ամբարշտին** ասեմ՝ հաստատ մեռնելու ես, բայց նա յետ կանգնի իր մեղքերից, իրաւ դատաստան եւ արդար գործ կատարի,

ԵԶԵԿԻԷԼ 33:15 պարտապանին յետ տայ գրաւը, վերադարձնի յափշտակածը, ընթանայ կեանքի պատուիրաններով, անիրաւութիւններ չգործի, - հաստատ ապրելու է ու չի մեռնելու:

ԵԶԵԿԻԷԼ 33:19 Իսկ երբ **մեղաւորը** յետ կանգնի իր անօրէնութիւնից, իրաւ դատաստան ու արդար գործ կատարի, դրանցով էլ ապրելու է:
Դանիէլ 12:10 Շատերը պիտի ընտրուեն, սպիտականան, փորձուեն եւ մաքրուեն, **անօրէնները** պիտի անօրէնութիւն անեն, **ամբարիշտները** խելքի չպիտի գան,

Ամբակում 1:4 Այդ պատճառով օրէնքը խափանուեց, եւ արդարութիւնը գլուխ չի գալիս. քանի որ ամբարիշտը ճնշում է արդարին, դրա համար էլ սխալ դատաստան էր լինում:

Մաղաքիա 3:18 Դուք կը դառնաք եւ կը տեսնէք այն տարբերութիւնը, որ կայ արդարի ու **անօրէնի**, Աստծուն ծառայածի եւ չծառայածի միջեւ»:

Մաղաքիա 4:3 պիտի տրորէք **անօրէններին** եւ նրանք մոխիր պիտի դառնան ձեր ոտքերի տակ այն օրը, որ ես եմ պատրաստելու, - ասում է Ամենակալ ՏԷՐԸ:

Մաթ. 13:38 իսկ արտը այս աշխարհն է. բարի սերմը նրանք են, որ արքայութեան որդիներն են, իսկ որոմը **չարի** որդիներն են.

Մաթեոս 13:49 Այնպէս էլ կը լինի այս աշխարհի վախճանին։ Հրեշտակները կ՝ելնեն եւ **չարերին** արդարների միջից կը բաժանեն։

Մաթեոս 16:4 «**Չար** եւ շնացող մի սերունդ նշան է ուզում, եւ սակայն նրան նշան չպիտի տրուի, բացի Յովնան մարգարէի նշանից»։ Եւ նրանց թողեց ու գնաց։

Մաթեոս 25:26 ՏԷՐԸ պատասխան տուեց եւ ասաց նրան. «Չա՛ր եւ ծո՛յլ ծառայ, գիտէիր, որ հնձում եմ, ուր չեմ սերմանել, եւ հաւաքում այնտեղից, ուր չեմ ցանել.

Ղուկաս 19:22 Եւ ՏԷՐԸ նրան ասաց. «Հէնց քո բերանով քեզ պիտի դատեմ, անհաւատարի՛մ ծառայ. գիտէիր, որ ես մի խիստ մարդ եմ, վերցնում եմ, ինչ որ չեմ դրել եւ հնձում եմ՝ ուր չեմ սերմանել։

1 Կորնթ 5:13 Իսկ դրսիններին Աստուած է դատելու։ Վերացրէ՛ք **չարը** ձեր միջից։

2 Պետրոս 3:17 Դուք ուրեմն, սիրելինե՛ր, իբրեւ նախապէս տեղեակ դարձած մարդիկ, զգուշացէ՛ք, որ անառակ մոլորութեամբ տարուած՝ չկորցնէք ձեր վստահութիւնը։

ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼ

Երկրորդ Օրէնք 28:29 Օրը ցերեկով կը խարխափես այնպէս, ինչպէս կոյրն է խարխափում խաւարի մէջ, եւ քո ուղիղ ճանապարհը չես գտնի։ Այդ ժամանակ յաւիտենապէս զրկուած ու կողոպտուած կը լինես, եւ ոչ ոք օգնութեան չի գայ քեզ։

Երկրորդ Օրէնք 29:9 Հետեւեցէ՛ք, որ կատարէք այս ուխտի բոլոր խօսքերը, որպէսզի իմանաք այն ամէնը, ինչ պիտի անէք։

Յեսու 1:7 Արդ, զօրացի՛ր եւ շա՛տ քաջ եղիր, որպէսզի պահես եւ կատարես այն բոլոր օրէնքները, որ իմ ծառայ Մովսէսը քեզ պատուիրեց։ Դրանցից չշեղուես աջ կամ ձախ, որ խելամտօրէն անես այն ամէնը, ինչ որ պիտի անես։

ԹԱԳ Գ 2:3 պահի՛ր քո ՏԷՐ ԱՍՏՈՒԾՈՒ հրամանները՝ գնա՛ նրա ճանապարհով, պահի՛ր նրա պատուիրանները, նրա օրէնքները, նրա հրամաններն ու նրա վկայութիւնները ըստ Մովսէսի Օրէնքների գրքի, որ, ինչ էլ անես, նկատի ունենաս այն ամէնը, որ պատուիրել եմ քեզ։

Ա ՄՆԱՑՈՐԴԱՑ 22:13 Դու **յաջողութիւն կ՝ունենաս**, եթէ պահպանես այն պատուիրաններն ու օրէնքները, որ ՏԷՐԸ Մովսէսին պատգամել էր Իսրայէլի համար։ Եղի՛ր քաջարի, հզօրացի՛ր, մի՛ վախեցիր ու մի՛ զարհուրիր։

Բ ՄՆԱՑՈՐԴԱՑ 13:12 Ահաւասիկ մեզ հետ են եւ մեզ իշխան են ՏԷՐՆ ու նրա քահանաները, եւ ազդարարող փողերը պատրաստ են հնչելու, որ մեզ մարտի հրաւէր տան: Եւ դուք, ո՛վ իսրայէլացիներ, մի՞թէ կը մարտնչէք մեր հայրերի Աստծու դէմ. դա ձեզ յաջողութիւն չի բերի»:

Բ ՄՆԱՑՈՐԴԱՑ 24:20 Եւ ԱՍՏԾՈՒ հոգին պատեց Յովիդայէ քահանայի որդի Ազարիասին, որը, մտնելով ամբողջ ժողովրդի մէջ, ասաց. «Այսպէս է ասում ՏԷՐԸ. «Ինչո՞ւ խոտորուեցիք ՏԻՐՈՋ պատուիրաններից, որ այլեւս **յաջողութիւն** չունենաք: Քանի որ դուք լքեցիք ՏԻՐՈՋԸ, նա էլ ձեզ է լքելու»:

Բ ՄՆԱՑՈՐԴԱՑ 26:5 Զաքարիա իմաստունի կենդանութեան օրօք Օզիասը ՏԻՐՈՋ երկիւղով ՏԻՐՈՋն էր յարել: Նրա օրերին նա ՏԻՐՈՋԸ ձգտեց: Եւ ՏԷՐԸ նրան **յաջողութիւն** պարգեւեց:

Սաղմոս 1:3 Նա նման է ջրերի հոսանքի վրայ տնկուած ծառի, որն իր պտուղը ժամանակին կը տայ, իսկ նրա տերեւը չի թափուի, ու ամէն բան, ինչ էլ որ անի, կը **յաջողուի** նրան:

Առակ 28:13 Իր ամբարշտութիւնը ծածկողը յաջողութիւն չի ունենայ, բայց բացայայտողը եւ իրեն պախարակողը կը դառնայ սիրելի:

Եսայի 53:10 ՏԷՐԸ կամենում է մաքրել նրան վէրքերից: Եթէ մեղքերի համար հատուցում տաք, ապա երկարակեաց սերնդի կ՝արժանանաք, որի միջոցով ՏԷՐԸ կը ցանկանայ ազատել նրան իր ցաւերից,

Եսայի 54:17 Ոչ մի վնասակար գործիք քո դէմ յաջողութիւն չպիտի ունենայ, եւ դու քո դէմ դատաստանի ելնող ամէն մի լեզու պարտութեան ես մատնելու, նրա հետ՝ եւ քո բոլոր դատախազներին: Դա է ՏԻՐՈՋ ծառաների ժառանգութիւնը, եւ ինձ համար դուք էք լինելու իրաւացի», -ասում է ՏԷՐԸ:

Երեմիա 2:37 Այնտեղի՛ց էլ պիտի դուրս գաս՝ ձեռքերդ գլխիդ վրայ բռնած, քանզի ՏԷՐԸ մերժեց այն, որ քո յոյսն էր, եւ նրանով այլեւս յաջողութիւն չպիտի գտնես»:

Երեմիա 5:28 Դրա համար էլ նրանք հարստացան, մեծացան, գիրացան ու պարարտացան եւ չարութեամբ զանց առան իմ խօսքերը. արդար դատաստան չարին, որբի իրաւունքը չպաշտպանեցին, այրուն արդար դատով չդատեցին

Երեմիա 10:21 Հովիւները խելքի չեկան եւ ՏԻՐՈՋԸ չփնտռեցին, դրա համար էլ բոլոր հօտերը չճանաչեցին նրանց ու ցիրուցան եղան:

Երեմիա 20:11 Բայց ՏԷՐՆ ինձ հետ էր որպէս պատերազմող եւ ուժ էր տալիս: Դրա համար էլ նրանք հալածեցին ինձ, բայց ոչ մի հնարք չկարողացան գտնել, խիստ ամօթով մնացին, որովհետեւ անմիտ վարուեցին: Նրանց անարգանքը թող յաւիտեանս չմոռացուի:

Ողբ 1:5 **Նրան նեղողները՝ կանգնեցին նրա գլխին, նրա թշնամիներն ուրախութեան մէջ են, քանի որ ՏԷՐԸ խոնարհեցրեց նրան ծանր ամբարշտութեան համար. նրա մանուկները, նեղողների առաջն ընկած, գերի քշուեցին:**

ԵԶԵԿԻԷԼ 16:13 **Եւ դու զարդարուեցիր ոսկէ ու արծաթէ զարդերով: Հագուստդ բեհեզ էր, ընտիր կերպաս՝ ասեղնագործուած: Նաշիհ կերար, իւղ ու մեղր, չափազանց գեղեցիկ եղար, փայփայուեցիր արքայական գուրգուրանքով:**

ԵԶԵԿԻԷԼ 17:9 Այս մասին ասա՛. «Այսպէս է ասում Ամենակալ ՏԷՐԸ. Արդեօք որթատունկն **ուռճանալո՞ւ է**: Չէ՞ որ նրա նուրբ արմատներն ու պտուղները նեխելու են, ու նրա ոստերը՝ չորանալու: Ո՛չ մեծ բազուկ է պէտք գալու եւ ո՛չ էլ շատ մարդ՝ ձեռք գցելու եւ այն արմատախիլ անելու համար:

ԵԶԵԿԻԷԼ 17:15 Պիտի ապստամբի նրա դէմ՝ սուրհանդակներ ուղարկելով Եգիպտոս, որպէսզի իրեն ձիեր ու բազում զօրք տան: Բայց **յաջողութիւն ունենալո՞ւ է:** Փրկուելո՞ւ է նա, ով այսպիսի հակառակ բաներ է անում, դրժում է ուխտը: Փրկուելո՞ւ է:

ԲՆԱՋՆՋՎԱԾ, ԿՈՐՍՏԱՅԱՆ ՄԱՏՆՎԱԾ, ԿՈՏՈՐՎԱԾ, ՈՉՆՉԱՑՎԱԾ

Ելք 22:20 **Ով որ կուռքերին զոհ մատուցի, մահապատժի թող ենթարկուի: Զոհ մատուցեցէ՛ք միայն ՏԻՐՈՋԸ:**

Երկրորդ Օրէնք 2:21 Նրանք ենակիմեանների նման մեծ, բազմամարդ ու հզօր ազգ էին: ՏԷՐԸ սրանց **վերացրեց** մէջտեղից, եւ ենակիմեանները բնակուեցին այդտեղ՝ նրանց փոխարէն:

Երկրորդ Օրէնք 4:26 ապա այսօր երդւում եմ ձեզ երկինքն ու երկիրը վկայ, որ **կը վերանաք** Յորդանան գետի այն կողմում գտնուող երկրից, ուր դուք գնում էք, որպէսզի ժառանգէք այն: Երկար կեանք չէք ունենայ այդտեղ, անպայման **կը կոտորուէք**:
Երկրորդ Օրէնք 7:24 Նա նրանց թագաւորներին կը յանձնի քո ձեռքը, եւ դու նրանց անունները կը ջնջես երկրի երեսից: Ոչ ոք չի կանգնի քո դէմ, մինչեւ որ **բնաջնջես** նրանց:

Երկրորդ Օրէնք 9:8 Քորէբում բարկացրիք ՏԻՐՈՋԸ, եւ ՏԷՐԸ զայրացաւ ձեզ **կոտորելու** աստիճան,

Երկրորդ Օրէնք 9:20 Նա խիստ բարկացել էր նաեւ Ահարոնի վրայ, ուզում էր **սպանել** նրան: Ես այս անգամ էլ աղօթեցի Ահարոնի համար,

Երկրորդ Օրէնք 12:30 **ապա զգո՛յշ եղիր, որ քո առջեւ նրանց կոտորուելուց յետոյ չգնաս նրանց հետքերով, չհետաքրքրուես նրանց կուռքերով ու չասես, թէ՝ «Այս ազգերը ինչ արել են իրենց կուռքերին, նոյնն էլ ես անեմ ՏԻՐՈՋԸ»:**

Երկրորդ Օրէնք 28:20 ՏԷՐԸ քեզ աղքատ ու կարիքաւոր կը դարձնի եւ ձեռնարկած ու ձեռնարկելիք բոլոր գործերդ անյաջողութեան կը մատնի, մինչեւ որ կոտորի քեզ ՏԷՐԸ, մինչեւ որ քեզ ոչնչացնի իսկոյն քո չար ընթացքի համար, քանի որ դու ինձ լքեցիր:

Երկրորդ Օրէնք 28:24 ՏԷՐԸ քո արտին անձրեւի փոխարէն փոշի կը թափի, երկնքից քեզ վրայ հող կը թափի, մինչեւ որ քեզ սպանի ու կորստեան մատնի:

Երկրորդ Օրէնք 28:45 Քեզ վրայ կ՚ինջնեն այս անէծքները, կը հալածեն քեզ, մինչեւ որ կոտորեն, ոչնչացնեն քեզ, քանի որ չլսեցիր քո ՏԷՐ ԱՍՏԾՈՒասածը՝ չպահեցիր նրա այն պատուիրաններն ու օրէնքները, որ նա պատուիրեց քեզ:

Երկրորդ Օրէնք 28:48 Դրա համար էլ ամէն տեսակ սովի, ծարաւի, մերկութեան ու աղքատութեան մէջ կը ծառայես քո թշնամիներին, որ ՏԷՐԸ կ՚ուղարկի քո դէմ: Նա երկաթէ լուծ կը դնի քո վզին, մինչեւ որ ոչնչացնի քեզ:

Երկրորդ Օրէնք 28:51 Նա կ՚ուտի քո հօտերից ծնուած անասուններին եւ քո երկրի բերքը: Նա կը խլի քո ցորենը, գինին, իւղը, կը վերցնի քո արջառների նախիրներն ու ոչխարների հօտերը, մինչեւ որ կորստեան մատնի քեզ:

Երկրորդ Օրէնք 28:61 Օրէնքների այս գրքում գրուած բոլոր հիւանդութիւններն ու արհաւիրքները ՏԵՐԸ կը թափի քո գլխին, մինչեւ որ ոչնչացնի քեզ:

Յեսու 23:15 Եւ ինչպէս որ ձեզ վրայ կատարուեցին այն բոլոր բարի խօսքերը, որ ասաց ձեզ համար ՏԷՐԸ, այդպէս էլ ՏԷՐԸ ձեզ վրայ կը կատարի ամէն տեսակ չար խօսքեր, մինչեւ որ բնաջնջի ձեզ այս բարի երկրից, որ տուել է ձեզ ձեր ՏԷՐ Աստուածը

ԹԱԳ Բ 24:16-18 ԱՍՏԾՈՒ հրեշտակն իր ձեռքը [17] մեկնեց Երուսաղէմի վրայ, որ **ոչնչացնի** այն, սակայն ՏԷՐԸ զղջաց այդ չար աղէտի համար եւ ասաց ժողովրդին **ոչնչացնող** հրեշտակին. «Բաւական է, ձեռքդ յե՛տ քաշիր»:[18] ՏԻՐՈՋ հրեշտակը յեբուսացի Ոռնայի կալի մօտ էր:

Ա ՄՆԱՑՈՐԴԱՑ 5:25 Նրանք, սակայն, ուխտադրուժ եղան իրենց հայրերի Աստծու հանդէպ, լքեցին նրան ու գնացին այն օտար երկրների աստուածների յետեւից, որոնց Աստուած նրանց ներկայութեամբ ոչնչացրել էր:

Ա ՄՆԱՑՈՐԴԱՑ 21:12 կա՛մ երեք տարի սով կը լինի, կա՛մ երեք ամիս հալածական կը լինես քո թշնամիներից, եւ քո թշնամիների սուրը քեզ կը սպանի, եւ կա՛մ երեք օր ՏԻՐՈՋ սուրը մահ կը սփռի քո երկրում, ու ՏԻՐՈՋ հրեշտակը **կը բնաջնջի** Իսրայէլի ամբողջ տարածքը: Արդ, տե՛ս, թէ ես ինչ պատասխան եմ տալու նրան, որ ինձ ուղարկել է»:

Ա ՄՆԱՑՈՐԴԱՑ 21:15 ԱՍՏՈՒԱԾ հրեշտակին առաքեց Երուսաղէմ, որ **կոտորի** մարդկանց: Հազիւ էր նա սկսել կոտորածը, որ ՏԷՐԸ տեսաւ ու զղջաց իր պատճառած չարիքի համար: Նա ասաց մարդկանց **կոտորելու համար** առաքուած հրեշտակին. «Բաւական է, յե՛տ քաշիր ձեռքդ»: Եւ այդ պահին ՏԻՐՈՋ հրեշտակը գտնուում էր յեբուսացի Ուռնայի կալի մօտ:

Բ ԵԶՐԱՍ 4:17-18 Ես վերահասու եղայ, քննեցի ու գտայ, որ այդ քաղաքը հին ժամանակներից ի վեր եղել է ապստամբ եւ ոտքի է ելել թագաւորների դէմ, 18 որ Երուսաղէմում եղել են հզօր ու բռնակալ թագաւորներ, որոնք տիրել են արեւմտեան կողմին՝ Եփրատ գետից այն կողմը: Արդ, դուք հարկեր ու տուրքեր դրէ՛ք դրանց վրայ, որպէսզի այլեւս **չբռնանան ինքնիշխան կամքով**:

Բ ԵԶՐԱՍ 5:12 Բայց յետոյ, երբ մեր հայրերը բարկացրին երկնքի ու երկրի Աստծուն, նա էլ բաբելացիների եւ քաղդէացիների արքայ Նաբուքոդոնոսորի ձեռքը մատնեց նրանց. Նաբուքոդոնոսորը **քանդեց** այս տունը եւ ժողովրդին էլ գերի տարաւ Բաբելոն:

Սաղմոս 11:4 Ինչ դու շինեցիր՝ աւերեցին նրանք, իսկ արդարն ի՞նչ արեց:

Սաղմոս 36:39 Անօրէնները կը քշուեն կը գնան գլխովին, եւ ամբարիշտների սերունդը կորստեան կը մատնուի:

Սաղմոս 72:27 Ահաւասիկ իրենց անձը քեզնից հեռացնողները պիտի կորչեն, դու պիտի կործանես բոլոր նրանց, ովքեր ապստամբեցին քո դէմ:

Սաղմոս 77:37 Բայց ինքը գթասիրտ էր, քաւութիւն էր տալիս նրանց մեղքերին ու չէր կործանում նրանց: Յաճախ զսպում էր իր բարկութիւնը եւ չէր թափում իր ողջ զայրոյթը:

Սաղմոս 78:44 Նրանց վրայ շնաճանճեր ուղարկեց, որոնք յօշոտեցին նրանց, եւ գորտերով նրանց ապականեց

Սաղմոս 78:46 Նրանց այգիները կարկտահար արեց, եւ նրանց թզենիները ծածկեց եղեամով:

Սաղմոս 91:8 Մեղաւորները՝ բուսնելով ինչպէս խոտ, եւ անօրէնութիւն գործողները՝ ծաղկելով, կը **կործանուեն** յաւիտեանս յաւիտենից:

Առակ 13:13 Ով ինչ արհամարհի, դրանից էլ պիտի արհամարհուի. ով երկիւղ է կրում պատուիրանից, առողջ պիտի լինի: Նենգամիտ որդին բարիք չի գտնի, բայց խելացի ծառայի գործերը պիտի յաջողուեն, եւ ուղիղ պիտի լինեն նրա ճանապարհները:

Առակ 13:20 Իմաստուններին ընկերացողը իմաստուն կը լինի, բայց անզգամներին ընկերացողը թաքուն պիտի չմնայ:

Առակ 29:1 Լաւ է յանդիմանող, քան յամառ մարդը, որովհետեւ եթէ սրան կրակը յանկարծակի հարուածի, փրկութիւն չի լինի:

Եսայի 9:16 Եւ պիտի այնպէս լինի, որ երանի պիտի տան այս ժողովրդին,բայց մոլորեալները պիտի մոլորեցնեն նրան, որպէսզի կուլ տան:

Եսայի 10:27 Այն օրը նրա երկիւղը պիտի վերանայ քո վրայից, նրա լուծը՝ քո պարանոցից.եւ ձեր ուսերից պիտի խորտակուի նրա լուծը:

Եսայի 34:2 ՏԻՐՈՋ զայրոյթը բոլոր ազգերին է ուղղուած, բարկութիւնը նրանց բոլոր բազմութիւնների դէմ է, որպէսզի ոչնչացնի նրանց՝ մատնելով սպանութեան.

Երեմիա 12:10 Բազում հովիւներ ապականեցին իմ այգին, ոտնատակ տուին իմ բաժինը, իմ ցանկալի դաշտը խոպան անապատ դարձրին.

Երեմիա 48:8 Յոյսդ դրել էիր քո ամրոցների վրայ, բայց պիտի վրայ հասնեն նեղութիւնները, ու դու պիտի բռնուես: Քամոսը գերի պիտի գնայ իր քուրմերի ու իր իշխանների հետ:

Երեմիա 51:8 եւ Բաբելոնը յանկարծակի վայր ընկաւ ու փշրուեց: Ողբացէ՛ք նրա վրայ, նրա վէրքերին դե՛ղ արէք. թերեւս բժշկուի:

Երեմիա 51:55 Բօթն է հնչում Բաբելոնում, մեծ կոտորած է քաղդէացիների երկրում,

ՈՂԲ 2:5 ՏԷՐԸ, իբրեւ թշնամի, կործանեց Իսրայէլը, կործանեց նրա թագաւորներին, կործանեց նրա բոլոր ամրոցները եւ Յուդայի երկրի դստեր տառապանքների վրայ տառապանքներ աւելացրեց:

ՈՂԲ 2:6 Այգու պէս հատեց նրա խորանները, վերացրեց նրա տարեկան տօները. ՏԷՐԸ մոռացութեան տուեց այն տարեկան տօներն ու շաբաթները, որ կատարում էր Սիոնը. իր բարկութեան պահին մոնչալիս՝ տագնապի մատնեց թագաւորներին, իշխաններին ու քահանաներին:

ՈՂԲ 2:9 Նրա դռները գետին տապալեցին, խորտակեցին նրա նիգերը: Նրանց թագաւորներն ու իշխանները հեթանոսների մէջ էին. օրէնք ու մարգարէներ չկային, չկային եւ նրանք, ովքեր տեսիլքներ էին տեսնում ՏԻՐՈՋ կողմից:

Օսէէ 4:6 Իմ ժողովուրդը նմանուեց նրան, ով իմացութիւն չունի. քանի որ դու մերժեցիր իմացութիւնը, ես էլ քեզ կը մերժեմ, որպէսզի քահանայութիւն չանես ինձ համար.քանի որ մոռացար քո Աստծու օրէնքները, ես էլ կը մոռանամ քո որդիներին:

Օսէէ 13:9 Քո ապականութեան մէջ, Իսրայէ՛լ, ո՞վ է, որ պիտի օգնի քեզ:

Գործք 3:23 եւ ամէն մարդ, որ այդ մարգարէին չլսի, ժողովրդի միջից պիտի **բնաջնջուի**»:

1 Կորնթ 10:10 Եւ չտրտնջանք, ինչպէս տրտնջացին նրանցից ոմանք եւ կորստեան մատնուեցին մահուան հրեշտակից:

2 ՊԵՏՐՈՍ 2:12 Բայց այս մարդիկ, անբան անասունների նման (որոնք ի բնէ որսի եւ մորթուելու համար են), հայհոյում են իրենց չիմացած բաների դէմ. եւ իրենց ապականութեան մէջ էլ պիտի կործանուեն տանջուելով՝

Յուդա 1:5 Կ՝ուզենայի ձեզ յիշեցնել, - թէեւ դուք այդ բոլորը գիտէք, - որ Աստուած նախ իր ժողովրդին փրկեց Եգիպտոսից. իսկ ապա կորստեան մատնեց անհաւատներին:

ՍՈՒՏ ՈԳԻ

ԹԱԳ Գ 22:22 Նա պատասխանեց. «Կելնեմ ու սուտ ոգի կը դառնամ նրա բոլոր մարգարէների բերանում»: ՏԷՐՆ ասաց. «Դու իրօք կը խաբես, դու այդ կարող ես, գնա՛ եւ այդպէ՛ս արա»:

ԹԱԳ Գ **22:23** Եւ ահա ՏԷՐԸ սուտ ոգի դրեց քո այդ բոլոր մարգարէների բերանում, եւ ՏԷՐԸ չարիք է որոշել քեզ համար»:

Բ ՄՆԱՑՈՐԴԱՑ 18:21 Նա ասաց. «Ես կը գնամ ու սուտ ոգի կը լինեմ նրա բոլոր մարգարէների բերանում»: ՏԷՐՆ ասաց. «Դու կը խաբես նրան, դու կարող ես, ուրեմն գնա՛ եւ արա՛ այդպէս»1

Բ ՄՆԱՑՈՐԴԱՑ 18:22 Ահա ՏԷՐԸ սուտ ոգի է դրել քո այդ մարգարէների բերանում, այդ պատճառով էլ ՏԷՐԸ քեզ համար վատ բան է գուշակում»:

ՀԱՎԵԼՎԱԾ Դ

Քրիստոսի մարմի՞նը: Հուսա, որ ո՛չ:

Դագ Պերիից http://www.fellowshipofthemartyrs.com/ Հուլիս 1, 2006

Մինչ ես կենտրոնացած զննում էի եկեղեցու դրությունը, ես ավելի ու ավելի էի վրդովվում այն պատճառով, որ հազիվ թե կա մեկն, ով իսկապես տեղյակ է այս խնդիրների և ապաշխարության անհրաժեշտության մասին: Ես դժվարանում եմ սա հասկանալ: Գուցե մարդիկ մտածում են, թե լավ է այն, որ մենք հիմա 37,000-ից ավել քրիստոնեական ուղղություններ ու անվանումներ ունենք: Գուցե խարդախությունը, միջոցների և դրամի անօգուտ, զուր վատնումը, երկպառակությունը և եսասեր ձգտումը մարդկային վիճակի մի մասն են, և դրանցից խուսափել չի լինի (թեև, Նա ասում է, որ գալիս է հարսնացուի համար, որն առանց խորշոմի և թերությունների է, իսկ ես կարծում եմ, որ սրանք թերություններ են): Գուցե նրանց ոչ ոք երբեք չի ասել, թե դա որքան է վիրավորում Հիսուսին: Հույս ունեմ, որ սա կօգնի դա անել: Իրականում, ես հույս ունեմ, որ սա քո գիտակցության մեջ մի այրված, անջնջելի հետք կթողնի, որը քեզ ամեն օր կստիպի լաց լինել: Հավանաբար, դա հենց այն է, ինչ պահանջում է սա շտկելու համար:

Հռոմեացիներն ու Փարիսեցիները միասին դավադրել էին խաչել Հիսուսին: Նրանք ոչ միայն խաչեցին Նրան՝ նրանք թքեցին նրա վրա, ծեծեցին ու մտրակեցին նրան, մինչև երևացին նրա ոսկորները: Եվ հետո Աստծո Գառը, արնաքամ լինելով, անցավ ողջ Երուսաղեմի միջով, և նրանք Նրան մերկ մեխեցին խաչին և կախեցին բոլորի առաջ: Աստվածաշունչն ասում է, որ նա՝ որպես մարդ, անճանաչելի էր, որպես Հիսուս՝ էլ ավելի անճանաչելի: Նրանք նրա արյունոտված, ջարդած, նվաստացրած մարմնի վերևում ցուցանակ կախեցին՝ Նրան հեգնականորեն Հրեաների Թագավոր հայտարարելով: Նրանք կռիվ էին անում, թե ով պիտի ստանա Նրա հագուստը: Նրանք նրան կողքից խոցեցին համոզվելու համար, որ մահացած է, հետո թաղեցին քարանձավում:

Մենք բոլորս լսել ենք այն ցավի ու տանջանքի մասին, որի միջով Նա է անցել, բայց ոչ միայն ֆիզիկապես, այլ նաև մեր մեղքը, որը Նա կրեց, պիտի որ մի անհավատալի բեռ լիներ: Չհրաժարվելու ու չնահանջելու այդ հոգևոր պատերազմը և վրեժխնդիր լինելու համար հազար հրեշտակ կանչելու գայթակղությունը պիտի որ մի սարսափելի բան լինեին: Մեզնից ոչ ոք չի կարող թեկուզ միայն պատկերացնել, թե Նա ինչի միջով է անցել այդ վերջին քսանչորս ժամվա ընթացքում:

Ինչպե՞ս կարող էին փարիսեցիներն ու հռոմեացիները այդքան դաժան լինել: Ինչպե՞ս կարող էր որևիցե մեկը այդ տեսակ արյունարբու, անսիրտ վնաս հասցնել մի այլ մարդկային էակի, էլ չասած՝ Աստծո որդուն: Ի՞նչ տեսակ հրեշներ պիտի նրանք լինեին՝ մարդուն այդպես տանջելու և ստորացնելու համար: Ի՞նչ տեսակ չար ոգիներով պիտի նրանք դիվահարված լինեին այդ ժամին, որ կարողացան այդ տեսակ պիղծ բան անել մի անմեղ մարդու:

Այն ամենն, ինչ պատահում է մեր «իրական, բնական» աշխարհում, ունի իր կրկնօրինակը: Քրիստոսի մարդկային մարմինը մեռելներից հարություն առավ և ապրում է Հոր հետ: Սակայն Ա Կորթնացիներին 12:27-ում, Եփեսացիներին 4:12-ում և այլ տեղերում ասվում է, որ Եկեղեցին

Քրիստոսի Մարմինն է: Գիտե՞ս, թե սա ինչ է նշանակում: Սա նշանակում է, որ ՄԵՆՔ Քրիստոսի հոգևոր Մարմինն ենք, և Հիսուսի համար դա նույնքան իրական է, որքան իր ֆիզիկական մարմինը: Իսկ դա նշանակում է, որ մենք ավելի ստոր ենք, ավելի անսիրտ և չարով ավելի դիվահարված, քան Հռոմեացիներն ու Փարիսեցիները երբևէ կարող էին լինել:

Դու տես, որ մենք մոտավորապես հազար ութ հարյուր տարի (մի քիչ ավել կամ պակաս) ամեն օր ինը-պոչանի մտրակով հարվածներ ենք հասցնում ենք Քրիստոսի Մարմնին: Մենք սերունդներ շարունակ փշրում, մասնատում և կտրում ենք նրա մարմինը: Մենք կռվում ենք Նրա հագուստի համար և թքում Նրա վրա, այն ժամանակից ի վեր, երբ սկսեցին մահանալ առաջին Քրիստոնյաները: Մենք Նրա արյան հետքերը թողել ենք ողջ աշխարհով մեկ և ո՛չ լավ իմաստով:

Քրիստոսի մարմինը 37,000-ից ավելի քրիստոնեական ուղղությունների բաժանելու համար, մենք, փաստացիորեն, պիտի նրա մարմինը խոհանոցային կոմբայնի միջով անց կացնեինք: Մենք կտրել հանել ենք ոտքի մատերը և կլոնավորել դրանք, որ մի ամբողջ ամբար ոտքի մատներ ունենանք, որոնք հրաժարվում են միանալ Նրա Մարմնի մյուս մասերին: Մենք պոկել ու մանրացրել ենք նրա Մարմինը ու մեկս մյուսից գողացել այն՝ սոված շնագայլերի ռիմակի նման, որը թարմ սպանված որս է ուզում: Որովհետև Նա Քրիստոսն է և Նա ԱՅՆՔԱՆ ավելի լավն է, քան մենք երբևէ կարող ենք լինել: Նա մեծամասամբ լռակյաց է տարել սա՝ ինչպես ոչխարը, որին մորթելու են տանում: Նա դիմադրել է անդադար ցանկությանը՝ կանչել 10,000 հրեշտակ ու վրեժխնդիր լինել այն ամենի համար, ինչ մենք արել ենք Իր մարմնին: Մի կողմից դա նաև լավ է, քանի որ մենք հիմա արդեն պիտի ՀՈՂԻՆ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ լինեինք Նրան այսքան ցավ պատճառած լինելու համար: Մենք անտեսել ենք կարիքի մեջ գտնվողներին և կենտրոնացել մեր սեփական օրակարգերի վրա: Մենք Նրա մարմնին ներարկել ենք չարորակ ուռուցքներ, թույներ ու ամեն տեսակ զզվելի բաներ:

Մարմնացած ժամանակ Հիսուսը դիմացավ իրեն ծեծող ու իր վրա թքող մի քանի մարդկանց, բայց դա ավարտվեց 24 ժամ հետո, իսկ հոգեպես՝ մենք նրան հարյուրամյակներ շարունակ անխղճորեն ծեծում ենք: Հորիզոնում չկա ոչ մի նշույլ, որ առանց արտաքին մի միջամտության, «եկեղեցու» համակարգն էլ կդադարի սա անել:

Մենք հրաժարվում ենք միանալ կենտրոնական նյարդային համակարգին և հրահանգներ ստանալ ուղեղից: Մենք հրաժարվում ենք մեր ջանքերը համապատասխանեցնել մարմնի մնացած բոլոր մասերին, և այսպիով՝ ողջ Մարմինը պարզապես պառկած ցնցվում է ցավից: Թվում է, թե որոշ մասեր ինչ-որ արդյունքի են հասնում են, սակայն այն ավելի նման է հետմահու ցնցումների, քան իրական առաջընթացի: Քանի դեռ ԲՈԼՈՐ մասերը հրահանգներ չեն ընդունում Գլխից, մենք պարզապես պտտեցնում ենք մեր անիվներն, ու Նա ամեն օր ավելի ու ավելի է արյունաքամ լինում, և մարդիկ, ում մենք պիտի հասնեինք, մահանում են:

Եթե դու կարծում ես, որ սա պարզապես փոխաբերական իմաստով է և Հիսուսին ցավ չի պատճառում, ապա, վստհաբար, դու իսկապես չես հասկանում մեր հանդեպ տածած Նրա Սիրո Էությունն ու Նրա ա՛յն ցանկությունը, որ իր Մարմինն ամբողջական լինի: Հովհաննես 17-րդ գլխում նա աղոթում էր, որ մենք մեկ մարմին լինեինք, քանի որ, եթե չլինեինք, ՍԱ էր լինելու արդյունքը: Ըստ էության՝ Նա աղոթում էր, որ տառապանքի բաժակը հեռացվի իր ֆիզիկական մարմնից՝ եթե հնարավոր է, ԵՎ նա աղոթում էր, որ տառապանքի բաժակը հեռացվի իր հոգևոր

մարմնից՝ եթե հնարավոր է: Ոչ մեկը չհեռացվեց: Նա ամեն օր լալիս է և դարեր շարունակ լաց է եղել, իսկ Հայրը զայրանում է:

Նա դիմանում է ամենօրյա տանջանքի՝ մի մասշտաբով, որը մեզնից ոչ ոք ի վիճակի չէ պատկերացնել: Մենք նրան ավելի շատ ցավ ենք պատճառել, քան Փարիսեցիներն ու Հռոմեացիները երբևէ կարող էին թեկուզ պատկերացնել: Ֆիզիկական մարմինն ունի տանջանքին դիմանալու սահման: Քրիստոսի հոգևոր մարմինը ակնհայտորեն չունի սահման, թե դեռ որքան կտանջվի: Դեռ ավելի վատ, Փարիսեցիներն ու Հռոմեացիները նրան ատում էին և չէին հավատում, բայց մենք պնդում ենք, որ գիտենք, որ նա Աստծո Որդին է և ասում ենք, որ սիրում ենք նրան, բայց այնուամենայնիվ, հենց մենք ենք, որ իրական վնասն ենք հասցնում: Եվ մենք շարունակում ենք ամեն շաբաթ հավաքվել մեր փոքրիկ տուփերում և գովաբանության երգեր երգել Հիսուսին և ուղիղ դեմքով հաղորդություն ստանալ այն ժամանակ, երբ մենք միասին սրբապղծում ու ապականում ենք Նրա Մարմինը:

Ես քեզ կարող եմ ասել, որ եթե ես Հայրը լինեի և իմ ողջ էությամբ սիրեի իմ միակ որդուն՝ Հիսուսին, ինչ-որ մի պահ ես ԿՍՏԻՊԵՄ, որ նրա մարմնի տանջանքը դադարի: Եթե նրանք չսկսեն մեկ մարմին լինել, ես նրանց ուշադրությունը կգրավեմ, ինչ գնով էլ լինի: Եթե հարկավոր լինի, ես կուղարկեմ երկրաշարժեր, ցունամիներ, պատերազմներ, հիվանդություններ, սով ... ինչ էլ, որ լինի: Եթե նրանք շարունակեն երգել ու պարել և բացարձակապես անջատված ու քնած մնան, ես նույնիսկ կսպանեմ մոլորակի երկու-երրորդին, եթե դա հենց այն է, ինչ պահանջվում է ստիպելու համար նրանց վերջ տալ այս ամենին և սկսել մեկ մարմին լինել: Դա մոտավորապես այն է, ինչ Հայտնության գիրքը կանխանշում է, որ կլինի - ու մենք դրան արժանի ենք:

Եվ եթե ես քո տեղը լինեի, ես հույսս չէի դնի այն հանգամանքի վրա, որ «հափշտակումը» կփրկի քեզ՝ նախքան տանջանքի սկսվելը: Քանի որ եկեղեցին պիտի լույսը տարածեր աշխարհին, իսկ այնտեղ՝ դրսում ԻՍԿԱՊԵՍ մութ է, ապա ես միանգամայն վստահ եմ, որ այս տխուր իրավիճակը մեր մեղքով է: Մենք ենք նրանք, ովքեր ավելի լավ գիտեին, մենք ենք նրանք, ովքեր դարեր շարունակ մորթել են Քրիստոսի մարմինը: Ես ոչ մի պատճառ չեմ տեսնում, թե ինչու մենք պիտի խուսափենք մեր արածի հետևանքներից: Նա մեզ իսկապես ուժեղ կհարվածի, և այդ գալիքը մոտենում է: Մի՛ կարծիր, թե դու կխուսափես տառապանքից, դու չես խուսափի:

Մեր միակ հույսը լաց լինելը, զղջալը և սգալն է խորանի առջև: Մենք պետք է ներողություն խնդրենք և դա անկեղծորեն անենք: Հետո մենք պիտի շրջվենք մեր չար ճանապարհներից և մտնենք Նրա գլխավորության տակ: Այլևս ոչ մի կառույց կամ համակարգ ու սովորույթներ, որ կերտվել են մարդկանց կողմից: Եթե մենք չսկսենք մեզ մեկ մարմնի պես պահել, ուրեմն Հայրը կսպանի մարմնի այն բոլոր մասերը, որոնք իրենց լավ չեն պահում կամ դրսևորում: Հետո նա կպատվաստի այն կտորները, որոնք դա կգնահատեն: Այնպես, ինչպես մարմնավաճառներն ու թմրանյութ վաճառողները, անտուններն ու մոլորվածները, մանուշակագույն մազերով պատանիներն ու աղջիկները և վնասված մարդիկ, որոնք մինչ ի մահ կպաշտպանեն Նրա Մարմինը և կմերժեն լսել, ՆՐԱՆԻՑ բացի, ուրիշ մեկին:

Գրի՛ր սա քո ուղեղի մեջ: Մենք Քրիստոսի Մարմինը մսաղացի միջով ենք անց կացնում: Մենք մարդկանց սեմինարների ենք ուղարկում, որ սովորեն, թե ինչպես Քրիստոսի Մարմինը բաժանել

ավելի ու ավելի մանր մասերի: Մենք նրանց վճարել ենք, որ անեն այս ամենը: Մենք ինքնիշխան արդարությամբ հաճույք ենք ստացել՝ իրենց մեջ Սուրբ Հոգին ունեցող մարդկանց վրա թքելուց: Մենք կռվել ենք նրա հագուստի համար: Մենք նրա գլխավերևում նշան ենք կախել ու աշխարհին հպարտորեն հայտարարել ենք, որ ծեծված, արյունոտ այս խառնաշփոթությունը Թագավորների Թագավորի ճշգրիտ պատկերն է: Մենք առաջին կարգի գողեր, ստախոսներ ու մարդասպաններ ենք:

Կա միայն մեկ պարզ չափանիշ. եթե Սուրբ Հոգին իմ մեջ է և Սուրբ Հոգին քո մեջ է, ապա մենք պարզապես մեկ մարմին ենք և մենք պիտի հասկանանք, թե ինչպես միասին ապրենք՝ առանց միմյանց սպանելու: Մենք պետք է սա դադարեցնենք, քանի դեռ շատ ուշ չէ:

Խնդրու՛մ եմ: Եթե դու սիրում ես Հիսուսին, խնդրում եմ, կարո՞ղ ես դադարել տանջել Նրա մարմինը: Խնդրում եմ, ասա Նրան, որ դու ցանկանում ես կիսել Իր հետ Իր տանջանքներն ու օգնել Իրեն կրելու այս բեռը մինչև սա վերջանա: Խնդրում եմ, ընդունի՛ր դրա մեջ ունեցած քո մասնակցությունը, որքան էլ որ այն փոքր լինի: Եվ այսուհետ կարո՞ղ ես պնդել և ջանալ, որ համերաշխություն լինի: Խնդրում եմ քեզ, Հորը, խնդրի՛ր, որ Նա թույլ տա քեզ զգալ այն նույն ցավը, որը Հիսուսն է զգում: Խնդրում եմ քեզ, Հորը խնդրի՛ր, որ թույլ տա քեզ Նրա աչքերի միջով նայել և տեսնել: Ես գիտեմ, որ Նա ցանկանում է դա:

Խնդրում եմ, կանգնեցրու սա:

http://www.fellowshipofthemartyrs.com
fotm@Fellowshipofthemartyrs.com

Օգտագործիր ազատորեն, սակայն պահպանելով տեղադրված հղումները և առանց փոփոխությունների:

Անգլերենից թարգմանեց Լիլիթ Չոքեքչյանը
Տեքստը մուտքագրեցին Վարդուհի Հովհաննիսյանը, Ինեսսա Զոհրաբյանը
Խմբագրական աջակցություն՝ Ինեսսա Զոհրաբյան, Արամ Սուքիասյան